

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱԻԱԿՆԵՐԸ


Հրապարակելու է Վահան Յովհաննէսեանի կրթական, բարոյական եւ հայրենաշունչ պատմա-լածական շարքը. հայ տուններուն զարդն է, մանուկներու երջանկութիւնը՝ իրենց հետաքրքրական բովանդակութեամբ:

Ամէն սրտի յարմար հատորներ.

- 1.- ԱՆԻՆ ՔԱՐ ՄԸ ԲԵՐ
- 2.- ԱՐԳԻՆԱՅԻ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ
- 3.- ՍՄԲԱՏԻ ԳԱՆՁԵՐԸ
- 4.- ՇԵՄՔՈՐԻ ԱՓԻՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈՅՈՒԹԻՒՆԸ
- 5.- ԳՍԳԻԱՆԷԻ ՎՐԷԺԸ
- 6.- ԼԵՌՆԵՐՈՒ ԵՐԳԸ
- 7.- ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ
- 8.- ԼԵԶՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՌՆԻ
- 9.- ՓՈՔՐԻԿ ՍԱՍՈՒՆՅԻՆ
(Շարունակելի)

ԼԵՌՆԵՐՈՒ

ԵՐԳԸ



6

Հայրենիքի

Զանգերը

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱԻԱԿՆԵՐԸ

ԹԻԻ 6

3847
0
հ.6

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԼԵՌՆԵՐՈՒ ԵՐ ԿԷ

Հ. ՎԱՀԱՆ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

10922

Սրինգի անոյշ սոյլ մը կը բարձրանար հարաւային Ջանգեղուրի լեռներէն վեր. կ'ուրուէր արահետներու հետն, ինչպէս արտոյտը կապոյտին մէջ: Ո՞վ էր այդ նուագողը, որ ժայռոտ բնութեան այնքան հմայք կու տար: Ատոմ Ամիրեանն էր, սիրտը լեռներուն մէջ, լեռներն իր սրտին մէջ: Բոլոր շահերոցիները զինքը կը ճանչնային, ամէնուն հետ երգով խօսած էր, իր սարերուն դադտնիքը պատմած էր: Ան զիւզի վերի ծայրէն կը սկսէր նուագել. վայրկեան մը ամէն ձայն կը դադրէր, ամէն սիրտ յուզում կ'ունենար. ոչ ոք այնքան քաղցր երգով ու սրինգով դոված էր Ջանգեղուրի անմահական լեռները: Յանկարծ կը դադրեցնէր սրինգը եւ կ'ըսէր բարձրաձայն.

— Լեռնե՛ր, լեռնե՛ր, ձեր հոգուն մատաղ:

Ատոմին կը հետեւէր, արեխներով փաթթուած մատղաշ ոտքերը քարերուն զարնելով՝ տասը տարեկան մանչուկ մը, Յովհաննէս՝ իր զաւակը, որուն անունը փաղաքշական ձայնով Օնիկ կը կանչէր: Իր կոնակին կապած էր կաշիէ պարկ մը, մէջն հաց ու պանիր, լեռնոցիներու սիրելի ճաշը՝ պաղ աղբիւրի մը մօտ: Մինչ հայրն իր ուսին ձգած էր երկար փողով հրացան մը, եւ մէջքին կապած էր սուր դաշոյն մը: Ատոմ որսորդ

էր եւ քաջ որսորդ. իր գնդակը չէր վրիպեր, իր աչքն արծիւն ալ չունէր: Բարձրացան անոնք գիւղի գլխուն, թագ կապած բերդէն ալ վեր. պատանին աւելի դանդաղցուց իր քայլերը, դառիվերը շատ խիստ էր եւ ճամբան քարոտ էր:

— Յոգնեցա՞ր, բալիկս, հարցուց հայրը:

— Ո՛չ, հայրիկ, պատասխանեց եւ չուզեց խոստովանիլ, բայց իր մատղաչ ծունկերը կը կթոռէին եւ աւելի կը դանդաղէին:

— Հայրի՛կ, նայէ՛ ետեւդ դէպի վար, ի՛նչ գեղեցիկ տեսարան է, կենանք եւ քիչ մը գիտենք:

— Հա՛, որդիս, կենանք եւ գիտենք:

Ատոմ հազար անգամ տեսած էր վարի դաշտային տեսարանը. հասկցաւ թէ տղան պատճառ բռնեց՝ հանդէսը համար: Կանգ առին եւ նայեցան դէպի հեռաւոր դաշտերը. Շահկերտը տարածուած էր լեռան կողքին, տուն տունի վրայ, ծուխերը կը բարձրանային, թոնիրները վառ էին՝ հաց եփելու համար:

— Ահա մեր տունը, հայրիկ, ըսաւ Օնիկ, եկեղեցին ալ կը տեսնուի. ո՛րքան ցած են, կարծես թէ երկինքէն կը գիտենք:

— Անշուշտ, գրեթէ հազար հինգ հարիւր մեդրի վրայ ենք եւ դեռ պիտի բարձրանանք: Հանդէսեցա՞ր, տղաս, ճամբայ ելլե՞նք:

— Այո՛, պապի, ճամբայ ելլենք:

Քարոտ արահետը հետզհետէ աւելի խիստ զառիվեր կը դառնար, հարկ էր սանդղաձեւ տեղեր կոխել՝ վար չսահելու համար: Ատոմ ա՛լ չէր նուազեր, ինքն ալ քիչ մը կը հեւար. հրացանը կարծես ամէն քայլափոխին աւելի կը ծանրանար, մինչեւ որ հասան քա-

րայրները, որոնք լայնափեղկ բերաններով դէպի հարթավայրերը կը նայէին:

— Հասանք, բալիկս, ըսաւ Ատոմ, մտնելով առաջին քարայրը:

Տղուն ծանօթ էին այդ այրերը. ան գրեթէ միշտ իր որսորդ հօրը հետ լեռ կը բարձրանար եւ շատ կը սիրէր որսորդութիւն ընել. սակայն դեռ փոքր էր եւ այդ ժամանակի հրացանները շատ ծանր էին իր տկար բազուկներուն համար: Ատոմին երեք քառորդ տունն այդ քարայրն էր. հոն ունէր խոտէ անկողին, անական ամաններ, հին վերմակ, եւ իրարու վրայ դարսած չոր փայտ՝ կրակ վառելու համար: Շատ քիչ անգամ, գարնան եղանակին, իր Մարոյ աղջիկն ալ հետը լեռ կը տանէր: Մարոյ Օնիկէն երեք տարեկան մեծ էր. ինքն ալ եղբօր պէս լեռնցիի կորով ունէր, եւ լեռներու գեղեցիկ երզն էր. բայց հայրը չէր ուզէր որ աղջիկն որսորդութեան համն առնէ եւ տունէն բաժնուի: Իսկ կինը, Կատար, կարողութիւն չունէր այդ սրածայր լեռները բարձրանալու. աղջիկութեան՝ եղնիկ էր, բայց այժմ 45 տարեկան էր, եւ ծունկերուն վրայ վստահ չէր:

— Փառք քեզ, Աստուած, ըսաւ Ատոմ. հրացանը քարայրին մէկ անկիւնը կանդնեցուց եւ նստաւ հաստ կոճղի մը վրայ:

Տղան երկարեցաւ գետին փռուած չոր խոտին վրայ, երկու ձեռքերը գլխուն տակ բարձ ընելով:

— Պապի, հարցուց Օնիկ, աշխարհիս մէջ էս սարերուն նման սարեր կա՞ն: Աս ո՛րքան բարձր են, կարծես մատով երկնքին կարելի է դպչել:

— Կան, բալիկս. Արազածը, Արարատը. այդ Արարատը Աստուծոյ լեռն է, մեր Լուսաւորիչն ալ վրան

խոշոր կանթեղ մը կախած է երկինքէն, որ դիշերներն արեւու պէս լոյս կու տայ:

— Հայրի՛կ, ժամը քանի՞ է, կարծեմ կէսօր եղաւ:

— Ի՞նչ դիտնամ, որդի, ես Նախիջեւանի Սանը չեմ որ ժամացոյց ունենամ: Դեռ ծառերուն շուքը արեւելք չգարձաւ՝ որ ճիշտ կէսօր ըլլայ: Անօթի՞ ես, բալիկս:

— Հա՛, անօթի եմ:

Քարայրէն քիչ մը անդին փոքրիկ աղբիւր մը կը հոսէր, սառի պէս պաղ, այնքան յստակ, որ մէջը կապոյտ աչք ձգէիր՝ նորէն կը տեսնուէր: Անոր քով նըստեցան եւ հանեցին հաց ու պանիր. ա՛խ, այդ հացն ու պանիրը՝ պաղ աղբիւրին մօտ՝ Աստուծոյ ճաշն էր: Տղան լաւաշին մէջ փաթթեց թել թել պանիրը, կերաւ ու ջուր խմեց, ջուր խմեց ու չկշտացաւ: Մեր տեղը կ'ըսեն.

— Մարդ իր սիրածէն կը կշտանայ եւ սարի աղբիւրէն չի կշտանար:

Վերագարձան քարայր:

Նոր աշունքի օրեր էին, տակաւին կարելի էր լսել հովիւներու ձայներ, կամ երգերը դիւզացիներուն, որոնք սարէն խոտ կը հնձէին, կամ վարի անտառներէն փայտ կը կտրէին՝ ձմրան վառելու համար: Չանդեզուրը չունէր գարնան եւ ամրան ուրախ կեանքը: Շահ-կերտ իր լաթերը հաւաքած տուն կը դառնար. ձմեռը կրնար օրէ՛ օր հասնիլ, ան ժամ ու ժամանակ չունէր, ոչ ալ Աստուծմէ հրաման կ'առնէր՝ իր պաղ երեսը ցոյց տալու Սիւնիքի սուր գաղաթներէն:

— Որդի՛, ըսաւ Ատոմ, դուն այստեղ մնացիր, ես երթամ մի բան որոսմ. այս երեկոյ խորոված ընենք:

— Պապի, ես ալ գամ, ազաչեց տղան:

— Ո՛չ, դեռ փոքր ես, կարելի է արջի կամ եղջերուի հանդիպինք, վտանգաւոր են:

— Ոտքերուդ տակ մտնեմ, դուն դիս կը պաշտպանես, պատասխանեց Օնիկ, ճիշտ ինչպէս վտանգի ստեն ձիու քուռակն իր մօր փորին տակ կը մտնէ:

— Չէ՛ ըսի, չէ՛ թող ըլլայ, պատասխանեց հայրը:

Ատոմ առաւ հրացանը, դաշոյնը քարայրին մէջ մոռցաւ. ճամբայ ինկաւ լերան կողէն դէպի հարաւ եւ մտաւ ձորի մը մէջ. տղան աչքով հետեւեցաւ հօրը քայլերուն. սիրաբ կը քաշէր, հետաքրքիր էր: Ատոմի համար մեծ որսորդութիւն մը չէր, պարզ պատառ մը բան գտնելու համար կ'երթար: Տղան չկրցաւ դիմանալ, առաւ դաշոյնը, մէջքը խոթեց, եւ հօրը քայլերուն հետքերէն ձորն իջաւ: Լսեց հրացանի խռպոտ պայթիւն մը. իրենց հրացանի ձայնն էր, ան լաւ կը ճանչնար. ապա ետեւէն տարօրինակ աղմուկ մը լսեց: Կարծես կռիւ մը կար: Ծիշտ էր, հայրն ու էգ արջ մը կռիւի մէջ էին: Ատոմ երբ կուզ ի կուզ որսի ետեւէն կ'երթար, անդիտակից անցաւ արջի մը որջին առջեւէն. գազանը փռոտ թուփերով ծածկած էր իր որջը. արջը տեսաւ Ատոմը, վտանգ տեսաւ իր քոթոթին համար. Ատոմի թիկունքէն վրան նետուեցաւ եւ մահուան պայքարն սկսաւ: Արջն աքցանի պէս սեղմած էր Ատոմին բազուկները. հրացանը գետին ինկած էր. քոթոթը մօրն ետեւի ոտքերուն տակ՝ կը դառնար անոնց շուրջը: Ատոմին մահն յայտնի էր: Օնիկ տեսաւ հեռուէն, սարսուռ զգաց, բայց հայրը կրնար վայրկեանէ վայրկեան անշնչանալ. գազանը կը ջանար անոր զուլան իր բերնին մէջ առնել. բայց բարախը, մինչև ականջներն իջած, թոյլ չէր տար:

Պատանին խոյացաւ արջին թիկունքէն, քաչեց դաշոյնը եւ խոթեց գազանին կուրծքը: Արջին ժանիքները

Թուլցան եւ հսկայ անասունը գետին փռուեցաւ: Ատոմի երեսէն պաղ քրտինք մը իջաւ. վրան գրեթէ մարեւելք պիտի դար, բայց զսպեց իր ջիւղերը. ամօթ էր որ սորդի մը համար, որուն անունը տարիներով հնչած էր Զանգեզուրի լեռներուն վրայ, կնիկի պէս, վախէն մարէր, էյնար:

— Որդի՛, քեզ ո՞վ հոս զրկեց:

— Չեմ գիտեր, հայրիկ:

— Անհնազանդութիւնդ՝ քաջութեամբ քաւեցիր, ըսաւ հայրը. հիմա զգացի թէ հին որսորդական ցեղի մը գաւազն էս. թերեւս ուրիշ գաւազներ սարսափած խոյս տային, բայց դուն կեանքդ ուղեցիր զոհել հօրդ համար. օրհնեա՛ր ըլլաս:

— Հայրի՛կ, գլուխէդ եւ թեւերէդ արիւն կը հոսի, քարայր դառնանք, որսի պէտք չկայ, հաց ու պանիր ունինք՝ այս երեկոյեան համար:

— Գնա՛, այդ թուփերուն ետեւ նապաստակ մը զարնուած պիտի ըլլայ, ա՛ն եւ բեր, ըսաւ Ատոմ:

Տղան բաժնելով թուփ թուփէ, մտաւ թաւ տեղեր եւ ահա բաւական մեծկակ նապաստակ մը գետին տաքածուած էր, քաշեց դուրս, եւ ետեւի ոտքերէն բռնելով հօրը բերաւ:

— Դէհ, հիմա քարայր երթանք, ըսաւ Ատոմ:

Արջի ձագը մօրը ծիծիին կպած՝ կաթ կը փնտռէր, բայց մայրական սէրն ու կաթը սառեր էին կուրծքին մէջ: Ան թերեւս քանի մ'օրուան ձագ էր. ո՞վ պիտի պաշտպանէր այդ որբուկը:

— Հայրի՛կ, այս քոթոթն ալ առնենք հետերնիս. մե՛ղք է. ես կը մեծցնեմ. ի՞նչ յանցանք ունի եթէ իր մայրը չար բնազդով վրադ յարձակեցաւ, իր արժանի

պատիժն առաւ. բայց քոթոթը մեղք է: Կ'ըսեն թէ շան պէս ընտանի եւ հաւատարիմ կը դառնայ իր տիրոջը:

Ատոմ չուզեց տղուն սիրտը կոտրել: Օնիկ հրացանն իր ուսն առաւ, գրկեց արջուկը. հայրը նապաստակն առաւ, ան ոյժ չունէր ծանր բան վերցնելու:

— Տղա՛ս, ըսաւ կոճղին վրայ նստելով, այդ անկիւնը աղ կայ, ա՛ն եւ գլխուս ու թեւերուս վէրքերուն վրայ դիր:

— Հայրի՛կ, նախ պաղ ջուրով լուանք, թերեւս հող, աղտ ըլլան, կը նետին վէրքերդ:

— Ճիշտ էս, բալիկս:

Ազրիւրին մօտ Օնիկ լաւ մը լուաց հօրը վէրքերը. շատ խոր էին, բայց զաղանի ճանկ էին, որ տեղ տեղ ծակած էին: Տղան առատօրէն աղ դրաւ. հայրը կսկիծէն աղաները սեղմեց:

— Համբերէ՛, հայրիկ, քիչ վերջը կ'անցնի:

— Եթէ քիչ մը մանանեխ ըլլար, շատ լաւ պիտի ըլլար, ըսաւ Ատոմ. մեր սարերուն միակ օդտակար դեղն է այսպիսի վէրքերու համար:

— Երթամ փնտռեմ, հայրիկ:

— Ազրիւրներու եղերքները կ'ըլլայ, փափուկ եւ մազմզուկով տերեւներ ունի:

Տղան քիչ վերջ քարայր դարձաւ, մանանեխն ափին մէջ. ճեծեց, կակղցուց եւ դրաւ հօրը վէրքերուն վրայ:

— Դուն կրակը վառէ, ըսաւ հայրիկը, ես սա նապաստակը քերթեմ:

Արջին ձագը չոր խոտերուն տակ կը խաղար, կը հոտուրտար անկիւնները եւ երբեմն կը թնձկար:

— Անօթի պիտի ըլլայ, հայրիկ, ըսաւ Օնիկ, քիչ մը ջուրի մէջ հաց տամ:

— Կաթ պէտք է, տղաս, պատասխանեց հայրը, դեռ փոքր է, կաթ միայն կրնայ խմել: Վատահ եղիր որ պիտի փախչի մօրը քով երթալու համար:

— Ես ալ աս կոծղին կը կապեմ. խեղճը չի հասկընար որ իր բարիքին համար բերած եմ հոս:

Ատոմ նապաստակը կտոր կտոր ըրաւ, փայտէ շամփուրի վրայ անցուց, կրակն արդէն կարմիր ածուխ դարձած էր, եւ սկսան եփել: Կրակին բոցը գիւղէն կարելի էր տեսնել. բոլորն ալ գիտէին թէ որսորդ Ատոմը հոն է եւ խորոված կ'եփէ:

— Նայէ՛, բալիկս, ըսաւ Ատոմ, մարդու բան չըսես՝ ինչ որ պատահեցաւ, մանաւանդ մօրդ ականջը չհասնի, գլուխս կ'ուտէ եւ ձեռքէն չեմ ազատիր:

— Հա՛, պապիկ, չեմ ըսեր, պատասխանեց տղան:

Խորովածը պատրաստ էր, երբ երկու սարուորներ հասան. Մարգարենց Աւոն էր եւ Մինասենց Սերգոն, որոնք գիւղ կ'իջնէին ուչ երեկոյ:

— Բարի մարդը՝ ճաշի վրայ կը հասնի, հրամեցէք, ըսաւ Ատոմ:

Այդ երկրին մէջ մէկուն տունը՝ միւսին էր, մէկուն ճաշը՝ միւսին համար էր. կրկնել չէին տար հրաւերը: Նոտեցան եւ մէկ մէկ մստտ ոսկոր առին եւ սկսան կրծել:

— Խեր ըլլայ, Ատոմ աղբար, ինչո՞ւ գլուխդ կապեր ես, հարցուց Աւոյ:

— Ի՞նչ դիտնամ, եղբայր, փորձանքի մը հանդիպեցայ այս կէսօրին. դոմչի չափ արջի մը հետ պատերազմեցայ. անպիտանը կոնակէս յարձակեցաւ, թեւերս բռնեց, գլուխս բերանը կ'ուղէր առնել. լաւ որ բարախս կար: Դուն բերանդ դոցէ եւ ոսկորդ կրծէ, դարձաւ Օնիկին: Մէկ թօթուցի, երկու թօթուցի, երեք թօթ-

ուցի, եւ ալիւրի լեցուն պարկի պէս վար ինկաւ. ոտքս վրան դրի, դաշոյնս փորը խոթեցի եւ տեղն ի տեղ սատկեցուցի: Տղայ, բերանդ դոց պահէ, այդպէս կոշտ կոշտ չեն ուտեր, դարձաւ նորէն տղուն:

— Այո՛, հայրիկ, կ'ուզէի ըսել թէ արջն ես սպաննեցի:

— Հա՛, տղաս ալ քովս էր. ան ալ դաշոյն մը զարկաւ եւ արջն երկու անգամ սատկեցաւ. էհ, պէտք է վարժի արիւն եւ կռիւ տեսնել: Ես շատ անգամ կռիւ ունեցեր եմ, բայց այս անգամ, հերն անիծած, մահէն մազով ազատեցայ:

Այդ պահուն քոթոթն եկաւ եւ Օնիկի ոտքերուն պըլլուեցաւ, թնձկաց եւ լիզեց տղուն տրեխները:

— Անօթի պիտի ըլլայ, ըսաւ Ատոմ, բայց կաթ ո՞ւր տեղէն դաննեք:

Օնիկ մսի կտոր մ'առաւ, լաւ մը ծամեց եւ արջուկին բերանը դրաւ:

— Լաւ մտածեցիր, տղաս, ըսաւ Մինասենց Սերգոն: Բայց ի՞նչ պիտի ընես այս ճագը:

— Պիտի մեծցնեմ, որսի ընկեր պիտի ընեմ, պատասխանեց տղան:

Երկու գիւղացիները շնորհակալ եղան եւ սկսան վար իջնել: Մութը ձորերէն վեր կը բարձրանար բարակ մըշուչի պէս: Գիւղին մէջ խեղոյն տարածուեցաւ Ատոմին կռիւը՝ արջին հետ:

— Գիտե՞ս, Սաթոյ քոյրիկ, Ատոմ աղբարը Մարութենց դոմչին չափ արջ մը սպաններ է:

— Լսեցի՞ր, Համաս մայրիկ, սարի վրայ Ատոմ աղբարին դէմ երկու արջ ելեր են, մէկը մէկ թեւէն, միւսը միւս թեւէն քաշեր, ժայռերէն վար նետեր են: Եթէ

Օնիկը հրացանով զարկած չըլլար, զինքն ողջ ողջ կ'ուտէին:

— Գիտե՞ս, ինչ լսեցի, ըսաւ Մարիամ՝ Մարութենց կնոջը. վերը սարին վրայ հինգ հատ արջեր Ատոմ որսորդին վրայ յարձակեր են եւ բղիբ բղիբ ըրեր են: Խեղճ Կատար, խեղճ որբեր: Քանի անգամ իր կինը, Մարոյ աղջիկն աղաչեցին որ վազ անցնի որսորդութենէ, չէնքով չնորհքով տունը նստի եւ ինքն ալ զէնք շինէ ու ծախէ խաներուն, ինչպէս բոլոր շահերտօցիները: Բայց ո՞վ մտիկ կ'ընէ. տեսակ մը հիւանդութիւն է որսի երթալ:

Լուրն երթալով այնքան խոշորցաւ, որ կարծես թէ սարերու բոլոր արջերը հաւաքուեր, ժողովք ըրեր են՝ այդ անվախ որսորդին դաս մը տալու: Ատոմին կինը Կատար եւ աղջիկը Մարոն ալ լսեցին եւ տան մէջ լացի, կոծի վայնասուն մը փրթաւ.

— Ա՛խ, անաստուած մարդ, տունս քանդեցիր, տըղաս տարիւր դադաններուն կեր տուիր, ըսաւ կինը ձեռքերը ծունկերուն զարնելով:

Մարոյ հայրիկը կը կանչէր, Կատար Օնիկը կը կանչէր: Թափեցան դուռ դրացիներ. ի՞նչ ըսէին, իրենք ալ որոշ բան չէին գիտեր:

— Սուտ լուր է, քուրիկ, մի՛ հաւատար, ըսին դրացի կիները:

— Ո՞վ եկաւ սարէն, հարցուցին իրարու:

— Չենք գիտեր, բերնէ բերան կը շրջէր գիւղին մէջ, ըսին երկու աղջնակներ:

— Ա՛խ, ճիշտ է, հեկեկաց Կատար. քանի հազար անգամ ըսեր եմ, թո՛ղ սա որսորդութիւնդ. սիրտս հետը սար կը բարձրանար. քարէ քար կը զարնուէր, մինչեւ որ կրկին ան վար իջնէր:

Գիշեր ատեն, հացէն յետոյ, սովորութիւն էր տունէ տուն երթալ, նստելու եւ խօսելու համար, մանաւանդ ձմրան գիշերներն օճախի կրակին քով. հէքեաթային ժամեր էին: Այդ երեկոյ երկու տարեց մարդիկ Մինասենց Սերգոյին դուռը զարկին, նստելու եւ խօսելու համար:

— Մարդ Աստուծոյ, ըսաւ մէկը, տունդ փակած հանգիստ նստեր ես. չե՞ս գիտեր ինչ պատահած է:

— Ի՞նչ ամի, ըսաւ Սերգոյ:

— Բոլոր գիւղը կը խօսի՛. ցաւալի՛ լուր, ցաւալի՛ լուր: Սարին վրայ հինգ հատ արջեր յարձակեր են Ատոմին եւ սողուն վրայ ու բղիբ բղիբ ըրեր են: Տունը սուղ ու կոծի մէջ է:

— Սո՛ւտ է, աղբար, սուտ է, պոռաց Սերգոյ. ես եւ Մարգարենց Աւոն դեռ երեք ժամ առաջ, Ատոմին հետ, քարայրին մէջ խորոված նապաստակ կերանք:

— Ծօ՛, վազես չըսե՞, տնաւեր, պոռաց գիւղացին. խեղճ կինն ու աղջիկը հիմա դերեզման կ'իջնեն:

Կանչեցին Մարգարենց Աւոն ալ եւ չորսերնին վազեցին Ատոմին տունը: Կիներն հաւաքուած կ'ողբային եւ ձայն կը բռնէին Կատարի լալկան երգերուն:

— Մի՛ լաք, մի՛ պոռչտաք, պոռացին Սերգոյ եւ Աւոյ: Կատար՛ը քոյրիկ, սուտ լուր է. մենք դեռ երեք ժամ չկայ, Ատոմին եւ Օնիկին հետ խորոված նապաստակ կերանք իր քարայրին մէջ: Մեր աչքերով տեսանք երկուքն ալ: Եթէ՛ չես հաւատար՝ տանիք ելիր, թերեւս իր կրակին լոյսը տեսնես:

— Ա՛խ, այս պառաւները, այս պառաւներն, ըսաւ գիւղացին, որ նստելու գացեր էր. լուսն ոչխար կ'ընեն, ոչխարը փիղ կ'ընեն:

Վազեցին տանիք՝ Ատոմին լոյսը տեսնելու. բայց

այդ երեկոյ լոյս չտեսնուեցաւ: Կատար եւ Մարոյ աւելի գէշ սկսան լալ:

— Իր կեանքը ճրագին հետ մարեր է, հառաչեց Ատոմին կինը:

— Ձէ՛, քուրիկ, ըսին Աւոյ եւ Սերգոյ. Խաչ վկայ՝ որ սուտ լուր է. մենք միասին էինք լեբան վրայ:

Գժուար է գէշ լուրը սուտ հանել. բամբասանքի կը նմանի որ մէկուն հետ տարիներով կը չըջի:

Յաջորդ օրը կէսօր եղաւ եւ Ատոմ վար չիջաւ: Կատարին սիրտը դանակ զարնէիր՝ արիւն չէր ելլեր:

— Մարոյ, աղջիկս, ա՛ն մէկ երկու ընկեր եւ սարը դնա, շտակ լուր մը բեր. հոգիս կը քաղուի, ըսաւ աղջկան:

Մարոյ մէկ խօսքն երկու չըբաւ, ան արդէն շատ կը սիրէր բարձրանալ: Կանչեց իրենց դրացի երկու ընկերուհիներ եւ ճամբայ ինկան. եղնիկի պէս արագ բարձրացան, շուտով հասան քարայրը: Քր եղբայրն Օնիկ արջուկին հետ կը խաղար, բայց հայրը չկար:

— Ո՞ւր է պապին, հարցուց խոռոված:

— Գնաց որս բերելու որ այս երեկոյ ուտենք:

— Սուտ ես, պապին մեռած է, հինգ հատ արջեր գինքը բղիք բղիք ըրեր են:

— Մեղա՛յ, մեղա՛յ, պատասխանեց Օնիկ. ո՞ր խելքէդ հանեցիր այդ յիմար լուրը:

— Գիւղն ամբողջ կը խօսի:

— Անշուշտ Մարգարենց Աւոն եւ Մինասենց Սերգոն այդ իշու կատակն ըրեր են:

— Ո՛չ, անոնք ըսին թէ չէ, սուտ լուր է. բայց գիւղն ամբողջ կը խօսի. գիւղի՞ն հաւատանք՝ թէ երկու հոգիի:

Այդ վայրկեանին խոր ձորերէն լսուեցաւ հրացանի պայթում մը:

— Ահա պապին հրացանը, լսեցի՞ր, ըսաւ Օնիկ:

— Երթանք տեսնենք ի՞նչ դարկաւ, ըսին երեք աղջիկները:

— Դուք գացէք, ես քոթոթիս հետ պիտի խաղամ, պատասխանեց Օնիկ: Տե՛ս, Մարոյ, ի՞նչ սիրուն է. ապիկա պիտի մեծցնեմ եւ ընկեր պիտի ընեմ ինձի:

— Ուսկի՞ց դուար, հարցուց քոյրը:

— Ձեզի բան մ՛ըսեմ, բայց պապին չիմանայ, աւելցուց Օնիկ. ճիշտ է. երէկ պապին գնաց որս ընելու. թուփերու առջեւէն անցած ատեն՝ էգ արջ մը կռնակէն վրան կը յարձակի:

— Վա՛խ, պապի, բացագանչեց Մարոյ:

— Կեցիր, չվերջացաւ: Պապին չուղեց որ իրեն հետ երթամ, բայց ես մտիկ չըրի. դաշոյնը քարայր մոռցած էր, առի եւ կամաց կամաց ետեւէն դացի. ի՞նչ լսեմ, սոսկալի աղմուկ, դոռում դոչում: Վրաս դող եկաւ, առաջ դացի եւ պապին տեսայ, հսկայ արջը վրան: Դուն ըլլայիր, Մարոյ, վախէդ կը մարէիր. դանակը քաշեցի եւ արջին սիրտը խոթեցի. մէկ, երկու, երեք. արջը թուլցաւ եւ թող տուաւ պապին: Բայց մարդու չըսէք թէ ես սպաննեցի. պապին չ՛ուղեր. ամօթ է, կ'ըսէ որ որսորդ մը արջէն յաղթուի, վրան կը խնդան:

Կէս ժամ չանցած՝ Ատոմ եկաւ, հետը քար ըրեր լով արու քարայծ մը: Ատոմ խելացի որսորդ էր, ան երբեք չէր սպաններ մայրեր, փոքրիկներ, ըլլայ թըռչուն, ըլլայ չորքոտանի:

— Ինչո՞ւ եկեր էք, հարցուց Մարոյին եւ ընկերուհիներուն:

— Պապի՛, շուտ վար իջնենք. մամին հիւանդ կը մեռնի՛ եթէ քեզ չտեսնէ :

— Ի՞նչ ունի, հիւա՞նդ է :

— Չէ, պատասխանեց Մարոյ. հիւանդ չէ, բայց լսեց թէ քեզ արջերը կերեր են եւ ցաւէն հիւանդ եղաւ :

— Տնաւեր, ո՞ր արջը կրնայ պապիդ ուտել. ո՞վ այդ յիմար լուրը տարածեր է : Վախեմ թէ այդ խեւ Աւոն եւ յիմար Սերդոն ըլլան : Է՛հ, քանի որ այս քարայժը զարկի՛ վար իջնենք, թող մայրդ չտկէ եւ ձմրան պահածոյ չինէ : Ես քարայժը կը շալկեմ, Օնիկ հրացանս կ'առնէ եւ կ'իջնենք :

— Չէ՛, պապի, ըսաւ Օնիկ, ես արջուկս պիտի շալկեմ :

— Ի՞նչ պիտի ընես, բալաս, ըսաւ հայրը :

— Տուն կը տանիմ. երբ տեսնեն զլուխդ վէրքոտ, առանց այս քոթոթին, պիտի ըսեն թէ Ատոմ ծեծ կերեր է. եթէ արջուկս տեսնեն՝ պիտի ըսեն թէ Ատոմ հերոս է, մայրը զարկեր, ձազն առեր է :

— Ճիշտ է, բալաս. թող Մարոն շալկէ հրացանը :

Գեռ շատ լոյս էր. հինգ հոգի, մէկը միւսին ետեւէն վար իջան : Տեսան պառաւներ եւ աչքերնուն չհաւատացին. Ատոմ յարութիւն առեր է, ըսին իրարու : Կատար վագեց եւ ամուսինին ու տղուն փաթթուեցաւ : Դուռ դրացի եկան, զլուխդ ողջ ըլլայ ըսելու. եկան ծերեր, պառաւներ, հետաքրքիրներ : Բայց աղջիկները չէին համբերած. աղջիկ են, ինչ կ'ուզես, բերանին ոսպ դնես՝ չի թրջիր. անոնք տարածեցին թէ՛ Օնիկ իր հսկայ հայրն ազատեր է, արջն սպաննելով :

— Ատոմ, ի՞նչպէս եղաւ, հարցուց ծերունի մը :

— Եղբա՛յր, ի՞նչ ըսեմ, վրաս հսկայ արջ մը յարձակեցաւ, դանակը սիրտը խոթեցի եւ գետին փռեցի :

— Մի՛ քաշեր, Ատոմ, մի՛ քաշեր. քեզ որդիդ ազատեր է, պատասխանեց ծերունին :

— Հա՛, որդիս ալ հարուած մը տուաւ սատկած արջին, ըսաւ Ատոմ :

Բայց Ծահկերտի մէջ Օնիկի անունը հերոսի տեղ անցաւ, երեխաներն իր շուրջը կը խմբուէին եւ հետաքրքիր հարցումներ կ'ընէին :

— Օնիկ, ի՞նչ տեսակ բան էր :

— Օնիկ, Մարգարենց գոմէջին չափ կա՞ր :

— Կար ի հարկ է. երբ գետին փռուեցաւ, մէկ կողմէն միւսը չէիր կրնար ցատկել, կը պատասխանէր տըղան :

Որսորդ Ատոմ ընդարձակ տուն ունէր. մեծ ախոռ ունէր, բայց մէջը մէկ հատ կով կար. ընդարձակ փարախ ունէր, բայց մէջը երեք հատ ոչխարներ կային. ան զլուխ չունէր ընտանի անասուններով զբաղելու. իր սէրը եւ աչքը լեռներն էին, որսորդութիւնն էր : Տան կենդանիները կինն ու աղջիկը կը խնամէին : Օնիկ միշտ իր արջուկին հետ էր. միտքը դրաւ լաւ դաստիարակութիւն մը տալ այդ պզտիկին : Նախ պէտք է լաւ ցատկել սորվի, յետոյ հնազանդութիւն, յետոյ խօսք հասկնալ, իր հրամանները կատարել : Ամէն օր համբերութեամբ դաս տուաւ՝ մարդու պէս ապրելու : Քոթոթը լաւ սորվեցաւ զլսուն վրայ դառնալ, փայտը ձեռքին՝ երկու ոտքի վրայ քալել. պարել ալ սորվեցուց. հազիւ թէ Ատոմ սրինգն առնէր, խեղճ ձագուկը ոտքի կ'ելլէր ու կը սկսէր պարել, բոլորին ծիծաղը շարժելով :

Ձմեռն հասաւ, սոսկալի ձմեռ՝ այդ լեռնային երկիրներուն համար. Ատոմ կանչեց Օնիկն եւ ըսաւ.

— Ալ կը բաւէ այդ քոթոթին հետ խաղալ. վաղը

դպրոց դնա: Տէր Հայրը տղաքներն արդէն ժողոված է եւ կարդալ գրել պիտի սորվեցնէ:

— Պապի, կարդալ գրելը տէրտէրի գործ է. ես արջուկիս դաս պիտի տամ:

— Տղայ, դուն էջ մնաս, արջուկդ մա՞րդ դառնայ: Դպրոց դնա որ բան մը սորվիս:

Օնիկ ստիպուեցաւ հօրն հնազանդել: Մայրը լաթէ տոպրակ մը կարեց եւ մէջը դրաւ այրեանարանը. Հաց ու պանիր տուաւ, որ երբ անօթենայ՝ ուտէ:

— Մարոյ, ըսաւ Օնիկ քրոջը. արջուկս ախոռ կը ձգեմ, դուռը չբանաս, կը փախչի. մինչեւ դառնամ այդ անիծեալ դպրոցէն, թող հոն մնայ:

Այսպէս քանի մը օր դնաց եկաւ. եւ օր մըն ալ Մարոյ ախոռին դուռը բաց մոռցաւ. քոթոթը կամացուկ մը դուրս ելաւ. հոտուրտաց ճամբան եւ ձիւնի մէջ բացուած արահետէն ուղղակի դպրոց դնաց: Դուռը դոց էր. կեցաւ, եւ սպա դլխով դարկաւ. թաթերով չօշափեց: Ներսէն կարծեցին թէ մէկը դուրս մնացեր է, բացին դուռն եւ արջուկը մրթմրթալով ներս մտաւ: Փրթաւ ազմուկ եւ շփոթութիւն, անասունը դնաց Օնիկին քով, թաթերը ծունկերուն դրաւ եւ սկսաւ սաղին անդին նայել:

— Կարդալո՞ւ եկար, արջուկս, ըսաւ Օնիկ:

— Դուրս քչէ, պոռաց Տէր Հայրը:

Բայց ո՞վ կը լսէր անոր ձայնը. տղաները ոտքի ելան, արջուկին շուրջն հաւաքուեցան. ոմանք, կը վախէին դպչել, ուրիշներ դուռը կը շոյէին:

— Օնիկ, անունն ի՞նչ է, հարցուց պզտիկ մը:

— Աղէկ ըսիր, դեռ անուն մը չունի, պատասխանեց Օնիկ: Ի՞նչ դնենք:

Շատ անուններ ըսին, բայց Օնիկ չհամարեց:

— Լա՛ւ, ըսաւ Օնիկ, ինչ որ Տէր Հայրը դնէ, թող ան ըլլայ:

— Տէր Հայր, անուն մը գիր, նայէ ինչ սիրուն է, ըսին բոլորը:

Քահանան սկսաւ խնդալ. ի՞նչ կրնար ընել այդ շփոթութեան մէջ. գիրքերն արդէն ոտքերնուն տակ էին. իրար հրելով արջուկին շուրջ բոլորած էին:

— Հեռո՛ւ կեցէք, կանչեց քահանան. ես հիմա լաւ անուն մը պիտի դնեմ. կը տեսնեմ որ շատերէդ աւելի խելացի է. դուք դպրոցէն կը փախչիք, ինքը դպրոց կու գայ:

— Ըսէ՛, ըսէ՛ Տէր Հայր, պոռացին բոլորը:

— Մտիկ ըրէք. Պարսիկներու Շահին անունով, նախընտանի խանին կնիքով, Ստամպուլի սուլթանին հրամանով՝ զինքը կը կոչեմ Տորք:

— Տո՛րք, Տո՛րք, պոռացին տղաները. գեղեցիկ անուն է:

— Տէ՛հ, հիմա դացէք տուներնիդ. այսօր դպրոց չկայ Տորքին ի պատիւ:

Դունէն դուրս թափեցան, ինչպէս փեթակէն մեղուները բզզալով դուրս կ'ելլեն: Դուրսը ցուրտը դանակի պէս կը կտրէր. բայց իրենք վարժ էին այդ չոր ցուրտին: Շատեր հետեւեցան Օնիկին, որ Տորքը գիրկը՝ ուղղակի ախոռ մտաւ տաքնալու եւ արջուկը տեղադրելու համար:

Տէրտէրն եկաւ դանդատի:

— Ատո՛մ ամի, սա տղադ կարգի բեր. պէտք ես լաւ մը թակել. ուսում չի սիրեր, դասարանը կը խանդարէ: Միշտ իր արջուկին վրայ կը խօսի: Գիրքը պատուտած է. դեռ Այր գիրը չսորվեցաւ:

Ատոմ կանչեց Օնիկը. Տորքն ալ ետեւէն սենեակ մտան: Տէր Հայրը սկսաւ խնդալ:

— Օնիկ, աչքերուս լաւ նայէ, սա դաւաղանը կը տեսնե՞ս, մէջքիդ վրայ կը կոտորեմ՝ եթէ լաւ չսորվիս:

Այդ պահուն Տորք դնաց եւ դաւաղանն Ատոմին ձեռքէն առաւ ու սկսաւ պարել: Բոլորն ալ սկսան կուշտ կուշտ խնդալ:

— Տէ՛ր Հայր, ինչ ընեմ՝ չեմ կրնար տղուս կամքը կոտորել: Քեզի խոստովանարար բան մ'ըսեմ. եթէ Օնիկը չըլլար՝ այդ հսկայ արջը զիս կերած էր. բայց մարդու չըսես, քովդ պահէ:

— Պապի, ըսաւ Օնիկ, քեզի խօսք կու տամ որ դասերս լաւ պիտի սերտեմ. բայց դուն ալ զիս որսի պիտի տանիս երբոր սարն երթաս:

— Հա՛, բալիկս, կը տանիմ. հիմա ձմեռ է, ցուրտ է. դուն դաս սորվէ, ես քեզի համով որս կը բերեմ:

— Տէ՛ր Հայր, օրհնէ այս խեւը, ըսաւ Կատար ներս մտնելով, որ թողու այդ անասունը եւ բան մը սորվի, մարդ ըլլայ:

— Կ'ըլլայ, կ'ըլլայ, Կատար քոյրիկ, պատասխանեց Տէր Հայրը: Օնիկ, այրբենարանդ բեր, դարձաւ տղուն:

— Ահա, Տէր Հայր, բերելով դերքը:

— Տղայ, ասոր կէսն ո՞ւր է:

— Կտրեցի ծամեցի, պատասխանեց Օնիկ մանկական պարզութեամբ:

— Եթէ փորդ երթայ՝ կը մեռնիս, ըսաւ Տէրտէրը. մէջը թոյն կայ, օձի կաթ կայ:

— Տէր Հայր, խնդրեց Կատար, ասոր նոր այրբենարան մը տուր, ինչ որ է՝ կը վճարենք:

— Սուղ բան է, քուրիկ. նայինք Ս. էջմիածինէն բերել տանք, պատասխանեց քահանան:

Մարոյ ախտէի վրայ թէյ բերաւ, բալի անոյշ բերաւ:

— Համեցէք, Հայր սուրբ, ըսաւ ու ձեռքը պագաւ: Երբ քահանան պիտի մեկնէր, Ատոմ ձեռքին մէջ դահեկան մը դրաւ:

— Տղուս լաւ նայէ, աչք ունեցիր, քու դաւաղդ է:

— Հա՛, հա՛, Ատոմ աղբեր, մի՛ վախեր, Օնիկը մեծ մարդ պիտի ըլլայ, տիրացու պիտի ըլլայ:

— Թող տիրացու չըլլայ, բայց կարգալ գրել սորվի: Մէկը որ դեր չի ճանչնար՝ երկու անգամ էչ է, ըսաւ Ատոմ:

Բայց Ատոմ ինքը կարգալ չէր գիտեր: Իր մանկութեանը դպրոց չկար, ոչ ալ Տէր Եղիշէի պէս ուսումնասէր քահանայ մը՝ որ Շահկերտի զարգացումին հոգ տանէր, ազդ շինէր, հայու սիրտ դնէր այդ լեռնային ժողովուրդին մէջ: Ինքը էջմիածին ուխտի գացած էր. Տաթեւ տեսած էր, ձեռագիր կարգացած էր: Գիտէր Սահակ-Մեսրոպը, Տրդատն ու Լուսաւորիչը. կարգացած էր վարդանի պատմութիւնը եւ Պարսիկներու հանդէպ սկուան թթու էր:

— Ա՛խ, այդ խաները, մէկուն ազիքով միւսը կախելու է, կ'ըսէր շատ անգամ. ո՛րքան մարդ կը կողոպտեն Շահին անունով:

Ատոմին աչքերը դէպի ձիւնապատ լեռներն էին. ձմեռ ատեն որս շատ կ'ըլլայ, բայց վտանգաւոր է. բոլոր դազաններն անօթի մնացած՝ խումբերով վար կ'իջնէին. մանաւանդ գայլերը շատ անգամ մինչեւ գիւղ կ'իջնէին՝ դուրս մնացած չնիկ մը, կատու մը կամ առանձին մարդ մը յափշտակելու համար: Գրեթէ ամէն

գիշեր Ատոմի տանը վերեւ վայնասուն կար: Գամբոններ՝ որ գայլեր կը հալածէին. հրացաններ՝ որ կ'որոտային գէպի վոհմակները:

— Կնի՛կ, ըսաւ Ատոմ Կատարին, վաղը որսի կ'երթամ: Աչքերս լեռներուն վրայ մնացին. աչքով կարելի չէ որսը տեսնել. նայինք քարայծ մը, կամ եղջերու մը կը զարնե՞մ:

— Մարդ Ատուծոյ, տեղդ հանգիստ չե՞ս կրնար մնալ. նորէն վտանգին բերա՞նը կ'ուզես երթալ: Նախ զիս թաղէ, տղաքդ թաղէ, յետոյ զնա նահատակ եղիմեմ որ քիչ մը քեզի խելք տայ. սրտէդ հանէ՛ սա զիր: Դուն սիրտ չունիս, գութ չունիս: Ո՞ր սուրբին լեռները:

— Շատ մի՛ բղաւեր, պատասխանեց Ատոմ. լեռներն ինձ համար կեանք են, երգ են, ազատութիւն են: Երեսունհինգ տարի է գացեր եկեր եմ, սարերուն հետ ապրեր եմ, հի՞մա պիտի վախնամ քանի մը զագաններէ: Յետոյ մի՛նակ չեմ. Մարգարենց Աւոն, Մինասենց Սերգոն, Սանդամիրեան Մկուչը, Սարոյենց Վրէժը հետս են. բոլորս ալ լերան գաւակ ենք. առիւծ ըլլայ՝ դէմը կ'երթանք: Դուն տանը նայէ, տղան թող դպրոց երթայ. չորս հինգ օրէն թերեւս դառնանք: Եթէ կասկածի մէջ ըլլաս, տանիք ելիր եւ քարայրներուն կրակը դիտէ:

Յաջորդ օրը, հինգ որսորդներ ոչխարի կաշիէ հաստ զգեստներ հագած, ոտքերնին լաւ փաթթած բուրդէ լաթերով եւ տրեխներով, մեկնեցան դէպի սարը: Ոչ ոք իրենց ուշադրութիւն ըրաւ. սովորական բան էր ձմրան որսորդութիւնը. շատեր գիւղին մօտերը որս կ'ընէին. քիչեր եւ քաջեր կը բարձրանային մինչեւ քարայրները: Ձիւնը մինչեւ մէջքերնին կը հասնէր, բայց անոնք ճամ-

բան այնպէս գիտէին, ինչպէս թռչունն իր բոյնը: Երբ զառիվերին կէսն հասան՝ խայթող ցուրտ հով մը փչել սկսաւ. իրենց պեխերէն բարակ սառեր սկսան կախուիլ. կարծես թէ սպիտակ մօմիկներ ըլլային: Կուրծք տուին հովին, կուրծք տուին ցուրտին:

— Մէկ մէկ բաժակ օդին լաւ կ'ընէ, ըսաւ Սարոյենց Վրէժը, եւ դրպանէն շիչն հանելով բերնին տաբալ: Դուք ալ խմեցէք. երբ կրակը ներսն է, դուրսի ցուրտն ալ կը հայի:

Սմեցին. կարծես ոյժ առած, բարձրացան մինչեւ քարայրները:

Ատոմ իսկոյն կրակ վառեց, չոր փայտ եւ մախր ունէր. զարկաւ ծծումբէ լուցկին եւ բոց հանեց:

— Թող կնիկները տեսնեն թէ հոս ենք, ըսաւ խրնդալով:

Ձմեռ ատեն ընդհանրապէս զազանները սարերէն վար կ'իջնեն, իսկ բարձր տեղեր կը մնան որսի չորքոտանիները, քարայծը, այծեամը, եղջերուն, եզնիկը եւ ուրիշներ: Բայց որսորդներն այդ օր քարայր մնացին. յոգնած էին: Կրակին շուրջ տարածուեցան, իրենց հագուստներէն ու պեխերէն սառերը մոմի կաթիլի պէս հալեցան: Մութը շուտ ինկաւ. վարէն գիւղին աղօտ լոյսերն սկսան տեսնուիլ:

— Մկու՛չ, ըսաւ Ատոմ, մէյ մը նայէ թէ վառօղբ թա՞ց է թէ չոր. վաղը ամօթով չմնանք անասուններու ասջեւ:

Սանդամիրեան Մկուչը բացաւ կաշիէ տոպրակները, ամէն մէկն իր վառօղն ունէր:

— Քիչ մը խոնաւցած են, ըսաւ Մկուչ:

— Կրակին վրայ չբռնես, խնդալով ըսաւ Սերգոյ:

— Տօ, զիս տմբո՞յ կը կարծես. այդքա՞ն ալ չեմ

դիտեր, պատասխանեց Մկուչ, տուպրակները կրակէն բուռական հեռու դնելով:

Ինչ ետք Աւոյ գնաց իր տուպրակը նայելու. առանց զգացնելու պտղուց մը վառող առաւ եւ կրակին վրայ ցանեց: Փոքրիկ պայթում մը լսուեցաւ եւ ծուխը քաբայրը բռնեց:

— Խէ՛ւ, ի՞նչ ըրիր, պոռաց Սարոյեանց Վրէժը:

— Վառողի հոտ առէք, որ վաղը լաւ որսորդութիւն ընէք:

— Ես մէկ աչքով արծիւ կը դարնեմ, ըսաւ Վրէժ. քեզի պէս չեմ որ անասունին տակը մտնեմ, նշան առնելու համար:

— Փչէ՛, փչէ՛, Վրէժ, կարծես թէ հօրէ, մօրէ որսորդ էիք: Նայէ՛, Ատոմին բան չեմ ըսեր. անոր զընդակը չի վրիպիր. կա՛մ որսի ճիշտ ճակտին մէջտեղ կը դարնէ, կամ աչքին:

— Հպարտութիւն չըլլայ, աւելցուց Ատոմ, ես երկու հազար կանդուն (չուրջ 1000 մեդր) հեռուէն ճանճ մը կընամ դարնել:

— Է՛հ, է՛հ... բացազանչեցին չորսը միասին:

— Դէ՛, ըսենք թէ հազար կանդունէն, պատասխանեց Ատոմ:

— Արոյ, իջիր, իջիր, ըսին միասին:

— Հա, թող ըլլայ, հինգ հարիւր, չորս հարիւր, երկու հարիւր, հարիւր, ա՛յս ալ շատ է:

— Ըսէ՛ թէ՛՝ քթիդ վրայ նստած առեն հրացան կը քաշես ու կը սպաննես, ըսաւ Աւոյ:

Այդ պահուն քարայրի դրան վրայ պզտիկ աղմուկ մը լսուեցաւ, խոշոր շունչ առնելու սոյլ մը: Տեսնուեցաւ մեծ արջ մը, ապա երկրորդ մը, երրորդ մը, որոնք կրակին դիմաց կանդ առին եւ խաղաղ աչքերով ներս

նայեցան: Մեծ արջը թաթը երկարեց կրակին վրայ. այրուցքէն ետ նետուեցաւ. խեղճն ի՛նչ դիտնար թէ կրակը կ'այրէ, կրակ չէր տեսած, դադափար չունէր: Թնձկաց, մղկտաց. լաւ որ ձիւնին վրայ էր, ցաւը շուտով անցաւ: Դուք ալ, եթէ տեղ մ'այրի՛՝ անմիջապէս սառ դրէք:

Երեք արջերը քիչ մը ետ քաշուեցան եւ ետեւի ոտքերնուն վրայ նստած՝ ապուշ ապուշ սկսան ներս նայիլ:

— Զարմանալի բան է, ըսաւ Ատոմ. արջերն ընդհանրապէս ձմեռ ժամանակ, քարայրներու մէջ, խորը կը քաշուին եւ քնաթափութեան մէջ կ'իյնան մինչեւ ձիւններն հալին. ասոնք ի՞նչպէս մէջտեղ մնացեր են:

— Կ'երեւի թէ ծանր մտածութիւններ ունին եւ քուներնին չի տանիր, պատասխանեց Աւոյ. նայեցէք ինչպէս ծանր կեցեր են, կարծես թէ ժողովքի նստած՝ մէկ մէկ խաներ են:

Աւոյ խանձոտ մ'առաւ եւ նետեց դէպի կենդանիները. մէկ հատին քթին դպաւ. մխալով դետին ինկաւ եւ շուտով մարեցաւ: Արջերը, կարծես արհամարհական դիրքով, ոտքի ելան եւ սկսան դէպի վար իջնել:

— Ինձի նայեցէք, ըսաւ Սերգոյ, ի՛նչ կ'ըլլայ, ի՛նչ չ'ըլլար, այս դիշեր ապահով քնանալու համար՝ պէտք է կրակը միշտ վառ մնայ եւ կարգաւ պահակ կենանք:

— Հա, վախը փորդ ինկաւ, հէ՞, ըսաւ Ատոմ. հապա իմ տեղս ըլլայիր, գոմէջի պէս արջը վրադ, ի՞նչ պիտի ընէիր:

— Օնիկը կը կանչէի եւ սպաննել կու տայի, պատասխանեց Սերգոյ:

— Սերգոյ իրաւունք ունի, ըսին միւսները. խոհեմին մայրը չէ լացած:

— Նախ ես կը կենամ, աւելցուց Աւոյ. յետոյ Վրէ՛-

ժը, յետոյ Միուշը, յետոյ Սերգոն եւ առաւօտեան դէմ՝ Ատոմ արոն կը կենայ:

— Թող այդպէս ըլլայ, ըսաւ Ատոմ. դէ քնանանք: Աւոյ, չվախնաս, մենք հոս ենք. կրակը լաւ արծարծէ. փայտն առատ է, հող մի՛ ընէր:

— Ծօ, ես ստտանան չալկած մինչեւ Նախըջեւան տարեր բերեր եմ, դազաններէն պիտի վախնամ, պատասխանեց Աւոյ:

— Այդ խայտառակին անուներ մի՛ տար, ըսաւ Մը-կուշ, յանկարծ այս գիշեր կու դայ եւ մեր հողիին հետ կը խաղայ:

— Երեսդ խաչ հանէ, գալով կը փախչի:

Չորսերնին քնացան տարածուած կրակին շուրջը: Աւոյ նստած ծալապատիկ, հրացանը քովը, կը դիտէր դէպի դուրս. ձիւնը բիւրեղային լոյս մը ձգած էր լեռներուն վրայ: Լոռթիւնն այնքան խոր էր որ ուզէիր չուզէիր վախ կը զգայիր: Շոճիներն ու մայրիները ծանրաբեռն ձիւնի դէղերու տակ, կարծես կոնակինն ճերմակ շղարչ առած, պառաւներ ըլլային. ոչ մէկ շարժում ունէին, ոչ մէկ սօսափուն: Աւոյ կամացուկ մը դուրս ելաւ, կարծես թշնամիի դիրքերը քննելու համար եւ ապա ներս վազեց: Վրան դող եկաւ:

— Պօքն ուրիշ է, բանն ուրիշ է, ըսաւ ինքնիրեն. ամէնքս ալ անվախ հերոսներ ենք խօսքի մէջ, բայց, հերն անիծած, աս սոսկալի լոռթիւնը կարծես թէ քարի պէս վրաս ինկեր է:

Այդ ժամանակ, շատ հեռուէն, դայերու ոռնոցներ լսուեցան...

— Ուհո՛ւ... ուհո՛ւ...

Քիչ մը մօտեցան: Աւոյ կրակն աւելի արծարծեց եւ

այնպէս մը տարածեց քարայրին դիմաց՝ որ բոցէ ցանկապատ ձեւացաւ:

— Օրհնած ըլլաս, Աստուած իմ, ըսաւ, որ կրակն ստեղծեր էս:

— Ուհո՛ւ... ուհո՛ւ...

Դարձեալ լսուեցաւ, կարծես թէ իր տկանջին տակն ըլլային: Դողդողալով ձեռքն առաւ հրացանը:

— Քաշե՛մ, թէ չքաշեմ, ըսաւ ինքնիրեն:

— Ուհո՛ւ... ուհո՛ւ... աւելի մօտ լսուեցաւ դայ-լերու ձայնը:

— Վրէ՛ժ, Վրէ՛ժ, կանչեց, ցնցելով անոր ոտքը:

Վրէ՛ժ խոր քունի մէջ էր. միւս կողմը դարձաւ եւ լայն շունչ քաշելով մուշ մուշ քնացաւ:

— Ես ալ կը քաշեմ, ըսաւ Աւոյ եւ հրացանի երկար փողը քարայրէն դուրս ցցելով. տրա՛ք... քաշեց բըլթակը. քարայրն որոտաց, ձորերը ձայն տուին: Իր չորս ընկերները վեր ցատկեցին:

— Ի՞նչ կայ, Աւոյ, ըսին կէս մը շփոթած:

— Բան մը չկայ, պատասխանեց պաղարին իր վախը ծածկելով. ուզեցի դիտնալ թէ կը քնանա՞ք թէ արթուն էք:

— Ծօ, խե՛ւ, պոռաց Ատոմ, անշուշտ կը քնանանք:

— Երազ տեսա՞ք թէ դայերը կու դային, քարայր կը մտնէին. ես ալ դանակս քաշած քաջութեամբ կը կռուէի ձեզ պաշտպանելու համար:

— Այո՛, պատասխանեց Սերգոյ, ես տեսայ որ դայ մը ոտքիդ ծայրէն խածած՝ դէպի ձորը կը տանէր, դուն ալ մարի՛կ, մարի՛կ, հասիր, կը պոռայիր:

— Սուտ էս, ոչ մէկ դայ կ'եկաւ:

Գայերու ոռնոցը կրկին լսուեցաւ. կարծես՝ թէ՛ կը մօտենային, թէ՛ կը հեռանային:

— Վրէժ, հիմա կարգը քուկդ է հսկելու, ըսաւ Աւոյ. չվախնաս, ես հոս եմ, ձայն տուր եթէ քարայրի բերանը դան:

— Գնա՛ բանդ. անոնք կրակէն կը վախնան, չեն մօտենար, պատասխանեց Վրէժ:

Գարձեալ երկարեցան յարգին վրայ իրենց կաշիէ զգեստներու մէջ փաթթուած: Քարայրը բաւական տաքցեր էր կրակի ոյժէն. բայց դուրսէն ցուրտը տաքին հետ կռիւ կ'ընէր: Վրէժ քարայրէն դուրս ելաւ. միապաղաղ լուռթիւնն իր վրան ալ ազդեց. դարձեալ անցաւ կրակին ետեւ եւ հրացանը կուշտին դրաւ. ինչ կ'ըլլայ, ինչ չ'ըլլար: Աւոյ սկսաւ խորդալ:

— Արջի պէս կը խորդայ, ըսաւ ինքնիրեն, ես քեզի կը հասկցնեմ:

Խոտին վրայ բարակ եզէզ մը դտաւ, կտրեց եւ Աւոյի քիթն անցուց. Աւոյ սկսաւ սուլելով խորդալ:

— Եթէ արջերը նորէն գան, Աւոն կը սուլէ, անոնք կը պարեն, ըսաւ ինքնիրեն խնդալով:

Կէս գիշերն անցեր էր:

— Մ'կո՛ւչ, Մ'կո՛ւչ, ցնցեց զայն. ելի՛ր, կարգը քուկդ է: Գրեթէ առաւօտ կ'ըլլայ:

— Անիրաւ, դեռ նոր սկսար հսկել, ըսաւ Մ'կուչ, աչքերը շիւկով:

— Քնացողն ի՞նչ գիտէ թէ ժամն ե՞րբ կ'անցնի: Աւոյին հարցուր. նայէ աշխարհէն լուր չունի, արջի պէս կը խորդայ եւ կը սուլէ:

— Դուրսն ի՞նչ կայ, հարցուց Մ'կուչ:

— Ձիւն, ձիւն եւ դայլեր ու արջեր որ քիչ մը վար մեզի կը սպասեն ուտելու համար: Կրակը միշտ վառ պահէ. անոնք հրացանէ չեն վախեր, կրակէն կը սոսկան:

— Աւոյի քիթն ծակն ի՞նչ կայ, ի՞նչ է այս փոքրիկ եղէգը, հարցուց Մ'կուչ:

— Ձգէ, ես դրի, արջի պէս կը խորդար, մարդուս վրայ տիրութիւն կը բերէր. եղէգ դրի, հիմա կը սուլէ: Ես սկսայ քնանալ. բարի դիշեր, Մ'կուչ. վաղը սքանչելի որսորդութիւն պիտի ընենք:

Գիշերն այսպէս անցաւ՝ մէկը միւսն արթնցնելով: Կաթի գոյնով առաւօտ մը բացուեցաւ: Օդը պարզ էր. հով չկար, բայց ցուրտը հաւասարապէս կծող էր: Քիչ մը հաց ու պանիր կերան, խմեցին մէկ մէկ ումպ օդի եւ ճամբայ ինկան դէպի ձորը:

— Կրակը մի՛ մարէք, ըսաւ Ատոմ, թող միայ. դա՛ղաններն հեռու կը պահէ:

— Հապա ըսիր թէ արջերը կը քնանան քարայրներու մէջ. դայլերը վարերը կ'իջնեն, հարցուց Աւոյ. ալ ի՞նչ գազան պիտի դայ մեր քարայրը մտնելու: Եթէ մեր հացն ու պանիրն ալ առնեն տանին, մենք ի՞նչ պիտի ընենք:

— Ես ժամանակին յովազ ալ տեսեր եմ այս սարերուն վրայ, պատասխանեց Ատոմ: Գազանները մեզի չեն հարցներ թէ ո՞ւր կ'երթան, ի՞նչ կ'ընեն:

Անոնք ճամբայ ինկան մէկ շարքի վրայ. Աւոյ խելք մտածեց եւ ըսաւ ինքնիրեն:

— Եթէ ես ամէնէն ետեւ մնամ, կրնայ գազան մը ետեւէն զիս բռնել. եթէ ամէնէն առջեւն ըլլամ, նախ իմ վրաս կը յարձակի գազանը. ուստի ճիշտ մէջտեղ կը քալեմ եւ պահակներ կ'ունենամ:

Աճապարեց եւ մէջտեղ անցաւ. շարքն առաջ գնաց եւ մտաւ մօտակայ ձորը: Ձիւնը պատուելով առաջ կ'երթային: Ոչ մէկ որս կը տեսնուէր: Նայեցան ձորէն վեր,

ձորէն վար. ձիւնարարձ ծառեր եւ անծայր սպիտակու-
թիւն մը կար:

— Հերն անիծած, ըսաւ Ատոմ, կարծես թէ բախտ
չունինք:

— Լաւ է ցրուինք ասդին անդին, ըսաւ Վրէժ, թերեւս
ձորէ ձոր հանդիպինք որսի:

— Ես քեզի հետ կու գամ, Վրէժ, ըսաւ Աւոյ. այն-
պէս նշան կ'առնեմ որ գնդակս արծիւի աչքին ալ կը
դպչի:

— Հեռուն, սա դիմացի բլրան կողքին՝ կէտեր կը
չարժին, դուք ալ կը տեսնէ՞ք, հարցուց Ատոմ:

— Այո՛, ճիշտ է, պատասխանեց Մկուչ. կէտեր կը
տեսնուին:

— Ծառի ճիւղեր պիտի ըլլան, աւելցուց Աւոյ:

— Հովանոցի ձեւով առաջ երթանք, ըսաւ Ատոմ, եւ
չըջապատենք: Եղնիկներ պիտի ըլլան:

Ոմանք դէպի վեր զարկին, ոմանք դէպի վար զար-
կին եւ մօտեցան բաւական մը. իսկապէս եղնիկներ էին,
որոնք թուփերէն տերեւներ կը փրցնէին:

— Էգերուն եւ պղտիկներուն չկրակէք, ըսաւ Ատոմ,
միայն արուններուն:

— Ինչէ՞ն գիտնամ թէ էգ կամ արու է, հարցուց
Աւոյ:

— Կոտոջներ ունին, ծայրերէն ալ մէկ մէկ դան-
գակ կախուած է, պատասխանեց Սերգոյ: Որսորդ ես,
եւ էգն արուէն չե՞ս գիտեր զանազանել:

Քիչ վերջ Աւոյ կրակեց եւ զնդակը ծառի ճիւղի մը
դպաւ ու ձիւնը թափեց: Կրակեց նաեւ Ատոմ. արու եղ-
նիկը գետին ինկաւ, ու միւսները սարսափահար փա-
խան: Հինգ հատ էին. մէկը զարնուեցաւ, մնացին չորս
հատ: Մօտեցան, եղնիկը տարածուած ձիւնին վրայ դեռ

չունչ ունէր: Կարմիր արիւնը ձիւնին այնքան դեղեցիկ
գոյն տուած էր, կարծես թէ որդան կարմիրով ներ-
կուած ըլլար: Ատոմ դաշոյնը հանեց եւ անասունին վիզը
խոթեց որ խոզոյն սատկեցաւ:

— Աւոյ, ըսաւ Ատոմ, շարկէ եւ քարայր տար:

— Եթէ յանկարծ ճամբան զայլերու հանդիպիմ եւ
ինձ ըսեն թէ որսը մեզի տուը՝ ապա թէ ոչ քեզ կ'ու-
տենք, ի՞նչ պատասխան տամ:

— Ըսէ թէ մեր մեծն Ատոմն է, գացէք հրաման ա-
ռէք, պատասխանեց Վրէժ:

— Իրաւունք ունի, ըսաւ Ատոմ, թէ՛ բերը ծանր է
եւ թէ կրնայ բան մը հանդիպիլ, լաւ է որ Վրէժն ալ
ընկերէ Աւոյին: Մենք քիչ մ'ալ շըջինք, թերեւս ուրիշ
որս ալ ընենք:

Վրէժ եւ Աւոյ հրացաննին լեցուցին եւ որսը շալ-
կելով ճամբայ ինկան դէպի քարայրը: Հազիւ մօտեցան
եւ քիչ մը զառիվերը ըրին, քարայրի դրան առջեւ երկու
զայլեր տեսան, գորշ գոյնով եւ սովահար վիճակի մէջ:
Գայլերէն մին թաթերով տաք մոխիրին կը դպչէր ու
ետ կը քաշուէր. հազիւ ծուխ կ'ելլէր, կրակը մարելու
վրայ էր:

— Վրէժ, ըսաւ վախով Աւոյ, քարայրին դիմաց
երկու զայլեր կան:

— Ըիշտ է. որսը վար դնենք եւ կրակենք:

Կրակեց Աւոյ եւ զնդակը մէկ հատի գլխուն եկաւ:
Կրակեց Վրէժ, միւսին ոտքին եկաւ: Կաղկանձելով խոյս
տուին:

— Հիմա ողջ մնացածը միւսը կ'ուտէ, ըսաւ Վրէժ:

— Զգուշութեամբ երթանք, ուրիշներ ալ չըլլան,
ըսաւ Աւոյ:

Երբ քարայրը մտան, խորքին մէջ տեսան որ երկու

աչքեր կը փայլէին եւ փոքրիկ անասուն մը պատէ պատ կը դարնուէր:

— Վրէ՛ժ, ուրիշ գայլ մը:

— Մօտեցիր վզէն բռնէ, պատասխանեց Վրէ՛ժ:

— Դուն բռնէ, պարապ տեղ անունդ Վրէ՛ժ չեն դըրած:

— Ի՞նչ տարօրինակ բան, ըսաւ Վրէ՛ժ դէպի անասունն երթալով. փոքրիկ այծեամ մ'է:

Անպատճառ գայլերէն հալածուած՝ քարայրն ապաստաներ է, ցատկելով կրակի վրայէն: Գիտէ՞ր արդեօք թէ կրակէն կը վախեն գայլերը:

Այծեամին սիրտն ուժգին կը զարնէր. աչքերն այնքան աղաչական էին որ հազար խիղճ կը զարնէին: Յաջողեցան բռնել եւ կոծղի մը կապել: Անասունն սաղին անդին զարնուեցաւ եւ յոգնած՝ հանդարտեցաւ: Եկան միւսներն ալ շայկած մեծ քարայծ մը:

— Ի՞նչպէս բռնեցիք այս այծեամը, հարցուց Ատոմ:

— Նախ հարցուր թէ ի՞նչ պատահեցաւ, ըսաւ Աւոյ. գայլերու հետ պատերազմ ըրինք. ա՛յլքան արիւնոտ կռիւ Մեծն Տիղբանն ալ չէր ըրած:

— Փչէ, Աւոյ, ըսաւ Սերգոյ, փչէ ուղածիդ պէս:

— Ճիշտ չէ՞, Վրէ՛ժ, հարցուց Աւոյ:

— Այո՛, երկու գայլեր սպաննեցինք քարայրին առջեւ եւ ներս մտանք:

— Այծեամը թող թուէք, ըսաւ Ատոմ, թող երթայ իր երամին հասնի: Վաղը որսի չենք երթար. այս երկու զարնուածները կը քերթենք ու կը պատրաստենք: Միւս օր զարձեալ դուրս կ'ելլենք, եթէ բան մը զարկինք՝ լաւ, ապա թէ ոչ յաջորդ օրը վար կ'իջնենք. հիմա մեր կնիկները մեզի կը սպասեն. կնիկներուն հետ խաղալ

չ'ըլլար, եթէ բարկանան՝ մեզ տունէն ալ դուրս կը քշեն:

Երեք օր ալ մնացին լեռներուն վրայ: Երեկոներն Ատոմ իր սրինգը հանած կը նուազէր մեյամաղձոտ երգեր: Աւոյ ամէնէն աւելի յուզուած մտիկ կ'ընէր եւ երբեմն ախ կը քաշէր բսելով.

— Սարե՛ր, սարե՛ր, ես ձեր հոգուն մատաղ: Ի՞նչ անոյշ գիշերներ են. խաղաղութիւն բնութեան վրայ, խաղաղութիւն մեր սրտերուն մէջ:

Կրակը ճարճատելով կը վառէր եւ լոյսը քարայրէն դուրս կանաչորակ ցոլք մը կու տար ձիւնին վրայ: Շահկերտէն կը դիտէին. ընտանիքներն հանդիստ էին. վերը վտանգ չկար, որսորդներն հոն էին:

— Այս գիշեր պէտք է երկու երկու պահակութիւն ընենք, ըսաւ Ատոմ. գաղանները մտի հոտ կ'առնեն եւ յարձակում կ'ընեն. անոնք արիւնի կաթիլներուն կը հեռելին եւ ուղղակի հոս կը հասնին:

— Կարծեմ թէ խորոված մ'ալ կրնանք ուտել, ըսաւ Մկուչ. սանկ պուտ մը կտրենք եւ Աւոն թող խորովէ. ան լաւ խոհարար է. խաներուն քով ծառայած է:

— Բերանդ սրբէ, պատասխանեց Աւոյ. ես խանի երես չեմ տեսած:

Մկուչ կտրեց քարայծին մէկ պուտը, քերթեց եւ մանրեց միսը: Աւոյ շարեց կրակի շուրջի քարերու շրթունքներուն վրայ. բուրումնալից ծուխ մը բարձրացաւ:

— Հիմա կը տեսնէք կա՛մ գայլեր, կամ արջեր կու գան, ըսաւ Սերգոյ: Աւոյ, պատրաստ եղիր կրակելու. համբաւաւոր նշանառու ես դուն:

— Եթէ քաջ եւ անվախ ես, պատասխանեց Աւոյ,

հրացանդ առ եւ քարայրի դրան վրայ հիւրերուդ ըս-
պասէ :

Աւոյ խորովածը լաւաշի վրայ դրաւ . հինգն ալ ծա-
լապատիկ նստեցան ու սկսան խածնելով կրծել միտերը :
Հազիւ լմննալու մօտ էին , տասն հատ աչքեր փայլեցան
կրակի ցուրերէն :

— Գայլե՛ր, գայլե՛ր, ըսաւ Սերգոյ :

— Քաչէ՛ հրացանդ, աւելցուց Աւոյ :

— Չէ՛, մի՛ քաչէք, խնայեցէք գնդակները, հրա-
մայեց Ատոմ . հիմա ես գայլ գայլի գէմ կը հանեմ :

Առաւ քանի մը ոսկորներ եւ նետեց գազաններուն :
Սովամահ կոխ մը սկսաւ . զիրար խածնելով ամէն մէկը
կը ջանար ոսկորն յափշտակել : Աղմուկ, կաղկանձում,
ոռնոց ձորերը բռնեցին : Անոնք զիրար հալածելով բա-
ւական հեռացան :

— Կը կարծէ՞ք թէ ետ չեն դառնար, ըսաւ Վրէժ :

— Վայ եթէ մէկուն վրայ արիւն տեսնեն, բոլորը
միասին գայն կը լափեն, պատասխանեց Ատոմ . շունը
չան միս չ'ուտեր կ'ըսեն, բայց գայլ գայլի միս կ'ուտէ :

Իսկապէս վոճմակն երթալով հեռացաւ, ու տիրեց
խաղաղութիւն աշխարհի :

Ատոմ փորձառու էր գազաններու կեանքին, տա-
րիներ անցուցած էր անոնց մէջ . գիտէր թէ գայլն ա-
ւելի վտանգաւոր է, քան արջը . գէթ ասոնք վայրի պը-
տուղով ալ կը կշտանան . բայց գայլը միս կ'ուզէ եւ
պէտք է լեռնէ լեռ իյնայ որս գտնելու համար : Յան-
դուզն է, անվախ, գիւղեր կ'իջնէ երբ ձմեռ գայ, կը
յարձակի փարախներու վրայ : Վա՛յ այն ճամբորդին՝ որ
միշտակը կը հանդիպի այդ գազաններուն . միակ փըր-
կութիւնը ծառի մը վրայ բարձրանալ եւ սպասել օգ-
նութեան :

Որսորդները զոյգ զոյգ հսկեցին բոլոր զիշերը եւ
կրակը միշտ բոցավառ պահեցին : Յաջորդ օրն զբազե-
ցան եզնիկն ու քարայծը մորթազերծ ընելով, միտերն
ոսկորներէն բաժնելու, որ թեթեւ ըլլայ տանելիք բեռը :

Որսի օրը՝ Սերգոյ եւ Մկուչ քարայրը մնացին պա-
հակութեան համար : Ատոմ տեղը չէր կրնար մնալ . ան
միշտ որս կ'երազէր . հակառակ որ ամէնէն տարեցն էր .
կարծես յոգնիլ չէր գիտեր : Մէկ որս կրցան ընել . Աւոյ
նսպաստակ մը զարկած էր եւ գրեթէ ամօթով տեղեր-
նին դարձան :

— Ո՞վ է այսօրուան հերոսը, հարցուց Սերգոյ :

— Աւոն է, կովի չափ նսպաստակ մը զարկաւ :

— Է՛հ, շատ մի՛ ընէք, աս ալ բան մ'է, այս երեկոյ
մեր խորովածն ունինք : Մորթն ալ Սերգոյին կու տանք
որ մուշտակ կարէ իրեն եւ կնիկին, ըսաւ Աւոյ :

— Բարեկամներ, ըսաւ Ատոմ, ամէն օր տէրտէրը
եղինձ չ'ուտեր . ամէն օր որս չի գտնուիր . ես երբեմն
չարաթով առանց որսի մնացած եմ :

— Արոյ, ի՛նչ կ'ըլլայ, վաղն ալ կենանք եւ բախ-
տերնիս փորձենք, ըսաւ Աւոյ . թող կնիկները որքան
կ'ուզեն բղաւեն, մենք չենք լսեր որ :

— Մեր Աւոյին կամքը չենք կրնար կոտրել, պա-
տասխանեց Ատոմ, դուք ալ համաձա՞յն էք :

— Այո՛, այո՛, Աւոն միշտ լաւ կը խորհի : Թող կը-
նիկները բղաւեն, մեր ի՛նչ հոգը :

— Այս անգամ փոխանակ այդ ձորերն իջնելու, ը-
սաւ Ատոմ, քարայրին աջը գտնուող հովիտները կ'եր-
թանք : Եթէ ցուրտը շատ կծու չըլլայ, կրնանք քար-
այրներու վերելք բարձրանալ եւ գիտել մօտակայ բար-
ձունքները : Քարայծը միշտ գաղաթներու վրայ կը բար-
ձրանայ՝ չըջապատը խուզարկելու համար :

Աւոյ չուզեց պահակութեան մնալ, Ատոմի եւ Սերգոյի հետ ելաւ որսի: Մինչեւ կէսօր ոչ մէկ որս գտան. աւելի բարձրացան եւ ահա բաւական հեռու, ժայռի մը կատարին տեսան կէտ մը որ արձանի պէս կանգնած էր:

— Արու քարայծ է, ըսաւ Ատոմ, ուշի ուշով դիտելով. վեր բարձրանանք: Ժայռերու կողերէն եւ թուփերու քովերէն բարձրացէք, փոսերը չիյնաք:

Մինչ այդ, Աւոյ ինկաւ խոր փոսի մը մէջ եւ ա'լ չտեսնուեցաւ, միայն հրացանի ծայրը դուրս մնացած էր. ընկերներն ուչ անդրադարձան եւ վաղեցին զինքը դուրս քաշեցին. ան վախէն կը դողար. քիթ, բերան ձիւնով լեցուեր էին: Թօթուեց ինքզինքը. հազիւ շունչ կ'առնէր. թեւերը շարժեցին, քանի մը ապտակ տուին երեսին. քիչ մը ինքզինքը գտաւ:

— Մե'ղք, օղի չունինք որ տաքցնէր զինքը, ըսաւ Սերգոյ:

— Ատ ալ խորհած եմ, պատասխանեց Ատոմ, դուք փորձառութիւն չունիք. մեր սարերը հիանալի են թէ' ձմեռ, թէ ամառ, բայց անակնկալներ շատ ունին. փոս իյնալը սովորական բան է: Խմէ Աւոյ, ըսաւ, փոքրիկ շիշը բերնին դնելով:

Աւոյ անօթի մանուկի պէս ծծեց օղին, փորը տաքցաւ, սիրտը տեղն եկաւ:

— Դուն հոս կեցիր, մենք երթանք սա քարայծը զարնենք դանք, ըսաւ Սերգոյ:

— Եթէ հոս անշարժ կենամ, Ղովտի կնիկին պէս՝ ձիւնէ արձան կը դառնամ, պատասխանեց Աւոյ:

— Տեղդ կեցած շարժէ, թեւերդ կուրծքիդ զարկ, ոտքերդ դետին զարկ. քարի պէս մի' կենար, ըսաւ Ատոմ. մենք նոյն ճամբով ետ կը դառնանք:

Աւոյ երկու ժամէն աւելի սպասեց եւ իրեն թուե-

ցաւ թէ օր մ'եղաւ: Համբերութիւնը դնաց. փորձեց իր հրացանը պայթեցնել, բայց խոնաւցեր էր եւ կրակ չէր առներ:

— Եթէ գայլերը գիտնան թէ հրացանս չի գործեր՝ կու գան դիս կ'ուտեն, ըսաւ ինքնիրեն:

Վրան դող եկաւ. աչքերը վերերէն չէր բաժներ՝ մինչեւ որ երեւցան երկու որսորդները, հսկայ քարայծ մը ուսերնուն վրայ առած:

— Ատոմին դնդակը չի վրիպիր, ըսաւ ան. հիմա կրնանք հպարտ գիւղ իջնել:

— Գնդակը քուկդ է, բայց խորհուրդն Աւոյին է որ մնացինք օր մ'ալ, պատասխանեց Սերգոյ:

Իջան քարայր: Աւոյին դէպքը բերնի ծամոց ըրին. վրան խնդացին եւ անոր կենացը խմեցին:

— Կենացդ, Աւոյ, անցած ըլլայ, ըսին բոլորը, օղիի շիշը բերնէ բերան անցընելով:

Յաջորդ օրը տրսերն արդէն մաքրած պատրաստած, թաց ծառի ճիւղերով կապած, առին ուսերնին եւ մէկ շարքի վրայ իջան գիւղը: Նախ շուները տեսան, ապա երեխաները, ապա կիներ եւ յետոյ գիւղի մարդիկը: Բոլորն Ատոմին տունը թափեցան: Տղաները քարայծներու եղջիւրները շօշափեցին, կիները նայեցան միտերուն: Ատոմ ըսաւ իր ընկերներուն.

— Իւրաքանչիւրդ իր ուզածին չափ թող միս առնէ, ինչ որ մնայ՝ իմ տանս համար է:

— Չէ', արոյ, ըսին միւսները, դուն բաժնէ:

— Ես կշիռով չեմ բաժներ, մեղքս վրան կ'ըլլայ: Չորսին ալ առատօրէն տուաւ եւ փոքր մաս մը իրեն մնաց:

— Արոյ, քիչ մնաց քեզի, երեքն ալ դուն զարկիր, քու բաժինդ շատ պէտք էր ըլլալ:

— Ո՛հ, միասին զարկինք. ինձ համար հերիք է, վաղը միւս օր նորէն սար կը բարձրանամ, որսն ի՞նչ է որ: Օնիկ, դարձաւ իր տղուն, աս կտորն ալ Տէր Եղիշէին տար, թող համով պատառ մ'ալ ինքն ուտէ: Դասերդ ի՞նչպէս են, արջուկդ կը մեծնա՞ջ:

— Դասերս շատ լաւ են, խօսք տուի, խօսքս կը պահեմ. ես արդէն տղամարդ եմ, պատասխանեց Օնիկ:

— Այբբենարանին կէսը նորէն պատռտած է, վրայ բերաւ Կատար: Խեւը մարդ կ'ըլլա՞յ:

— Սորված էջերը պատռեցի, բանի չեն գար. պատասխանեց տղան: Ես մարդ պիտի ըլլամ, հայրիկ, քեզի պէս քաջ որսորդ. ո՛չ գազաններէն պիտի վախնամ, ո՛չ մարդերէն: Ինծի հրացան մը կը գնե՞ս որ նշան առնել սորվիմ:

— Չէ՛, ցատկեց մայրը. դնա՛ հօտաղ եղիբ, հովիւ եղիբ, նախորդդ եղիբ, բայց ո՛չ հրացան:

— Կատա՛ր, մի՛ դարմանար, արիւնն է որ կը քաշէ. մենք ցեղով սարի գաւաղ եղած ենք, անուանի որսորդներ: Ի՞նչ կ'ըլլայ, ի՞նչ չ'ըլլար. գէնք ունեցողը առիւծի թաթ է, ոչխար չէ. մարդկութեան մէջ տեղ ունի. ազատութեան պահակ է: Եթէ մեր հայրերը տղամարդ եղած ըլլային, գէնք վերցուցած ըլլային, այդ Պարսիկները ի՞նչ գործ ունէին մեր աշխարհին մէջ: Դրամ ունիս, գէնք չունիս. դրամը քու գրպանդ է, բայց ուրիշին կը պատկանի:

— Էհէ՛, պատասխանեց կիներ, հիմա սկսար տղուդ զինուորական խրատներ տալ: Չէնքը սատանային գործիքն է, գէնք առնողը գէնքով կը մեռնի: Աւետարանը չե՞ս գիտեր:

— Աս ալ պէտք է Կատար. հող ունինք, տուն ունինք, տեղ ունինք, մալ ունինք եւ մերը չեն. եթէ նա-

խիջեաւնի խանն ուզէ՝ մէկ վայրկեանէն մեր ձեռքէն կը խլէ: Չեմ ուզեր որ տղաս վիզը ծուռ մնայ, ձեռքերը կուրծքին, եկող դացող պարսիկն ու թուրքը, խոնարհարար բարեւ բռնած, աղա, փաշա անուանէ:

— Ուրեմն, պապի, ըսաւ Մարոյ, է՛ս ալ զինուորութիւն սորվիմ:

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ. քի՞չ կիներ հերոսաբար հայրենիք պաշտպանած են:

— Դու շարունակ գազաններու մէջ ապրելով արիւնի վարժեր ես, պատասխանեց Կատար, մարդուս երջանկութիւնը խաղաղութեան մէջ է եւ ո՛չ թէ արիւնի եւ պատերազմի:

— Այո՛, եթէ դիմացինդ ալ գիտնայ յարգել այդ խաղաղութիւնը: Կրնա՞ս գայլին հետ խաղաղութեան դաշինք դնել: Կատա՛ր, Կատա՛ր, Հայաստանի տունն ու պատիւը դնաց. մենք ապրեցանք այսպէս, թող մեր զաւակները մեզի պէս չապրին: Այո՛, աղաս, դարձաւ Օնիկին, դեռ փոքր ես, օր կու գայ որ քեզի աղուոր հրացան մը կը գնեմ. նշան առ, որս գարի:

Ընթրիքէն յետոյ հիւրեր եկան նստելու. Ատոմ պատմեց սարի կեանքը, զարգարեց, աւելցուց եւ զարմացուց բոլորը:

— Աստուած վկայ, ըսաւ, եթէ կարենայի՝ ամառ ձմեռ լեռներու վրայ կ'ապրէի: Է՞ն աստուածամերձ լեռները, է՛ն հսկայ մոմերու պէս կանաչ ծառերը. ծաղկած հովիտները, ձմրան սուրբ ձիւնը, ոչ մէկ հարըստութեան հետ չեմ փոխեր:

Ոչ մէկ սանձ կարելի է դնել այն մարդուն, որուն սրտին մէջ ամէն օր լեռներու երգը կը հնչէր: Ատոմ առտու կ'ըլլէր՝ լեռներուն կը նայէր, երեկոյ կ'ըլլար անքերն ահամայ դէպի բարձունքները կը դառնային:

Երկու շարաթ չանցած՝ ուրիշ ընկերներով դարձեալ որսի գնաց. բայց այս անգամ, ի՞նչ եղաւ որ քիչ մը պաղ առաւ, ցուրտը կարծես սիրտն իջած էր. վրան դող եկաւ. հագիւ կրցաւ ինքզինքը գիւղ նետել եւ անկողին մտնել: Ջերմը բարձրացա՛ւ, բարձրացա՛ւ, բայց ջերմաչափ չունէին նայելու համար աստիճանը: Կատար տաք թէյ պատրաստեց, մէջը օղի խառնեց եւ խմցուց. բայց տաքութիւնը չէր իջներ:

— Աէ՛ծք լեռներուն, անէ՛ծք որսին, անէ՛ծք հրացանին, ըսաւ կինը շփոթած, սրտնեղած:

Տեսութեան եկան դրացի պառաւներ. մէկն ըսաւ.

— Տաք մեզը գիր երեսին վրայ:

— Միւսը՝ քացախով լուս:

— Ուրիշ մը՝ ոչխար մը մորթելու է եւ մորթին մէջ փաթթելու է:

Բոլորն ալ վշտացեր էին Ատոմին համար. ան գիւղին համբաւաւոր որսորդն էր, խիզախ մարդ էր. թուրքն ու պարսիկն ալ հետը գլուխ չէին կրնար ելլել: Քանի մ'օրեր անցան եւ ջերմը մնաց բարձր աստիճանի վրայ. մարդը կը հալէր. կին ու տղայ կը հալէին: Եկաւ տէր Եղիշէն, վրան Հաւատով խոստովանիմ կարգաց, բարձին տակ Նարեկ դրաւ ըսելով.

— Աստուծոյ վրայ յոյս դրէք. Նարեկն հրաշագործ է. շուտով ոտքի կ'ելլէ:

Ատոմ աչքերը չէր կրնար բանալ, բայց իր անկողինին քով մարդիկ կը մտնէին ու կ'ելլէին: Եկան նաեւ Աւոյ, Սերգոյ, Վրէժ, Մկուչ:

— Յաւդ առնեմ, արոյ Ատոմ, ըսաւ Աւոյ, աս ի՞նչ վիճակի հասար, ո՞ր անիճած հովը սիրտդ մտաւ:

— Ախով վախով աս մարդուն ցաւը չ'անցնիր, ըսաւ Վրէժ, ասոր պէտք է քարաբաղնիք մ'ընել: Իմ պա-

պերէս լսեր եմ թէ դողին միակ դեղը քարաբաղնիքն է. այնպէս կը քրտնցնէ որ վրան ջերմի կաթիլ մը չի մնար:

— Ծօ, ի՞նչ է քարաբաղնիքը, հարցուց Սերգոյ:

— Մեծ կաթսայ մը ջուր կը տաքցնենք, այնպէս մը եռայ, այնպէս մը շողի ելլէ՝ որ Մուղանի դաշտին մշուշը քովը կատուի շունչ ըլլայ: Յետոյ թոնիրի վերայի հաստ կապերտը կ'առնենք մէջը կը մտցնենք. Ատոմ կը մերկանայ եւ մարմինը կը փաթթենք: Կը փաթթենք կը հանենք, կը թրջենք կը փաթթենք: Աստուած վկայ, կ'ըսէր իմ մամիս, ա՛լ վրան դող չի մնար:

— Խելքս չպառկեցաւ, պատասխանեց Մկուչ, Ատոմ կը դառնայ խաշած միս:

— Չէ՛, չէ՛, ըսին միւսներն ալ. մարդուն դողն անցընելու համար, հողին չառնենք:

Մինչ Ատոմին որսակիցներն անձար կեցեր էին, ներս մտաւ Նազար աղան, շուրջ իննսուն տարեկան ծերունի մը. Շահկերտի նահապետն էր: Հարիւր տարուան պատմութիւն գիտէր. շահեր ու խաներ շատ տեսած էր:

— Ի՞նչ ունի մեր Ատոմ աղբերը, հարցուց ծանր կերպով նստելով:

— Դող բռներ է, ամի. ցուրտը մինչեւ սիրտն ու թոքերն իջեր է, պատասխանեցին չորսերը:

— Դող բռներ է հա՛: Ձանգեզուրի ցուրտին հետ խաղալ չ'ըլլար: Ողորմած հողի հայրս ալ այդ ցուրտէն մեռաւ, եօթանասուն տարեկան էր եւ դեռ որսի կ'երթար: Ինչ ըրինք՝ չեղաւ, բայց իմ պապս կ'ըսէր թէ այդ պարագային քարաբաղնիք ընելու է:

— Տեսա՞ք, մէջն ինկաւ Վրէժ:

— Արոյ Նազար, ի՞նչպէս կ'ընեն քարաբաղնիքը, հարցուց Սերգոյ: Եռացած ջուրին մէջ թոնիրին կապերտը կը խոթեն, յետոյ հիւանդը մէ՞ջը կը փաթթեն:

— Չէ՛, որդի, խաշած միս կը դառնայ:

— Հապա ի՞նչպէս, կրկնեց Սերգոյ:

— Կաթսան կ'եռայ, շոգին մշուշի պէս կ'ելլէ, մարդը կը մերկացնեն. չորս հոգի՛ մէկը մէկ ձեռքէն, միւսը միւս ձեռքէն, երրորդը մէկ ոտքէն, չորրորդը միւս ոտքէն բերանին վրան կը բռնեն, լաւ մը կը բռնեն. շոգին բերնէն սիրտը կ'երթայ, թոքերը կ'իջնէ, հերը կ'անիծէ դողին:

— Ասոր խելքս կը պառկի, ըսաւ Աւոյ: Ընե՞նք, հարցուց ընկերներուն:

— Հա՛, ընենք, պատասխանեցին միւսները:

— Կնիկները թող դուրս ելլեն, պոռայ Աւոյ:

— Ինչո՞ւ, հարցուց Կատար:

— Աս մարդերու գործ է: Նազար արոյին խորհուրդը սուլթանի բժիշկին ալ չի գիտեր. քարաբաղնիք պիտի ընենք:

Տաք ջուրի շոգին տունը լեցուցած էր. կ'ելլէր ու կ'ելլէր, կարծես վիշապի բերան ըլլար:

— Ատոմ աղբեր, ըսաւ Սերգոյ, հագուստներդ հանենք, քեզի աղուոր քարաբաղնիք մ'ընենք, խսկոյն աչքերդ կը բանաս: Նազար ամիին խորհուրդն երկինքէն միշտ կ'իջնէ:

— Էհ, դուք գիտէք. թող ազատիմ այս անպիտան գողէն. սիրտս հալեցաւ:

Մերկացուցին եւ մարդը բռնեցին տաք շոգիին վերայ. բերանը, փորը վար:

— Ծնչէ, լաւ շնչէ, ըսաւ Վրէժ, թող շոգին սիրտդ իջնէ:

Գրեթէ մարդը կաթսայի շրթներուն մօտեցուցած էին:

— Ետ տարէք, պոռայ Ատոմ, ետ տարէք, կ'այրիմ, կը մեռնիմ:

— Քիչ մ'ալ համբերէ, ըսաւ Աւոյ:

Ատոմ ջրային շարժումներ ըրաւ, ինքզինքն ազատելու համար: Մարմինը կաս կարմիր դարձած էր: Թօթուեց ամբողջ մարմինը, քիչ մնաց կաթսային վրան իյնար:

— Ետ տարէք, անաստուածներ, անխելքներ, այնպէս մը պոռայ որ Կատար լեղապատառ ներս վազեց:

— Ա՛խ, քոռնամ, Ատոմս պիտի մեռնի:

— Քիչ մ'ալ համբերէ, բերնէդ ցուրտը հալած եղի պէս դուրս կ'ելլէ, ըսաւ Վրէժ:

Այրուցքէն Ատոմին վրայ շունչ չմնաց, աչքերը դոցեց, կարծես թէ մեռած էր: Կատար ճուալով հազիւ յաջողեցաւ այդ չորս յիմարները համոզել որ վերցնեն խեղճին մարմինը կաթսայի վրայէն:

— Հիմա, ըսաւ Նազար աղան, բուրդէ լաթերու մէջ լաւ մը փաթթելու է:

Ատոմ ինքզինքը կորսնցուցած էր: Կինը երեսին թրթենիի օղի քսեց, ջրով լուաց, մարդուն վրայէն պաղ քրտինք մը իջաւ. բայց աչքերը դոց էին եւ վախ կուտար հէգ կնիջը:

— Մի՛ վախեր, աղջի Կատար, ըսաւ Նազար աղան, ձեռքը Ատոմի սրտին վրայ դնելով. դեռ կը դարնէ, հոգին վրան է, կամաց կամաց մեքենան կը սկսի աշխատիլ. վաղը կը տեսնես ա՛լ բան չունի:

Ո՛չ վաղը, ո՛չ միւս օր. Ատոմ քանի մը շարաթ ալ պառկեցաւ մարմնին այրուցքները բուժելու համար: Կուրծքը քիչ մը բացուեր էր, շունչը թեթեւեւ, ձայնը լսելի էր. բայց իսկական մահէն ազատեցաւ:

Գիւղին մէջ Նազար աղային անունը մեծ բժիշկի տեղ անցաւ. մինչեւ խաներուն ականջն հասաւ :

Ատոմ շատ տկար մնաց, ալ սարերը չէր կրնար բարձրանալ. ախ ու վախ կը քաշէր, սիրտ կը մաշեցընէր : Այդ ձմեռ օճախին քովէն չբաժնուեցաւ : Բայց, ով որ որսի երթար, Ատոմին մաս կը հանէր : Իր քարայրին կրակը միշտ մարած մնաց, այն կրակը որ կարմիր բիծ մը կը դնէր սպիտակ ձիւնին վրայ եւ գիւղէն կը գիտէին՝ խաղաղ լեռներուն միակ կենդանութիւնը :

Օնիկ եռանդով իր դասերուն կը հետեւէր, մանաւանդ որ Տէր Եղիշէն ստէպ հայկական կեանքէն կը պատմէր, հին հերոսներու անուններ կու տար եւ հետաքրքրական միջավայր ստեղծած էր այդ աղքատիկ դպրոցին մէջ : Մանուկներն իրար ճանչցած էին. իրար կը սիրէին եւ տեսակ մը ընկերութիւն ձեւացուցած էին երեւակայական հերոսութեամբ :

— Թերեւս օր մը, կ'ըսէր Տէր Եղիշէն, այս տղաքը Շահկերտին կեանք տան, հայկական դիմադիծ, արթընցնեն միջնադարեան թմրութենէն : Ի՞նչ կը պատմեն մեր հին գիրքերը, ի՞նչ կ'ընենք մենք այսօր : Եթէ Մուշեղը, Վարդանը կամ Վահանը դային մեզ տեսնէին, ամօթով նորէն գերեզման պիտի մտնէին :

Տէր Եղիշէի յոյսերը կարծես թէ կամաց կամաց ծաղիկ պիտի տային այն գեղեցիկ դարուններուն նըման՝ որ Զանգեզուրի ձորերն ու դաշտերը կը լեցնեն համասպրամով, շուշաններով եւ ձիւնծաղիկներով :

Անցաւ Մայիսն, եկաւ Յունիս ամիսը, սարեր ու ձորեր լեցուեցան նախիրներով եւ հօտերով. կարծես թէ Շահկերտին մէջ մարդ չմնաց, բոլորը լեռներուն վրայ էին. լեռներու երզը կը լսուէր հովտէ հովիտ. ծառերն եղբայր, աղբիւրները քոյր էին, քարայրները՝

սրտի բնակարան : Ատոմ ամէն առտու կը նայէր լեռներուն, սիրտը կը քաշէր, բայց ծունկերը դաւաճան էին :

— Կը լաւանամ, անպայման կը լաւանամ, կ'ըսէր ինքնիրեն, դարձեալ որսի կ'երթամ, դարձեալ ժայռ ու ծառ կը համբուրեմ, աղբիւրներու զուլալ ջուրերը կը խմեմ :

Բայց այդ դարձեալ շատ հեռու մնաց իր կեանքի ճամբուն վրայ : Իր տեղն Օնիկն էր որ երինջի նման ոռնգները բացած՝ լեռներու հոտ կ'առնէր :

Պատանին երբ լսեց Վարդանանց պատմութիւնը՝ սրտին մէջ տեղ դաւա տարօրինակ զգացում մը. դադար մ'ունեցաւ զինուորական խումբ մը կազմել քաջ պատանիներով : Ի՞նչ պիտի ընէր, որո՞ւ դէմ պատերազմի պիտի երթար, ինքն ալ չէր գիտեր. բայց կը խորհէր թէ զինուորութիւնն ազուոր բան է, զէնք կ'ունենաս, գազաններու եւ չար մարդերու դէմ կը կուրիս, եւ քեզ հերոս կը կոչեն :

Ան դպրոցին մէջ ունէր շատ մը մտերիմ ընկեր-ընկերուհիներ, որոնց հետ հաճոյքով կը խաղար, եւ թոյլ կու տար որ իր արջուկին դպչին ու շոյեն : Անոնց մէջ մէկը կար՝ իր մօրաքրոջ տղան, Սիմոնեց Վարդանը, ի ծնէ կոյր, ազուոր մանչուկ մը, խոշոր աչքերով, սեւ ու թաւ թարթիչներով, աւա՛ղ, աչքերուն մէջ բիրը փակուած էր, արեւածաղիկի պէս շող ունէր չորս բոլորը, մէջը լոյս չկար : Օնիկ անոր պահապան հրեշտակն էր, ձեռքէն բռնած դպրոց կը տանէր, ի՞նչ պիտի ընէր այդ կոյր տղեկը՝ երբ չէր կրնար տեսնել եւ կարգալ : Վարդան զգայուն եւ ուշիմ էր, յիշողութիւնը զօրաւոր, իր միակ փափաքն էր լսել հայրենի պատմութիւնները եւ տան մէջ այնքան հարազատ, այնքան ըզ-

դաշուն բառերով կը կրկնէր՝ որ հայր ու մայր տիրա-
նոյշ սրտով իր վիզը կ'իյնային:

— Ա՛խ, քեզի մեռնիմ Տիրամայր, կ'ըսէր մայրն
հառաչելով, մանչուս աչքերը բաց. լոյսն աղուոր բան
է, թող լոյս տեսնէ:

Գարնան սկիզբն էր, դպրոցը փակ էր, դաշտային
աշխատանքներն սկսած էին եւ տղաներն ալ պէտք էին
աշխատանքի լծուիլ: Օնիկ կանչեց իր մտերիմները.
Մանասենց Յովիկը, Սարոյենց Վարդը, Թանգեան Եր-
ուանդը. իր ընկերուհիներէն կային Արզարեան Շողի-
կը, Լալայեան Շաքէն եւ իր քոյրը Մարոյ:

— Երթանք, ըսաւ, մեր ախոռը, ձեզի դաղտնի բան
մը ունիմ ըսելիք:

— Ի՞նչ պիտի ըսես, հարցուց Վարդան որ Օնիկի
ձեռքէն բռնած էր:

— Հիմա կը լսես, դուն ալ մաս պիտի կազմես:

Ախոռին մէջ ընդարձակ սենեակ մը կար, ամառ ա-
տեն պարապ էր, ձմեռ ատեն շատ անգամ հոն կը նըս-
տէին, տաք էր. անոնք ախոռի հոտ չէին առներ: Ութ
հոգի շարուեցան սենեակին մէջ: Օնիկ ծանր կերպա-
բանք առաւ.

— Գիտե՞ք, ըսաւ, ինչո՞ւ ձեզ կանչեցի: Վարդա-
նանց Միութիւն կազմելու համար: Տէր Հայրը պատմեց
մեզի Աւարայրի պատերազմը. ի՞նչ քաջութեամբ մեր
հայրերը կռուած են Պարսիկներու դէմ:

— Այո՛, ես լաւ միտքս պահած եմ, ըսաւ Վարդան:
Ա՛խ, եթէ ես ալ տեսնէի, Վարդան կ'ըլլայի. դուք կը
տեսնէ՞ք. ի՞նչ կը տեսնէք, ի՞նչ է լոյսը, մարդիկ ի՞նչ-
պէս շինուած են: Երբ կը շօշափեմ, ձեռք ոտք կը հան-
դիպին, բայց չեմ գիտեր ի՞նչ դոյն ունին:

— Այո՛, Վարդան, չես տեսներ, բայց դուն ալ մեր

միութեան մաս պիտի կազմես, պատասխանեց Օնիկ,
դուն ալ գինուոր պիտի ըլլաս:

Վարդան շատ ուրախացաւ, ինքն ալ կրնար բան
մ'ընել. դէթ գէնքի պահակ ըլլալ, բան մը շալկել եթէ
պէտք ըլլայ:

Ան հուժկու բազուկներ ունէր, բարձր էր հասա-
կով. Օնիկ իր քով դաճած կը տեսնուէր. եթէ ընկերոջ
մը բռունցք քաշէր՝ դետին կը փոէր: Բայց այնքան հեզ
ու բարի էր՝ որ կ'ըսես թուչէն մաս մը փրցնեմ եւ ու-
տեմ:

— Գիւղին մէջ, ըսաւ Օնիկ, մարդ պէտք չէ գիտնայ
մեր միութիւնը: Մտածեցի որ անուանիս ալ փոխենք:

— Նորէ՞ն պիտի մկրտուինք, հարցուց Լալայեան
Շաքէ:

— Ո՛չ, յարմարական անուանք պիտի առնենք, պա-
տասխանեց Օնիկ: Ձեզմէ ո՞վ սուր աչքեր ունի:

— Ե՛ս, ըսաւ Յովիկ: Սարին վրայի ճնճղուկն ալ կը
տեսնեմ:

— Լաւ, քու անունդ Արծիւ է, միտքդ պահէ: Կար-
ծեմ մեր մէջ ամէնէն ուժեղը Վարդանն է. իրեն անունն
ալ Առիւծի թաթ է:

— Ի՞նչ կենդանի է առիւծը, հարցուց Վարդան:

— Կենդանիներուն մէջ ամէնէն ուժեղն է, անոնց
թագաւորն է, պատասխանեց Մարոյ, ոչ մէկէն կը վախ-
նայ:

Վարդան շատ ուրախացաւ, բայց ինքը կոյր էր,
սիրտը նորէն կոտրեցաւ:

— Ա՛խ, եթէ տեսնէի այդ առիւծը՝ պիտի համբու-
րէի, ըսաւ միամիտ կերպով:

— Առիւծին ո՞վ կը մօտենայ, պատասխանեց Շո-
ղիկ, մէկ անգամէն գլուխդ բերանը կ'առնէ:

— Երուանդին անունը Սլաք է, ըսաւ Օնիկ, կար-
ծեմ քաջ նշան առնող է:

— Այո՛, այո՛, պարսաստիկով ծառի վրայի ճանճն
ալ կրնամ գարնել, պատասխանեց Երուանդ:

— Հիմա արագ վազող մը պէտք է, ըսաւ Օնիկ, որ
զայլի պէս սար ու ձոր կտրէ անցնի:

— Վարդը, Վարդը, պատասխանեցին միւսները:

— Լաւ, Վարդն ալ Սեւ դայլ կը կոչուի: Իսկ ես,
ի՞նչ անուն առնեմ, դուք ըսէք, հարցուց Օնիկ:

— Բազէ, ըսաւ Շողիկ:

— Ո՛չ, բազէն լաւ չէ, Վիշապ անունը դնենք, պա-
տասխանեց Շաքէ:

— Լաւ է վիշապը, կրկնեցին միւսները:

— Ուրեմն ես ալ Վիշապ կը կոչուիմ: Աղջիկներուն
անուն չենք տար, անոնք պատերազմի վիրաւորները պի-
տի խնամեն:

— Ո՛չ, պոռացին երեքը միասին. մենք ալ անուն
եւ զէնք կ'ուզենք:

— Լաւ, ձեզի ալ անուններ տանք, պատասխանեց
Օնիկ, աչքը պտըտցնելով անոնց վրայ. դուն Շաքէ՝ Այ-
ծեամ կը կոչուիս, դուն Շողիկ՝ Լուսան անունը կ'առ-
նես, իսկ Մարոն ալ Յովազ թող կոչուի:

— Ինչո՞ւ Մարոյին Յովազ անունը տուիր, իսկ ինձ
ալ Այծեամ, հարցուց Շաքէ քիչ մը սրտնեղած:

— Անիկա իմ քոյրս է եւ մանչու պէս ուժով է, դուն
նայիկ ես: Վաղը բերդին կողմերը կ'երթանք, ամէն
մէկդ լաւ պարսատիկ մը պէտք է շինէ եւ հետը բերէ.
մենք փոքր ենք, դեռ մեզի հրացան չեն տար:

Յաջորդ օրը խումբով բերդը բարձրացան, իւրա-
քանչիւրն իր թեւին պլլած էր հաստ չուանէ պարսա-

տիկը: Օնիկ զիրենք կարգի շարեց. երեսուն մեղր հե-
ռաւորութեան վրայ քար մը դրաւ ժայռի մը կատարին:

— Հիմա կարգաւ նշան առնենք այդ քարին, ըսաւ
եւ քաշեց իր պարսատիկը, որ քարին քովէն անդին ին-
կաւ: Չեղաւ, հերն անիծած:

Փորձեցին միւսներն ալ, միայն Մարոն ճիշտ քա-
րին զարկաւ:

— Տեսա՞ք, ըսաւ ժպտուն, ամէնէն քաջ նշան առ-
նողն ես եմ:

— Պէտք է շատ փորձ ընենք, ըսաւ Օնիկ:

Քարը նորէն տեղը դրին եւ մէկիկ մէկիկ քաշեցին
պարսատիկները:

— Ես ալ փորձեմ Օնիկ, ըսաւ Վարդան, դուն ուղղէ
ես քաշեմ:

Օնիկ իր պարսատիկը լարեց, ուղղեց Վարդանը եւ
հրամայեց.

— Քաշէ՛ հիմա:

Տղան քաշեց, բայց դրեթէ քարին հակառակ կողմը
դնաց իր քարը:

— Բաւական մօտեցար, ըսաւ Օնիկ, սուտ խօսելով
որ Վարդան չտխրի:

— Եթէ ես ալ ձեզի պէս տեսնէի, մէկ հարուած չէր
վրիպեր, ըսաւ տղան դրեթէ լալով:

Այդ վայրկեանին սեւ աղաւ մը եկաւ ու թառեցաւ
բերդին մէկ աւերակին վրայ. Օնիկ քաշեց պարսատիկը
եւ աղաւի ոտքին զարկաւ. թռչունը թէպէտ չմորե-
ցաւ, բայց թռաւ, փախաւ:

— Դպայ, դպայ, ըսաւ Օնիկ ուրախութեամբ:

Մինչեւ կէսօր նշանառութեան փորձ կատարեցին,
բաւական վարժեցան. նոյնիսկ աղջիկները լաւ նշանա-
ռուներ դարձան:

— Չկարծէք թէ մենք բան մ'եղանք, ըսաւ Օնիկ. պէտք է այնպէս սորվինք որ մէկ հարուած իր նպատակէն չչեղի: Կէսօրէն վերջ դարձեալ ախոռ կը հաւաքուինք. մեր ապագայ ծրագիրներուն վրայ խօսելու համար:

— Բայց ինչո՞ւ այս պատրաստութիւնները, հարցուց Վարդան. վտա՞նդ կայ մեր գիւղին համար:

— Չէ, Վարդան, պատասխանեց Օնիկ, վտանգ չըկայ, բայց հայրիկս կ'ըսէր թէ գինուած մարդը պատիւ ունի, իր ունեցածին տէր է:

Կէսօրէն վերջ չկրցան հաւաքուիլ. Վարդ եւ Յովիկ հողային աշխատանքի գացին. Վարդան տունը մնաց. իսկ Մարոյ պէտք էր իր հօրը հոգ տանիլ. ան հիւանդ էր եւ շատ հիւանդ:

Երեկոյեան մօտ Տէր Եղիշէ Ատոմին այցի եկաւ, խօսեցաւ ու մխիթարեց, ապա առանձին կանչելով Կատարն ըսաւ.

— Քոյրիկ, ամուսինդ Աճէմի հիւանդութիւն ունի: Չե՞ս տեսներ կը հագայ, կը թքնէ շարունակ. անոր թոքերը լաւ չեն, այդ հիւանդութիւնը մարդէ մարդ կ'անցնի, տուն կը քանդէ. քեզի կ'ըսեմ որ հոգ տանիս տղաներուդ եւ քեզի:

Կինը տեղն ի տեղ քար կտրեցաւ, չուզեց հաւատալ: Ի՞նչ է Աճէմի հիւանդութիւնը, այդ սարերուն վրայ երբեք չէր լսուած, Կատար գաղափար չուներ թէ դաշտային աշխարհներուն մէջ, քաղաքացիներու քով կար այնպիսի հիւանդութիւն մը՝ որ թոքերը կ'ուտէր եւ կը մեռցնէր: Իր ամուսինը պաղ առեր է, սովորական բան է, կու գայ ու կ'անցնի:

— Ես ըսի, քոյրիկ, կրկնեց քահանան, երանի թէ

սխալած ըլլամ, ալ քեզի կը մնայ լըջօրէն խորհիլ. դաւաակները քուկդ են, անոնց կեանքը քու ձեռքիդ մէջն է:

Երբ Տէր Եղիշէն մեկնեցաւ, Կատար սրտի փղձկում ունեցաւ եւ իր անկողինին վրայ լացաւ յուսահատ մանուկի պէս: Ներս մտաւ Ատոմ եւ դարմացած հարցուց.

— Ինչո՞ւ կու լաս:

— Հոգիս հոգիիդ խառնեմ, Ատոմ ջան, պատասխանեց, դուն Աճէմի հիւանդութիւն ունիս եղեր, Տէր Եղիշէն ըսաւ:

— Ես ո՛չ Աճէմ տեսեր եմ, ո՛չ Աճէմի հետ գործ ունեցեր եմ որ հիւանդութիւն առնեմ: Սուտ է Տէր Հօր ըսածը: Չե՞ս հաւատար, դնա Նազար աղային հարցուր. անիկա ամէն բան գիտէ, պատասխանեց Ատոմ. տանս մէջ թող կրակ չնետէ: Կու գայ կ'օրհնէ՞՝ շատ բարի, բայց Աճէմն ալ հոս բերէ՞՝ առիկա չեղաւ: Հոս քրիստոնեայ տուն է, միւսլիմանի հիւանդութիւնն ի՞նչ գործ ունի:

Կինը դնաց հարցուց Նազար աղային. Նազար աղան ըսաւ.

— Ասկից եօթանասուն տարի առաջ մէկ հատ կար Շահկերտին մէջ, Սահակեց Յակոբը. Աճէմի հիւանդութիւն առեր էր Դավրէթի մէջ: Ամառը կը մսէր, ձմեռը կը սառէր եւ թոնիրի քովէն չէր բաժնուեր, արիւն կը թքնէր: Կամաց կամաց բարակցաւ ու մեռաւ: Ատոմն արիւն կը թքնէ՞:

— Ո՛չ:

— Կը բարակնա՞յ:

— Ո՛չ:

— Կը հաստնա՞յ:

— Այո՛:

— Ամառը կը մսի՞:

— Ո՛չ :

— Չմեռը կը սառի՞ :

— Ո՛չ :

— Թոնիրին մէջ կը մտնէ՞ :

— Ո՛չ :

— Ուրեմն Աճէմի հիւանդութիւն չունի, պատասխանեց Նազար աղան. ասիկա ես կ'ըսեմ քեզի : Ան պէտք է որսի միս ուտէ :

— Բայց կողին վրայ լախ-լախ ջուրի ձայն կու գայ, ըսաւ Կատար :

— Ուրեմն ջուր գողցեր է, ասոր հայերէն ջրգողութիւն կ'ըսեն. թող արեւին տակ պառկի որ կողը չորնայ :

Կինը մխիթարուած՝ տուն դարձաւ եւ պատմեց ամուսինին : Ատոմն ալ շունչ քաշեց եւ սկսաւ արեւին տակ պառկիլ, կարծես թէ լուսցքի լաթ պիտի չորցնէ : Բայց կամաց կամաց վրայ եկաւ. մանաւանդ որ Վրէժ, Աւոյ, Սերգոյ շարունակ որսի միս կը բերէին : Այդ ամառն եւ այդ ձմեռը մնաց տուն, բերդէն վեր չկրցաւ ելլել, աչքերը միայն լեռներու վրայ մնացին եւ սիրտն երգեց կարօտով՝ սարերու գեղեցկութիւնը : Յաճախ սրինդն առած՝ իր տանիքին վրայ կը բարձրանար եւ մեղմ մեղեղին մալ մալ անձրեւի պէս կը ցօղէր գիւղին վրայ : Ո՞վ հաճոյքով մտիկ չէր ըներ սարերու երգը. ծառերն ու քարայրները միայն կարօտով մնացին Ատոմի քաղցր տեսութենէն :

— Պապի, ըսաւ օր մը Օնիկ, ինծի ե՞րբ հրացան պիտի տաս, տե՛ս, մեծցեր եմ, ձեռքերս ուժով են, կըրնամ բռնել ու կրակել : Ես ալ կ'ուզեմ որսորդ ըլլալ որ քեզի հետ սարը բարձրանամ եւ որս ընեմ :

— Կը բարձրանանք, տղաս, միասին կը բարձրա-

նանք. քիչ մը ոյժ առնեմ, ոտքերս հաստատ ըլլան, ըսաւ հայրը :

Օնիկ արդէն բաւական մեծցած էր, այդ տեղի տըղաները սարերուն նայելով հասակ կ'առնէն, եւ սարերն այնպիսի կորով կը ներշնչեն՝ որ հին օրերու ասպետներուն կը նմանին :

Օնիկ ստէպ ընկերներով բերդը կը բարձրանար. գինուորական փորձերը լաւ արդիւնք տուին. Հիմա աղջիկ մանչ քաջ նշանաւորներ դարձած էին : Առաւօտ մը խմբուած էին բերդը բարձրանալու համար : Ատոմ տեսաւ խմբակը :

— Ո՞ւր կ'երթաք, հարցուց :

— Բերդը պիտի բարձրանանք, թուռն պիտի գարնենք, նշան պիտի առնենք, ըսաւ Վարդան : Գիտե՞ս, մօրսը, իմ անունս Առիւծի թաթ է. ես ուժով եմ, միայն աչքերս չեն տեսներ, ինչո՞ւ մայրիկս այս աչքերը տուաւ. ես միշտ պէտք է ուրիշին թեւէն բռնեմ քալելու համար : Ա՛խ, եթէ տեսնէի :

— Ես ալ կու գամ հետերնիդ, մի՛ տրամիր, Վարդանս, դու ոչ միայն Առիւծի թաթ ես, հրեշտակի պէս բարի ես : Ես ալ ձեռքէդ կը բռնեմ, դուն ինձ կ'օգնես եւ միասին բերդը կ'ելլենք :

— Պապի, կը յօդնիս, ըսաւ Մարոյ :

— Չէ՛, չեմ յօդնիր, երթանք միասին :

Դանդաղօրէն բարձրացան ծամածուռ արահետներէն. Վարդան գրեթէ քաշելով վեր կը տանէր իր մօբարը :

— Իսկապէս Առիւծի թաթ ես, ըսաւ Ատոմ Վարդանին, ինծի պէս ծանր մարդը տերեւի պէս վեր կը տանիս :

Մանուկները բերդին ամէն մէկ մութ անկիւնը կը

ճանչնալին, իջած ելած էին դետնափոր տեղերը, պարիսպներուն կատարները. համրած էին քարերը, փրկուած թումբերը:

— Ասիկա մեր բանակի տեղն է, հայրիկ, ըսաւ Օնիկ, մենք հոս նշան առնել կը սորվինք, ապագային հրացան պիտի ունենանք որ մեր տունները պաշտպանենք, այնպէս չէ՞ հայրիկ:

— Այդպէս է, տղաս. ով զիտէ թէ այս բերդը ինչ պատերազմներ տեսած է. քանիներ մեռած են հայրենիքի համար. հիմա աւերակ է, քար քարի վրայ չէ մնացած. անունն իսկ մոռցուած է. ոտքերը կոտորէին այն թշնամիներուն որ ասկից անցած են:

Ատոմ բարձրացաւ բերդին կատարը, դիտեց չրջապատը. վարը խոխովելով, որոտալով Արաքսը կ'երթար, ժայռէ ժայռ կը զարնուէր եւ փրփուր փրփուրի կը խառնէր: Ինքն ալ պարսատիկ մ'առաւ, քաշեց նշանին ու զարկաւ:

— Պապին անսխալ որսորդ է, ըսաւ Օնիկ ծափ զարնելով:

— Ասիկա խաղալիկ է, հրացան պէտք է, տղաս, հրացան:

Բայց հաճոյք զգաց այդ մանկական խաղէն. քաշածը զարկաւ. մոռցաւ թէ հիւանդ է. սարի արիւն մը տաւ երակներուն մէջ. քառատրոփ մտրուկի պէս պինչերը լայն բացուեցան եւ զով քամին լեցուց թոքերը:

— Տղան մօր կաթով կ'առողջանայ. Ատոմ սարերու քամիով, ըսաւ, պարսատիկը Շողիկին տալով: Գալ անդամ հրացանս կը բերեմ. ինքն ալ մէկ ու կէս տարի է որը մնացած է, սարի կարօտ կը քաշէ, ձորերն իր որոտումը չլսեցին, լեռներն իր երգին կարօտ մնացին:

Երբ տուն դարձան, Կատար պոռաց, կանչեց թէ ինչո՞ւ բերդ բարձրացեր էր:

— Կնիկ, դեռ բերդէն ալ վեր պիտի բարձրանամ, մինչեւ քարայրները, լեռներու կատարներն, հոն ուր արծիւները կը թառին. ես մշուշոտ դաշտերուն մէջ, նեխած ջուրերու քով չեմ ուզեր մեռնիլ, այլ վերն երկինքի մօտ, արեւու շողերուն մէջ:

Կատար մըմուլով գնաց. կարելի՞ էր խօսք հասկըցնել մէկու մը որ միայն լեռ եւ որս տեսած էր: Քանի մ'օր վերջը տղաք պատրաստուեր էին խումբով բերդէն ալ վեր բարձրանալ, ծառերուն վրայ թռչուն զարնելու:

— Դիւրին է, ըսաւ Օնիկ, անշարժ քարին նշան առնել. երբ թշնամին գայ, փայտի պէս կանգնած՝ չըսեր թէ զարկ ինծի. կը շարժի, կը յարձակի, ետ կ'երթայ, առաջ կու գայ, եւ գնդակը պէտք է հետեւի իրեն:

Ատոմն ալ հրացանն առաւ տղաներուն հետեւելու. հիմա կարծես տղայացած էր, մանուկի պէս հաճոյք կը զգար խումբին մաս կազմելու: Բայց ահա զիւզին մէջտեղ տարօրինակ մարդիկ երեւցան: Չորս հատ պարսիկ զինուորներ, վեց հատ ջորի եւ վեց ջորեպան էին: Եկած էին զինարաններէն գէնքեր գնելու եւ Նախիջեւանի Զաւաջիր խանին տանելու: Գիւզին տղաները թափեցան անոնց վրան, հետաքրքիր էին, զինուոր զրեթէ չէին տեսած. անոնց ուսերուն վրայ Շահկերտի հրացանները կային: Զինուորներն անցան գործատունէ գործատուն, մրոտ տեղեր, բայց իրենք աւելի մրոտ էին՝ ճամբու փոշիներէն:

Պատանիները ետ կեցան լեռ երթալէն:

— Նայինք ի՞նչ կը պատահի. ասոնք ո՞վ են. ինչո՞ւ եկեր են, ըսաւ Օնիկ իր ընկերներուն:

— Ի՞նչ կայ, Օնիկ, հարցուց Վարդան, ընկերո՞՞ ձեռքէն բռնած :

— Նախիջեւանէն Պարսիկներ եկեր են մեր գիւղէն գէնք դնելու, պատասխանեց Օնիկ :

— Ի՞նչ յիմար ենք, վրայ բերաւ Յովիկ. մեր գէնքերը թնամբին կու տանք :

— Առեւտուրն ալ կարելոր է, պատասխանեց Երուանդ, տեղը դրամ կ'առնենք եւ կը հարստանանք : Իմ հայրիկս մէկ ջորիի բեռ գէնք ծախեց եւ հազար դահեկան առաւ :

— Այդ գէնքի առեւտուրը գէշ բան է, պատասխանեց Վարդան, եթէ վաղը խնդիր ունենանք՝ մեր գէնքերով մեզ կը մորթեն :

— Ես ալ այդպէս կը խորհիմ, ըսաւ Լալայեան Ծաբէ : Իմ պապիս արօրի խոփ եւ անիւ կը շինէ. գէնք չի շիներ :

Մինչ անոնք կը խօսէին, քանի մը տուն անդին աղմուկ լսուեցաւ : Զինուորները տաք վէճի մէջ էին զինագործի մը հետ : Կոշտ հայհոյանքները ցեխի պէս օդը կը նետուէին : Զինուոր մը հրացանի կոթով գիւղացիին կոնակին հարուած մը տուաւ եւ զինագործը լռեց, խոնարհեցաւ : Զինուորը քանի մը դահեկան նետեց գետին եւ քաշեց երեք հատ փայլուն հրացաններ : Զինագործը խոնարհեցաւ, հաւաքեց դահեկանները եւ դործատուն մտաւ : Օնիկին խումբը ներկայ էր. բոլորն ալ կատաղած՝ սարսուռ դգացին :

— Տեսա՞ք, ըսաւ Յովիկ, դրամը գետին նետեց, կարծես թէ շան առջեւ ոսկր կը նետէ : Տեսա՞ք թէ ինչպէս բռնութեամբ քաշեց արժէքաւոր հրացանները. եւ մենք գէնք կը ծախենք ասոնց . Ի՞նչ յիմար ենք եղեր :

— Մարոյ, ըսաւ Վարդան, զիս այդ զինուորին քով

տար որ մէջքին բռունցք մը քաշեմ, ես Առիւծի թաթեմ : Ո՞վ կ'ըլլայ որ մեր գիւղացիին կը դարնէ :

— Զէ', Վարդան, պատասխանեց Օնիկ. ես ուրիշ բան կը խորհիմ : Աչքերս այդ երեք հրացանին վրայ մնացին, փայլուն, գեղեցիկ եւ աղուոր շինուած էին. եթէ կարենանք այս գիշեր գողնալ ու բերդ տանիլ՝ մեզի համար մեծ յաղթանակ պիտի ըլլայ :

— Բայց գնելէն վերջ կ'առնեն ու կը տանին, ըսաւ Վարդ :

— Ասոնք մինչեւ որ լաւ չկշտանան, չքնանան մեր բարձերուն վրայ՝ չեն երթար : Ասոնք զինուոր են, անկուշտ աչքով կը մտնեն եւ կշտացած դուրս կ'ելլեն, պատասխանեց Արգարեան Ծոզիկ :

— Տեսա՞ք թէ ուր դրին, հարցուց Օնիկ :

— Այո՛, սա մոխրագոյն ջորիին բեռան մէջ դրին, պատասխանեց Յովիկ :

— Աչքէ չհեռացնէք :

Երբ մութն ինկաւ, զինուորները մէկ մէկ տուն հիւրասիրուեցան, ջորեպանները բաժնուեցան համեստ ընտանիքներու մօտ : Ամառ էր, ջորիները կապած էին բակերուն մէջ, մոխրագոյն իր բեռով մտաւ Աւոյի բակը : Զորեպանը բաւական տարիքոտ մէկն էր. պարսիկ էր, բայց քիչ մը հայերէն գիտէր : Առջեւն ինչ որ դրին՝ կերաւ, խմեց : Քանի մը գաւաթ լեռնային գինի խելքը տարին, երկնցաւ նստած տեղը եւ խոր քունի մէջ ինկաւ :

— Աս սատակն ալ ճիշտ տեղը դտաւ քնանալու, ըսաւ Աւոյ իր կնիկին, ձգէ թող մնայ շնթուկած :

Մութ գիշերին՝ Օնիկ, Վարդ, Յովիկ ու Երուանդ մտան Աւոյին բակը : Հրացանները խուրձ կապուած պատին տակն էին : Քակեցին չուանները, դուրս բերին ե-

բեք փայլունները եւ տեղն երեք հատ հին ժանգոտած հրացաններ դրին, կապեցին ու սուսիկ փուսիկ հեռացան դէպի բերդը: Աւոյ բան չլսեց. կնիկը բան չլսեց, ջորեպանն արդէն աշխարհէս չէր:

Ո՛չ վարդան կար այս գործին մէջ, ո՛չ աղջիկները: Բերդը հասնելու համար մէկ ժամը շատ էր իրենց: Անոնք տեղաւորեցին զետնափոր նկուղի մը մէջ եւ լուսանի պէս սողալով վար իջան: Արդէն կալերու մէջ խոտի դէզերու վրայ կը քնանային, ո՞վ պիտի անդրադառնար թէ ո՛ւր դացին, ուսկից եկան:

Յաջորդ օրը ջորեպանին գլխուն կէսը տեղը չէր: Լուսաց իր քերձած գլուխը, շնորհակալ եղաւ Աւոյին եւ ջորին դուրս քաշեց եւ խմբուեցան զիւզին մէջտեղ: Բռնեցին Նախիջեւանի ճամբան, վար իջան եւ Արաքան եզերելով ծածկուեցան ծառերու ետեւ:

— Օնիկ, ըսաւ վարդ, տեսա՞ր, բան չանդրադարձան:

— Կեցի՛ր, գեռ չվերջացաւ:

— Ալ դացին եւ մենք տէր եղանք փառաւոր հրացաններու, պատասխանեց Երուանդ: Բայց ես խեղճ զիւզացիին գլխուն գալիքը կը մտածեմ:

— Կը կարծէ՞ք թէ ետ դառնան, ըսաւ Յովիկ:

— Անշուշտ, զինուորներուն աչքերն ալ այդ հրացաններուն վրայ էին, պատասխանեց Օնիկ: Ինչ կ'ուզէ թող ըլլայ, մարդու բան չըսենք:

Հինգ օր վերջ քանի մը ձիաւոր զինուորներ հասան Ծահկերտ զիւզը, մէկը գեղեցիկ հագուած էր եւ դըլխուն կը կրէր փայլուն բարբախ մը, ձեռքին մէջ ունէր կաշիի երկոյներով հիւսուած խարազան մը: Գիւղի ժամին բակը կանգ առին:

— Կանչեցէք ձեր քահանան, ըսաւ այդ մեծը զիւզացիի մը:

— Ի՞նչ կ'ուզէք ինձմէ, ըսաւ Տէր Եղիշէ:

— Մենք մեր արդար դրամով հրացաններ գնեցինք եւ քու մարդիկդ երեք հատ դողցեր են: Վսեմաշուք խանը կատողեր է, կա՛մ ետ կու տաք, կամ զիւզը կրակի կը բռնենք:

— Դարձիր եւ Ջալալիւր խանին բարեւ ըրէ եւ ըսէ թէ Ծահկերտի մէջ դողնալիք չկայ, դող չկայ: Գողերն իր չորս կողմը կը դառնան, թող հոն փնտռէ հրացանները:

— Այս դաւազանը քեզի համար ալ է, ըսաւ սպան, ճօճելով օձաձեւ կաշին: Մեր Սանին քով սուրբ մարդիկ միայն կան, որոնք խանն ու Ղուբանը հաւատար կը պաշտեն: Դուրս բերէք հրացանները:

Գիւզն ամբողջութեամբ խմբուեցաւ ժամին զիմաց. տղայ, կին, աղջիկ, ծեր ու երիտասարդ իրարու մօտ կանդնած. երեսով հանդարտ էին, սրտով կը փոթորկէին:

— Ո՞վ ծախեր է այդ հրացանները, հարցուց Տէր Եղիշէն:

— Ես ծախեցի, այսինքն բռնութեամբ ձեռքէս առին, պատասխանեց նիհար ու տարիքոտ մէկը:

— Բռնութեա՞մբ առին, հարցուց քահանան:

— Այո՛, մենք տեսանք, մէջն ինկան Օնիկ, Երուանդ, վարդ եւ Յովիկ. խեղճ մարդը շուն կոչեցին. հրացանի կոթով մէջքին զարկին, քանի մը դահեկան գետին նետեցին եւ երեք աղուոր հրացաններն առին տարին ու բեռ կապեցին:

— Լսեցի՞ր, պարսիկ սպայ, արդար դրամով գներ

էք եղեր, Պանի քով սուրբ մարդիկ կան եղեր, եւ բռնութեամբ իր հպատակները կը կողոպտէ:

— Ծնորհակալ եղէք որ ձեզի դրամ տուեր են. ինչ որ ձեր քովն է՝ Պանին է, տուն, տեղ, կին, տղայ, դուք եղած էք մեզի ծառայելու, ինչպէս ձերուն ափ մը դարի կու տանք՝ այդպէս ալ ձեզի պատառ մը հաց կու տանք, որ ապրիք եւ աշխատիք:

— Զիտն զլուխն ետ դարձուր եւ մեկնէ, ըսաւ քահանան, քանի դեռ կրակ չէ ելած. հոս ստրուկներ չկան, Ծահին բարի հպատակներ կան, որոնք կը ցանեն, կը հնձեն որ իր անօթի ծառաները կշտանան:

Սպան բարձրացուց խարազանը, աչքերը պտտցուց բոլորակ կազմած ամբոխին վրայ, տեսաւ որ հրացաններու շարք մը կը փայլէր, որոնց առջեւ Ատոմը կանդնած էր, կռթնած իր փայլուն զէնքին: Զեռքը թուլցաւ եւ խարազանը կտորած ճիւղի պէս վար կախուեցաւ: Մարդուն ձայնը փորն ինկաւ. մանաւանդ քովի տարեց զինուորն ականջէն փափսաց:

— Ատոնք լեռնցի են, հրացանը գաւազանի տեղ կը դործածեն:

— Ես կը հաւատամ թէ դուք չէք գողցած երեք հրացանները, ըսաւ հանդարտ ձայնով. անշուշտ այն շուն ջորեպանը գողցած է, վաղը կախազան կը բարձրանայ Պանին տան առջեւ:

— Մեզի համար նոյնն է, թող բարձրանայ, ըսին շատեր:

Սպան քաշեց իր զինուորներն ու հեռացաւ: Ամէնէն շատ պատանիներն ուրախացան որ հարցը լուրթեամբ փակուեցաւ: Ծահկերտցին անմեղ էր, մեղաւորը պատանիներն էին:

Շարաթ մը չանցած՝ Օնիկին խումբը դարձեալ

բերդն ելաւ. Ատոմ իր հրացանն առած էր. խեղճ վարդանը շարկած էր այդ ծանր զէնքը եւ ձեռքն Ատոմի ուսին՝ հեւալով վեր կ'ելլէր:

— Հայրեկիզ ըսե՞նք զէնքերու մասին, հարցուց Յովիկ Օնիկին:

— Ո՛չ, դեռ չուտ է. այդ անիրաւները կրնան վերադառնալ եւ պապին ետ կու տայ, զիւղին ամօթ կ'ըլլայ:

— Հիմա թռչուն դարնենք, ըսաւ Ատոմ եւ քաշեց օդին մէջ սաւառնող աղաւանդուն:

— Պապի, երկու հատ ինկան, ճուայ Օնիկ:

— Մի՛ առնէք, վատ միս ունին, ըսաւ Ատոմ:

— Պապի, տուր հատ մ'ալ ես քաշեմ, հիմա մեծցեր եմ, ուժով եմ, աղաչեց Օնիկ:

Ատոմ զնդակը մէջը դրաւ, վառօդը ներս քշեց եւ տղուն տուաւ: Ուժով բռնէ, ըսաւ, տղուն ձեռքը շտկելով. ասանկ, մի՛ դողար, ճիշտ նշան առ. հոն երեք հատ սարեակներ կան ծառի ճիւղին վրայ:

Օնիկ քաշեց բլթակը եւ հրացանը պայթեցաւ, սարեակ մը վար ինկաւ: Ուրախ կանչ մը բերդը լեցուց, աղջիկ մանչ ծափ դարկին եւ Օնիկ՝ հպարտ, հրացանը պապիին տուաւ:

— Կը տեսնեմ որ Ատոմին կորիւնը առիւծ եղեր է, ըսաւ հայրը հպարտացած:

— Պապի ես ալ, պապի ես ալ, ըսին միւսները:

— Աղջիկնե՞րն ալ, հարցուց Ատոմ:

— Այո՛, մենք ալ, ի՞նչ կը կարծես, ըսաւ Մարոյ, պակա՞ն ենք. մանչերէն աւելի լաւ նշան կ'առնենք:

— Լաւ, թող հիմա Ծողիկը քաշէ, նայէ, այն ծառի մէկ հատիկ տերեւին պիտի դարնես:

— Չէ՛, ես թուշուն պիտի դարնեմ, ըսաւ Շողիկ :
Կեցէք, մէյ մը դան :

— Նայէ, գիւղին վերեւն երկու աքլորներ կան, ա-
նոնց նշան առ, ըսաւ Յովիկ խնդալով :

— Աքլորն ի՞նչ է, խե՛ւ, ես թուշուն պիտի դարնեմ :

Օգիւն մէջ բաւական բարձր երկու բազէներ կը սա-
ւառնէին, այնքան հանդարտ որ կարծես թէ կեցեր էին .
նշան առաւ եւ մէկ հատն իջեցուց :

— Տեսա՞ք, ա՛յսպէս նշան կ'առնեն, ըսաւ Շողիկ
հպարտ սրտով :

Բոլորն ալ փորձեցին եւ գարկին իրենց նպատակնե-
րուն . Օնիկ գո՛հ էր, իրենց փորձերը լաւ արդիւնք տը-
ւին :

— Դուք կտրիճներ էք, ըսաւ Ատոմ պետերն ոլո-
րելով : Բարձրանա՞նք սա աշտարակին վրայ, լաւ տե-
սարան ունի :

— Չէ՛, պապի, ըսաւ Մարոյ, քարերը թոյլ են, վար
կ'իյնաս :

— Աղջիկ, ես քարայծի պէս ժայռերու ծայրը
կանգներ եմ, աշտարակէ՞ն պիտի վախնամ :

— Պապի, մեռել չենք ուզեր տուն տանիլ, պոռայ
Օնիկ . մեզի մտիկ ըրէ, անցեալ օր քիչ մնաց Յովիկը
մինչեւ ձորը կ'երթար :

— Ի՞նչ կայ, Օնիկ, պապին ո՞ւր կ'ուզէ երթալ,
հարցուց Վարդան քարի մը վրան նստած : Ա՛խ աչքերս
տեսնէին, ես ալ նշան առնէի . եւ ձեզի պէս վազէի աս-
դին անդին, բայց ես դժբախտ եմ, չեմ տեսներ : Դուք
ի՞նչ կը տեսնէք, թուշունն ի՞նչ տեսակ է . այս քարերն
ի՞նչ գոյն ունին : Ի՞նչ բան է գոյնը, կարելի՞ է դպչիլ :
Ըսէ՛ Օնիկ, կարելի՞ է դպչիլ :

— Չէ՛ Վարդանս, չէ, գոյնը միայն կը տեսնուի :

Աստուած իմ, ինչո՞ւ այս հրեշտակին աչքերը չեն տես-
ներ, ըսաւ Օնիկ քիչ մը տխրած :

— Էհ, տուն դառնանք, ըսաւ Ատոմ, ալ յոգնած եմ,
արդէն ուշ է . քիչ ատենէն կը մի՞նէ :

— Ինձի համար գիշեր ցերեկ չկայ, միշտ մութ է,
ըսաւ Վարդան : Դուք գիշերները չէ՞ք տեսներ, ինձի
պէս կո՞յր կ'ըլլաք :

— Չէ՛, ճրագ կը վառենք եւ լոյս կու տայ, պա-
տասխանեց Շաքէ :

Երբ վար կ'իջնէին՝ Վարդան դարձեալ բռնած էր
Ատոմին ձեռքէն . հանդարտ կ'իջնէին :

— Պապիկ, հարցուց Երուանդ, ինչո՞ւ պարսիկ զին-
ուորները մեր գիւղը կու գան, իրենք երկիր չունի՞ն,
թագաւորութիւն չունի՞ն :

— Ունին, տղաս, ունին, անոնք մեր գիւղին, մեր
երկրին վրան ալ կ'իջխեն, մեզմէ հարկ կ'առնեն, ուզեն
կը մորթեն, ուզեն կը կողոպտեն, մեր տէրն են, պա-
տասխանեց ծերունին, ա՛խ քաշելով :

— Չէ՛, պապի, մեր գիւղն ու երկիրը մերն է, պո-
ռային տղաքները :

— Մերն էր, ես չեմ յիշեր, պապերս ալ չեն յիշեր
թէ քանի տարիներ առաջ բանակով, սուրով, հազար-
ներով եկեր եւ տիրեր են մեր երկրին :

— Բայց մենք պիտի վճտենք զիրենք, ըսաւ Վար-
դան . ալ զէնք պիտի չծախենք, ոչ ալ հաց ու պանիր
պիտի տանք : Ես լսեցի այն զէչ մարդը որ մեր տէր
Եղիշէին հետ կը խօսէր :

Երբ խօսելով վար կ'իջնէին, Ատոմ սխալմամբ թոյլ
քարի մը վրայ կոխեց, ոտքը սահեցաւ եւ այդ լեռան
պէս մարդը կռնակին վրայ փոռուցաւ, մէջքն ուժով
քարի մը զարկաւ . խեղճ Վարդանն ոյժ չունէր զինքը

բունելու: Ծերունին տեղը մնաց դրեթէ կիսամաս. վազեցին երեխաները, վեր բռնեցին. բայց ան ոտքի չէր կրնար կանգնիլ. ցաւը սաստիկ ըլլալու էր. բերանը չէր բացուեր: Գիւղը շատ հեռու չէր, բայց վայրէջքը խիստ էր, կառք չէր կրնար բարձրանալ, որ բերէին վրան դնէին: Տղաներն ալ սկսան լալ. մանաւանդ Մարոյ ձայնը ձգեց ձորէ ձոր:

— Ի՞նչ ընենք, Օնիկ, ըսին միւսները:

— Եկէք մեր ձեռքերն իրար կապենք խաչածեւ, պապին վրան դնենք եւ այնպէս տանինք. Չորին ալ բերենք՝ վրան չի կրնար հանգչիլ: Վարդանը մէջտեղ դնենք որ կարենայ քալել, երկար հասակներն առջեւ, կարճերն ետեւ որ քիչ մը շիտակ պառկի:

Ձեռք ձեռքի ուժով շղթայ ըրին. Մարոյ եւ Երուանդ առջեւն անցան, միւսները ետեւի կարգը բռնեցին: Անցուցին իրենց ձեռքերը Ատոմին գլխուն, թիկունքին եւ ոտքերուն տակ ու վերցուցին այդ ծանր մարդը:

— Ծատ կամաց քալեցէք, ըսաւ Յովիկ:

— Այո՛, եթէ ձեռքերնէս իյնայ՝ մահ է եկեր մեր սիրելի պապիկին համար, պատասխանեց Վարդան:

Իջան, իջան, դիւղին մօտեցան. պառաւ մը տեսաւ եւ ճուայ.

— Քու ըլլամ, ի՞նչ եղած է:

— Պապին սահեցաւ ինկաւ, պատասխանեց Ծաքէ:

— Որսորդ Ատոմ՞ը:

— Հա՛, հա՛, մամի, ըսաւ Ծողիկ:

— Ուշքը վրա՞ն է:

— Այո՛, վրան է, բայց չի կրնար խօսիլ, ըսաւ Մարոյ: Վարդան, քիչ մը վեր բռնէ, գլուխը կախ ինկաւ,

դարձաւ կոյր պատանիին, որ ամէնէն ուժովն էր եւ դրեթէ ինքը վերցուցած էր այդ ծանր բեռը:

Ատոմի արկածին լուրը շուտ տարածուեցաւ. միայն Կատար ուշ լսեց. ան իր քրոջը տունը գացեր էր, Վարդանի մօր հետ քանի մը խօսք փոխանակելու, եւ միասին կար ընելու. երբ պատանի մը ներս մտաւ եւ ըսաւ.

— Կատար մայրիկ, տուն դարձիք. Ատոմ ամին քեզ կ'ուզէ:

— Բա՞ն մ'եղաւ արդեօք, պատասխանեց կինը: Ամէն անգամ որ լեռ կամ բերդ կը բարձրանայ՝ միշտ դըժբախտ լուրի մը կը սպասեմ, ըսաւ իր քրոջը:

— Քու ցաւդ ի՞նչ է որ իմինիս քով. մէկ մանչուկ ունիմ, ան ալ կոյր է: Կ'ըսեմ գերեզմանը տեսնեմ, սիրտըս չ'երթար. հետը լաց կ'ըլլամ, լսող չկայ: Իր հրեշտակի խօսքերը կը լսեմ՝ սիրտս կը փղձկի: Արդէն տասնըհինգ տարեկան է եւ տակաւին աշխարհէն լուր չունի: Իր աշխարհն ուրիշ է, իր կեանքն իմ ցաւս է. խեղճ Վարդանս, խեղճ Վարդանս:

Ան Կատարէն երիտասարդ էր, իր սեւ աչքերէն թարմ արցունքներ իջան: Կատար շատ լսած էր իր քրոջ ողբերը, հիմա սիրտ չունէր մտիկ ընելու եւ ձայնակցելու համար: Վազեց իր տունը. դրան առջեւ բաւական բազմութիւն մը գտաւ: Միտքը պղտորեցաւ եւ ճեղքելով հաւաքուած մարդիկը, ներս մտաւ: Ատոմ անկողինին վրայ տարածուած, անշարժ պառկեր էր:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուց տղաներուն:

— Սահեցաւ վար ինկաւ, մօրքուր, ըսաւ Վարդան, շատ ծանր էր, չկրցայ վեր բռնել. ես ալ ինկայ իր հետը, ոտքս քիչ մը ցաւեցաւ, բայց անցաւ:

— Անբախտ եմ, անբախտ, ըսաւ Կատար, ձեռքերը

ծունկերուն զարնելով. գիտէի թէ այս մարդն այսպէս պիտի վերջանար :

— Մամի, խո մեռած չէ, պատասխանեց Օնիկ, ինչո՞ւ կ'ողբաս, կու լաս : Նազար ամին կանչենք. անիկա գիտէ գեղել :

Եկաւ Մարգարենց Աւոն եւ վայ ըսաւ :

Եկաւ Մինասենց Սերգոն եւ վայ ըսաւ :

Եկաւ Խանդամիրենց Մկուչը եւ վայ ըսաւ :

— Ամի՛, ելի՛ր, որսի պիտի երթանք, ըսին չորսը միասին. սարերը քեզի կը սպասեն. քարայծները ժայռերու վրայ ծաղկէ ծաղիկ կ'անցնին :

— Հողեմ ձեր որսին ալ, ձեր ալ գլուխը, ըսաւ Կատար. ամուսինիս փորձանքն եղաք :

— Այդպէս մի՛ ըսեր, Կատար քոյրիկ, պատասխանեցին, Աստուած միայն մարդուս ճամբան գիտէ. մենք կոյր կը քալենք, Ինքը մեր ձեռքէն բռնած կը տանի ուր որ կ'ուզէ, եւ թոյլ կու տայ որ իյնանք, ուր որ կ'ուզէ :

— Ասոնք ալ ինծի պէս կոյր են եղեր, ես կարծեցի թէ կը տեսնեն, ըսաւ Վարդան :

Նազար ազան եկաւ մեծ բփռչիկ հովեր առած : Գաւազանը մէկզի գրաւ, Ատոմին քով ծունկի եկաւ, կռնակը բացաւ. ի՞նչ տեսնէ, կապուտցած խոշոր բուրակ մը, մէջտեղը կարմիր վարդի չափ բիծ մը :

— Հոս է վէրքն, ըսաւ : Քացախ բերէք, ձէթ բերէք, ձերմակ լաթ բերէք :

Քսեց, չփեց, վէրքը մաքրեց, բայց Ատոմ աչքերը չբացաւ :

— Բա՛յ, աչքերդ, Ատոմ, ըսաւ կինը լարագին. բա՛յ, սարերը քեզի կը սպասեն, զաւակներդ որը մի՛ թողուր, ես զլխուս սեւ լաթ չկապեմ. բա՛յ աչքերդ, տունդ չէնցուր :

Ատոմին քով վազեց նաեւ տէր Եղիշէն. ան Շահկերտին հոգեւոր պահակն էր. վրան կարգաց որքան որ ազօթք դիտէր : Զեռքը սրտին դրաւ եւ երեսը մթնցնելով ըսաւ .

— Շատ տկար կը զարնէ :

Գիշերն ամբողջ հիւանդին քով մնացին, հսկեցին, լացին, եւ յուսացին : Առաւօտեան դէմ ոսկի արեւը զարդարեց Զանգեզուրի լեռները. կեանքն սկսաւ ինչպէս ուրիշ օրեր, բայց այդ արեւը վերջինն էր Ատոմին համար : Ան յանկարծ ինքզինքը շտկեց. կարծես կ'ուզէր ոտքի ելլել. բացաւ աչքերը, շօշափեց իր կինը, զաւակները. գերագոյն ոյժ մ'եկաւ վրան որ մենք չենք հասկընար մինչեւ այդ վերջին վայրկեանը, եւ ապա ա՛հ, հառաչեց ու թոյլ փուռեցաւ անկողնին վրայ :

— Ատո՛մ, Ատո՛մ, հառաչեց Կատար :

— Պապի՛, պապի՛, լալով ձայն տուին զաւակները :

— Մեռա՛ւ, մեռա՛, կրկնեց կինը. զիս ալ հետդ տար. միասին հանգչինք նոյն հողին մէջ :

— Ամէնուս ճամբան այդ է, Կատար, ըսաւ տէր Եղիշէ : Մահը ո՛չ լեռնցիի կը նայի, ո՛չ դաշտեցիի : Հրացան ունիս՝ ձեռքէդ կ'առնէ. դրամ ունիս՝ գրպանէդ կը հանէ : Օրհնեալ ըլլայ իր կամքը. բոլոր յանցանքն Ազամ Եւային է, թող այդ պտուղն ալ չուտէին. կոկորդներն մնար : Աստուծոյ խօսքը մէկզի կը ձգե՞ն :

Լաց եւ ողբ բռնեց բոլոր գիւղը, մանաւանդ կիները շատ կը սիրեն միասին լալ : Եկողը լացաւ, գացողը լացաւ : Նազար ազան դարձեալ Ատոմին երակը բռնեց եւ լուրջ ձայնով ըսաւ .

— Աստուած ողորմի հոգուն, հիմա չիտակ մեռաւ :

Ատոմին թաղումը բոլոր գիւղը կատարեց : Տէր Հայրը շատ սրտապին երգեց եւ այն պահուն որ դագա-

զը գերեզման պիտի իջնէր, տասնեակ հրացաններ պայ-
թեցան: Ամէն մէկը բուռ մը հող նետեց, երեսը խաչա-
կնքեց եւ հեռացաւ:

— Շիտակ մարդ էր, ըսին իրարու:

— Քաջ որսորդ էր, կրկնեցին ուրիշներ:

— Էհ, գաւազը թող շարունակէ. քաջ եւ խելացի
տղայ կը տեսնուի, ըսին շատեր:

Կատարին տունը մէկ շարաթ եկող զացողի ճամբայ
եղաւ: Օնիկ Վարդանին տունը գնաց. Մարոյ հիւրեր
կ'ընդունէր: Իրենք այդ օրերը ո'չ թոնիր վառեցին, ո'չ
կերակուր եփեցին, դրացիներու եւ բարեկամներու
պարտքն էր սգաւոր տունը ուտելիք տանիլ:

Կատար քանի մ'օր վերջ տէր Եղիշէն կանչեց եւ ը-
սաւ.

— Տէր հայր, Ատոմիս համար հոգեհաց մ'ընենք.
մէկ կով մ'ունինք, մորթենք որ դան ուտեն եւ աղօթեն
իր հոգուն համար:

— Օրհնած, մէկ կովն ի՞նչ է. տղաներուդ կաթ ո՞վ
պիտի տայ:

— Ի՞նչ ընեմ, հարուստ եմ ըսեմ՝ հարուստ չեմ,
աղքատ ըսեմ՝ աղքատ չեմ, մենք որսով կ'ապրէինք:
Մարդս տունն ալ կը կերակրէր, չունեւորին ալ կու
տար:

— Իր որսի ընկերները՝ Մկուշը, Աւոն, Սերդոն եւ
Վրէժը մտածեր են, վազը միւս օր սարը պիտի բար-
ձրանան եւ որս պիտի ընեն հոգեհացի համար. դու մի՛
մտածեր. համով միս, համով աղօթք պիտի ըլլայ:

Ամէն բան վերջացաւ. այդ տան մէջ խոշոր պարսպ
մը կար որ փոքրիկ Օնիկը չէր կրնար լեցնել: Որսի հրա-
ցանը տան անկիւնը մնաց, Ատոմին տուտուկը պատէն
կախ մնաց:

— Մամի, ըսաւ Օնիկ, երբ դեռ աւելի մեծնամ,
այդ որսի հրացանը նորէն պիտի հնչէ լեռներուն մէջ
եւ տուտուկը պիտի երգէ մեր սարերուն գեղեցկու-
թիւնը:

— Ձէ՛, չէ՛, տղաս, ո՛չ հրացան, ո՛չ որս. քեզ պիտի
դրկեմ որ հօտաղ ըլլաս, արտ վարել սորվիս, պատաս-
խանեց մայրը: Եթէ կ'ուզես նուագել, ելի՛ր տանիքը եւ
ուզածիդ չափ փչէ տուտուկը:

— Ես հօտաղ չեմ ըլլար, եղ չեմ որ արտ վարեմ,
շատ շատ հրացան չինել, ուսմբ պատրաստել կը սոր-
վիմ: Մարդ որ զէնք բռնել չի գիտեր, ոտքի տակ կ'եր-
թայ: Տեսա՞ր ան պարսիկ զինուորներն ի՞նչպէս փախան
երբ մեր հրացանները տեսան: Պապին իրաւունք ունէր:

Քանի մը օր յետոյ հոգեհաց ըրին. պատարագէն
վերջ, ժամին բակը գորգեր, սեղաններ շարուած էին.
կաթսաները լեքն էին որսի միսերով, եղինձը շոգի կ'ար-
ձակէր: Օնիկ տան մեծն էր, ինքն էր Ատոմի մանչ ժա-
ռանդը. մէջտեղ դրին, քովը կեցաւ Նազար աղան, ապա
միւսները եւ միւս կողմը տէր Եղիշէն: Կերան, օրհնե-
ցին, խօսեցան մեռնողին առաքինութիւններուն վրայ եւ
բոլորն ալ խօսք տուին թէ փոքրիկ Օնիկին հայրութիւն
պիտի ընէին: Մխիթարուեցաւ Կատար, Օնիկ իր ընկեր-
ներն ունէր, Մարոյ արդէն դրեթէ հասած աղջիկ էր:
Բայց տունը պարսպ մնաց, ո՞վ կրնար լեցնել այդ հըս-
կայ մեռնողին տեղը: Կատար շատ աւելի փարեցաւ իր
գաւազներուն. անոնք իր կեանքն էին, իր ամէն ինչը.
սրտով կը հետեւէր, աչքով չէր կշտանար: Մէկ կով
ունէին, երեք ոչխար, անոնք կրնային նախիրին եւ հո-
տերուն հետ արածելու երթալ. Օնիկ պէտք էր աշխա-
տիլ տունը բան մը բերելու, բայց ան չէր ուզեր հօտաղ
ըլլալ. աւելորդ էր ստիպել, պիտի փախչէր. հարկ ե-

դաւ հրացան շինողի մը քովը դնել: Երուանդին հայրը սիրով քովն առաւ, այսպէս իր դաւակն ալ ընկերոջ քով կը մնար, փոխանակ պարսպ թափառելու: Իսկապէս մարդուն խանութն եղաւ պատանիներու հաւաքավայր: Վարդը, Յովիկը միացան միւսներուն, յաճախ Վարդանն ալ կը տանէին՝ որ հրացանները կը փայլեցնէր: Բայց Երուանդին հայրը ոչինչ կը վճարէր: Քանի մը ամիս դացին ու եկան, զինագործը բաւական վաստակ կ'ընէր, ստէպ կու դային, պարսիկներ, թուրքեր, երբեմն հայեր, հրացան կամ սուր զնելու համար:

— Քու հայրդ ինչո՞ւ մեզի բան մը չի վճարեր, դէ՞թ Օնիկին տայ, անիկա որբ է, մայր ու քոյր ունի, թող հացի կարօտ չմնան, ըսաւ Յովիկ Երուանդին:

— Իմ հայրիկս եթէ սատանայէն առնէ՝ Աստուծոյ չի տար, եթէ Աստուծմէ առնէ՝ սատանային չի տար, պատասխանեց Երուանդ:

— Էհէ՛, մենք պարսո՞ւ պիտի աշխատինք, ըսաւ Վարդ, պէտք է ճար մը գտնել: Ամէն շարաթ կը ծախէ եւ կը վաստակի եւ մեզի բան չի տար:

— Մովսէ՛ս ամի, ըսաւ օր մը Յովիկ, մեր արդար վաստակը ե՞րբ պիտի տաս: Կ'երթանք կու դանք, կը մրտախնք, զգեստ կօշիկ կը մաշեցնենք, մեր վաստակը ե՞րբ պիտի տաս:

— Վաստակ չունիք, արհեստ կը սորվիք, կը բաւէ:

— Մենք ալ կ'երթանք գիւղին մէջ կը պոռանք, Մովսէս ամի՛ն մեր դրամը կերաւ, պատասխանեց Վարդ:

— Ծօ՛, շուն շան որդի, Մովսէս ամին որո՞ւն դրամը կերեր է, պոռաց զինագործը. ձեռքերս մաշեցան պողպատ ձեծելէն, շրթներս մաշեցան վառօք փշելէն. երէկ դեռ ժամին տուր քառորդ դահեկան:

— Հա՛, հա՛, հա՛, խնդացին պատանիները, քառորդ

դահեկան տուեր է ժամին. թող մէկ տարի մոմ դնեն, ձէթ վառեն:

— Դո՛ւրս խանութէս, լակոտներ, թէ՛ մարդ ընեմ, թէ՛ դրամ տամ, պոռաց Մովսէս, երկաթը ձեծելով: Պատանիները դործն եղած տեղը ձգեցին եւ ձեռքերնին ծալած կեցան խանութին մէջ:

— Մենք դործագուլի մէջ ենք, ըսին միասին:

— Դո՞ւն ալ, Երուանդ. այս երեկոյ քեզի կը հասկըցնեմ:

— Վարդան, մի՛ աշխատիր, ըսաւ Օնիկ, մեր դրամը թող տայ. մենք դործագուլի մէջ ենք:

— Մովսէս ամի, նայէ, այս հրացանի փողը լաւ փայլեցա՞ւ, հարցուց կոյր տղան չհասկնալով եղածէն:

— Նայէ, լաւ տղան ասիկա է, լուռ ու մունջ կ'աշխատի, պահանջ չունի. մեզք որ կոյր է, ըսաւ զինագործը: Այո՛, շատ աղուոր է, դուն արժանի ես վարձքի:

Մատը խոթեց իր կաշիէ գողնոցին զրպանը եւ դահեկան մը հանելով Վարդանի ձեռքը դրաւ:

Յովիկ առաւ տղուն ձեռքէն եւ զինագործին նետեց:

— Մուրացկա՞ն է Վարդանը որ դահեկան մը կու տաս, ա՛ռ, քեզի ըլլայ. ասոր կէսն ալ դալ տարի ժամին կու տաս:

— Դուրս ելէք խանութէս, ապերախտներ, ձեռքերս պազնելու տեղ զիս կը նախատեն, սաւոնց նայեցէք, մատ մը հասակ ունին եւ մեծ մեծ կը ջարդեն: Շահին զինուորները, խանին ծառաներն առջեւս բարեւի կը կենան, ասոնք հասակս կը չափեն. դո՛ւրս, լպրտածներ:

Տղաք դուրս փախան, Երուանդն ալ իրենց հետ:

— Կը տեսնուինք, ըսին միասին, կը տեսնուինք, զինագործ Մովսէս. մեր քրտինքը կերար, կոկորդ մընայ:

Վարդան մնաց խանութին մէջ. տղան այդ շփոթութեան ժամանակ մոռցուած էր իր նստած տեղը. երբ ոչ մէկ ձայն լսեց՝ ան կանչեց իր ընկերները.

— Օնիկ, Վարդ, Յովիկ, ո՞ւր գացիք:

— Սանութէս դուրս քշուեցան, պատասխանեց Մովսէս խիստ ձայնով:

— Ես ալ կ'երթամ, ըսաւ տղան:

— Ո՞վ քեզ տուն պիտի տանի, ես դորձ ունիմ, ըսաւ զինագործը:

— Մինակս կ'երթամ, պատերը բռնելով դռնէ դուռ կ'անցնիմ. ճամբան չեմ սխալիր:

Ելաւ տեղէն, շօշափեց քովի պատը, բայց փոխանակ դէպի դուռն երթալով՝ ճիշտ կրակին կողմը դնաց:

— Անդին դարձի՛ր, պոռաց Մովսէս, կրակին կողմը կու դաս:

Վարդան ետ դարձաւ եւ դարձեալ շօշափելով մրոտ պատերը՝ դտաւ ելքի դուռը: Պազ օդը հասկցուց թէ դուրսն է. պատէ պատ անցաւ, ինկաւ ու ելաւ:

— Մէկը չունի՞ս քեզ առաջնորդելու, հարցուց կին մը:

— Չէ՛, ես մինակս տուն պիտի երթամ: Ճիշտ բռնած եմ մեր տան ճամբան, ըսաւ Վարդան:

— Կեցիր, քեզ շիտակ ճամբան դնեմ, աւելցուց կինը. հիմա այս ուղղութեամբ կ'երթաս, պատերը բռնէ որ չսխալիս. ուղիդ դնա՛:

Տղան ոտք ոտքի հազիւ դնելով կամաց կամաց առաջ դնաց եւ ահա գլուխն ուժգին ծառի մը զարնուեցաւ ու վար ինկաւ, ցաւը սաստիկ էր, դրեթէ մարելիք եկաւ վրան. բայց աչքերը կարծես բացուեցան, առջեւը բան մը տեսաւ, աչքերուն մէջ լոյս մտաւ: Շօշափեց ինքզինքը, իր երեսը, իր ոտքերը, կուրծքը: Գիւղի տու-

նեքը շարուած էին, առջեւը ծառ կար. բայց դեռ գետինն էր: Եկան եւ վերցուցին զինքը. գիտէին թէ կոյր տղան է:

— Կը տեսնե՛մ, կը տեսնե՛մ, կանչեց Վարդան ուրախութեամբ: Մամի՛, պապի՛, եկէք տեսնեմ. արեւը կը տեսնեմ, լոյսը կը տեսնեմ. ի՛նչ գեղեցիկ է աշխարհը, բայց գլուխս կը ցաւի. զիս տուն տարէք:

— Հրա՛չք, հրա՛չք, պոռացին քովիները եւ տըղուն վրան իյնալով համբուրող համբուրողի եղաւ:

Գրկեցին պատանին եւ տուն տարին: Մնողքը կարծեց թէ գէշ դէպք մը պատահած է. բայց Վարդան, հակառակ գլխու ցաւին,

— Մամի՛, պոռաց, կը տեսնեմ, լոյս կը տեսնեմ, քեզ կը տեսնեմ, ի՛նչ գեղեցիկ մայրիկ ես:

— Իրա՞ւ կը տեսնես, դաւակոս, ըսաւ մայրը խելացնոր վրան իյնալով: Լոյսդ բարի ըլլայ, հրեշտակս, խսկապէս կը տեսնե՞ս:

— Այո՛, կը տեսնեմ, քու աչքերդ, երեսդ որ կը շօշափէի, նոյնն են, բայց ըսէ ո՞րն է կարմիրը, կանանչը, կապոյտը, սեւը, դեղինը, ես պէտք է սորվիմ դոյները:

— Այո՛՛ դաւակոս, նորածինի պէս պէտք է սորվիս, քեզ գիրկս կ'առնեմ, սրտիս վրայ կը դնեմ, կը սորվեցնեմ դոյներն ու աշխարհիս գեղեցիկութիւնը: Յոյց կու տամ լեռները, կը տանիմ արտերը, ցորեններուն մէջ կը խաղաս, ծաղիկներ կը հաւաքես, թիթեռնիկ կը բռնես:

Մայրը չէր կշտանար համբուրելու այդ մեծ պատանին որ հասակով իրմէ բարձր էր եւ զօրաւոր կազմ ունէր: Ընկերները դարձեր էին զինագործին խանութը Վարդանը վերցնելու:

— Հոս չէ, իր տունը դնաց պատասխանեց Մովսէս:

Անոնք կէս ճամբան էին երբ լսեցին հրաշքը. վազեցին խենթի պէս, չէին հաւատար:

— Կարելի բան չէ, կ'ըսէին, ո՞վ տեսած է որ ի ծնէ կոյրին աչքերը բացուին. չէին գիտեր թէ բնութիւնն երբեմն այսպէս հրաշքներ կը գործէ:

Երբ Վարդանի տունն հասան, տղան իրենց կողմը վազեց կանչելով.

— Օնի՛կ:

Օնիկն եկաւ գրկեց ու համբուրեց:

— Յովիկ ըսաւ, եւ Յովիկն եկաւ ու համբուրեց:

— Վարդ, Երուանդ կանչեց, անոնք ալ եկան ու համբուրեցին:

Գիտէր անունները, բայց չէր գիտեր թէ ո՞րն է Օնիկը, Վարդը, Յովիկը կամ Երուանդը:

— Վարդան, կը տեսնե՞ս հիմա, հարցուցին միասին:

— Այո՛, կը տեսնեմ, բայց մեծցած նորածին մ'եմ, դեռ գոյները չեմ գիտեր զանազանել:

— Ճիշտ մեղի պէս կը տեսնե՞ս:

— Դուք ի՞նչպէս կը տեսնէք, ես չեմ գիտեր, ըսաւ պատանին:

— Ինչպէսը ո՞րն է, կը տեսնենք ամէն բան, ծառ, լեռ, փայտ, քար, մարդ, ալ ինչ որ կայ աշխարհիս վրայ:

Այդ պահուն եկաւ Վարդանին հայրը. տան մէջ բազմութիւն տեսաւ. լսած էր, չէր հաւատար.

— Վարդան, տղաս, բալիկս, ճի՞շտ է որ կը տեսնես, աչքերուդ նայիմ, այո՛, բիրերը բացուեր են. այն մոխրագոյն թաղանթը չկայ: Փա՛ռք քեզ, Աստուած, մեր տան վրայէն սուգը վերցուցիր, չնորհակալ եմ քեզի. ինձի նոր կեանք տուիր, տանս մէջ ճրագ վառեցիր:

Սիրարգիի, դարձաւ իր կնոջը, մեծ ուրախութիւն մը պէտք է ընենք, բոլոր Շահկերտը, բոլորն, առանց բացառութեան, պէտք է մեր ցնծութեան մասնակցին: Եզներս, կովերս կը մորթեմ, տանս սիւները, գերանները վառելիք կ'ընեմ, մեծ խնճոյք մը երգերով եւ պարերով կը կատարեմ:

Եկաւ նաեւ տէր Եղիշէ.

— Ի՞նչ է պատահեր, հարցուց քովիներուն:

— Վարդանին աչքերը բացուեր են, պատասխանեցին:

— Ասիկա Տէր Հայրն է, ըսաւ Վարդան եւ զնաց ձեռքը պազնելու:

— Ի՞նչպէս ճանչցար, հարցուց մայրը:

— Ձայնէն, մայրիկ, իր պատմութիւնները դեռ ապահով մէջն են:

— Անհաւատները թող տեսնեն թէ ի՞նչպէս Աստուած բնութեան ձեռքով ալ հրաշք կ'ընէ: Յիսուս կոյրին աչքերուն կաւ դրաւ եւ լոյս տուաւ, Վարդանին աչքերուն իր ոյժը ցոյց տուաւ ծառին զարնելով: Օրհնած ըլլայ իր կամքը:

— Բայց ո՞ւր են Մարոն, Շաքէն, Շողիկը, հարցուց Վարդան:

— Հոս գիմացդ են, ըսաւ Օնիկ:

— Խօսեցէք որ ճանչնամ ձեր ձայնէն, եւ սիրեմ ձեզ, դուք իմ բարի ընկերուհիներս, զիս օրերով բռնած լեռներ տարիք, զուարճացուցիք. հիմա ես ձեզ պիտի տանիմ որսի եւ նշանառութեան:

Այդ ժամանակ օդէն աղաւնիներու երամ մը անցաւ, տղան տեսաւ եւ զարմացաւ:

— Մամի, ասո՞նք են թռչուն ըսուածները, կ'ըսէիր թէ օդին մէջ կը թռչին. թեւեր ունին: Այո՛, թեւեր ու-

նին, ի՞նչ սիրուն են: Ո՞րքան ազուր բաներ կան եւ ես չէի տեսներ: Միշտ մութ էր, միշտ գիշեր էր: Երբ գոյնները, լոյսը կը բացատրէիք՝ ես բան չէի հասկնար, բայց «այո՛» կ'ըսէի որ մայրս չտիրէր: Սրտիս ամէնէն մեծ վիշտը մամիկիս լացն էր. երբ ես հարցումներ կ'ընէի եւ ան կը պատասխանէր ու կու լար: Հիմա ա՛լ չես լար, այնպէս չէ՞, մամի, ըսաւ Վարդան եւ իր հաստ թեւերով այնպէս մը գրկեց որ կարծես մէկ մարմին եղան:

Գիւղացիները մէկիկ մէկիկ եկան Վարդանը տեսնելու եւ ծնողքին շնորհաւորելու այս հրաշքին համար: Շահկերտը լեռներու կողքին գիւղ մըն էր որ կարծես ինքնիրեն կ'ապրէր, հոն ոխ ու կռիւ չկար, մարդ մարդու հացը չէր խլեր: Ամէնքն ալ քիչ թէ շատ ունեւոր էին, եւ սիրով կ'ապրէին: Նազար աղան եւ տէր հայրը գիւղին մեծերը կը համարուէին, հնազանդ էին անոնց ու խօսքերուն կը հետեւէին: Տէր Հայրը զիտնականի համբաւ ունէր. ան Տաթեւ դացած եւ գիրք տեսած էր. Հայոց պատմութիւնը գիտէր ու Ս. Գիրք կարդացած էր: Քիչ էր իրենց յարաբերութիւնը միւս գիւղերուն հետ. երբեմն զէնք զնելու կու դային դաշտերէն: Գիւղը՝ ամառը կենսունակ էր, լեռներուն տէրն ու երգիչն էր, ձմեռը՝ սպիտակ հաստ վերմակի տակ կարծես մանուկի պէս կը քնանար օճախներու շուրջ խմբուած: Վարդանի ծնողքին ուրախութիւնը ամբողջ գիւղին կը պատկանէր:

Կիրակին մօտ էր. Վարդանի հայրն որոշած էր այդ օրը կատարել լոյսի ուրախութիւնը: Վարդանի խմբակն արդէն ամէն աշխատանք տարած էր. երկու մարալ եղներ մորթուած էին: Ամէն տուն, հաւ հաւկիթ եւ լաւաշ զրկած էր: Պատարադէն վերջ, թմբուկն անցաւ փո-

ղոցէ փողոց: Կարծես մեծ Զատիկ ըլլար: Այր, կին, տղայ եւ ծեր հաւաքուեցան ժամին դիմացը որ մեծ բակ մը ունէր: Եկան նուագողները, զուռնան, տուտուկն ու տղկարը փրփրոտ հնչեցին ուրախութեան կանչերուն մէջ: Վարդանի համար ամէն ինչ տարօրինակ էր. գոյն-գոյն հագուստները, ծերերու սպիտակ մագերը, աղջիկներուն սեւ ու ոլորուած մագերը, զարմանք պատճառեցին տղուն: Ան կը նայէր, կը նայէր եւ չէր կշտանար: Տասնհինգ տարուան լոյսի եւ կեանքի կարօտը կ'առնէր: Շատերն իւզոտ բերաններով զինքը կը համբուրէին. հող չէ, սէրը կարեւոր է:

Ճաշէն յետոյ յանկարծ խումբ մը երիտասարդներ պոռացին.

— Բացուեցէք, տեղ տուէք:

Քաշեցին աղջիկներ եւ հարսեր. բոլորակ պար կազմեցին

— Զարկէք, ըսին նուագողներուն, մեր լեռներու պարը:

Նախ դանդաղ, ապա փրփրուն դարձաւ պարը, կարծես գունագեղ ծով մը կը ծփար, կ'իջնէր՝ հովիտ կ'ըլլար, կ'ելլէր՝ լեռ կ'ըլլար: Յանկարծ երիտասարդ մը զիլ եւ ուժեղ ձայնով միացաւ նուագին.

— Աղջիկ, եթէ ես սար ըլլամ,

Դուն ի՞նչ կ'ըլլաս, ըսէ ինձի.

— Կարմիր, կապոյտ ծաղիկ կ'ըլլամ
Մայիսն ինչպէս Զանգեզուրի:

— Աղջիկ, եթէ ես արտ ըլլամ,

Դուն ի՞նչ կ'ըլլաս, ըսէ ինձի.

— Յորենի մէջ արտոյտ կ'ըլլամ
Երգով, պարով գալու քեզի:

— Աղջիկ, եթէ ազբիւր ըլլամ,
Դուն ի՞նչ կ'ընես, ըսէ ինծի:

— Սափորն ուսիս ջուրի կ'երթամ,
Սէրըս ծարաւ թող չըմեռնի:

— Կեցցէ՛ք, ապրի՛ք, պոռացին բոլորը, երբ պա-
րաւորները քրանած, կարմրած քակեցին ձեռք ձեռքէ:

Մե՛նք պիտի պարենք, ըսաւ Օնիկ, մե՛նք, Վար-
դանի ընկերները. Յովի՛կ, Նրուանդ, Վարդ, Մարոյ,
Շաքէ, Շողիկ ոտքի ելէք. Վարդանը մեր մէջը՝ պիտի
պարենք, պիտի պարենք մինչեւ ուշ գիշեր:

Գիւղական ուրախութիւնը մասնաւոր տաքութիւն
մ'ունի, անկեղծ եւ պարզ իր ցնծութեան մէջ, կարծես
թէ բնութիւնն ալ կը մասնակցի իր կանաչ շնորհքը դը-
նելով անոնց աչքերուն մէջ:

Վարդան բաւական ժամանակ իր մօր հետ միասին
մնաց. Սիրարբիի զինքը տարաւ իրենց արտերը, չըջե-
ցուց զիւրի թաղերը, ելաւ բերդը, ծաղիկներ հաւաքեց
եւ դոյները բացատրեց: Կամաց կամաց Վարդան ընտե-
լացաւ կեանքին հետ: Ստիպուած էր ամէն տեսածին ա-
նունն հարցնել, շօշափելով կը ճանչնար քարն ու խոտը,
մարդկային զէմքը. բայց որոշ գողափար չունէր իրե-
րու մասին. հիմա աչքերով կը տեսնէր, հեռաւորու-
թիւն եւ տարածութիւն կը տեսնէր, հորիզոն կը տես-
նէր:

Վարդան կը տեսնէր այն սքանչելի արեւն ու լու-
սինը, որոնց այնքան կարօտ քաշած էր: Երբ առաջին
անգամ աստղերը տեսաւ, դարմացած հարցուց իր մօրը.

— Մամի, ի՞նչ են այն վերէն կախուած լոյսերը.
ո՞վ վառած է. մամի, ո՞րքան զեղեցիկ են, ես չէի զի-

տեր: Ի՞նչ զեղեցիկ է եղբր աշխարհն եւ ես տարիներով
զրկուած էի:

— Աստղեր են, սիրելիս, կ'ըսեն թէ մեծ մեծ աշ-
խարհներ են, մեզմէ այնքան հեռու են՝ որ ճրագի պէս
կը պլպլան:

Վարդան զմայլած գիշերը տանիք կ'ելլէր լուսինն
ու աստղերը դիտելու, ցերեկը կը նայէր արեգակին ու
կ'ուզէր գրկել անոր շողերը: Մեծցած մանուկ մ'էր որ
կեանքին առջեւ կ'ելլէր զմայլանքի մէջ: Օնիկ մեծ փա-
փաք ունէր Վարդանն առնել եւ ընկերներով բերդը բար-
ձրանալ: Գնաց մօրաքրոջ եւ խնդրեց.

— Մօրքուր, Վարդանը սուր, ընկերներով բերդ
երթանք, հոն կը գուարճանանք պարսափելով թռչուն
զարնելով:

Սիրարբիի չէ՛ չըսաւ, կ'ուզէր որ իր տղան փոքր
բաներն ալ տեսնէր, ճանչնար կեանքն ամէն բանով,
մանաւանդ գուարճանար, ան մանկութիւն չէր ունեցած,
մանկութիւն չունեցող մարդիկ տրտում հասակ եւ տը-
խուր ծերութիւն կ'ունենան:

— Գացէք, ըսաւ կինը, ուշագիւր եղէք վտանգ մը
չպատահի:

Աղջիկ մանչ կը փափաքէին Վարդանի քովէն քալել,
ձեռքէն բռնել, սրտին ձայնը լսել. բայց պատանին ա-
մէնէն ուժովն էր, պարապ տեղ զինքն Ատիւծի թաթ
չկոչեցին: Երբ բերդին վրայ ելան՝ Վարդան զիտեց հե-
ռաւոր հորիզոնը, ինչպէս ողորմած հողի Ատմը վեր-
ջին անգամ նայեցաւ. մին կեանքին արշալոյսն ողջու-
նեց, միւսը վերջալոյսին բարեւ տուաւ:

— Զեզի գաղտնիք մ'ունիմ հաղորդելու, ըսաւ Օ-
նիկ, աղջիկներն ալ չեն զիտեր. կը յիշե՞ք այն օրը երբ
պարսիկ զինուորներ եկան զէնք գնելու: Երեք հաստ աղ-

ուոր հրացաններ բռնի առած էին մեր գիւղացիին ձեռքէն. յետոյ դարձեալ եկան եւ ըսին թէ գողցեր էք, ե՛տ տուէք. ծախողը ծեծ կերաւ, բայց երբ մեր երիտասարդները սկսան հրացաններով կարգի շարուիլ՝ թողուցին փախան. կը յիշէ՞ք:

— Այո՛, ինչպէս չէ, լաւ կը յիշենք, ըսին աղջիկները. մենք ալ շատ վախցանք թէ հիմա կրակ կ'ելլէ:

— Է՛հ, այդ երեք հրացանները հոս բերդին նկուղներուն մէջ պահուած են, մենք առինք այդ անիրաւունբու ձեռքէն, գիշեր ժամանակ, երբ ջորեպանը Մարգարենց Աւոյի տունը գինով կը քնանար: Իջնենք եւ տեսէք, ըսաւ Օնիկ, սակայն մարդու պիտի չըսէք. գաղտնիք, գաղտնիք եւ բացարձակ լռութիւն:

Հրացանները քարերու ետեւ շարուած էին. օդը չոր եւ ամառնային էր, ժանդոտելու վախ չկար, փայլուն էին. Վարդան հատ մը վերցուց, ձեռքին մէջն առաւ. գրեթէ համբուրեց եւ ըսաւ.

— Օնիկ, ո՞վ պիտի գործածէ այս զէնքերը:

— Մե՛նք. այդ ձեռքինդ քուկդ է. մէկ հատը Վարդին, միւսն ալ Յովիկին: Ես հայրիկիս հրացանն ունիմ. Երուանդին պապին հարիւրաւոր կը շինէ, հատ մը կըրնայ վերցնել եւ մենք կ'ըլլանք զինուած բանակ:

— Է՛հ, մեզի՞, հարցուցին աղջիկները:

— Ամօթ է ձեզի զէնք կրել, պատասխանեց Յովիկ, դուք մեր հրացանները կը լեցնէք, եթէ պատերազմ ըլլայ:

— Պատերա՞զմ պիտի ըլլայ, Օնիկ, հարցուց Վարդան, ի՛նչ աղուոր բան է, բարձր տեղ մը կանգնած հրացան քաշել: Եթէ գնդակ ըլլար, հատ մը կը կրակէի. շատ կը փափաքիմ, կեանքիս մէջ հրացան չեմ պարպած. կոյր էի, բան չէի տեսներ. հիմա ձեզի պէս մարդ

եմ, աչք ունիմ, աշխարհ կը տեսնեմ: Դուք ալ ինծի պէս կանանչը, կապոյտը, կարմիրը, դեղինը կը տեսնէ՞ք:

— Ի հարկէ, պատասխանեց Շաքէ, բոլորս ալ նոյնպէս կը տեսնենք:

— Նայինք ես ալ ձեզի պէս կը տեսնե՞մ. երկինքը կապոյտ է:

— Ճիշտ է, ըսին միւսները:

— Խոտը կանանչ է:

— Ճիշտ է:

— Արեւը դեղին է:

— Ճիշտ է:

— Շողիկին այտերը կարմիր են:

— Կարմիր են վարդի պէս, պատասխանեցին խընդալով:

— Ուրեմն մամիս շիտակ սորվեցուցեր է. համբուրիկ մը քեզի, անոյշ մամիս, ըսաւ Վարդան՝ ձեռքով համբոյր գրկելով:

— Ես, ըսաւ Երուանդ, գրպանս հրացանի երկու գնդակ ունիմ, եթէ կ'ուզէք՝ Վարդանը թող կրակէ:

— Այդ գնդակներն այս հրացաններուն ալ կ'ըլլա՞ն, հարցուց Վարդան:

— Այո՛, բոլոր զինագործները մէկ չափի վրայ կը շինեն, պատասխանեց Երուանդ:

— Բայց բերդին միւս կողմն երթանք, ըսաւ Օնիկ, թող կարծեն թէ որսորդներ են, վա՛յ եթէ գիտնան մեր հրացաններ ունենալը. ծեծ ուտելը բան մը չէ, ձեռքերնէս կ'առնեն եւ պարսիկներուն կը ծախեն:

Մինչ վար կ'իջնէին, բերդին լեռնային կողմը, եւ բաւական յառաջացած էին դէպի ձորն՝ ուր խիտ անտառ մը կար, յանկարծ բաւական խոշոր արջ մը սկսաւ

իրենց կողմը դալ համակրական ցոյցերով. տղաք վախ-
ցած՝ իրարու պլլուեցան. վարդան խումբին առջեւ
կանդնեցաւ, հրացանը ձեռքն էր:

— Արջուկ, կանչեց Օնիկ:

Անասունը աւելի համարձակ մօտեցաւ, իր կարճ
սրճը շարժեց, շրթները բացաւ, կարծես կ'ուզէր ժրպ-
տիլ, ցոյց մ'ընել թէ օտար մէկը չէր:

— Բան մի՛ ընէք, ըսաւ Օնիկ, ասիկա իմ արջուկս
է, որ տարի մը առաջ ախոռէն փախաւ դէպի անտառ:

Օնիկ առաջ դնաց եւ անվախ անասունին դուռը շո-
յեց, զրկեց եւ սկսաւ հետը խօսիլ. արջը կը թնձկար,
ինքն ալ կ'ուզէր զրկել իր երբեմնի ընկերը: Անվախ
բոլորն ալ շրջապատեցին կենդանին, որ հոտուըտաց
մէկիկ մէկիկ եւ ապա նստեցաւ գետին, Օնիկին առջեւ:
Պատանին դարձեալ զինքը շոյեց, արջը կռնակին վրայ
դետին պառկեցաւ, այդ էր սրտագին համակրանքի մէկ
ձեւ մը:

— Արջուկ, երթանք, ըսաւ Օնիկ:

Երբ ճամբան ելան, անասունը արագութեամբ ան-
տառ մտաւ եւ քիչ վերջ դարձեալ երեւցաւ, թաթերով
կուրծքին վրայ բռնած էր վայրի տանձ ու ինձոր. դա-
նոնք Օնիկին առջեւ դրաւ:

— Մենք կը կարծենք թէ անասունները զգացում եւ
երախտագիտութիւն չունին, ըսաւ Օնիկ, նայեցէք սա
արջին, իր ունեցածը ինծի նուէր բերաւ:

Օնիկ քանի մը հատ առաւ եւ իր զրպանը դրաւ. եւ
ապա ուրիշ քանի մը հատ ափին մէջն առնելով ըսաւ.

— Արջուկս, կէ՛ր:

Անասունն ափէն առաւ եւ փրփրալից բերնով ծամեց
ու կլլեց. երբ վերջացաւ, անիկա քիթը Օնիկին զրպանը
խոթեց եւ միւսներն ալ հանեց ու կերաւ:

Պումբը կամաց կամաց մտաւ անտառ. արջն ալ ի-
րենց հետեւեցաւ: Կանգ առին փոքրիկ բացաստանի մը
մէջ. ծառերուն վրայ կը սաւառնէին զանազան թռչուն-
ներ. վարդան շակեց հրացանը. իրեն սորվեցուցին քա-
ջելու ձեւը:

— Հիմա նշան առ, ըսին:

Ան կրակեց, բայց ոչ մէկ թռչուն-զարնուեցաւ:

— Ես չեմ գիտեր, ըսաւ տրտում:

— Հոգ չէ, կրկին փորձէ, ըսին:

Արջն երբ հրացանի պայթիւնը լսեց՝ արագօրէն հե-
ռացաւ դէպի անտառին խորերն եւ ա՛լ չերեւցաւ:

— Խե՛ղճ անասուն, ըսաւ Յովիկ, ո՛վ գիտէ որքան
հրացաններէ փախած է:

Վարդանի երկրորդ հարուածը բախտաւոր եղաւ.
երկինքէն վար ինկաւ սեւ ազուաւ մը:

— Դուն ամէնէս աւելի քաջ որսորդ պիտի ըլլաս,
ըսին բոլորը:

Պատանին ժպտեցաւ իր նուրբ շրթներով եւ ազ-
ուոր աչքերով նայեցաւ իր ընկերներուն:

— Կամաց կամաց ձեզի կը հասնիմ, ըսաւ համեստ
չեչտով. ես կեանքին համար դեռ տղայ եմ: Ուրիշ ան-
գամ ալ պիտի գա՞նք, Օնիկ, հարցուց, պէտք է շատ
փորձ ընել բան մ'ըլլալու համար:

— Կու գանք, ինչո՞ւ չէ, սակայն պէտք է զգոյշ
ըլլալ. եթէ մեր ծնողները լսեն՝ թոյլ չեն տար ախոռէն
դուրս ելլել: Մամիիդ չըսես, յանձնարարեց Օնիկ, թէ
հրացանով նշան առիր:

— Չէ՛, չեմ ըսեր, վստահ եղիր, բաց բերան աղջիկ
չեմ, պատասխանեց Վարդան:

Հրացանները դարձեալ տեղաւորեցին բերդի նկու-
ղին մէջ. երբ վար սկսան իջնել, վերէն հասան ուրիշ

սարևորներ, անոնց ետեւէն տեսնուեցան Առոյ, Մկուչ, Վրէժ, Սերգոյ անբաժան որսորդները, շարկած էին մեծ քարայծ մը: Ատոմին աղջնակը՝ Մարոյ, յիշեց իր հայրը, յուզուեցաւ եւ յանկարծ իր տրտում ձայնը ձգեց երգելով.

Որսկան ախպէր, սարէն կու գաս
Իմ պապիս ալ չըտեսա՞ր:
Իր սիրտն էր միշտ սարի քարայր,
Սարի քարայր, սարի քարայր...:

— Մի՛ լար, Մարոյ ջան, մի՛ լար, ըսին որսորդները, մարդիկ կու գան ու կ'երթան, սարերը կը մնան, վաղն աղբարդ կը մեծնայ, Փետայի կ'ըլլայ, դարձեալ պապիկիդ հրացանը կը հնչէ լեռնէ լեռ: Ձանդեղուրը միշտ մերն է, մեր բերդն ու պահակը, Ծահկերտ իր առջեւը ժամով ու աղօթքով՝ իր խորանն է: Օնիկ, դարձան պատանիին, քանի՞ տարեկան եղար:

— Տասնըվեցերորդ տարիս աւարտեցի, բայց մամին կ'ըսէ թէ դու դեռ տղայ ես, եւ Մարոյին ալ կ'ըսէ՝ կարդուելու տարիքդ է:

— Ճիշտ է, Մարոն սարի եղեւնի է, սարի եղնիկ է. իսկ դուն առիւծ պիտի ըլլաս վաղը:

— Չէ՛, առիւծի թաթն ե՛ս եմ, մէջն ինկաւ Վարդան. Օնիկը վիշապ է:

— Սո՛ւս եղիբ, մի՛ ըսեր, սաստեց Օնիկ, պէտք է գիտնան:

— Վար իջնենք, ըսին որսորդները, ձեզի ալ մաս մը կու տանք մեր զարկածէն, Ատոմին բաժինը միշտ պէտք է հանենք:

Միասին իջան գիւղ, ուրիշներ ալ կային, ոմանք ոչխարի հօտերով, ոմանք նախիրով. երեկոն իջնելու

վրայ էր. բայց շատեր կային որ սարերու վրայ կ'անցընէին բոլոր ամառները. անոնք սարերուն կը կոչուէին, շուրջ չորս ամիս գիւղ չէին իջներ, սակայն Ծահկերտցին աւելի զինագործ էր՝ քան անասնաբոյծ կամ հողագործ:

Վարդան հազիւ տուն հասաւ, վաղեց եւ մօրը գիրկն ինկաւ. այդ խոշոր պատանին, Օնիկէն ալ տարիքով մեծ, դեռ նոր իր մանկութիւնը կը վայելէր: Մայրը դուռեց եւ հարցուց.

— Լաւ դուարճացա՞ր ձագուկս, ո՞ւր գացիք:

— Ի՞նչ գեղեցիկ են մեր սարերը, մեր բերդը. եւ լանք բերդին վրայ, մամի, ըսաւ տղան, հեռուն անձայր աշխարհ մը կար: Ես հիմա գոյները լաւ կը ճանչնամ, քարն հողէն կը զանազանեմ, դէմքերը կը ճանչնամ, բայց դուն ամէնէն աւելի գեղեցիկն ես ինձ համար. աշխարհիս մէջ քեզի նման չկայ, երջանիկ եմ որ իմ մամիս եղած ես: Պապին ո՞ւր է:

— Արտն է, տղաս, շուտով կը դառնայ:

— Երթամ իր ձեռքէն բռնեմ դա՞մ, հարցուց Վարդան:

— Հիմա կը հասնի, տղաս, ալ ուշ է արտ երթալու համար:

Քիչ վերջն արդէն Վարդանին հօրն հազը լսուեցաւ բակին մէջ. տղան վաղեց եւ անոր գիրկն ինկաւ. հայրը հողոտ ձեռքերով շոյեց գլուխը, աչքերը, եւ հաստ պխերով ու մօրուքով սանտրեց անոր այտերը՝ համբոյր տալով:

— Պապի, ընկերներուս հետ բերդը դացի, շատ գեղեցիկ էր:

— Գնա՛, տղաս, դնա՛ շրջէ ամէն կողմ, դուարճացիր եւ մանկութիւնդ վայելէ, թէպէտ տասնութը տա-

րեկան եղար, բայց կեանքին համար նոր ծնած ես, երկու ամսական ես: Հիմա լաւ կը տեսնե՞ս, ազուտ՞ը է աշխարհը:

— Այո՛, պապի, հետզհետէ աւելի սուր կը տեսնեմ, երանի՛ր անոնց որ կը ծնին, կեանքն Աստուծոյ մեծագոյն պարգեւն է:

— Այդպէս է, տղաս այդպէս է, պարկեշտ կեանքը ծաղիկներուն կը նմանի, ամէն մարդ կ'ուզէ առնել եւ համբուրել: Եթէ արդար մէկը մեռնի՛ արեւն ալ վրան կու լայ. երբ չարագործը մեռնի, մարդիկ կ'ըսեն՝ լաւ որ դնաց. այնպէս ապրէ որ քեզ միշտ սիրեն:

— Իմ ընկերներս զիս շատ կը սիրեն, ես բարի եմ. զիտե՞ս պապի, իմ անունս ինչ դրած են:

— Ի՞նչ դրած են:

— Առիւծի թաթ, բայց մարդու չըսես, մենք ընկերութիւն ունինք, կ'ուզենք քաջ զինուորականներ ըլլալ Վարդանի նման. ամէնէն ուժովն ես եմ. հիմա պիտի սորվիմ հրացան քաշել: Ատոմ ամին կ'ըսէր թէ մարդ որ հրացան չունի՛ ուրիշին ստրուկն է, վախկոտ նապաստակ է. ես կ'ուզեմ քաջ ըլլալ:

Վարդան, հակառակ իր տարիքին, մանուկի պէս կը խօսէր եւ տղու բնաւորութիւն ունէր. ինչ մեծ դեր կը խաղան մարդուս աչքերը, կեանքը տեսողութեամբ կը սկսի եւ տեսողութեամբ կը մարի:

Գիւղին մէջ Վարդանը միշտ մատով կը ցուցնէին. հրաջք եղած տղան կը կոչէին, հարցումներ կ'ընէին:

— Ի՞նչ սիրուն բիբեր ունի, աչքերը ընկոյզի չափ են, կ'ըսէին կիներն ու աղջիկները:

Բայց Վարդան կը ժպտէր ու կ'անցնէր, ինչպէս գեղեցիկ թռչուն մը որուն վրայ կը զմայլին մարդիկ, եւ ինքը կ'ապրի իր ուրախութեան մէջ:

Վարդանի մայրը Սիրարփի եւ իր քոյրը Կատար, կարծես մէկ տուն եղան, մէկ սիրտ եղան, մանչերն ընկերներ էին, ունէին մէկ աղջիկ՝ Մարոն, որ պէտք էր անուորել. բայց Մարոյ թէպէտ շուրջ տասնեւինը տարեկան էր, ունէր մանուկի բնաւորութիւն, ինքզինքը տուած էր ընկերութեան, ուրիշ բան չէր խորհեր՝ եթէ ոչ սարեր, բերդը եւ հրացան: Ականջը բաներ մը դրին, բայց ինքը ժպտեցաւ եւ եղնիկի պէս խոյս տուաւ: Շաբէն ու Շողիկ գեռ փոքր էին, անոնց մասին հարկ չկար մտածել:

Վարդան գրեթէ Օնիկէն չէր բաժնուեր, երկուքն ալ արտի կամ զինագործի հետ կապ չունէին, ազատ էին: Երուանդ ստիպուեցաւ հօրը զինարանը մտնել, յաճախ երազով կը միանար իր ընկերներուն:

— Երուանդ, կ'ըսէր Օնիկ, լաւ սորվէ հօրդ արհեստը, մեզի համար շատ կարեւոր է, մահաւանդ ձեռնառումը շինել:

— Վաճառելու եւ խումբին դրամ բերելու համար, կը հարցնէր պատանին:

— Ո՛չ, խումբը զինելու համար: Մէջս բան մը կայ թէ օր մը մենք կռիւ պիտի ունենանք: Ձեմ կրնար հանդուրժել որ օտար մարդիկ մեր զիւրը դան եւ մեղմէ կէս մը բռնի, կէս մը դրամով գէնք տանին: Չլսեցի՞ր աղջիկ Սաթոյին գէպը:

— Ի՞նչ գէպը, հարցուց Երուանդ:

— Խեղճը զիւր կը գառնար այդիէն, երբ երկու անհաւատներ, չենք զիտեր՝ թուրք թէ պարսիկ, կամ քիւրտ, զինքը կը յափշտակեն ու կը տանին. հայրը սար ու ձոր ինկած է իր աղջիկը գտնելու եւ կ'ըսեն թէ՛ նախիջեւանի մօտ զիւրի մը մէջ պահ դրած են: Վաղը միւս

որ թերեւս յարձակում ըլլայ: Մեր երիտասարդները կատարել են, ամօթն իրենցն է որ չեն կրնար Շահկերտի պատիւը պաշտպանել:

— Վա՛յ չունեք, պոռաց Երուանդ: Հօրս խանութին մէջ որքան հրացան կայ եւ վաղը կը բաժնեմ չունեցողին:

Աղջիկ Սաթոյին դէպքը փսփուփսի պէս տարածուեցաւ գիւղին մէջ. յետոյ աղմուկ դարձաւ, փրփուր հանեց ալիքի պէս, սրտէ սիրտ անցնելով: Քանի մը զինուած երիտասարդներ տեսնուեցան. ապա շատցան եւ իջան գիւղէն վար: Նազար աղան փայտէ դաւազանը ձեռքն՝ անոնց առջեւ ելաւ.

— Ո՞ւր կ'երթաք, խենթեր, կ'ուզէք Նախիջեւանի խանը մեր վրա՞յ բերել:

— Խան չէ, շահն ալ դայ՝ մենք թոյլ չենք տար որ մեր պատիւն ոտքի տակ առնեն, թող կրակ տան գիւղին ալ, տուներուն ալ, բայց Շահկերտցին իր պատիւը ուրիշին չի տար, ըսին երիտասարդները եւ ցրուեցան ձորերու եւ անտառներու մէջ:

Օնիկ իսկոյն խորհուրդի կանչեց իր զինակիցները:

— Երթա՞նք թէ ոչ, հարցուց շատ լըջութեամբ:

— Ո՞ւր, պատասխանեցին:

— Դէպի թշնամին. Սաթոն մեր ալ քոյրն է, մեր ալ պատիւն է, ըսաւ Օնիկ:

— Մեր մայրերը թոյլ պիտի չտան մեզի գիւղէն հեռանալ, մեր ոտքերէն պիտի քաշեն եւ ապտակ ալ զարնեն, մենք բան չենք կրնար ընել, ըսաւ Վարդ: Եթէ մեր զէնքերը դուրս հանենք, մեր խայտառակութիւնը մէջտեղ կ'ելլէ. թերեւս ոմանք դովեն, բայց շատեր մեզ գող պիտի անուանեն. ուստի սպասենք դէպքերու ելքին:

— Իմ կարծիքովս, աւելցուց Յովիկ, տանք մեր

զէնքերը անդէն երիտասարդներուն. իսկ մենք գիւղէն վար դիւք բռնենք, կրնանք քարերով ալ հարածել՝ եթէ թշնամին դայ:

Վարդան կ'ուզէր մեկնիլ դէպի թշնամին, բայց գիտէր թէ իր ծնողքը դէմ պիտի կենար:

— Ես Յովիկին համաձայն եմ, ըսաւ պատանին, ինչո՞ւ պահել զէնքերը՝ քանի առիթն է գործածելու:

Աղջիկները մէջը չմտան, իրենց գործը չէր. մանաւանդ Սաթոյի դէպքը սրտերնին վախ ձգած էր: Գիւղին ափերուն քանի մը երիտասարդներ անդործ կանգնած էին. տղաք խորհուրդէն դուրս ելան եւ հարցուցին.

— Ինչո՞ւ դուք ալ չէք մեկնիր:

— Ձէնք չունինք, պատասխանեցին:

— Երեք չորս հրացան կրնանք ձարել, ըսաւ Վարդան, սակայն զնդակ չունինք:

— Գնդակ որքան կ'ուզէք կայ, բայց հրացան չկայ, ըսին երիտասարդները:

Օնիկ զնաց իր հօրն հրացանն առաւ. Վարդան, Յովիկ ու Վարդ բերդը բարձրացան եւ շուտով վերադարձան հրացաններն առած:

— Ահաւասիկ ձեզի զէնք, մեկնեցէք, ըսաւ Օնիկ, եթէ քաջ էք:

Երիտասարդներն այնքան զեղեցիկ հրացաններ չէին տեսած, զրկեցին եւ վաղեցին դէպի վար: Օնիկի խումբըն ալ հետեւեցաւ անոնց՝ մինչեւ անտառուտ ձորը, Արաքսի ափը: Կամուրջին վրայ կանգ առին:

— Հոս ի՞նչ պիտի ընենք անդէն, ըսաւ Վարդան, լաւ է որ անտառին մէջ մտնենք եւ փնտռենք թէ՛ Սաթոն եւ թէ՛ հայրը:

— ձիւտ ես, պատասխանեց Յովիկ:

Դարձան անտառ, ամէն թուփ, ամէն անկիւն խու-

զարկեցին: Կամուրջը կը տեսնուէր. քիչ վերջ անոր վերայ սեւ կէտեր շարժեցան: Շահկերացիներն էին որ բռնած էին ճամբան:

Վարդան մեծ մեծ թուփեր կամ ճիւղեր մէկզի ընելով առաջ կ'երթար, երբ կարծես թէ հեծք մը լսեց. աջէն կու դար, դարձաւ, առաջ դնաց, մեծ ծառ մը կար, ծառի բունին կապուած մէկը կար: Բերնին մէջ ազատտ լաթ դրուած էր, կը շարժէր, բայց չէր կրնար ազատիլ իր կապերէն:

— Տղաք, պոռաց, վազեցէք. Սաթոյին հայրը, Սաթոյին հայրը: Վա'յ սրիկաներ, նայեցէք թէ մարդն ուր բերեր կապեր են:

Քակեցին կապերը, մարդը շունչն առաւ, խօսելու ոյժ չունէր. անոր առաջին խօսքն եղաւ.

— Սաթո՛յ, Սաթո՛յ:

— Աբոյ, ո՞վ քեզ կապեց, հարցուցին տղաները:

— Երկու Սէյրանցի մարդիկ: Ա՛հ, աղջիկս իրենք տարին, իրենք տարին:

— Յովիկ, թոիր, ըսաւ Օնիկ. լուր տար մեր երիտասարդներուն՝ թէ Սաթոյին հայրը անտառին մէջ կապուած գտանք. թէ աղջիկը տարեր են Սէյրան. թող երթան պաշարեն, մոխիր դարձնեն այդ աւազակներուն բոյնը:

Յովիկ թռաւ եղնիկի պէս, նետուեցաւ թուփէ թուփ, փոսէ փոս եւ շուտով դուրս եկաւ թաւ անտառէն: Կամուրջն օտքերուն տակն էր, հեւ ի հեւ մօտեցաւ երիտասարդներուն. լուրն հատակաուր տուաւ, բառերը կէս կ'ելլէին բերնէն:

— Ի՞նչ կայ, տղայ, ի՞նչ կ'ըսես, հանդարտ խօսէ, ըսին երիտասարդները:

— Կեցէք, քիչ մը շունչ առնեմ: Սիրտս հոլի պէս կը զարնէ, ըսաւ տղան:

Օնիկին պատուէրը բառ առ բառ կրկնեց:

— Սէյրա՛ն, Սէյրա՛ն, պոռացին երիտասարդները եւ անցան կամուրջը:

Հագիւ քանի մը մղոն անդին այլադղինբու գիւղը կար. պաշարեցին չորս կողմէն, հրացանները դէպի դիւղ: Վայնասուն ինկաւ բնակիչներուն մէջ:

— Սաթոն, կամ գիւղը մոխիր կ'ընենք, պոռաց երիտասարդ մը թրքերէն:

Արն, մարդ ու տղայ մտան իրենց տուները եւ դռները փակեցին. Շահկերացիին հետ խաղալ չ'ըլլար: Երիտասարդները քանի մը հրացան պարպեցին դէպի օդը եւ սպասեցին: Նեղ փողոցի մը հեռաւոր ծայրէն ծեւրունի մը դուրս ելաւ եւ դողդալով դնաց դէպի երիտասարդները: Ձինքը կը ճանչնային, տարիներով եկած ու գացած էր Շահկերտ, ոչխար կամ կով գնելու:

— Ոտքերնիդ պազնեմ, ի՞նչ կայ, ինչո՞ւ գիւղը պաշարեր էք, ինչո՞ւ արիւն կ'ուզէք թափել:

— Աբոյ, կա՛մ Սաթոն ողջ եւ անարատ մեզի կը յանձնէք, կամ գիւղը կրակի կու տանք:

Մերունին երկինքէն ինկաւ. ան լուր չունէր Սաթոյի մասին: Ետ դարձաւ, կանչեց քանի մը տարիքոտ համադիւղացիներ. խօսեցան, վիճեցին, խորհուրդ ըրին: Ճար չկար, Շահկերտցիին հետ խաղալ չ'ըլլար: Մերունին դաւազանը գետին զարնելով կը պոռար.

— Դրացի ենք անոնց հետ, աղբոր պէս ապրեր ենք, մէկուն քիթը չէ անրեւած, հիմա մեր վրան վա՞յ պիտի բերեն այդ երկու անօրէնները: Գացէք, ուր որ է գտէք եւ բերէք այդ խեղճ աղջիկը:

— Ես կ'առաջարկեմ, ըսաւ ուրիշ տարիքոտ մէկը,

խարազան քաշել այդ երկուքին ալ. ես գիտեմ թէ ո՛վ են, խանի զինուոր եղեր են եւ ինքզինքնին հերոս կը կարծեն:

Ժամ մ'անցաւ, գիւղը խռովքի մէջ էր. տունէ տուն լուրը կայծակի պէս փայլատակեց. ծերունին կանգնած էր ճամբուն մէջ եւ աչքերն անհամբեր մէկ դռնէն միւսը կ'անցնէին: Կողմնակի ցեխոտ փողոցէ մը տարիքոտ թուրքը բերաւ Սաթոն: Ծերունին առաջնորդեց զէպի Ծահկերտցիները: Սաթոյ յուզումէն գրեթէ մարեցաւ, աստիկ լաց մը սկսաւ, երբ տեսաւ իր գիւղացիները:

— Արոյ, ըսին, հիմա այդ երկու անառակները հոս պէտք է բերէք եւ մեր առջեւ խարազանի քաշէք, արժանի են: Տեսե՞ր էք որ մենք զանք ձեր տունն անպատուենք:

— Վալլահի ո՛չ, ըսաւ ծերունին, բայց մենք խարազանի տակ զիրենք պիտի մաշեցնենք, վատահ եղէք:

Թուրք ծերունին կէս գիւղապետ էր, իր խօսքը կը յարգէին: Չորս հինգ հոգի քաջքշելով իր առջեւ բերին երկու երիտասարդներ: Ձեռքերնին կապել տուաւ եւ Ծահկերտցիներուն առջեւ արիւնոտ խարազանի քաշեցին: Երիտասարդները՝ գոհ, վերցուցին պաշարումն ու գիւղ վերադարձան: Աղջիկն արդէն գիւղ տարած էին իր ազգականները: Սաթոյ քաջարի էր. թիչ մը վախ կար զէմքին վրայ, բայց կրցեր էր պայքարել իր ցեղին պատիւը պահելու համար:

Երբ այս զէպքը փակուեցաւ, տղաներն աւելի խանդավառուեցան զէնք ունենալ եւ զէնք դործածել: Օնիկ միշտ կը յիշէր իր հօրը խօսքերը, բայց իրմէ աւելի Վարդան եռանդ ունէր: Ետ առին իրենց հրացանները եւ դարձեալ բերդ տարին ու պահեցին: Նշանառութիւնն առաջ կ'երթար: Երուանդ իր հօրը խանութէն բաւական

գնդակներ բերաւ, հայրը ոչինչ զիտէր. տղան աւելի ժամեր կ'աշխատէր ամէն օր քանի մը հատ մէկդի զնու համար: Մինչեւ ուշ աշուն բերդին կողմերը թափառեցան, բայց աղջիկները շատ անգամ չէին երթար, մանաւանդ Մարոն հասած էր եւ մօրը պէտք էր օգնել:

Այդ երկրին մէջ մարդիկ ձմեռն հասակ կ'առնեն, ամառը կը գեղեցկանան: Վարդան արդէն եղած էր բարձրահասակ մը: Իր ընկոյզի չափ աչքերով եւ յորդ վարսերով շատ սրտեր կը քակէր: Իրեն կը հետեւէին Օնիկ, Վարդ եւ Յովիկ, գրեթէ նոյն հասակն ու տարիքն ունէին: Երեսի ցորենի դոյն կարմիր մը սեւ ու խոր աչքերով՝ հայկական տիպարը կը կազմէր լեռնային Զանգեզուրի:

— Օնիկ, ըսաւ օր մը Վարդան, մենք ճնճուկի պէս մինչեւ վերջ բերդին շուրջ դարձանք, պարսատիկ քաշեցինք, նշան առնել սորվեցանք: Բայց եթէ խնդիր ունենանք մօտակայ այլազգիներուն հետ, կամ խաները մեզ ճնշեն, կողոպտեն, ի՞նչ կ'ընանք ընել քանի մը հրացանով, ոչ իսկ ձի ունինք, էշո՞վ պիտի դիմենք թէ ջորիով: Մեր գիւղին մէջ մարդերուն թիւով էջեր կան, հաղիւ մէկ երկու ձի ունինք: Ես կը խորհիմ որ շտապընելու ենք ձիերը, սորվելու ենք ձի վարել եւ վազքի ժամանակ հրացան ուղղել. նայէ պարսիկ զինուորները միշտ ձիերով կու դան մեր գիւղը:

— Իրաւունք ունիս, բայց ի՞նչ կ'ընանք ընել, ո՞վ մեզի դրամ կու տայ ձի գնելու համար: Երկու կով պէտք է ծախել մէկ ձիու համար. բայց պէտք է բան մը խորհինք, պատասխանեց Օնիկ:

— Կը մտածեմ որ աէր Եղիշէին խորհուրդ հարցնենք. անիկա իմաստուն մարդ է. Վարդանանց պատմութիւնը գիտէ, ըսաւ Վարդան: Աւարայրի պատե-

բարգմին ալ ձիեր ունէին եւ կ'ըսեն թէ Վարդանի ձին ճերմակ էր եւ շատ գեղեցիկ սանձեր ունէր: Կ'ուզե՞ս իրեն բացատրենք նաեւ մեր ապագայ ծրագիրները: Հիմա այլեւս մեծցեր ենք, տղու պէս խաղալով պէտք է՛ փամանակ անցընենք: Իմ սիրտս շատ պղտորեցաւ Սաթոյի գէպէն, ուրիշ անդամներ մեր անասունները փախցուցեր են. մենք պաշտպանութեան բնաւ չենք դիմած. պէտք է աչքերնին վախցնել որ մեր սահմաններն յարգանքով մտնեն:

— Կանչենք միւսներն ալ եւ երթանք տէր Հօր. անիկա մեր հայրն է, մեր գիւղին պահակն է. ես հակառակ չեմ որ մեր ծրագիրներն ալ յայտնենք, ըսաւ Օնիկ:

— Մարոն, Շաքէն եւ Շողիկն ալ թող գան, ըսաւ Վարդան:

— Անշուշտ, անոնք ալ Վարդանանց միութեան մաս կը կազմեն, պատասխանեց Օնիկ:

Այս խօսակցութիւնն եղաւ ամրան սկիզբները. անոնք աճապարանք չունէին տէր Եղիշէին յայտնելու իրենց միտքերը:

Շահկերտցին դարձեալ լեռ բարձրացեր էր եւ սարուօրները բռնած էին սարահարթները: Կարելի էր ամէն կողմ, լեռնէ լեռ, հովտէ հովտ արածող անասուններ տեսնել: Մարոյ այդ տարին սարուօր էր. ան իրենց կովը, երեք ոչխարներն ու մօրքուրին կթան անասուններն առած՝ լերան վրայ կը բնակէր. հոն քովէ քով շարուած էին ցեխով, քարով եւ տախտակներով շինուած տնակներ: Անասուններն առատ խոտ ունէին, առատ կաթ կու տային, եւ պանիր, կարագ կը շինէին ձմրան համար: Իրեն քով տնակ մ'ունէր նաեւ Լալայեանց Շաքէն. ուրախ էին այդ օդաւէտ սարերուն վրայ եւ օրէ օր կը գեղեցկանային եղեւինի նման:

Լաւ առիթ եղաւ մանչերուն համար անոնց այցելութեան երթալ: Ծնողքները սիրով թոյլ տուին. սովորական բան էր վեր ելլել եւ իջնել: Լերան վրայ միակ բանը որ կը պակսէր՝ պտուղն էր, եւ բանջարեղէնը: Լեցուցին իրենց մախաղները առատ պտուղներով եւ առաւօտ մը ճամբայ ինկան, սակայն իրենց միտքն էր լերան վրայ հրացանով որսորդութիւն ընել, եթէ կարելի էր: Բերդէն վերցուցին մէկ հրացան. Երուանդ գնդակներ բերած էր. սկսան այժեամի պէս վեր բարձրանալ: Երթալով հորիզոնը կը լայննար. ամէնէն աւելի Վարդան ուրախ էր, կը խորհէր թէ լերան ծայրէն ամբողջ Հայաստանը պիտի տեսնէր: Որքան կը բարձրանային՝ այնքան վարի գիւղերը կը շատնային եւ Արաքսը հսկայ վիշապի ձեւեր կ'առնէր, անտառներ մտնելով ելլելով:

— Պարզապէս հիանալի է այս տեսարանը, ըսաւ Վարդան աչքերն հորիզոնէ հորիզոն դարձնելով: Արաքսն ու Արագածն ալ կը տեսնուի՞ն, հարցուց ընկերներուն:

— Չէ՛, անոնք շատ հեռու են, ըսին երիտասարդները:

— Ո՞րքան փամանակ պէտք է երթալ տեսնելու համար: Կ'ըսեն թէ Արաքստի պէս գեղեցիկ լեռ չկայ աշխարհիս մէջ, պատասխանեց Վարդան:

— Քիչ մը դանդաղ քալենք, ըսաւ Վարդ, շունչս կտրեցաւ:

— Կենանք, շունչ առնենք, աւելցուց Յովիկ: Քարի մը վրայ նստեցան. իրենց քովէն գիւղացիներ ալ վեր կ'ելլէին:

— Որո՞ն է այդ գեղեցիկ հրացանը, հարցուց մէկը:

— Պապիխս հրացանն է, պատասխանեց Օնիկ, բայց սուտ խօսեցաւ:

Գիւղացիին ձեռքն առաւ, ասդին անդին դարձուց եւ ետ տալով ըսաւ .

— Փառաւոր հրացան է . մեծ որսորդի մը զաւակն արժանի է այս հրացանին : Դուք դեռ կը նստի՞ք, թէ միասին վեր ելլենք :

— Մենք ալ վեր պիտի ելլենք, բայց կ'ուզէինք մէկ մը փորձել այս հրացանը, նապաստակ մը, բան մը զարնել, ըսաւ Երուանդ :

— Պէտք է խոր անտառներն երթալ որս գտնելու համար . այս տեղերը մուկ ալ չէք կրնար գտնել, այնքան երթեակ կայ, պատասխանեց գիւղացին :

Գիւղացիին հետ ճամբայ ինկան եւ հեռուէն հարցումներ ըրին գիւղի պաշտպանութեան մասին, զէնք չծախել օտարին, զինուիլ . Սաթոյի գէպը բերին, այնքան եռանդով խօսեցան՝ որ գիւղացին զարմացած մըտիկ ըրաւ :

— Էհ, դուք ալ իրաւունք ունիք, պէտք է արթուն ըլլալ, խաղաղ կեանքը միշտ մեզմէ չէ կախուած, բայց առեւտուրն ալ պէտք է՝ ապրելու համար : Մենք լեռնային ժողովուրդ ենք, մեր արտերը չեն բաւեր ցորեն տալու, պէտք է գնենք դաշտեցիներէն :

— Շատ աղէկ, ըսին պատանիները, գնենք, բայց հայ դաշտեցիէն, ո՛չ թէ թուրք կամ պարսիկէն :

— Եթէ ձեզի պէս քաջասիրտ երիտասարդներ ունինք, մենք Նախիջեւանի խաներէն ալ չենք վախնար, ըսաւ գիւղացին :

Կէս ժամ չանցած՝ արդէն հասան սարուորներուն տեղը : Չորսն ալ միասին վազեցին Մարոյի տնակը, Շաքէն ալ եկաւ եւ անոնց առջեւ թափեցին իրենց բերածները : Մարոյ վարունդ մ'առաւ, Շաքէ՝ տանձ մը եւ խածնելով կերան :

— Ի՞նչ համով են, ըսին եւ մէկ հատ ալ առին :

— Գիտէ՞ք Մարոյ, Շաքէ, ըսաւ Վարդան, մենք այս գիշեր հոս կ'ուզենք անցընել :

— Ո՞ւր պիտի պառկիք, ըսին աղջիկները :

— Դուն Մարոյին տնակը կ'երթաս կամ Մարոն քու տնակը կու դայ, մենք ալ մէկ հատին մէջ կը պառկինք . չոր օդ է, տաք ալ է, գետինն ալ կրնանք երկարիլ, ըսին երիտասարդները :

— Ի՞նչ լաւ բան կ'ըլլայ, ըսին Մարոյ եւ Շաքէ . մենք ալ մածոն, կարագ, պանիր, սեր կը պատրաստենք եւ միասին լաւաշով կ'ուտենք :

— Մարոյ, դուն այս կողմերը պտտե՞ր ես, որս չկա՞յ, բան մը զարնենք, հարցուցին պատանիները :

— Մինչեւ այն վարի ձորերը պէտք է իջնել, թերեւս նապաստակ մը գտնէք, բայց ուշագիւր, արջեր ալ կը գտնուին : Անցեալ օր մեր գիւղացիներէն մէկուն հորթը տարեր էին :

— Մենք արջերէն չենք վախնար, պատասխանեց Վարդան :

Չորերն իջան, շրջեցան թուփէ թուփ . Վարդան հրացանը բռնած էր, Երուանդ՝ զնդակները . Յովիկ եւ Վարդ փնտռուքի մէջ էին : Սիտ թուփերու տակ շարժում մը տեսան .

— Նապաստակ մը, պոռաց Յովիկ :

Անասունը սարսափահար վազեց . Վարդան քաշեց հրացանը եւ բախտով, խկապէս բախտով կ'ըսեմ, ոտքին զարկաւ . անասունը կաղաց եւ դանդաղեցուց իր վազը, Վարդ ետեւէն ինկաւ եւ բռնեց : Նապաստակը ձեռքին մէջ սնդիկի պէս կը դառնար, քիչ մնաց պրծէր ու փախչէր : Ան վրան պառկեցաւ եւ երկու ձեռքերով բռնեց վիզը :

— Ա՛լ չես կրնար ձեռքէս ազատիլ, ըսաւ ուրախութեամբ, գրկին մէջ առած:

— Կա՛մ ահանջներէն, կամ ոտքերէն, ըսաւ Օնիկ, ձեռքէդ կը փախչի:

— Ես ալ վիզը կ'ոլորեմ, պատասխանեց Վարդ:

— Վիզն ոլորելով չես կրնար սպաննել, պատասխանեց Վարդան. դուն ոտքերէն բռնէ, ես ալ գլխուն մէկ երկու փայտէ հարուած տամ կը սատկի:

Ի՛նչ ուրախ էին, առաջին օրսն էր. կարծես բանակ մը եղնիկ դարկած ըլլային: Երգելով դարձան տնակները, եւ ցոյց տուին աղջիկներուն:

Ուշ երեկոյ Մարոյի տնակին առջեւ մեծ կրակ մը կը վառէր. երիտասարդներն ու աղջիկները ձայն տըլած կ'երգէին: Շատ մը սարուօրներ իրենց շուրջն էին. այդ գիշերն ուրախութեան գիշեր եղաւ: Ուտելիքնին առատ եւ համով էր, միսէն քիչ քիչ բաժնեցին դրացիներուն ալ, եւ շատ ուշ ատեն քուն մտան:

Գեղեցիկ են լեռնային առաւօտները. կարծես լեռները կ'երգեն բնութեան հետ. արեւը պայծառ եւ մաքուր շողերով կ'անցնի կատարէ կատար եւ ապա ձորերը կ'իջնէ: Նախիրները կը տարածուին կանանց սարերուն վրայ, ո՛չ նախորդ պէտք է, ո՛չ պահապան: Տղաք կուշտ քունէ մը արթնցան, ձկտեցան, յօրանջեցին, աչքերնին չփեցին եւ վեր թռան:

— Տղա՛ք, կէսօր եղած պիտի ըլլայ, ըսաւ Օնիկ. աս որքան քնացեր ենք, պէտք է վար իջնենք, հիմա մեր ծնողները մտահոգ մեզի կը սպասեն:

— Ճամբան սորվեցանք, ըսաւ Յովիկ, ասկէ վերջ գէթ չարաթն անգամ մը պատրուակով վեր կ'ելլենք:

Մէկիկ մէկիկ համբուրեցին աղջիկները. անոնք իրենց քոյրիկները նկատուած էին եւ միութեան սիրելի

անդամուհիները. շաղկեցին հրացանն ու գիւղ իջան: Իրենց ծնողները մտահոգուելու պատճառ չունէին, այդ եղանակին սար երթալը սովորական ճամբայ էր եւ մանուկ մ'ալ կրնար կատարել առանց վտանգի:

— Վարդան, դաւակս, ըսաւ Սիրարփի մայրը, քո՛վէս շատ մի՛ հեռանար, ամէնէն աւելի ե՛ս պէտք է քեզ վայելեմ. դուն ինձ համար երէկուան ծնած մանուկ ես տակաւին:

— Այո՛, մայրիկ, ես ալ քեզի կը կարօտիմ. աղուօր դէմքդ ինձ համար արեգակէն աւելի գեղեցիկ է. մե՛զք որ ես տաարիներ չեմ վայելած, հիմա ամէն մէկ օրը մէկ ամիս պէտք է հաշուեմ:

— Անուշիկ ձագուկս, պատասխանեց մայրն ու Վարդանին վիզն ինկաւ. քեզի պէս սրտաբուխ դաւակ ո՞վ ունի. թոչունին բոյնն այնքան տաք չէ՞ որքան իմ եւ քու սիրտդ միասին:

Այդ ամառ հազիւ կրցան մէկ երկու անգամ սարն ելլել, Երուանդին հայրը խանութին մէջ պէտք ունէր իր տղուն, ան մեծցած էր, կրնար երկաթ ծեծել եւ հրացանի փող շինել: Յովիկ դաշտերը պէտք էր երթալ, Վարդ այգիները խաղող կթելու, միայն Օնիկ պարսպորդ կրնար պտըտիլ, Վարդան հօրը հետ արտ կ'երթար լազուտ հաւաքելու, կալ ընելու, իրենց եղները դարմանելու համար: Չմեռն իրենց համար շատ երկար եղաւ, տուներու մէջ դամուած, պարսպ ժողովներ կ'ընէին, երեւակայական ծրագիրներ կը զնէին, իրենք ալ չէին գիտեր իրենց հաստատ նպատակը: Մէկ բան որոշ էր՝ արգիլել այլազգիներուն հրացան ծախելը, հարկ էր տէր Եղիշի հետ խորհրդակցել: Չմեռ ատեն հեշտ էր տէր հայրն իր տունը դտնել, ամառն ինքն ալ արտեր կ'երթար եւ ցանքի կը մասնակցէր. ինքն ալ տուն տեղ

ունէր, ընտանիք ունէր, պէտք էր պահել զանոնք, չէին բաւեր իւզագիրները, թէպէտ Շահկերտցին առատաձեռն էր:

Տէր Եղիշէն մտիկ ըրաւ երբ պատանիները խօսք բացին զէնքի առեւտուրի մասին, զիւզի ապագայ վրտանգներուն եւ պաշտպանութեան մասին:

— Ծիշտ էք, զաւակներս, պատասխանեց, մենք կ'ապրինք այլագգիրներու մէջ, փուշերու մէջ ինկած մարդու կը նմանինք, եթէ զգոյշ չըլլանք, մեզ կը խայթեն եւ մեր արիւնը կը ծծեն: Կաշառք տալով, աղաչելով կեանքը կեանք չ'ըլլար. մեր վիզը միշտ իրենց դանակին տակ կը մնայ:

Ես ալ շատ անգամ խորհեր եմ, բայց, սա անիծեալ առեւտուրը, շահասիրութիւնը լեզուս բերանս պահած են: Չեմ բեր ամէնքը, բայց մէկ երկու զինագործներ կան՝ որ շահու համար կրնան զիւզն ալ ծախել: Ո՞վ կրնայ ատոնց խօսք հասկնել. հին ախտ դարձեր է թշնամին զինել որ մեր վրան իշխէ:

— Այդ տեսակներուն հաշիւը մենք կը մաքրենք, պատասխանեց Վարդան. զիրենք իրենց գործատան մէջ կ'այրենք, եթէ հարկ ըլլայ. ամէն բանէ առաջ մեր հաւաքական շահը. անհատը պէտք է ամբողջութեան համար զոհուի: Ես թէպէտ շուրջ քսան տարեկան եմ, բայց դուք զիտէք թէ ես կեանքին համար, նոր ծնած եմ, արեւս կու տամ եթէ հարկ ըլլայ. աչքերուս լոյսը կու տամ, լսեցէք տէր Հայր, աչքերուս լոյսը, որ ինծի համար անբովանդակելի աշխարհ մ'է:

— Ապրի՛ս, Վարդան, ի՛նչ գեղեցիկ կը խօսիս, պատասխանեց տէր Եղիշէ, շարունակէ՛, շարունակէ՛:

— Տէր Հայր, ես չէ որ կը խօսիմ, այլ հայու սիր-

տը. մէկ անգամ կը ծնինք այս սուրբ անունով եւ մարդու չենք վաճառեր անարդ Յուդայի պէս:

Իր ընկերները լուռ մտիկ ըրին, չէին կարծեր թէ Վարդանի մէջ կորովի հոգի մը կը պառկի. Առիւծի թաթ անունը լաւ դրած էին, բացի նիւթական ուժէն, ան ունէր նաեւ եփուած զինուորականի մը նկարագիրը. ո՞վ տուած էր իրեն, անշուշտ Զանգեզուրի լեռները՝ պապենական արիւնի ճամբայով:

— Ընկերներ, ըսաւ Օնիկ, դուք զիս ձեր առաջնորդն ընտրեցիք. ահա եօթ տարի է որ խորհուրդներուս կը հետեւիք, սակայն հիմա ես կ'առաջարկեմ Վարդանը դնել մեր առաջնորդը, արդէն մեծ զօրաւորին անունը կը կրէ եւ հոգին ունի:

— Այո՛, այո՛, հոն ուր Վարդանն է, մենք ալ հետն ենք, կանչեցին տղաները:

Տէր Եղիշէ խանդավառ զարմացում ունեցաւ, կ'ուզէր ելլել եւ այդ երիտասարդները, մանչ ու աղջիկ մէկիկ մէկիկ համբուրել: Չէր խորհեր թէ ինքն ալ մաս ունէր անոնց նոր մտայնութեան մէջ. իր դասերը, հայկական պատմութեան էջերը աղբած էին այդ պատանիներուն վրայ եւ հագեր էին հոգեպէս հայ զինուորականի տարազը:

— Զաւակներս, ըսաւ ծանր շեշտով, առ այժմ մեր զիւզը վտանգ չունի, ապագան Աստուծոյ ձեռքն է, սակայն աշխարհի մը խաղաղութիւնն իր ուժէն կախուած է. զէնք ունիս՝ մարդ ես եւ ազատ ես, զէնք չունիս՝ ուրիշին կեր ես:

— Իմ ողորմած հոգի պապիս ալ այդպէս կ'ըսէր, մէջն ինկաւ Օնիկ:

— Ծիշտ կ'ըսէր ողորմած հոգին. պատասխանեց քահանան: Կը տեսնեմ որ դուք եռանդով լեցուած էք

գիւղին եւ հայրենիքին հանդէպ. բայց խոհեմ եւ զգոյշ եղէք. զինավաճառութեան առջեւը կարելի պիտի ըլլայ կամաց կամաց առնել. դեռ շատ մարդիկ կան որ աչքերնին չեն բացած, գիւղի սահմանէն անդին չեն տեսներ: Երբ Պարսկաստանի մէջ դահի խռովութիւն պատահի, միշտ ծեծը մենք կ'ուտենք, մեզմէ կը պահանջեն հաց ու գրամ իրենց անօթի փոքրերը լեցնելու համար: Ես բաւական տարիք ունիմ, շատ բան տեսած եմ, շատ բան լսած եմ եւ շատ արցունք թափեր եմ:

— Մենք այնպէս պիտի ընենք որ ասկէ յետոյ իրենց մայրերն ու կիները լան, դոչեց Վարդան:

— Վարդա՞ն, Վարդա՞ն, արջը չգարկած, կաշին չծախենք, պատասխանեց քահանան. նախ զէնքով, հոգիով զինուելնք, յետոյ պայծառ ու վստահ երեսով ապագային նայինք:

Պատանիները կայծ առին տէր Եղիշէի շրթներէն եւ խանդավառ մեկնեցան Վարդանի տունը: Իր մայրը շատ կ'ուզէր որ Վարդան միշտ ընկերներով շրջապատուի:

— Պէտք է իր կորսուած մանկութիւնն ապրի, կ'ըսէր ինքնիրեն:

Վարդանի խումբը գիտէր թէ գիւղի զինագործները ումբ ալ կը շինեն, բայց երբեք ձեռքերնին չէին առած, ծանօթ չէին գործածութեան:

— Երուանդ, հարցուցին, հայրիկդ ալ ումբ կը շինէ՞:

— Ո՛չ, միայն հրացան, սուր և տարճանակ կը շինէ:

— Ատոր վարպետը Սահակ ծերունին է, ըսաւ Յովիկ, այն երկայն մօրուքով մարդը՝ որ ժամին ետեւ գործատուն ունի. օր մը երթանք հարցնենք, տեսնենք

իւ շինածները, թերեւս հրացանէն աւելի զօրաւոր զէնք մը ըլլայ:

— Հիմա կրնանք երթալ, թող աղջիկները տուներնին դառնան, շատուոր ըլլանք՝ բան մը կը կասկածի, ըսաւ Վարդ:

— Ինչո՞ւ, մենք ալ կ'ուզենք տեսնել եւ գործածութիւնը սորվել, պատասխանեց Շողիկ:

— Շողիկ, քոյրիկս, ըսաւ Վարդան, ուր որ մենք չենք կրնար գործել՝ դուք պիտի գործէք, ուր դուք չէք կրնար՝ մենք պիտի գործենք. ասիկա մեր գործն է, յետոյ ձեզի կը բացատրենք. եթէ կարելի ըլլայ՝ հատ մը կ'առնենք ծերունի Սահակէն:

Մանչերը զացին Սահակին խանութը. ծերունին հաստ ակնոցներ դրած, կ'ըսէր գունդի մը վրայ կ'աշխատէր:

— Բարեւ, Սահակ պապի, ըսին չորսը միասին, աշխատանքդ բարով ըլլայ:

— Բարեւ, ձագուկներս, որո՞նց դաւակներն էք:

— Ես Սիմոնեցի Վարդանն եմ:

— Սա կոյր տղան, որուն աչքերը բացուեր են, աչքերուդ լոյսն համբուրեմ:

— Ասիկա, շարունակեց Վարդան, Սարոյեցի Վարդն է, միւսը՝ Մանասեցի Յովիկը, իսկ անիկա Թանգեան Երուանդն է: Արոյ, գիտե՞ս ինչու եկած ենք. լսած ենք որ ումբ կը շինես. ի՞նչ զէնք է սա ումբը, հրացանի պէս զօրաւոր է, ուսկի՞ց սորվեր ես այդ զէնքը շինել:

— Էս, որդիներս, շատ հին բան է, պատասխանեց ծերունին: Ժամանակին Ջուղայեցի հայ վաճառական մը, Աստուած ողորմի հօրն ու մօրը, Վենետիկէն բերաւ պարապ ումբ մը եւ շինելու ձեւն ու գործածութիւնը մաքուր թուղթի վրայ դրած էր: Գիւղին տէր

Հայրը կարգաց գրածը, ո՛չ տէր Եղիշէն, ան ուրիշ էր, մեռաւ օրհնածը. ես մտածեցի, մտածեցի եւ շինելու շատ փորձեր ըրի ու յաջողեցայ: Այս գէնքը ո՛չ Պարսից շահն ունի, ո՛չ Չինուամաչինի թագաւորը:

— Աբոյ, ըսաւ Վարդան, դուք ծախելու համար չէ՞ք շիներ:

— Որո՞ւ ծախեմ, գործածել չգիտցողն ինքը կը սպաննուի: Անգամ մը պարսիկ մէկն եկաւ, կարծեմ մեծ աւագակ մ'էր, որ Նախիջևանի խանին պալատը կ'ուզէր կողոպտել. հատ մը գնեց, բացատրեցի թէ այս սերկեւելի շափ երկաթէ գունդին մէջ գնդիկներ կան կապարի եւ երկաթի, թէ այս դուրս ելած պատրոյզին մէկ ծայրը հաղորդուած է գունդին մինչեւ փորը վառօղին հետ. պէտք է ձեռքին մէջ բռնել, դուրսը պատրոյզին կրակ տալով եւ նետել թշնամիին կողմը, կը պայթի, եւ մահ կը սփռէ. խկոյն պէտք է նետել, եթէ բռնողի ձեռքին մէջ պայթի՝ ինքը տակը կ'երթայ: Այդ մարդը գացեր է, ուսմբը ձեռքին մէջ, պատրոյզին կրակ է տուած ճիշտ խանին գիմաց, եւ փոխանակ շուտ նետելու՝ վախցեր, դողացեր է եւ ոտքով զլխով տակը գացեր է:

— Է՛, լաւ եղեր է, ըսաւ Յովիկ:

— Չէ, տղաս, ամէն մարդու կեանքն Աստուած է տուեր եւ մենք խօսքով ալ չենք կրնար վերցնել:

— Աբոյ, շատ ունի՞ս այդ ուսմբերէն, հարցուց Երուանդ:

— Շա՛տ, ներսը մութ անկիւն մը գրած եմ, որ մարդ չմօտենայ, անխոհեմներ շատ կան, վտանգ կը հանեն:

— Աբոյ, ըսաւ Վարդան, հատ մը մեղի չե՞ս ծախեր:

— Չէ՛, որդի, չէ՛, դուք շատ երիտասարդ էք, ձեր արեւը չեմ ուզեր մարել:

Պատանիները բաւական մը քովը կեցան, ուշադրութեամբ նայեցան թէ ինչպէս ուսմբ կը լեցնէր. ինչո՞ւ ուսմբ կը շինէր, քանի որ գնող չկար այլազգիներէն. թերեւս, մտածեց Վարդան, արհեստը չկորսնցնելու համար է: Երբ ծերունի Սահակին քովէն հեռացան, Վարդան եւ Օնիկ վէճի բռնուեցան: Օնիկ հրացանի կողմն էր, գնել եւ պահել. Վարդան խանդավառ էր ուսմբով:

— Եթէ այն անխելք պարսիկը ձեռքին մէջ պայթեցուցեր է, մե՞նք ալ նոյնը պիտի ընենք. մենք հայ ենք, բարեկամ, Աստուած խելք տուած է, բախտ չէ տուած:

Վարդան փոխեց գինավարժութեան դրութիւնը. Աբրաքսի ափին տարաւ իր ընկերները. աղջիկներն ալ եկած էին, բացի Մարոյէն, որուն ձեռքը խնդրողներ կային տան մէջ:

— Մարոն տան մէջ նազով կեցեր է, ըսաւ Օնիկ, փեսացու մը եկեր է:

— Այս գետէն մենք ողորկ քարեր կը հաւաքենք եւ ուսմբ նետելու ձեւեր կ'ընենք, ըսաւ Վարդան:

Ողորկ քարերու դէզ մը պատրաստեցին. Վարդան առաջինն առաւ եւ խկոյն նետեց. երկրորդ մը, երրորդ մը:

— Ի՞նչ կ'ընես, հարցուց Շողիկ, ի՞նչ տեսակ գէնք է այդ ուսմբը:

— Համարէ սերկեւելի մը, պատասխանեց Յովիկ, մէջը կապարի գնդիկ եւ երկաթի կտորներ կան վառօղի մէջ դրուած, պոչ մը ունի որ կրակ կ'առնէ եւ փորը կ'անցնի, կը պայթեցնէ. պէտք է առնել եւ նետել:

— Աւելի զիւրին է քան հրացանը, պատասխանեց Շաքէ :

— Բայց պէտք է պատրաստ եւ արագ ըլլալ, եթէ ձեռքին մէջ պայթի՝ նետողին մահ է, ըսաւ Վարդ :

Ռուսը նետելու փորձերն ստէպ կատարեցին. ամէնէն վարպետը Վարդանն էր. երիտասարդներն իրեն կը հետեւէին. ան մտքի կշիռը ունէր, հանդարտ ու վըճառական էր : Այնքան լուրջ ըմբռնեց առաջնորդի պաշտօնը որ կամաց կամաց խստացաւ, եւ իրեն ենթարկեց բոլորը, Օնիկն խսկ որ մեծի հովեր ունէր, իր առաջաստները վար առաւ եւ հլու ընկեր մը եղաւ :

Աննչան դէպք մը, որ խառն ցեղերով զիւղերու մէջ շատ կը պատահի, եկաւ իր անունը հերոսի վերածելու : Անգամ մը Վարդան զիւղին շատ վարերը կը գտնուէր, գրեթէ գետին եզերքը. ճամբուն վրայ հայ տղեկ մը տեսաւ, գլուխը վիրաւոր, որ նստած կու լար :

— Ինչո՞ւ վիրաւոր ես, ինչո՞ւ կու լաս, հարցուց Վարդան :

— Ես մեր կովերը կ'արածէի, երկու քիւրտեր եկան, զիս ծեծեցին, կովերս առին տարին, պատասխանեց եւ շարունակեց լալ :

— Շատ հեռո՞ւ են, հարցուց Վարդան :

— Չեմ գիտեր, թերեւ Տարեր կամուրջն հասած ըլլան :

— Հետս եկուր, հրամայեց Վարդան :

Ուժեղ փայտ մը կտրեց, եւ քալելով, տաշելով արագորէն վար վազեց. տղան հաղիւ կը հետեւէր. տեսաւ քանի մը կովեր, երկու հոգի արագ հարուածներով առաջ կը քշէին :

— Ասո՞նք են, հարցուց կովարածին :

— Այո՛, այդ երկուքն են, կովերը մերն են :

— Հետեւէ ինձի, մի՛ վախնար, հրամայեց տղուն : Երիտասարդն անվախ նետուեցաւ առաջ, հասաւ, գողերը տեսան զինքը եւ ետ դարձան սպառնալից :

— Ետ տուէք անասունները, պոռաց Վարդան հայերէն, հիմա ձեզ կը սատկեցնեմ :

— Առաջ եկուր, պատասխանեցին իրենց լեզուով. Վարդան չհասկցաւ, ինք միայն հայերէն գիտէր եւ ան ալ Չանգեզուրի բարբառը :

Պատանին նետուեցաւ անոնց վրայ, փայտի հարուած մը տուաւ մէկուն ոտքին որ գետին ծռեցաւ. միւսն աւելի երիտասարդ եւ հուժկու՝ գտեմարտի բռնուեցաւ, քաշեցին քաշչեցին զիրար, Վարդան տակը մնաց, նա իր կոկորդէն բռնած էր. երիտասարդը խելք մտածեց եւ ուժեղ հարուած մը տուաւ հակառակորդին կըզակին, բերնէն արիւն եկաւ, երկու ակոյալ դուրս ինկան : Իր ընկերը կաղալով մօտեցաւ եւ Վարդանին ոտքերէն բռնեց. կովարած տղան պարագ չկեցաւ, փայտի երկրորդ հարուած մը իջեցուց կաղին յետոյքին : Գողերը կը հայհոյէին, կը պողչկտային. Վարդան լուռ էր եւ աւելի վտանգաւոր : Իր վրան ինկած երիտասարդ գողը թէպէտ արիւնոտ կզակով, կը սեղմէր խեղճ տըղուն կոկորդը, կրնար վայրկեանէ վայրկեան խեղճել զինքը : Բայց պատանին ճարպիկութեամբ յաջողեցաւ ազատիլ եւ ուժգին հարուածով մը՝ մարած գետին փռել հակառակորդը : Պատանին ոտքի ելաւ, լայն շունչ քաշեց, եւ երրորդ հարուած մը տուաւ միւս աւազակին : Այդ վայրկեանին կով մը մօտեցաւ եւ անոնցմէ մին կոտորներով վերցուց ու նետեց անդին, մարդուն կողը կոտրելով :

— Գնա՛, ըսաւ Վարդան պատանիին, թարմ, բարակ, պատատուկ ճիւղեր կտրէ եւ ինձի բեր :

Անոնց թեւերն իրար կապեցին. կաղ ու ջարդուած առջեւնին ձգեցին: Աղաչանք, պաղատանք օգուտ չըբին զիրենք թող տալու: Վարդան քչեց այս երկու աւազակները դէպի գիւղ: Տղան այնքան ուրախացաւ որ մոռցաւ իր դլխուն վէրքերը, ժպտեցաւ, հաւաքեց անասունները եւ գիւղ վերադարձան:

Գիւղի հրապարակին վրայ, ժամին առջեւ կանգ առին. տեսնողները զարմացան թէ ո՞վ էին, ինչո՞ւ կապուած Ծահկերտ բերուած էին: Հետաքրքիրներ հաւաքուեցան. երկու աւազակները ծեծ կերած շան պէս կը դողային:

— Ո՞վ են ասոնք, ի՞նչ ըրած են, հարցուցին Վարդանին:

— Կովեր դողցած, հօտաղը ծեծած, վիրաւորած կը փախչէին, եւ ես, Աստուծով, յաջողեցայ զիրենք կապել եւ գիւղ բերել: Կանչեցէք ինձ տէր Հայրը, ըսաւ մէկու մը:

Տէր Հայրն եկաւ, դեռ աւելի մարդիկ հաւաքուեցան, կարծես ամբողջ գիւղը հոն թափեցաւ, մեծ նորութիւն էր իրենց համար. Վարդանին ընկերներն ալ վազեցին տեսնելու համար, եւ երբ լսեցին դէպքը.

— Կեցցե՛ս Վարդան, գոչեցին ուրախութեամբ, դուն մեր գիւցապն ես, մեր խկական Վարդանն ես:

Եկաւ տէր Եղիշէն. լսեց պատմութիւնը, գլուխը շարժեց, մէկ երկու ծանր խօսքեր ըսաւ, կէս թուրքերէն, կէս պարսկերէն, չէր գիտեր թէ ինչ ցեղ էին:

— Ի՞նչ կը հրամայես որ ասոնց ընենք, հարցուց Վարդան:

— Ծեծն արդէն շնորհքով կերած են, աւելին շատ է. բանտեցէք զիրենք տան մը մէջ եւ չոր հաց ու ջուր

տուէք, թող դան իրենց աղբականները, կամ ծնողները եւ դնեն ու տանին, որոչեց տէր Եղիշէն:

Ախոռի մը մէջ դրին, դուռը վրանին գոցեցին: Գիւղին մէջ Վարդանին անունը բերնէ բերան անցաւ. ինքն ալ քանի մը թեթեւ վէրքեր առած էր: Իր մայրն ու հայրը թէպէտ գոհ էին անոր քաջութեան համար, բայց մտահոգ էին վէրքերուն համար, մանաւանդ կոկորդը կապուեցած էր եւ երակները քիչ մ'ուռած էին: Նազար աղան լսեց ու վազեց թէ՛ երիտասարդն համբուրելու եւ թէ՛ դեղեր ապսպրելու համար: Ան հին խմորով մարդ էր, առեւտուրի գերի չէր, եւ Ծահկերտն ու բնակիչներն իրեն համար սրբազան էին, վա՛յ դպչողին:

— Ձէթով խմոր դրէք, ըսաւ, վաղը բան չի մնար. եթէ Վարդան քաջ ու ճարպիկ չըլլար, հիմա մեռած էր, բայց Աստուած իր աչքերու լոյսին նայեցաւ:

Երեք օր յետոյ քանի մը տարեց այլազգիներ հասան Ծահկերտ. եկած էին գերիները գնելու համար. ամօթով էին, խոնարհ եւ յարգալից, չեմ գիտեր թէ սրտով ալ այդպէ՞ս էին, թէ ո՞ր եւ ատելութիւն ունէին:

— Մեր գիւղէն երկու հոգի այստեղ բռնուած եւ բանտուած են, չենք գիտեր թէ ի՞նչ է պատճառը, հարցուցին զիւզացիներուն որ հոն էին:

— Ձէք գիտե՛ր, հա, աւազակութեամբ կ'ապրիք, սպանութիւններ կ'ընէք եւ չէք գիտեր, ըսաւ զիւզացի մը. պէտք էին կախել զիրենք, բայց մեր քահանան բարի գտնուեցաւ եւ միայն բանտել տուաւ:

— Ոտքդ պահենք, մենք չենք գիտեր թէ աւազակներ էին, իրենց մայրերու եւ կիներու լացերուն չգիմացանք, եկանք աղաչելու որ ազատ ձգէք, պատասխանեցին այլազգիները:

— Ասոնց տէրը Վարդանն է եւ հրամայողը տէր Եղիշէ քահանան, ըսաւ գիւղացին:

Կանչեցին տէր Եղիշէն եւ Վարդանը: Օնիկ, Յովիկ եւ Վարդ ալ եկան. քիչ քիչ շրջապատեցին այլազգիները. բաւական բազմութիւն մը ձեւացաւ: Տէր Եղիշէն հրամայեց ախտէն դուրս քաշել դողերը: Մին կազ, միւսը կուզ եկան հրապարակ:

— Եթէ ձեզ սատկեցնէին, քիչ էր, ըսաւ պատգամաւոր այլազգի մը: Ո՞վ էր ձեզ բռնող կապողը:

Անոնք դողողալով ցոյց տուին Վարդանը:

— Թո՛ւ, ամօթ ձեզի, հարամ ըլլայ ձեր ծծած կաթը, ձեր կերած հացը, տղեկ մը, դեռ պէս ու մօրուք չունի եւ ձեզ շան պէս կապեր բերեր է: Հասկցա՞ք հիմա, պոռաց այլազգին, հասկցա՞ք թէ ով են Ծահկերացիները: Ի՞նչ կ'ուզես որ վճարենք ասոնց փոխարէն, դարձան Վարդանին:

Վարդան նայեցաւ տէր Եղիշէին, որ ինքն որոշէ պատիժը:

— Քանի՞ կով էին, հարցուց քահանան Վարդանին:

— Երեք կով եւ երկու հորթեր էին:

— Երեք կով եւ երկու հորթեր կը վճարեն, ըսաւ պատգամաւորներուն:

— Աստուած վկայ, շատ է, պատասխանեց ծերունի այլազգի մը. ասոնք հացի եւ ջուրի կարօտ մարդիկ են, ընտանիքները մերկ են, տղաքն անօթի են:

— Իրենք չեն կրնար տալ, դուք տուէ՛ք, պատասխանեց քահանան: Երկու հրէշներ ինկած պատանիի մը վրայ կ'ուզէին խեղդել եւ անասունները տանիլ: Անամօթ կերպով խեղճ տղայ մը ծեծեր, վիրաւորեր են, եւ դուք քիչ կը գտնէք: Եթէ ուրիշ անգամ պատահի՛ կը բռնենք եւ ծառերէն կը կախենք, ասիկա գիտցած ըլ-

լաք: Մինչեւ որ երեք կով եւ երկու հորթ չբերէք, ասոնք հոս բանտուած կը մնան:

Նազար աղան իր դաւազանին կռթնած, հեռուէն կամաց կամաց եկաւ. գիւղին մէջ բան պէտք չէր կարգադրել առանց իր գիտութեան. 90 տարեկան էր, ամէնուն պապերուն հետ ապրած էր, ամէնուն հայրն էր: Այլազգի պատգամաւորները զինքը լաւ կը ճանչնային, եկան ձեռքը պագին, ողջութիւնն հարցուցին:

— Փառք Աստուծոյ, լաւ եմ, լաւ եմ, բայց այս բաները շատ դէշ են. մենք դրացիներ ենք, իրարու աղն ու հացը կերեր ենք: Քանի մը շարաթ առաջ աղջկան մը ետեւէն ինկած էին, այսօր անասուն կը դողնան, համբերութիւնը գիշեր չունի. զսպեցէք այդ աւազակները: Տեսե՞ք էք Ծահկերացի մը որ ձեր քիթն արիւնած ըլլայ, ձեր ապրանքը տարած ըլլայ:

— Նազար աղայ, այդպէս է, այդպէս է, ինչ ընենք, աշխարհիս ո՞ր կողմը փողոցի մարդիկ, աւազակներ չկան, ըսին այլազգիները:

— Ձեր կողմերը շատէն աւելի շատ կան, պատասխանեց ծերունին:

— Ոտքդ պագնենք, ասոնց դաւակները, կիները լաց ու կոծի մէջ են, լսեր են թէ սպաննուեր են, որոշ չեն գիտեր, տանինք, թող անմեղ տղաքը ինդան, ձեզ ալ օրհնեն. Ալլահը մէկ է ամէնուս համար:

— Ի՛հ, տարէք, պատասխանեց ծերունին, մենք ասոնց պէտք չունինք:

— Ո՛չ, պոռաց անդիէն տէր Եղիշէ, պէտք է տուգանք վճարեն, երեք կով եւ երկու հորթ, այնքան՝ որքան կ'ուզէին դողնալ տանիլ:

— Ատ Վարդանին հրամանն է, պատասխանեց Նազար աղան, ինքը բռներ է, գերիներն ալ իրենն են:

— Ի՞նչ կ'ըսես ձագուկս, դարձաւ Վարդանին:

— Դուն եւ տէր Հայրը դիտէք, ըսաւ Վարդան, ես աչք չեմ դրած իրենց կողերուն վրայ, բայց բէք իրենց եթէ անդամ մ'ալ բռնեմ՝ ծառերէն կը կախեմ:

— Ձէ տղաս, թող բան մը վճարեն, ասոնք նիւթով կը հասկնան, անասուն են, եթէ բոլորովին ներենք, պիտի ըսեն թէ մեզմէ վախցան, ատ ալ չ'ըլլար. թող հարիւր կոտ ցորեն բերեն, չունեւորներուն կը բաժնենք:

— Լաւ, թող այդպէս ըլլայ, պատասխանեց Վարդան:

Տէր Եղիշէ դո՛ճ չմնաց, ձեռք ու դնաց: Նազար ազան խոհեմ մարդ էր, եւ չափազանցութիւն չէր սիրեր, վերջապէս այլազգի դրացիներ են. կերպով մը պէտք է հաշտ երթալ. ատելութեամբ եւ կոխով աշխարհ չի շինուիր:

— Այս երիտասարդը որքան քաջ է, այնքան բարի է, դարձաւ Նազար ազան այլազգիներուն. իբրեւ տուգանք 100 կոտ ցորեն կը վճարէք եւ կը տանիք ձեր մարդիկը. վաղը սայլով զրկեցէք եւ եկէք առէք:

Այլազգիները դո՛ճ եղան. ո՛ւր երեք կով եւ երկու հորթ, ո՛ւր 100 կոտ ցորեն, կրնային գիւղէն հաւաքել եւ վճարել: Մինչեւ դեռին խոնարհեցան, պազին Նազար ազային ձեռքը եւ մեկնեցան:

Գիւղացիներուն մէջ վէճ մը փրթաւ, ոմանք ցընդած ծեր կոչեցին Նազար ազան, ուրիշներ խոհեմ անուանեցին: Վարդանի ծնողքն ալ ծերունիին կողմն էր. տղաներուն խումբը անտարբեր էր տուգանքի մասին, բաւ է որ այլազգիներուն աչքը վախնայ եւ Վարդանի անունը չմոռնան:

Յաջորդ օրն երկու ցորենաբարձ սայլեր զոյգ զոյգ եզներու լծուած, ճոնչելով, ազմկելով ձորերը՝ բար-

ձրացան Շահկերտ: Վարդանին խումբին այնպէս թրւեցաւ թէ իրենց առաջնորդին փառքը կ'երգէին. պատանին համեստօրէն կարմրեցաւ, երբ իրեն նայեցան ընկերներն ու գիւղացիները:

Սայլերը կանգ առին ժամին դիմաց: Եկաւ Նազար ազան, հրամայեց քանի մը հատ խտիրներ փռել եւ քանի մը կոտ բերել՝ չափելու համար: Հաշիւը ճիշտ էր. Նազար ազան դարձաւ այլազգիներուն.

— Այս ցորենը մենք պիտի բաժնենք չունեւոր ընտանիքներու, այրիներու եւ որբերու. ձեր ցեղակիցները ձերբակալող տղան պէտք չունի, ան ունեւոր է. սակայն լաւ սորվեցէք իր անունը, Վարդան կը կոչուի. եթէ փայտով երկու երիտասարդներու յաղթեց, վաղը հրացանով ձեր գիւղը ամայի կը դարձնէ: Առէք տարէք ձեր չունները:

Գլուխը կախ դուրս եկան երկու աւազակները եւ սայլերուն վրայ նստած պատրաստ էին ճամբայ ելլելու:

— Անտառի փայտեր, պոռաց Նազար ազան, վար իջէք եւ այս տղուն ձեռքն համբուրեցէք, թողութիւն խնդրեցէք:

Վար իջան անմիջապէս, վախերնին սաստիկ էր, եւ մօտենայով Վարդանին՝ ձեռքն ուղեցին համբուրել. տղան ետ քաշեց, բայց անոնք բռնի առին, պազին եւ աղաչական ըսին.

— Ներէ՛ մեզի, մենք էշեր ենք, աւանակներ ենք, յանցաւոր ենք, ա՛լ չենք ըներ, ա՛լ չենք ըներ:

Վարդանի ընկերներն սկսան խնդալ, բայց ինքը շատ լուրջ էր. ոչ թէ հպարտութեան համար, այլ վախի ազդեցութիւն բանեցնելու համար:

Սայլեր, աւազակներ դացին եւ գիւղն իր սովորա-

կան վիճակն առաւ: Մէկ տարի դէպք չպատահեցաւ
դիւզէ գիւղ: Վարդանի անունը սորված էին այլազգի
դիւզերը: Մէկ դէպք կը բաւէ մարդ մը հերոս ընելու
համար: Երիտասարդն իր ընկեր-ընկերուհիներուն աչ-
քին ալ վեր բարձրացաւ: Իրմէ մեծ երիտասարդներ
կարծես թէ իր քովը պզտիկ կը մնային: Եթէ իրենցմէ
ո եւ է մէկն ըլլար՝ պիտի կարենա՞ր ծառի չափ երկու
աւազակներ կապել, կապկպել եւ դիւզ բերել:

Վարդանի ծնողքն ուզեց երիտասարդի գլխուն պսակ
կապել, մայրն իր աչքը Շողիկին վրայ դրած էր: Շո-
ղիկ փափուկ եւ սիրուն էր, Շաքէ առնական էր եւ լե-
ռնցիի գեղեցկութիւն ունէր. բայց Վարդան այդ կող-
մերը չեղաւ. ան բոլորովին նուիրուած էր իր խումբին,
անոր ծրագիրներուն, մանաւանդ կը փափաքէր ուսում
ներմուծել այդ մութ աշխարհին մէջ. իրեն համար հայ-
կական ամէն մէկ գիր՝ մէյ մէկ հրացան էին: Ինչ որ
իւր սիրտը կը մաշեցնէր՝ օտարներու հետ գէնքի առեւ-
տուրն էր: Սօսեցաւ ծերերուն հետ, երիտասարդներու
հետ, Նազար աղային հետ, դարձեալ ընկերներով տէր
Նղիշէին զացին: Բայց առեւտուրը Հայերու արիւն ե-
ղած էր, փոխելը դժուար էր, գլուխները պէտք էր կը-
տրել եւ տեղը ուրիշ նոր գլուխ դնել:

Երբ գէնքի մասին վիճարանէր, իր բառերն համո-
զիչ էին, մուրճի պէս կը հարուածէին զիմացիներն ճա-
կատը: Գիւզացիներն իր մէջը նոր բան մը կը տեսնէին՝
հայրենասիրութիւն, բան մը որ մոռցուած էր դարե-
րով, եւ միայն Շահկերտ կար իրենց համար լեռներով
պաշտպանուած, բայց թշնամին հոն ալ հասած էր, երբ
ընակիչներն ոչխարներ էին եւ իւրաքանչիւրն իր փա-
րախը կը խորհէր:

Թերեւս Վարդան ամէնէն աւելի բուն սէր զգար

դէպի կեանքը, դէպի լոյսը քան ուրիշներ: Ինքը գիտէր
թէ ինչ ըսել է լոյս, տարիներով աչքերը դոյ երազած
էր. եւ լոյսը գեղեցիկ է, պաշտելի է, ազատ մարդուն
համար:

Սնդրեց տէր Նղիշէն որ շարունակէ գիւղի մանուկ-
ներուն ուսում տալ. մանաւանդ Հայոց պատմութիւնը.
Ինքը արդէն լաւ սորված էր հայերէն գրել կարողալը.
Ծարաւի էր պատմական գիրք ունենալ, բայց այդ ժա-
մանակ ուսկի՞ց ճարէր, միայն Վենետիկի Միսիթար-
եանները կրնային ունենալ, եւ անոնք ալ հեռուոր մշու-
չի մէջ էին իրեն համար:

Տէր Նղիշէ գնաց Տաթեւ եւ հոն գտաւ ձեռագիր Սո-
րենացի մը եւ Նղիշէ մը. դժուար էր մանուկներուն հա-
մար կարդալ այդ հին մատեանները. ինքը կը կարդար
եւ կը պատմէր: Վարդանն իսկ իր ընկերներով յաճախ
ներկայ կ'ըլլար եւ այնքան հաճոյք կը զգար, կը խան-
դավառուէր որ փափաք կը զգար երթալ տէր Հօր ձեռքն
համբուրել:

— Եթէ մենք այսքան մեծ պետութիւն ունեցեր ենք,
քաջ մարդիկ եղեր ենք, ինչո՞ւ հիմա օտարին ձեռքը
պիտի մնանք, ինչո՞ւ մեր դրօշակը պիտի չունենանք
մեր լեռներուն վրայ, ինչո՞ւ ազատօրէն մեր աշխարհին
փառքը պիտի չբերենք, կ'ըսէր ինքնիրեն եւ աւելի կը
թրծուէր իր հայրենասիրական գաղափարներուն մէջ:

Վարդան եղաւ Շահկերտի յեղափոխական ղէմքը:
Կամաց կամաց հրահրեց նաեւ երիտասարդները, անոնց
մէջ անձնականութիւն եւ գիտակցութիւն դրաւ: Հաճոյք
էր զինքը լսել երբ պատուաւոր կեանքի եւ հայրենասի-
րութեան վրայ կը խօսէր: Կը զարմանային թէ այս ե-
րէկուան կոյրը ուսկի՞ց հոգի առած էր եւ հիմա ամէ-
նուն կը բաշխէր առատ սրտով:

Տէր Եղիշէն իրեն նուիրեց Խորենացիին պատմութիւնը. դժուար էր կարգալը, գիրերը մանր էին եւ խիտ գրուած, բայց Վարդան արեւուն տակ, ճրագի լոյսով յաջողեցաւ կարգալու դադանիքը լուծել եւ սերտել բովանդակութիւնը:

Օնիկ, Երուանդ եւ Յովիկ շատ կանուխ նշանուեցան. Վարդ գեռ չէր որոշած իր կեանքի ընկերը. Օնիկին բաժին ինկաւ Շաքէն. Յովիկը Շողիկն առաւ, Երուանդ ուրիշ ընկերուհի մը գտաւ:

Յտեւէ ետեւ հարսանիքներ ըրին, ուրախութիւն կատարեցին: Օնիկին եւ Յովիկին կնքահայր Վարդանն եղաւ. Վարդ՝ Երուանդին կնքահայր եղաւ:

— Հիմա կատարեալ ենք, ըսաւ Վարդան, մեր ընկերուհիները եղան մեր սրտերուն կէսը, քաջարի ազջիկներ են, ո՞վ դիտէ վաղն ինչ դեր կրնան կատարել երբ գիւղին վրայ փոթորիկ բացուի:

Այդ ժամանակները, սակայն, մեր գիւղերուն մէջ սովորութիւն կար որ նոր հարսերը պէտք էին իրենց բերնին կապ դնել եւ չխօսիլ, կեսրայրին եւ կեսրոջ ձեռքերը պագնել, խոնարհ եւ հնազանդ ըլլալ:

— Կը հասկնամ, ըսաւ Վարդան Օնիկին, Երուանդին եւ Յովիկին, կը հասկնամ որ հարսերը պէտք են խոնարհ ու հնազանդ ըլլան, բայց այդ բերնին կապը չեմ հասկնար. ատիկա թրքական է, գերիի նշան է, ես կարդացեր եմ մեր պատմութեան մէջ որ հայ կիներն ազատ էր, երեսը բաց էր, հիւր կ'երթար, հիւր կ'ընդունէր: Քրիստոնէութիւնը կիներ իր պատուաւոր տեղը դըրաւ, մարդուն հաւասար ընկեր տուաւ: Ի՞նչ ըսել է չխօսիլ երկար տարիներ, անասո՞ւն են, հա՞մը են, մարդ չե՞ն: Ընկերներ, մենք պէտք է սկսինք այս վատ սովո-

րութեան դէմ կռուիլ. նախ պէտք է Շողիկը, Շաքէն եւ Երուանդին հարսը սկսին:

— Վարդան, ի՞նչ կ'ըսես, պատասխանեց Երուանդ, իմ հայրս զիս փայտով դուրս կը դնէ տունէն:

— Դուն ալ փայտը ձեռքէն առ, անդին նետէ, տըղայ չես որ, ըսաւ Վարդան:

— Կանչենք մեր քոյրիկներն եւ իրենց կարծիքն ալ առնենք, ըսաւ Վարդան, վստահ եմ որ ծափերով պիտի ընդունին:

Նոյն երեկոյ ամբողջ խումբը Վարդանին տունն հաւաքուեցաւ: Վարդան խօսեցաւ հին կնոջ ազատութեան մասին, թէ տարիներով չխօսիլ, բերան կապելը թրքական է եւ ոչ հայկական:

Հարսերը խնդացին, իրենց համար հաճելի նորութիւն էր. բայց ի՞նչպէս հասկցնել կեսուր-կեսրոջ, ի՞նչպէս գիւղացիներուն մտայնութիւնը փոխել, այդ սովորութիւնը միտ եւ ոսկր եղած է:

— Թողուցէք որ ձեր ամուսինները խօսին իրենց ծնողներուն հետ. վերջը վերջը, ձեր տէրն ասոնք են, ըսաւ Վարդան:

— Մենք երջանիկ պիտի ըլլանք, պատասխանեց Շաքէ, չէք գիտեր թէ ինչ անտանելի բան է, լաթ մը բերնին վրայ գիշեր ցերեկ քալել. հիւր կու դայ, ձեռնամած առջեւ կենալ, մարդ կու դայ՝ երկու խօսք չես կրնար փոխանակել. տան մէջ ստուերի պէս պէտք է քալես: Երբեմն կը խորհիմ թէ ինչ երջանիկ օրեր էին, ազատ լեռներու վրայ կը շրջէինք, կը վազէինք ու կը շողակրատէինք. հիմա, քար լռութիւն պէտք է. Օնիկին մայրն իմ ալ մամիկս է, դժգոհ չեմ, լաւ կին է, հետս կը խօսի եւ կը խնդայ, բայց սա Երուանդին Մով-

սէս հայրը՝ հին ծառերուն կը նմանի, որոնք չեն ուզեր ձկիլ նոր ժամանակներուն առջեւ:

— Նայեցէք ինչ կ'ընէք, ըսաւ Վարդան, այս երեկոյ, դուք՝ Օնիկ, Յովիկ, Երուանդ, ընթրիքի ատեն կը կանչէք ձեր հարսերը, բերաններուն լաթերը կը փըրցնէք եւ կը նետէք, հրամայելով որ խօսին ազատօրէն. ասիկա առաջին քայլը կ'ըլլայ ամբողջ դիւզին համար: Եթէ ձեր ծնողները բան մ'ըսեն, կը պատասխանէք թէ ատոնք թրքական սովորութիւններ են. ես ալ ասդին անդին կը խօսիմ մեր պատմութենէն: Դուք ալ կը խօսիք. անշուշտ ձեր ըրածը պիտի լսուի եւ հազարաւոր հարսեր իրաւունք պիտի տան, թերեւս յեղափոխութիւն հաննն, կիներու յեղափոխութիւնը թէ՛ զուարճալի է եւ թէ՛ ահաւոր:

Վարդանի պատուիրածին համեմատ կատարեցին: Օնիկին համար հեշտ էր, իր մայրն արգէն դիմացը խօսող մը կ'ուզէր, ան ալ Շաքէն էր. բերնկապի համար ձայն չհանեց:

— Վախեմ, ըսաւ, տղաս դիւզին մէջ անամօթ, լերբ կոչեն:

— Թող ինչ կ'ուզեն ըսեն, թուրքի սովորութիւն է. ես չեմ սիրեր թուրքերը, պատասխանեց Օնիկ:

Յովիկ փոքրիկ դիմադրութեան մը հանդիպեցաւ, հարկ եղաւ իր ծնողքին բացատրել հայկական սովորութիւնը. մտիկ ըրին. սպա կանչեցին Շողիկը, համբուրեցին եւ ըսին.

— Ասկից յետոյ լաթը բերնէդ կը քակես եւ մեզի հետ ազատ կը խօսիս, դուն ալ Յովիկին պէս մեր դաւակն ես:

Երուանդին քայլերը քարի հանդիպեցան. ան ընթրիքի ժամանակ կանչեց իր հարսը, քաշեց լաթը բերնէն

եւ հրամայեց ազատ խօսիլ իր հօրն ու մօրն հետ: Տան մէջ հիւրեր ունէին. հայրը երեսը թթուեցուց, ոտքի ելաւ եւ ուզեց Երուանդին ապակի մը քաշել:

— Տանս մէջ աներես հարսեր չեմ ուզեր. մեր պապեանկան սովորութիւնն է՝ հարսերու բերնին լաթ, ձեռքին մէջ դոյլ եւ աւել:

Երուանդ մէկզի հրեց հօրը ձեռքն եւ ըսաւ.

— Նախ Աստուծոյ օրէնքով այս հարսն իմն է, յետոյ քու պապեանկան սովորութիւնդ թրքական է. մենք կարգացինք մեր հին պատմութեան մէջ, հայ կիսն ազատ էր, երեսը բաց, հիւր կ'երթար, հիւր կ'ընդունէր: Մենք թուրքի՞ ընտանիք ենք թէ քրիստոնեայ հայու:

— Միտուած, կնքուած հայ քրիստոնեայ ենք, պատասխանեց հայրը:

— Մովսէս ամի, ըսաւ հիւրերէն մին, որ երիտասարդ էր, ես ալ Երուանդին հետ համաձայն եմ, շատ անգամ իմ տիկինս ալ կը նեղուի, շունչ չի կրնար առնել, կը դանդատի, բայց ես ի՞նչ կրնամ ընել, համբերէ կ'ըսեմ, ժամանակը կու գայ: Քու զաւակդ եւ ընկերները կրթուած, գիտնական երիտասարդներ են, Հայոց պատմութիւն գիտեն: Տեսնէիր անցեալ օր այն Սիմոննեց Վարդանը, սոխակի պէս կը խօսէր հայ քաջերու մասին: Բերանդ պագնենք, ըսին մտիկ ընողները:

— Արդէն այս բաները այդ Վարդանին խելքէն դուրս կ'ելլեն, ինքզինքը դիւզին տիրացուն կը համարի. կարգացող է եղեր, ձեռագիր իսկ կը կարդայ, թող երթայ տէրաէր ըլլայ: Լսեր եմ որ կ'աշխատի մեր զէնքի առևտուրն ալ արգիլել այլազգիներու հետ:

— Շատ լաւ կ'ընէ, պոռաց Երուանդ. զէնք տանք այդ այլազգի աւազակներուն որ դան կողոպտեն, սպաննեն եւ մեր վրայ տիրեն:

— Դրամ ունիս, անոնց տէրն ու թագաւորը դուն
ես, պատասխանեց հայրը:

— Եթէ դուն ըլլայիր այն կովեր դողցող աւազակ-
ներուն ղէմ, գրամդ ալ կ'առնէին: հողիդ ալ կ'առնէին,
ըսաւ Երուանդ:

— Շատ մի՛ երկարեր, սաստեց հայրը, իմ տանս
մէջ ես կը հրամայեմ, դուն ալ հարսդ ալ ինծի կը պատ-
կանիք. ինչ որ կ'ուզեմ այն պիտի ըլլայ:

— Շատ լաւ, ես ալ տունէն կը բաժնուիմ եւ առան-
ձին կ'ապրիմ, պատասխանեց Երուանդ:

Զինագործ Մովսէս շատ զէջ եղաւ, չէր սպասեր
այդ պատասխանին: Երուանդն իր տան սիւնն էր. դոր-
ծին մեծ մասն անոր ուսերուն վրայ էր. ինքն արդէն
բաւական տարիքն առած էր եւ երկաթ ձեծեղէն՝ բա-
զուկներն յոգնած էին: Սկսաւ կամաց կամաց տեղի տալ,
մեղմանալ. Երուանդին մայրն ալ քանի մը խօսքեր ըսաւ
սրտերը անուշցնելու համար: Կանչեց նոր հարսը, որ
դրան ետեւ մտիկ կ'ընէր, համբուրեց զայն եւ ըսաւ.

— Աղջիկս, ալ բերնի լաթի պէտք չկայ, ազատ խօ-
սէ մեզի հետ, մենք քու հայրդ ու մայրդ ենք. գնա
կեսրայրդ ալ համբուրէ, ան քեզ շատ կը սիրէ, իր սըր-
տին կէսը դուն ես, կէսն Երուանդն է:

Զինագործ Մովսէս լեզուն ծամեց, չրթները կրծեց
եւ ձայն չհանեց, համողւած չէր. բայց ի՞նչ կրնար
ընել. ժամանակները կամաց կամաց կը փոխուէին, աշ-
խարհն առաջ կ'երթար եւ ինքը դեռ լեռնցի մնացած էր.
մէկը պէտք էր որ զինքը ցնցէր հնամաշ կեանքէն եւ ա-
տիկա Երուանդը պիտի ըլլար:

Յաջորդ օրը երեք հարսերը թեւ թեւի, առանց բերն-
կապի փողոցները շրջեցան, բարձր խօսելով եւ խնդա-
լով: Պառաւներ եւ ծերունիներ հաճելի խօսքեր չըսին,

բայց անոնք կարեւորութիւն չտուին: Շահկերտի մէջ
թեր ու ղէմ վէճեր սկսան, երիտասարդութիւնը կողմ-
նակից էր երես բացին, տարեցներ պահպանողական էին:

Վարդան նախ գնաց Նազար աղային կարծիքն առ-
նելու, դիտէր թէ այդ ծերունին զինքը կը սիրէր, հայ-
կական հողի ունէր: Բացատրեց անոր բերնկապի խըն-
դիրը, պատմական փաստեր բերաւ, առողջապահական
տեսակէտով խօսեցաւ եւ ծերունին համոզուեցաւ: Ո-
չինչ բան մ'էր փոխուելիքը, բայց կրնա՞ս հասկցնել այդ
հին դուխներուն:

— Գնա, ըսաւ Նազար աղան, տէր Եղիշէին. ան
գիտնական է, քեզմէ աւելի կարգացած մարդ է, վըս-
տահ եղիր որ սիրով պիտի համաձայնի, ըսէ թէ եկե-
ղեցիրն մէջ թող յայտարարէ, բացատրէ եւ համոզէ.
մենք ալ աղուոր ղէմքեր կը տեսնենք փոխանակ զոյգ մը
աչքերու եւ կտոր մը ճակատի:

Վարդան ընկերներով վազեց քահանային, եկած էին
երեք հարսերն ալ, երեսնին բաց, խօսուն եւ խնդուն.
համբուրեցին օծուած ձեռքը. քահանան ժպիտով ըն-
դունեցաւ եւ նոյնիսկ քաղցրեղէն հրամցուց:

— Տէ՛ր Հայր, ըսաւ Վարդան մենք կուրի մէջ ենք
մեր հարսերուն քիթն ու բերանը բանալ, խօսք տալ եւ
ազատ մարդու կարգը դնելու համար. թուրք կիներու
պէս գերի չեն, մեր ընկերուհիներն ու քոյրերն են: Դուն
ալ մեզի օղնէ որ համոզենք ծերացած գլուխները: Կի-
րակի ժամին մէջ խօսէ, պատմութենէն փաստեր բեր:
Նայէ Տիրամայրն ալ պատկերներուն մէջ երեսը բաց է:

— Ես ալ շատ անգամ խորհած եմ, բայց քաջութիւն
չունէի առաջ նետուիլ. լաւ ըսիր, Կիրակի փաստ կը
բերեմ Տիրամօր Աստուածածնի երես բաց պատկերը:

Տէր Եղիշէն կիրակի օր Աւետարանը կարդաց եւ

խորանին վրայ դրաւ. առաւ ձեռքը կաշեպատ դիրք մը, ցոյց տուաւ ժողովուրդին ըսելով.

— Սիրելի հաւատացեալներ, Աւետարանը մեր դըր-
խուն վրայ, հոն Աստուծոյ խօսքը կայ, այս դիրքն ալ
Հայերուն երկրորդ աւետարանն է, Մովսէս Խորենա-
ցիին պատմութիւնը: Մէջը կան Հայկին, Արամին պատ-
մութիւնները, Աշխէն Թաղուհիին սուրբ կեանքը, Թէ
ինչպէս ազատ համարձակ աղքատներուն տունները կ'եր-
թար, երեսը բաց էր եւ հրեշտակի գեղեցկութիւն ունէր:
Խորովիլուխան ալ այնպէս էր, իշխաններու հետ ճաշի
կը նստէր, մարդ կ'ընդունէր, մարդ կը ճամբէր. երեսն
ու լեզուն բաց: Երբ այլազգիները մեր երկիրն եկան,
խերով բարով եկած չըլլային, ոտքերնին ճամբան կո-
տրէր, բերին կիներուն բերնին կապ զնելու վատ սո-
վորութիւնը: Նայեցէք սա խորանին վրայի անուշիկ
Աստուածամայրը. Մովսէս ամի, դուն ըսէ, Մամոյ դուն
ըսէ, սանամայր Սառա դուն ըսէ, երեսը բա՞ց է Թէ
դոց: Երեսը, քիթը, բերանը դոց ի՞նչպէս պիտի համ-
բուրէր իր սիրուն պզտիկը: Գացէք եւ վերցուցէք խեղճ
հարսերուն բերան կապը, թող լեզունին բացուի եւ մար-
դու հետ խօսին:

— Ապրի՛ս, տէր Հայր, պոռացին ժամին մէջ Վարդան
եւ իր ընկերները, քու մէջդ հայ հրեշտակ մը խօ-
սեցաւ:

Ժամին դրան առջեւ տաք վիճարանութիւն սկսաւ,
նոր բան մը իրենց գլխուն մէջ մտած էր. ոմանք կողմն
էին, ոմանք հակառակ, սակայն իրենց աչքերով աւսան
Տիրամօր պատկերն առանց բերան կապի: Քանի մը շա-
բաթ յետոյ Շահկերտի մէջ բերնի կապով հարս չկար:

— Սա գլխուն պոլոյն ալ օր մը կը վերցնենք, ըսաւ
Վարդան, ի՞նչ է այդ տղեղ թաղիքը, թող մազերնին

երկար ձգեն, հիւսուած ուսերէն կախ, ինչպէս հրեշ-
տակներն ունին պատկերներուն մէջ, եւ այնպէս պտը-
տին:

Վարդանի խոմբն յաղթանակ մը տարած էր, անոր
նպատակն էր հայ գիւղացիին հայկական տիպար տալ:
Բայց այդ օրերուն Նախիջլեանէն հայ երիտասարդ մը
զարձաւ եւ տարօրինակ լուրեր բերաւ. ինքն ալ որոշ
բան չէր գիտեր, բայց լսած էր Թէ Սպահանի մէջ Պարս-
կաստանի շահն սպաննած էին եւ աթոռի կոիւններ կան:
Գիւղը խռովեցաւ, Վարդան մտահոգուեցաւ:

— Եթէ ճիշտ են լուրերը, մենք ընելիք ունինք, փո-
թորիկը օր մը չէ օր մը հոս ալ կը հասնի:

— Ո՛հ, այդ հեռու աշխարհէն հոս ո՛վ գիտէ ի՛նչ-
պէս կը հասնին լուրերը, պատասխանեց Օնիկ, չիւզը
գերան կը դառնայ, թերեւս մէկ երկու խան գիրար գար-
կեր են, կամ Նատիր շահը քանի մը հոգի կախած է իր
վրանին առջեւ: Մեղք որ չեն վերջանար այդ մարդակեր
խաները:

— Նատիր շահը մեզի բարեկամ է, իր սուրբ մեր
կաթողիկոսէն ընդունած է, խելացի աւազակ մ'է, ը-
սաւ Յովիկ, մեղք պիտի ըլլայ եթէ մեռած է, չարա-
դունին պէտք է սպասել:

Ամիս մը հազիւ անց, պարսիկ, քիւրտ ետեւէ ետեւ
Շահկերտ կը բարձրանային զէնք զնելու համար. այս-
պէս չէր եղած, գէշ նշան էր. եթէ իրարու միսն ուտէին՝
լաւ, բայց Հայու միսն աւելի համով էր այլազգիներուն
համար: Հասան նաեւ ձեւայիւր խանին մարդիկը հրա-
ցան զնելու համար: Քսակներով ոսկի դրին զինագործ-
ներուն առջեւ, հարիւրաւոր հրացան սպայրելով:

Վարդան, բացի իր ընկերներէն, հաւաքեց նաեւ

չատ մը երիտասարդներ, անցաւ զինարանէ զինարան, սպառնաց, համողեց զէնք չվաճառել այլազգիներուն:

— Մեզի ի՛նչ, թող իրար միս ուտեն, ըսին շատ մը զէնք շինողներ, այսքան ոսկի ո՞ւր տեսած էինք. երկիրնքէն մանանայ կ'իջնէ, անխելք պիտի ըլլանք չհաւաքել:

— Մանանայ չէ, կարկուտ կ'իյնայ ձեր եւ ձեր ընտանիքին զլիտուն, պատասխանեցին երիտասարդները:

Ամբողջ պարսկական կայսրութիւնը խռովքի մէջ էր. 1747ին Նատիր շահն սպաննուած էր եւ զահաժառանգ չունէր: Ամէն մարդ կը զինուէր, ոմանք կողոպտելու, սպաննելու համար, ուրիշներ պաշտպանուելու համար, միայն Շահկերտ անխելք կերպով զէնք կը ծախէր: Այդ հսկայ զիւղն ալ ալեկոծ ծովուն մէջ փոքրիկ ժայռ մ'էր, հոն ալ պիտի հասնէին փրփրոտ ալիքները: Քանինե՛ր, մանաւանդ տարեցներէն, թմրած կը քնանային, վարժեր էին կողոպտուելու, մերկանալու, լալու, աղաչելու եւ ապա ողջ մնացողները կեանքը ծայրէն սկսելու:

— Ո՛չ, ո՛չ, գոչեց Վարդան, ոչխարի պէս պիտի չմորթուինք. Շահկերտ ժայռի պէս պիտի զիմազրէ ամէն հասնող վտանգին: Ոչ մէկ զէնք թաթարին, պարսիկին կամ քիւրտին:

— Ի՞նչպէս արգիլենք, հարցուց Յովիկ:

— Նախ մեզի առաջնորդ մ'ընտրենք, պատասխանեց Վարդան, քովը զնենք զինուորական խորհուրդ մը, քիչ հողիներէ կազմուած:

— Դուն ես արդէն մեր առաջնորդը, ըսին ընկերները:

— Չէ՛, ես շատ երիտասարդ եմ, հազիւ 27 տարե-

կան կամ, ինձմէ տարեցներ կան, թող անոնցմէ ընտրուի:

— Տարիքն հաշիւի մէջ չկայ, խելք ու քաջութիւն պէտք է, ըսին ընկերները եւ միացած երիտասարդները: Վարդա՛ն, դուն ես մեր առաջնորդը, ընդունէ՛ եւ գործի անցիր:

— Լաւ, սիրով իմ անձս Շահկերտին համար կը զոհեմ, պատասխանեց Վարդան: Մեր առաջին զործը պիտի ըլլայ զինավաճառութիւնը բոլորովին խափանել: Իւրաքանչիւր զինարանի դրան վրայ երկու երկու հրացանակիր պահակներ կը զնենք. եկող այլազգին ետ կը ճամբեն, եթէ հայեր գան՝ թող վաճառեն, բայց զզոյշ ըլլալու է, կրնան վատ հայերու միջնորդութեամբ զնել:

— Եթէ զիմադրեն զինազործները կամ այլազգի զնողներն՝ ի՞նչ ընենք, հարցուց երիտասարդ մը:

— Եթէ հարկ է՝ զարկէք, պատասխանեց Վարդան: Ծուրջ 3000նոց զիւղի մը շահերը չենք կրնար անհատի մը զոհել:

Շահկերտի մէջ 25 հատ զինարաններ կային, միայն ծերունի Սահակը ուսմբ կը շինէր, միւսները հրացան, սուր եւ ատրճանակ կը շինէին: Տէր Եղիշէն, Նազար աղան ալ իրենց համակարծիք էին. օրէ օր Վարդանի խումբը կը շատնար: Դիւրին եղաւ 50 հողի զինեալ գտնել աշխատանոցներուն առջեւ զնելու համար: Ձինարանները պէտք էին զիւղին համար աշխատիլ:

Հարկ եղաւ սպառնալիքով վճռուել այլազգիները, որոնք զրեթէ պոչ բռնած էին զէնքի համար:

— Ես հաշիւ մ'ըրի, ըսաւ Վարդան, թէ մեր զիւղը մինչեւ 500 հրացանակիր կրնայ հանել, մեծ ոյժ է. յետոյ ունինք մեր անմահական բերդը, ուր ամէն մէկ քար անառիկ ամբոց է:

— Կարելի պիտի ըլլա՞յ այդքան մարդ զէնքի տակ կանչել, հարցուց Վարդ:

— Շատերը կամաւոր, ոմանք բռնի պէտք է զէնք վերցնեն՝ եթէ վտանգը մօտենայ, պատասխանեց առաջնորդը:

— Ես կարծեմ թէ շատ աւելորդ յուզմունքի մէջ ենք, ըսաւ երիտասարդ մը. դեռ կոխ, խռովութիւն Սպահանէն դուրս չեն ելած. մինչեւ հոս հասնին՝ թե՛րեւս ամէն բան մարի:

— Փոթորիկը չես դիտեր ուսկի՛ց կը ծաղի, ո՛ւր կը վերջանայ, պատասխանեց Երուանդ. զէնք ունեցիր եւ մի՛ վախնար ապագային համար:

Երեկոյ մը Նազար աղան եկաւ Վարդանին տունը. հոն էին քանի մը ընկերներ. պատմեց թէ 90 տարուան մէջ քանի անգամ շահ փոխուելուն, Շահկերտը մերկացած, սրբուած եւ կեանքը ծայրէն սկսած է: Ան դո՛հ էր պատրաստութիւններէն, թերեւս այս անգամ ազատէին կողոպտիչներէն:

— Մեր մեծ թշնամիներն, ըսաւ ծերը, Նախիջեւանի, Դավրէժի եւ Երեւանի խաներն են:

— Ինչ որ կը տեսնուի, ըսաւ Յովիկ, մենք մեր դըլխուն քանի մը բռնակալ պետութիւն ունինք:

— Քանի մը չէ, պատասխանեց Երուանդ, հազարներ ըսէ. ամէն այլազգի մեր վրայ թագաւոր է:

Վարդանի մայրն ու հայրը թէպէտ երեւութապէս չէին հետեւեր այս հարցերուն, սակայն հպարտ էին իրենց զաւակով: Ան Չանդեղուրի լեռներու երզն էր, սարերու արծիւը: Աչքերուն նորածագ լոյսը դրած էր նաեւ հողիին մէջ հրեղէն ճառագայթ մը: Օրէ օր կը խտանար, թոյլերը կը ցնցէր, կ'աշխատէր իր ափին մէջն

առնել ամբողջ զիւրը, ազգային մէկ զինարանի վերածել Շահկերտը:

— Վարդան, ըսաւ օր մը Օնիկ, ես կը խորհմ թէ մեզի շատ օգտակար պիտի ըլլան հայրիկիս որսի ընկերները, Մարդարենց Աւոն, Մինասենց Սերգոն, Խանդամիրենց Միւսէլը, Սարոյենց Վրէժը. քաջ որսորդներ են, լաւ նշան կ'առնեն, կարող են թշնամիին աչքին ալ քաշել գնդակը:

— Սիրելի Օնիկս, բոլորը մեզի օգտակար են. չլսեցի՞ր թէ Սպահանի մէջ շահ կը գնեն, շահ կը սպաննեն: Դավրէժի խանն ինքզինքն անկախ հռչակեւ է, վաղը Նախիջեւանն ու Երեւանը պիտի հետեւին. յետոյ մենք կու գանք այդ անօթիներուն փորերը կշտացնելու:

Օնիկ գնաց խօսեցաւ իր պապիկին չորս որսի ընկերներուն. անոնք արդէն քառասունն անցած մարդիկ էին, բայց Վարդանն ու Օնիկը կը սիրէին ու կը յարգէին. երկուքն ալ կարգալ գրեւ զիտէին, իրենցմէ աւելի պէտք է խելացի ըլլային. ուսումնական մարդն իրենց համար կէս մը հրեշտակ էր:

— Վարդան, ի՞նչ կը հրամայես որ ընենք, հարցուցին չորսն ալ:

— Ձեզմէ ո՞վ թուրք, պարսիկ կամ քիւրտ լեզուն լաւ կը խօսի, հարցուց առաջնորդը:

— Սերգոն թուրքի պէս թրքերէն կը խօսի, պատասխանեց Աւոյ:

— Սերգոյ, կրնա՞ս թուրք ձեւանալ եւ իջնել մինչեւ Նախիջեւան, չըջիլ թուրք զիւրեր. հազար տկանջ ըլլալ, լսել, լրտեսել, իմանալ թէ ի՞նչ կը խօսին այլազգիները, ի՞նչ պատրաստութիւններ կը տեսնեն. սիրտը հայ, լեզուդ տաճիկ պիտի ըլլայ: Եթէ կ'ուզես՝

փերեզակ ձեւացիր, լաթեղէն, հուլունք, հայելի, բաներ մը ծախէ, ըսաւ Վարդան:

— Դժուար եւ վտանգաւոր գործ է. եթէ անդրադառնան՝ կրնան նոյնիսկ զիս սպաննել, պատասխանեց Սերգոյ: Լաւ պիտի ըլլայ եթէ կով գնելու պատրուակով երթամ. փերեզակը գիտեն թէ հայեր կամ հրեաներ կ'ըլլան:

— Ճիշտ է ըսածդ, հագուստդ ալ քիչ մը փոխէ, իրենց պէս հագուէ. քեզի դրամ ալ կու տանք որ ծախսես. նայէ, տեղին համեմատ մեզի դէմ ալ պիտի խօսիս որ անկեղծ բացուին, ըսաւ Վարդան:

Սերգոյ մեկնեցաւ իր գործին, միւս երեքը կը սպասէին պաշտօն առնել:

— Աւոյ, դուն եւ Վրէժ տունէ տուն շրջեցէք, զրի առէք որքան զէնքի կարող մարդիկ կան, որքան հրացան կայ գիւղին մէջ:

— Բայց մենք կարդալ գրել չենք գիտեր, պատասխանեցին Վարդանին:

— Լաւ, Վարդը կու գայ որ թուղթի վրայ նշանակէ անուն մականուն եւ զէնք: Եթէ դիմադրեն, ծածկեն՝ ըսէք որ անուննիդ կը նշանակենք եւ ձեր տան կրակ կու տանք. հաստատ կ'ըսեմ, կրակ կու տանք:

— Իսկ դուն՝ Մկուչ, քանի մը երիտասարդներ, աղջիկներ եւ հարսեր պիտի առնես եւ բերդը բարձրանաս, պատուիրեց Վարդան. սենեակներ կան, նկուղներ կան, քիչ թէ շատ կարգի դնել, մաքրել հողերէն ու քարերէն. եթէ կոխ պատահի, մեր ժողովուրդը բերդն ու վերի քարայրները պիտի փոխադրուի, կրակին տակ չմնալու համար: Երուանդը թող ձեզի հետ գայ, ան բերդին մութ ծակերն ալ գիտէ: Չմոռնաք բահ, բրիչ,

աւել առնել: Շաքէն, Մարոն, Ծողիկը ծանօթ են բերդին. պատուհաններն ալ կարգի դրէք, եթէ պէտք ըլլայ՝ անկից ալ կրակելու համար: Ես եւ Յովիկ ծերունի Սահակին կ'երթանք. իր շինած ումբերը հրաշք կրնան գործել: Կը պատրաստենք եւ բերդ կը փոխադրենք. անշուշտ խեղճ մարդուն պէտք է բան մը վճարենք: Լաւ միտքս ինկաւ, տունէ տուն երթալու ենք եւ դրամ հաւաքելու: Ունեւոր մարդիկ շատ ունինք, մանաւանդ օտարներուն զէնք ծախողները պէտք է առատ վճարեն:

Վարդանի հրամաններն այնպէս կտրուկ եւ արագ էին, որ այն տպաւորութիւնը ձգեցին գիւղին վրայ՝ թէ վայրկեանէ վայրկեան պատերազմի պիտի բռնուին այլազգիներուն հետ: Տուներու մէջ ուրիշ բանի մասին չէր խօսուեր, նոյնիսկ լացող կիներ եղան, մարդիկ որ դաշտային աշխատանքը ձգած նոր լուրեր կ'ուզէին լսել:

Տէր Եղիշէն ալ շփոթ վիճակ ունէր, ինքը լաւ գիտէր այլազգիներու մտայնութիւնը. ոխ եւ ատելութիւնը հայ եկեղեցիներուն դէմ: Ինքն ալ հաւաքեց ժամին խաչերը, աշտանակները, սուրբերու մասունքները, արծաթեղէնները, հողին տակ թաղեց, միայն ինքն ու երէցիկներ գիտէին տեղը: Խորանի վրայի անուշիկ Աստուածամօր պատկերը վար առաւ եւ իր տունը տարաւ: Քիչ մը շատ աճապարեց, վտանգը դեռ հեռու կը տեսնուէր, կրնար գալ, կրնար չգալ. բայց խոհեմութիւնը լաւ բան էր, մանաւանդ այդ անհաւատներու աշխարհին մէջ: Կանչեց երկաթագործ մը, ժամի դրան սողնակները, նիզերը զօրացուց:

— Ես՝ ինչ որ մարդկօրէն կարելի է կ'ընեմ, ըսաւ ինքնիրեն, մնացածը թող Աստուած նայի:

Պաշտպանութեան պատրաստութիւնները տեսնողին առաջ կ'երթային. Վարդան վտաս էր թէ կրակը Շահ-

կերտ ալ պիտի հասնէր: Անորէն եւ անկանոն կացու-
թիւն մը կը տիրէր բովանդակ կայսրութեան մէջ:

Երկու շաբաթ յետոյ Սերգոյ վերադարձաւ իր ա-
ռաքելութենէն: Վարդան անմիջապէս իր տունը կանչեց.
չորս ընկերներն ալ ներկայ եղան:

— Ուրե՞մն, ի՞նչ կար, ի՞նչ տեսար, հարցուց Վար-
դան Սերգոյին:

— Յաջողեցայ մինչեւ իսկ Նախիջեւանի խանին պա-
լատը մտնել, տէրվիչ ձեւացայ, տեսակ մը իրենց սուր-
բերէն մէկը: Այլազգիներն ալ մտահոգ են, սակայն ա-
մէնուն բերանն է մասնաւորապէս Շահկերտի վրայ ար-
շաւել եւ կողոպտել: Դէզերով հրացան հաւաքած էին
խանի պալատին մէջ, թերեւս 3-4000. մեծ մասը մեր
զինարաններուն գործերն էին: Խանը դեռ Սպահան է,
բայց լուր դրկած է թէ շուտով կը վերադառնայ եւ ինքը
պիտի ըլլայ Հայաստանի շրջանին թագաւորը. վա՛յ դի-
մադրողին, աւելցուցած է բանբերին բերնով.

— Չարագոյն բանը պիտի ըլլայ, պատասխանեց
Յովիկ, մեր քթին տակ անկուշտ թագաւոր մը, մեր
ինչքերուն հետ մեր կեանքն ալ պիտի վերցնէ:

— Երբ Շահկերտի մասին խօսեցայ, շարունակեց
Սերգոյ, ամէնքն ալ մասնաւոր ատելութիւն մ'ունէին.
պէտք է կործանել, պէտք է կործանել, կը կրկնէին ծեր
ու երիտասարդ, մեր գլխուն փորձանք է:

— Ի՞նչ պատերազմող ոյժ կրնան տրամադրել,
հարցուց Վարդան:

— Մարդկային ոյժ ո՛րքան կ'ուզես, թերեւս տաս,
քսան հազար, հաշուելով պարսիկ, թուրք, քրեւտ միա-
սին. սակայն զէնքի պակաս ունին. պէտք չէ որ երկաթի
կտոր մ'իսկ տանք այդ շուններուն:

— Գաղափար ունի՞ն մեր պատերազմական ոյժի
մասին, հարցուց Երուանդ:

— Պէտք է ընդունիլ որ Շահկերտէն կը վախնան,
իրենց ամբողջ ոյժը մեր վրայ պիտի թափեն, եթէ թոյլ
չտանք որ ազատօրէն մեր ինչքերուն եւ պատիւին զըպ-
չին:

Ե՞րբ կը կարծես որ սկսին բռնութիւնները, որոշ
ժամանակի մասին բան մը լսեցի՞ր, հարցուց Վարդ:

— Իրենց պատրաստութիւններէն դատելով՝ շատ
մօտալուտ կը տեսնուի, թերեւս քանի մը ամիսներու
հարց ըլլայ. կը սպասեն խանի վերադարձին:

— Քանի մը ամիսներ մեզի համար քիչ են, ըսաւ
Վարդան. պէտք է օր գիշեր աշխատինք զէնք, ուտելիք
եւ՝ բերդին մէջ ապաստանարան պատրաստել:

— Այլազգի գիւղեր ալ մտա՞ր, հարցուց Օնիկ:

— Բոլոր գիւղապետները հրահանգ ստացեր են խա-
նէն՝ զինել երիտասարդութիւնը իր հրամանին տակ ծա-
ռայելու համար: Արաքսէն հիւսիս, ըսած է ձեւայիբ
խանը, իմ թաղաւորութիւնս պիտի ըլլայ, այդ կեա-
ւուններուն երկաթէ բազուկով պիտի հասկցնեմ. բայց
այլազգի գիւղացին կողոպուտի կը պատրաստուի:

— Գիտենք թէ ձեւայիբ հայատեաց է, ըսաւ Յո-
վիկ, բայց մենք անոր հպարտ եղջիւրները պիտի փըշ-
րենք:

— Սերգոյի բերած լուրէն երկու բան որոշ են, ը-
սաւ Վարդան. հայատեաց ձեւայիբը պատրաստութիւն
կը տեսնէ արշաւել հայ գիւղերու վրայ, կողոպտել եւ
բռնի մահմետական դարձնել մեր ազգը:

— Վստահ եմ որ յարձակումը նախ Շահկերտին
վրայ պիտի ըլլայ, ըսաւ Երուանդ. եթէ մեր գիւղը դե-

տին պառկեցուցին, իրենց համար զիւրին պիտի ըլլայ նոյնիսկ Երեւանն, իր հազարաւոր հայութեամբ, քալելով գրաւել: Իսկ մեր շրջակայ հայ գիւղերը, ի՞նչ ըսեմ, թող Աստուած պաշտպանէ:

— Ամէն ոչխար իր ոտքերէն կախած կը մորթեն, պատասխանեց Վարդ: Մէկ հատ հայ գիւղացի տեսա՞ք որ վար Ծահկերտ եւ գէնք դնէր: Մէկ հատ հայ մելիք տեսա՞ք որ զինուէր, միութեան քարոզ տար եւ քաջարի լեռնցիներէն բանակներ կազմէր. ձեւայիբ չէ, Ծահն ալ գերի կը բռնէինք:

— Աս՝ սա է, ըսաւ Վարդան: Առ այժմ Սերգոյին լուրերը թող չտարածուին. տէր Եղիշէն, Նազար աղան, Մկուշ, Աւոյ, Վրէժ գիտնան. խոյզութիւն եւ խուճապ կը պատահին: Աւոյ եւ Վրէժ հաշուի առեր են գիւղի գէնքերը, գէնքի կարող մարդիկը. պէտք է դեռ գէնք շինել, հազիւ 350 հրացան ունինք, մինչ կրնանք հինգէն վեցհարիւր զինեալ ճակատ հանել. չեմ հաշուեր ծերունի Սահակին ուսմբերը, որոնք հրաշք պիտի գործեն:

Վարդան եւ իր ընկերները ո՛չ քուն ունէին, ո՛չ հանգիստ, պէտք էին թաղէ թաղ, տունէ տուն շրջիլ, հրահանգներ տալ, ըսել ընտանիքներուն որ առատ ուտելիք պատրաստեն, թերեւս հարկ ըլլայ տարի մը բերդին վերայ, քարայրներու մէջ մնալ, պաշարուիլ այլազգիներէն: Զուրի պէտք չկար, Զանգեզուրի լեռներէն առուակներն երգելով վար կ'իջնէին: Մկուշ բերդին աշխատանքները արագ առաջ կը տանէր. Ծողիկ, Ծաքէ, Մարոյ եւ ուրիշ հարսեր՝ խոտերը քանդած, քարերը շարած, աւլած էին. բերդը նոր կեանք, նոր շունչ կ'առնէր: Ծահկերտի բերդն իր տարածութեամբ կրնար աւելի քան 3000 մարդ առնել. թէպէտ կիսովին կործանած, բայց ունէր բարձր պարիսպներ, աշտարակներ,

միայն լերան կողմէն մատչելի մուտք ունէր, առջեւն անդունդ էր, պաշտպանութեան պէտք չունէր:

Երբ երիտասարդ առաջնորդը թաղեր կամ փողոցներ կը շրջէր, ոմանք ծաղրելով գիւղին Մելիքը կը կոչէին. մասնաւորապէս հակառակ էին քանի մը զինագործ ընտանիքներ:

— Մեր շահու աղբիւրը կտրեց, ո՞վ կ'ըլլայ այդ երէկուան կոյրը, ինքզինքը բանի մը տեղ դրած է. գիւղը պիտի պաշտպանէ եղեր. մինչեւ հիմա դէ՞ ապրեցանք. այլազգի շուներ կու գան, քանի մը դահեկան, ոսկրի պէս, առջեւնին կը նետենք:

Այս խօսքերը կը լսուէին զանազան տուներու մէջ: Եղան զինագործներ՝ որոնք դադանի տարին իրենց շինածները եւ վարը այգիներուն մէջ պահեցին, ծածուկ վաճառելու համար. ասոնց մէջն էր նաեւ Երուանդին հայրը: Իր տղան լուր չունէր հօրը կատարած վատ ու վտանգաւոր գործէն:

— Ես միտք ունիմ, ըսաւ Վարդան, ծերունի Սահակին երթալ եւ շինած ուսմբերը բերդ փոխադրել. զինքն ալ կը խորհիմ բերդ տանիլ որ մէկ երկու փորձ ընէ եւ սորվեցնէ երիտասարդներուն՝ գործածութեան կերպը. բայց պէտք է մարդուն բան մը վճարենք: Օնիկ մեր զրամբ քու քովդ է, ի՞նչքան ունինք:

— Շուրջ 500 դահեկան, պատասխանեց Օնիկ:

— Ոչինչ գումար է, աւելցուց Յովիկ, կարելի էր քանի մը հազար դահեկան հաւաքել. առանց դրամի պատերազմ չ'ըլլար:

— Մեր ունեցածէն մաս մը վճարենք, ըսաւ Վարդ, հրացան շինողները հարիւրներ կը վաստակին, իսկ ինքը արհեստի սիրոյն համար կ'աշխատի. եւ սակայն կարծեմ թէ ուսմբերը մեր դժոխային կրակը պիտի ըլլան:

Ծերունի Սահակ լսեց երիտասարդներուն խօսքերը, քիչ թէ շատ տեղեակ էր լարուած կացութեան: Այլազգիներ գինքն ալ կողոպտած էին երբ Շահեր կը փոխուէին. գիտէր թէ տխուր անակնկալներ կը պատահէին:

— Շուրջ 150 հաս ուումը կայ այդ մութ անկիւնը, ըսաւ ծերունին, բոլորն ալ ձերն են, առէք, տարէք, ես դրամ չեմ ուզեր. գիւղի պաշտպանութիւնն իմ հողիս է:

— Ո՛չ, արոյ, պատասխանեց Վարդան, մենք ասոնց իրական գինը չենք կրնար վճարել, բայց 150 դահեկան պէտք է առնես, դուն ալ նեղ օրերու պատրաստութիւն պէտք է տեսնես. պառաւ կին ունիս, կարգը-ւելիք աղջիկ ունիս. մանչերդ կ'աշխատին կ'ապրին, բայց դուն ամէնէն աւելի օգտակար մարդն ես այս օրերուն համար:

Բռնի դրամը յանձնեցին եւ ուումբերը երկու ջորիներու վրայ բեռցուցին բերդ տանելու համար:

— Արոյ Սահակ, դուն ալ եկուր, մէկ երկու փորձ ընենք, ըսաւ Վարդան. տասը երիտասարդներ պիտի սահմանենք ոմրածիզ գունդ կազմելու համար: Աղջիկներն ալ կրնա՞ն, հարցուց Վարդան:

— Դիւրին բան է, պատասխանեց Սահակ, միայն խելք եւ արագութիւն պէտք է:

Բերդին մէջ տեղաւորեցին ուումբերը. Սահակ հաս մ'առաւ եւ բարձրացաւ դէպի անդունդ նայող պատուհան մը.

— Տեսէք, ըսաւ, սա պոչին կրակ կու տաք, պատրոյզն է, եւ անմիջապէս կը նետէք:

Առաջինն ինքը փորձեց, ուումբն այնպէս աղմկալից պայթեցաւ՝ որ մինչեւ գիւղը լսուեցաւ:

— Դուն ալ փորձէ, ըսաւ Վարդանին:

Առաջնորդն առաւ ծծումբէ լուցկին, վառեց եւ

կրակ տուաւ պատրոյզին ու նետեց շատ աւելի հեռուն. դարձեալ պայթիւն եւ գիւղին մէջ զարմանք առաջ եկաւ:

— Հիանալի գէնք է. լաւ որ այլազգիները գործածել չեն դիտեր, ըսաւ Երուանդ, ասիկա շատ օգտակար պիտի ըլլայ խուժանը սարսափեցնելու համար:

— Վարդան, ի՞նչ կ'ըլլայ, հաս մ'ալ մենք փորձենք, ըսին Շաքէ եւ Մարոյ:

— Փորձանք չբերէք:

— Չէ՛, չէ՛, ըսին երկուքն ալ:

Մարոյ աջ ձեռքին մէջ բռնեց, զարկաւ լուցկին եւ պոչին կրակ տուաւ ու նետեց դէպի վար. փորձն յաջող էր:

— Շատ զգուշութեամբ եւ խնամքով պահելու է, ըսաւ Սահակ. եթէ կ'ուզէք կրնամ դեռ ուրիշներ ալ շինել. մեղք որ մինակ եմ, ծեր եմ, եթէ մէկ երկու հուժկու ձեռքեր ըլլային, օրը չորս հինգ հաս կարելի էր լեցնել:

— Կու տանք քեզի, պատասխանեց Վարդան, չորս հոգի ալ կու տանք, միայն թէ շինէ:

Սահակին աշխատանոցն սկսաւ տեղադրին գործել. ուումբերը կը դիզուէին եւ Վարդան ուրախ էր:

Շահկերտ կամաց կամաց կողիացաւ քովի աշխարհէն. շահկերտցի գինեալ պահակներ կը շրջէին գիւղի վարի սահմանները: Այլազգի անհատներ կու դային գէնք գնելու, բայց վաճառող չկար. Վարդան հրահանգ տուած էր, եկողին պատասխանել թէ հրացանները իսնին համար կը շինուին:

— Ինչո՞ւ գինուած կը շրջիք Շահկերտի սահմանները, կը հարցնէին այլազգիներ. մենք բարեկամ եւ խաղաղ դրացիներ ենք, գէնքի ի՞նչ պէտք կայ:

— Այս ժամանակներս դողեր շատ կան, մեր այդ-
դիններն ու անասունները ապահով չեն, կը պատասխա-
նէին պահակները: Իսկ դուք ինչո՞ւ պոչ բռնած դէնք
դնելու կու գաք, կը հարցնէին այլազգիներուն. մենք
բարեկամ եւ խաղաղ գրացիներ ենք, դէնքի լի՞նչ պէտք
կայ:

— Նատիր շահին սպաննուելէն յետոյ, երկու տարի
անցան, կը պատասխանէին այլազգիները, դեռ նոր Շահ
մը չունեցանք. մեր խանը հրամայեց զինուել, թէ՛ մեր
քրիստոնեայ եւ թէ՛ իսլամ եղբայրները պաշտպանելու՝
իր սահմաններուն մէջ: Նախիջեւանի ձեւայի խանը
շատ կը սիրէ իր հպատակները, չ'ուզեր որ Դավրէժէն
կամ Պարսկաստանէն հրոսակներ գան եւ երկիրը կո-
ղտպեն:

Շահկերտի պահակներն անշուշտ չէին հաւատար
այս պարսկական սուտերուն, սակայն պէտք էր վարերն
իջնել եւ աւելի թարմ լուրեր ստանալ: Վարդանին հա-
ղորդեցին իրենց ստացած ցանցառ լուրերը: Առաջնոր-
դը կանչեց Սերգոն՝ պատուիրելով լրտեսական շրջան
մ'ալ ընել դէպի քաղաք եւ այլազգի գիւղերը:

Սերգոյ մեկնեցաւ լաւ ծպտուած, գլխուն վրայ աղ-
տոտ փաթթոց մը, քիթ բերանն ալ մրոտ էին: Ճամբան
հանդիպեցաւ թուրք գիւղացիներու եւ իսլամական եղ-
բայրութեամբ խօսելով, լսեց թէ այլազգի գիւղապետ-
ներ հրահանգ ստացեր են հարիւրական զինեալ մարզիկ
տալ խանին՝ քրիստոնեայ գիւղերը պաշարելու եւ ծանր
հարկեր առնելու համար: Պանին վերադարձը շատ մօտ
էր, օրերու խնդիր էր. ամէն նահանգի խան ինքզինքը
շահ հռչակեր էր, Նախիջեւանն ալ իր շահը պիտի ու-
նենար:

— Հաւատացեալ եղբայր, ըսին այլազգիները, կեա-

ւուր ջարդելու եւ կողոպտելու լաւ ժամանակ է, որչափ
կողոպտենք՝ այնքան ունին: Ալլահը մեզի հետ է, իր
բարիքներն ալ մերն են:

— Նայեցէք, եղբայրներ, պատասխանեց Սերգոյ,
Շահկերտի կեաւորները չլսեն, անոնք տարբեր մար-
դիկ են, դէնքէ չեն վախնար:

— Հող մի՛ ըներ, մժեղի պէս վրանին կը թափինք.
խանն ամէն բան պատրաստեր է, եթէ յանդգնին մեզի
դէմ ելլել, գիւղը մոխիր կը դարձնենք:

Սերգոյ անցաւ Նախիջեւան՝ հաստատ լուրեր հա-
ւաքելու համար: Բայց արդէն ասդին անդին փսփսուք-
ներ կը հասնէին Շահկերտի ականջին: Վարդանի երազն
էր Նախիջեւանի շուրջ հայ լեռնականներու շղթայ մը
կազմել, մէջն առնելով Շոռոթ, Քոնա, Շահապոնք գիւ-
ղերը: Բայց ո՞վ կարեւորութիւն պիտի տար երկտա-
սարդի մը, հազիւ 27 տարեկան, բացի Շահկերտէն,
որուն բնակիչներուն սիրտը դրաւած էր: Իր պատուի-
րակները պարապ դարձան այդ հայաբնակ գիւղերէն:

— Այլազգիներուն առջեւ ոսկոր մը ձգած՝ ապրած
ենք, այդպէս ալ կը շարունակենք, պատասխաներ էին:

— Այո՛, ոսկոր մը ձգած էք, թանկ ոսկոր մը, հետն
արցունք, ողբ եւ մահ տուած էք եւ վաղը, չէք գիտեր
թէ տակաւին ինչե՞ր պիտի տաք, ըսաւ Վարդան ինքն-
իրեն. գայլը մէկ ոչխարով չի գոհանար:

Սերգոյ շատ ուշացաւ իր ճամբորդութենէն. Վար-
դան մտահոգ էր. մի գուցէ բռնուած եւ սպաննուած էր,
կամ բռնի զինուորազրած էին զինքն ալ, կամ արկածի՞
մը հանդիպած էր:

Գրեթէ ամիս մ'անցած էր. գիշեր մը մէկը զարկաւ
Վարդանին դուռը եւ ցած ձայնով կանչեց.

— Վարդան, բաց դուռդ:

— Ո՞վ է այս կէս գիշերին, պատասխանեց առաջ-
նորդը:

— Սերգոն եմ, շուտ բաց:

Դուռը բացաւ եւ անճանաչելի Սերգոն ներս մտաւ:

— Ինչո՞ւ այսպէս կէս գիշերին կը հասնիս, հար-
ցուց Վարդան:

— Երեկոյեան մօտ ձգեցի Նախիջեւանը. խանին
հրամանով ամէն կողմ պահակներ դրուած են, քաղաքը
գրեթէ պաշարման մէջ է. մտնող ելլողը կը քննեն, հա-
զիւ կըրցայ համոզել թէ ես ալ եղբայր եմ, եւ գիւղս
կ'երթամ: Խանը շարաթէն աւելի է որ հասած է, հետը
հարաւէն վարձկան աւագակներ ալ բերած է, խոստա-
նալով հայ գիւղերու կողոպուտն իրենց տալ: Եուրջ
3000 զինեալ ունի, առանց հաշուելու այլազգի գիւղե-
րէն կազմուած զուռները: Ամէնուն բերանը Ծահկերանն
է, միակ հայ գիւղը որ կրնայ զէնք բարձրացնել:

— Որո՞չ յարձակումի միտք ունի՞ն:

— Ծատ որո՞չ է. սակայն եղանակը յառաջացած է,
աչնան վերջերն ենք, վաղը ձիւն կու գայ եւ ամէն ճամ-
բայ կը դոցէ. անշուշտ գալ տարուան պիտի սպասեն.
արդէն ձեւայիր պէտք ունի մեծ պատրաստութեան,
բազմաթիւ հայ գիւղեր, բերդեր կան, կրնայ զիմադրու-
թեան հանդիպել, պէտք է մէկիկ մէկիկ գրաւել: Միտք
ունի, ասիկա իր պալատէն լսեցի, Նոյեմբերին՝ իրենց
պայրամին օրը, ինքզինքը Հայաստանի Ծահ հռչակել:

— Անշուշտ պիտի ուզէ որ հայ գիւղերէն ալ մար-
դիկ երթան իր յայտարարութիւնը լսելու համար, պա-
տասխանեց Վարդան:

— Ծատ որո՞չ բան է. մենք ալ Նազար աղան կը զբը-
կենք, երկու խլլոտ գիւղացիներու հետ, լաւ կը հազ-
ուեցնենք, մէկ մէկ ջորի կու տանք, թող երթան:

— Վատահ որ ամէն գիւղ կամ քաղաք զինուոր պիտի
դրկէ՞ թմբուկներով ժողովուրդը հաւաքելու եւ իր թա-
գաւորութիւնն իմացնելու, ըսաւ Վարդան:

— Թող ընէ, թող հոս ալ գան, պատասխանեց Սեր-
գոյ, երեւոյթները միշտ պէտք է պահենք:

— Ուրեմն առջեւնիս դեռ քանի մը ամիս ունինք,
ըսաւ Վարդան. Հայաստանի ձիւնը դաշտեցիին սար-
սափն է: Մեր տուներու մէջ փակուած՝ զէնք կը պա-
տրաստենք: Պէտք է որ մարդ զրկենք, չըջակայ հայ,
թուրք գիւղերէն ցորեն հաւաքենք. մեր ունեցածը հա-
զիւ ձմեռը դուրս կը հանէ:

Հոկտեմբերի վերջերն էին, անտառներն արդէն
սկսեր էին գեղիննալ, սարուորները վար իջած էին. ա-
պահով ժամանակ էր, առանց կասկած տալու, զինուել
մինչեւ ակոսները:

Յաջորդ օրը, Վարդան կանչեց իր ընկերները, ներ-
կայ եղան նաեւ Աւոյ, Մկուչ, Վրէժ եւ Սերգոյ: Խըն-
դիրները քննեցին, ծեծեցին. առաջին հարցն էր ցորեն,
զարի, կորեկ հաւաքել:

— Դրամ պէտք է, պոռայ Յովիկ, առանց դրամի
պատերազմ չ'ըլլար. ունեւորը չունեւորին պէտք է տայ:

— Հինգ հոգինոց յանձնախումբ մը կազմենք, ըսաւ
Երուանդ, թող մէջն ըլլան Նազար աղան եւ տէր Եղի-
շէն. սիրով կամ բռնի քանի մը հազար դահեկան հաւա-
քենք. ասիկա լուրջ հարց է, մահուան եւ կեանքի խըն-
դիր է:

— Իրաւ որ հացի խնդիրը մտահոգիչ է, պատաս-
խանեց Օնիկ, եթէ վաղը միւս օր պաշարուինք, մենք
այս լեռներուն վրայ անօթի կը մնանք. հա'ց, հաց, հաց
եւ սպա զէնք:

Գացին տէր Եղիշէն առին ու Նազար աղային տունն

անցան: Մերունին նստած իր դրան առջեւ, թոռնիկին հետ կը գուարճանար. երեք տարեկան մանչուկ մը որ իր թոռնիկին տղան էր:

— Աստուած օգնական, Հայր սուրբ, ըսաւ ծերունին, ի՞նչ ունիք այս խումբով հոս գալու:

— Աստուած պահպան. Նազար աղա, պատասխանեց քահանան. նայէ, ի՞նչ լուրեր կը բերեն վարերէն. թէ ձեւայիր մեր շահը պիտի ըլլայ, հայ գիւղերը պիտի կողոպտէ, հազարաւոր զինեալներ պատրաստած է. թէ առաջին գոհը մենք պիտի ըլլանք: Աս քանի՞ քրորդ անգամն է որ մեզ կը կողոպտեն, դուն ըսէ. 92 տարեկան ես, շատ ցաւեր տեսած ես, տխուր պատմութիւն մը կայ ամբողջ կեանքիդ մէջ, միշտ վախ, կողոպուտ եւ ջարդ: Մենք պէտք է զիմադրենք եթէ մեր վրայ յարձակում ըլլայ. բայց զէնքի հետ հացի պէտք ունինք. հաց չունինք եթէ վաղը կռիւն սկսի, կամ պաշարուինք:

— Այո՛, Նազար աղա, աւելցուց Վարդան, ուտելիքն էական է յաղթանակի համար. մենք պէտք է ցորեն, դարի, կորեկ, ոսպ գնենք վարերէն, բայց դրամ չունինք: Մեր բոլոր զինագործները հարուստ են, գօտիներուն մէջ ոսկիներ կը պահեն, բայց չեն տար. պէտք է ամէն զնով դրամ հաւաքել, դուն անցիր տունէ տուն, տէր Եղիշէին հետ, քեզի երեք հոգի ալ կու տանք, ահա Օնիկը, Յովիկը եւ Երուանդը:

Չմեռ չմտած՝ մեր ամբարները պէտք է լիքն ըլլան. զէնքի մասին բաւական պաշար ունինք եւ դեռ կը շինենք:

— Ըսէ իրենց, աւելցուց Սերգոյ, այլազգիներէն ես ականջովս լսեցի, թէ կեաւուրներուն ուզած դրամը տրուէք եւ զէնք առէք, վաղն այդ դրամը նորէն մեզի կը դառնայ:

— Հա՛րս, կանչեց ծերունին դէպի ներս, ազջի Նունիկ, դաւազանս տուր: Դառնալով քահանային, երթա՛նք, ըսաւ:

Յանկով անունով Շահկերտէն հաւաքեցին քանի մը հազար դահեկան. ազահներուն անունն առանձին ցանկի մէջ առին. առիթը կու դայ ըսելով: Նազար աղան խիստ եղաւ բոլորին հետ, բայց մարդիկ կային՝ որոնց բերնէն միայն չուցիւ կը լսուէր: Նազար աղան շատ տեղ քաշեց դաւազանը, սպառնաց և ակոսներէն դրամ դուրս քաշեց:

Սայլերը մեկնեցան դէպի դաշտային գիւղերը, երբ տասնի չափ պարսիկ ձիաւոր զինուորներ սպայի մը հրամանին տակ, նիզակի մը ծայրը դրօշակ մը բռնած, որ պարսկական առիւծը չէր, Շահկերտ մտան. կանգ առին ժամին դիմաց: Հոն քանի մը պարապօրդ գիւղացիներ կային. սպան հրամայեց կանչել քահանան: Տէր Եղիշէի տունը եկեղեցիին կից էր, բայց քահանան Նազար աղայի քովն էր եւ հաշիւ կ'ընէր հաւաքած դրամները: Հետաքրքիրներ հաւաքուեցան, լուր տուին Վարդանին՝ որ իսկոյն հրապարակ փութաց քանի մը ընկերներով միասին: Տէր Եղիշէն ալ եկաւ:

— Ի՞նչ կը փափաքիս, հարցուց քահանան կէս պարսկերէնով:

— Կանչեցէք ձեր մարդիկը, վեհափառ Շահին հրամանը պիտի կարգամ:

— Դուք փող չունի՞ք, զարկէք ձեր փողը, թող հաւաքուին: Հոս մունետիկ չունինք, պատասխանեց տէր Եղիշէն:

— Թմբո՞ւկ ալ չունիք, ըսաւ սպան:

— Թմբուկը պարի առեն կը զարնենք ո՛չ թէ մարդ կանչելու համար, պատասխանեց քահանան:

— Զարկէք թմբուկ, եթէ ունիք տասը քսան թմբուկներ, ըսաւ սպան, ուրախութեան օր է մեզի եւ ձեզի համար:

Թմբկահար Մկոն ինկաւ փողոցէ փողոց. տուներէն, ախոռներէն, մարազներէն, զինարաններէն դուրս թափեցաւ ամբոխը, շատցաւ, ծովացաւ, սպան աչքերուն չհաւատաց թէ Շահկերտ այսքան մարդ ունի: Բացաւ ոլորուած թուղթ մը, ճակատին տարաւ, եւ բարձր ձայնով կարգաց, բայց պարսկերէն էր, ոչ ոք բան մը հասկցաւ:

— Ինչո՞ւ ծափ չեն զարներ, հարցուց սպան քահանային:

— Ի՞նչ գրուած է, պատասխանեց քահանան, մենք բան չհասկցանք: Սերգոյ, դարձաւ տէր Եղիշէ, եկուր սա մէջինը բացատրէ ժողովուրդին, դուն այս անհաւատներու լեզուն լաւ կը հասկնաս:

Սպան նորէն համբուրեց ոլորուած թուղթը, նորէն ճակտին տարաւ եւ հատիկ հատիկ սկսաւ կարդալ: Սերգոյ թարգմանեց գիւղին բարբառով:

— Ծափ զարկէք, պոռաց անդիէն Վարդան, մեր ձեւայիր խանը մեր գլխուն Շահ եղաւ, մեզի համար նոյնն է, ծափ զարկէք. Մկոյ, տուր թմբուկիդ ուժով հարուածներ:

— Հարցուր, ըսաւ տէր Եղիշէ, Սերգոյին, թէ այս ուրախութեան համար մեր վեհափառ Շահը ի՞նչ պարգեւ կու տայ մեր գիւղին:

— Պարզե՞ւ, զարմացաւ սպան, պարզեւր դուք պիտի տար նոր Շահին. ան ձեր կեանքն ու գիւղը կը պաշտպանէ աւազակներէն եւ ուրիշ Շահերէ:

— Շահին մեր հլու յարգանքները տարէք, ըսաւ

Վարդան. ինչպէս առաջ, այսպէս ալ հիմա իրեն պիտի ծառայենք եթէ մեզ հօր պէս խնամէ:

— Բարեգութ հայր է ձեւայիր, պատասխանեց ըսպան. եթէ տասն ուղէ՛ դուք հարիւր տուէք, այն ատեն ոչ ոք ձեր մագին կը դպչի:

— Այդպէս Շահեր շատ եկեր պացեր են, ըսաւ Վարդան, եւ մենք միշտ տուեր ենք: Շահին բարեւ ըրէք եւ ըսէք թէ Շահկերտ պատրաստ է իր հրամաններուն:

Սպան դրօշակը բարձր բռնած մեկնեցաւ գիւղէն: Վարդան իր մօտ կանչեց թմբկահար Մկոն եւ ըսաւ.

— Զա՛րկ թմբուկիդ որ լռեն եւ կենան, ըսելիք ունիմ:

Ելաւ ժամի սանդուղներուն վրայ եւ բարձրաձայն ըսաւ.

— Գիւղացիներ, երբ նոր Շահ մը գայ, միշտ անօթի է, ձեւայիր ինքզինքը Շահ անուաներ է. լսեցի՞ք սպային ըսածը, եթէ տասը կ'ուղէ՛ հարիւր տուէք, ուրեմն վաղը, միւս օր մեր կաշին ալ պիտի ուզեն. տա՞նք թէ չտանք:

— Չենք տար, պոռացին շատեր:

— Ոսկոր մը տանք՝ թող չքուի, կանչեցին ուրիշներ:

— Գայլը, լաւ գիտէք, ըսաւ Վարդան, մէկ ոչխարով չի գոհանար, երբ հօտին մէջ մտնէ՛. բոլորը կը խեղդէ: Կ'ուղէ՞ք որ ձեր ինչքերը, ձեր հարսերու եւ մայրերու պատիւներն առնեն տանին:

— Ո՛չ, ո՛չ, կը մեռնինք, թոյլ չենք տար, լսուեցաւ աւելի աղմկալից:

— Երիտասարդ, ըսաւ անդիէն բաւական տարեց մէկը, քեզ ո՞վ դրաւ այս գիւղին պետը, ինչո՞ւ ժողո՞

վուրդը կը խոսովես, կը դրդուես եւ արիւնի կը տանիս, ե՞րբ եկած են մեր ընտանեկան պատիւը դողնալու. քանի մը դահեկան, պատառ մը հաց ուզեր են, թող առնեն տանին, մենք արհեստով նորէն կը շահինք: Պարապորդ ընկերներով փողոցներն ինկած մարդ կը հաւաքես, խորհուրդներ կ'ընես, երիտասարդներուն գլուխները կը տաքցնես: Անոնք եթէ ուզեն՝ ձեզ ճանճի պէս կը ճզմեն իրենց ափին մէջ:

— Ինձ մտիկ ըրէ, Թանգեան Մովսէս, ըսաւ Նազար ազան, դուն զէնք կը շինես, դրամ ունիս՝ կաշառք կուտաս, կաշիք կ'ազատես, ըսենք թէ կ'ազատես, հազա այս բազմութիւնը՝ որ օրուան հացով կ'ապրի՝ քոնչ պիտի տայ, իր կոնա՞կը՝ որ խարազանի տակ առնեն: Ես 92 տարեկան եմ, շատ տեսեր եմ լաց ու կոծ, եկող Շահը մեզ կողոպտած է, հիմա անօթի մէկը կայ մեր քթին տակ աւուաները սրած է եւ վազը մեզ պիտի ուտէ, մեր հաւատին պիտի դպչի, մեր դիւզը պիտի աւերէ, ո՛չ հարիւրով պիտի կշտանայ, ո՛չ հազարով. թող զէնքի ձայն լսեն եւ պիտի տեսնես թէ ի՛նչպէս ծեծ կերած շան նման պոչերնին ոտքերնուն մէջ քաշած պիտի հեռանան:

— Ճիշտ է Նազար ազան, եթէ պէտք ըլլայ՝ զէնքով կը դիմադրենք: Վարդան մեր առաջնորդն է, պոռացին բազմութիւ ձայներ:

Իրարու հետ վիճելով, ամբոխը ցրուեցաւ: Երուանդին հայրը քարի պէս իր կարծիքին վրայ կեցած էր, ան իր հարստութիւնը կը խորհէր եւ հազիւ բռնութեամբ քանի մը դահեկան տուած էր ուտելիք գնելու համար: Երուանդ շատ տխուր էր որ հայրը չէր հասկնար կացութիւնը, ետսէր եւ ամբարտաւան էր. դրամն իր աչքերը կուրցուցած էր: Երիտասարդը կը վախնար թէ

Վարդանին մէկ բարկութեան կրնար հանդիպիլ՝ եթէ ժամանակները պահանջէին խիստ միջոցներու դիմել:

Սայլերը վերադարձան, բաւական ցորեն, դարի, կորեկ եւ ոսպ գնած էին, սակայն Վարդանին հաշիւով դեռ պէտք էր. չէին գիտեր թէ նոր հունձքին պիտի հասնէի՞ն. ձմեռը վտանգ չունէր, բայց դարունը կըրնար կոխուիլ բացուել. եւ ճիշտ այդպէս ալ եղաւ:

Ճեւայիր ինքն ալ խորհած էր թէ իր ծանր պահանջները, տուրքերը կրնան լուրջ դիմադրութեան հանդիպիլ՝ խրոխտ հայ լեռնականներէն, ուստի պատրաստութիւն պէտք էր՝ բազուկով զսպելու եթէ հարկ ըլլար:

1750 թուականին, Յուսիսի սկիզբները, տասնի չափ հարկապահանջներ, 50 զինուորներով Շահկերտ հասան:

— Ճեւայիր Շահին հրամանն է, ըսաւ անոնց զըլխաւորը, ձեր ամբողջ զէնքերը կը յանձնէք մեզի, ոչ իսկ դանակ մը պիտի մնայ. ձեր ունեցածին երեք քառորդը պիտի տաք, դրամ ուտելիք, իւղ, կարագ, պանիր, անասուն. չտուողին կաշին կը քերթենք: Ձեր երիտասարդ հարսերէն, աղջիկներէն պիտի տաք որ խանի պալատին մէջ ծառայութիւն ընեն, ձեր մայրերը կը լացնենք եթէ չհնազանդիք:

— Լմնցա՞ր, պատասխանեց Վարդան:

— Ո՛չ, Շահկերտի մէջ զինուորական պահականոց մ'ալ պիտի հաստատուի որ հսկէ ձեր վրան:

— Ուսկից եկար՝ անկից վերադարձիր, պատասխանեց Վարդան. քու Շահիդ ո՛չ երկաթի կտոր մը կուտանք, ոչ ալ հաւի ոտք մը:

— Ո՞վ է այս խոզը որ Շահին հրամանին դէմ կը խօսի, ըսաւ զըլխաւորը խարազանը բարձրացնելով. հիմա կաշիք կը քերթեմ:

— Այս կոնակը խարազան չէ տեսած, ետ տար՝ եթէ չես ուզեր շան սատակ ըլլալ:

Այդ պահուն մէկը գլխաւորին ետեւէն խլեց խարազանը, Յովիկն էր:

— Պաշարե՞նք, հարցոց Վարդանին:

— Ո՞վ յանդգնեցաւ խարազանս առնել, ըսաւ գլխաւորը ետ դառնալով:

— Խարազանդ ձեռքէդ խլող շատեր կան, ըսաւ Վարդան, մենք խարազանով էշերը կը քշենք, դուն սըխալեր ես. դնա՛ Ծահլիզ էշերը քշէ. հոս մարդիկ կան, ո՛չ ձեզի պէս անասուններ:

— Շրջապատեցէք զիւզը, հրամայեց գլխաւորն իր զինուորներուն, մենք տունէ տուն կը շրջինք եւ բռնի կ'առնենք մեր ուզածէն աւելի:

— Գնա՛, ըսաւ Վարդան մանչուկի մը, դնա՛ Յովիկին եւ Երուանդին ըսէ որ կամաց կամաց օղակը նեղցնեն, փողոցները բռնեն: Դառնալով հարկապահանջին, ըսաւ. տեղէդ մի՛ շարժիր, արդէն շրջապատուած ես: Գացէք տուներնիդ, հրամայեց Վարդան զիւզացիներուն, ասոնց հաշիւը մենք կը տեսնենք:

Քիչ վերջ հրացանակիր երիտասարդներ պաշարեցին հարկապահանջներն ու զինուորները:

— Մէկը չունի՞ք, ըսաւ անոնց գլխաւորը, տարեց, խոհեմ մէկը, որ խօսք հասկնայ, խելք բանեցնէ, Ծահլին դէմ երթալ՝ Ալլահին դէմ երթալ է: Չեմ ուզեր որ հազարներով ձեր վրան դայ, այս գեղեցիկ զիւզը մոխիր դարձնէ, դուք իրեն հաւատարիմ հպատակներն էք, իր գաւազները:

— Ուսկից որ եկար, անկից վերադարձիր, պատասխանեց Վարդան կտրուկ կերպով, մենք ձեւայիբի պէս հայրերու պէտք չունինք: Դառնալով զինեալ երիտա-

սարդներուն, հրամայեց. Բացէք շղթան, թող չըուին, երթան:

Հարկապահանջներն առջեւէն, զինուորներն ետեւէն դուրս ելան զիւզէն. երբ անցան շղթան, անոնց գլխաւորն ետ դարձաւ եւ պոռաց.

— Կը տեսնուինք, կը տեսնուինք, ձեր մայրերը պիտի լացնենք:

Ոչ ոք պատասխան տուաւ, բայց զիւզն եռուզեօի մէջ մտաւ. սկսան կիներ, պառաւներ լալ եւ վայ կանչել. ոմանք Վարդանն սկսան անիծել, ուրիշներ սպառնալից զիրք բռնեցին պարսիկներու դէմ:

Երբ Մարոյ, Շաքէ, Շողիկ փողոցներէն կ'անցնէին, պառաւներն անէծքով կ'ըսէին.

— Այս երեսրացերն ալ այդ Վարդանին հետն էին:

— Մարէ, կը պատասխանէին անոնք, ուրախ պիտի ըլլա՞ս, որ մեզ՝ նոր հարսերս տանին խանին պալատը փակեն. չլսեցի՞ր ինչ ըսաւ:

— Ես հոն չէի, է՞նչ ըսաւ:

— Ըսաւ թէ ձեր աղջիկներն ու հարսերը պիտի տաք Խանին ծառայութեան համար:

— Թո՛ւ, շուն երես, պատասխանեց պառաւը. մեռնինք չենք տար:

— Ուրեմն, Վարդանն ալ պատասխանեց անոնց, թէ մեռնինք չենք տար:

— Ապրի՛ս տղաս, ըսաւ պառաւը, հարազատ մօր կաթ խմեր է. Աստուած լաւ ըրաւ աչքերը բացաւ:

Վարդան խորհուրդի կանչեց իր ընկերները. հոն էին տէր Հայրը, Նազար աղան, Աւոյ, Մկուչ, Վրէժ, Սերգոյ եւ քանի մը յարգ ունեցող մարդիկ: Որոշում առին նախ անասունները սար տանիլ:

— Ոչ իսկ կատու մը, չուն մը դիւղ մնան, ըսաւ տէր Եղիշէն, պէտք է մինչեւ վերին սարերը բարձրանան. եթէ հարկ ըլլայ, Շոռօթի վանքի կողմերն անցնին:

— Ամէն տուն իր ունեցած չունեցածը պէտք է բերդ փոխադրէ, դռները բաց, տուները պարապ պէտք է մընան, որ թշնամին ապրուստ չգտնէ. բերդին մէջ, ըսաւ Վարդան, ամէն բան պատրաստ է, երեք հազարէն աւելի մարդու տեղ կայ, փառք Աստուծոյ, մեր հայրերը բերդ չէ, քաղաք մը շիներ են:

— Բայց կարծեմ, վրայ բերաւ Վարդ, նախ մեր զինուորական ոյժը պէտք է կազմակերպենք, համբերենք, զէնք չունեցողին զէնք տանք, ջոկատներու բաժնենք:

— Նախ ժողովուրդը տեղաւորենք, Վարդ, ըսաւ Յովիկ, ատիկա կ'ընենք երբ զիւղը պարապ է, ընտանիքներն ապահով են:

— Ես ալ այդպէս կը խորհիմ, պատասխանեց Մըկուչ, ապա թէ ոչ խառնակութիւն կ'եւլէ, եւ թշնամին կրնայ վրայ հասնիլ:

— Տէր Հայր, ըսաւ Վարդան, վաղը կիրակի է, ժամին մէջ հաւատացեալներուն կ'ըսես որ շուտով բերդ ելլեն, ամէն բան տանին: Եկեղեցիին սուրբ սպասներն ի՞նչ պիտի ընես:

— Մաս մ'արդէն ժամին ետեւը թաղեր եմ, զանգակը հետս բերդ պիտի տանիմ, պատասխանեց քահանան:

— Ձէ, Տէր Հայր, սուրբ սպասները հետդ տար, թէ՛ կ'աղօթենք եւ թէ՛ կը կոռւինք, ըսաւ Նազար աղան:

Կիրակի առաւօտեան ժամին զանգակը հատկեալ ձայնով հնչեց եւ կարծես թէ լացաւ, բազմութիւնը թա-

փեցաւ եկեղեցի. տէր Հայրը սրտառուչ խօսեցաւ, քաջաբերեց եւ ըսաւ.

— Յոյս դրէք Աստուծոյ վրայ. եթէ մեռնինք՝ մեր սուրբ պատիւն ու կրօնքը պահած կ'ըլլանք, եթէ յաղթենք, այլեւս այդ շունները մեր երեսը չեն տեսներ:

Ապա դէպի խորան դարձած, բարձրաձայն երգեց.

— Ազատութիւն եղբարց մերոց...:

— Ամէն. թնդաց եկեղեցին:

Մինչեւ որ ժողովուրդը բերդ ելաւ, երեք չորս օր տեւեց: Մըջիւնի ճամբայ եղած էր զիւղէն դէպի բերդ. չալակով, էշերով կրեցին իրենց ստացուածքները եւ զիւղն ամալացաւ, քանի մը կատուներ մնացին պատերուն տակ: Մկուչ, Աւոյ եւ Վրէժ, ժողովուրդը տեղաւորելու զբաղեցան: Հարկ եղաւ որ Սերգոյ անգամ մը եւս ծպտուած վարերն երթայ՝ Նախիջեւանի շարժումներն ուսումնասիրելու համար:

— Գիւղն այսպէս ամայի, անպաշտպան պիտի ձրգենք, հարցուց զիւղացի մը Վարդանին, մեր տուներուն կրակ կու տան, մոխիր կը դարձնեն:

— Պիտի պաշտպանենք որքան կրնանք, մեր զիմացրութիւնը բերդին մէջ պիտի ըլլայ, պատասխանեց առաջնորդը:

Տէր Եղիշէ, զարմանալի եռանդով կ'եւլէր ու կ'իջնէր եկեղեցին փոխադրելու համար. զանգակը իշուկի մը շալակը դբաւ եւ տարաւ կախեց բերդին այն պատուհաններէն մէկը՝ որ դէպի դիւղ կը նայի. ուժով հարուած մը տուաւ, զանգակը հնչեց.

— Լաւ է, հաստատուն է, ըսաւ եւ վար իջաւ:

Գիւղացիները կը կարծէին թէ ձեւայիւր կրակ կը տրած հազարներով վրանին պիտի դար. բայց բաւական ժամանակ անցաւ եւ մարդ չտեսնուեցաւ. զիւղացիներէն

ոմանք, ինչպէս զինագործ Մովսէսը, սուտ բան է ըսելով՝ ուղեցին տուն դառնալ, բայց Վարդան թոյլ չտրուաւ:

Թմբուկի հարուածներով զինեալ երիտասարդները հաւաքուեցան ժամին հրապարակը. պէտք էին հրացան, ատրճանակ եւ դաշոյն ունենալ: Վարդան զիրենք 50ական ջոկատներու բաժնեց, համրեց եւ 550 մարտիկներ դտաւ, կային նոյնիսկ տարեց մարդիկը, Սահակ ծերունին ալ կարգի էր, ձեռքին մէջ ուռմբ մը բռնած:

— Սիրելի եղբայրներ, ըսաւ Վարդան, շուտով թշնամին մեր վրայ պիտի դայ, մենք պատերազմ ընտարեցինք, քան թէ ցած ստրկութիւն. ձեզի կը նային մեր պատմութիւնը, մեր հերոսները, մեր եկեղեցիները. կռուինք կողք կողքի, Աստուած մեր կողմն է:

Յովիկի առաջնորդութեամբ առաջին ջոկատը վարի այգիները կը բռնէ, թշնամին դանդաղեցնելու համար: Երկու ջոկատներ գիւղը կը բռնեն որսորդ Աւոյի հետ: 50 հոգի Երուանդին հետ բերդին աջ կողմը կ'անցնին. 50 հոգի ձախ կողմը անտառներու մէջ պահուրտած, իրենց հետ պիտի ըլլան Վարդ եւ Մկուչ: Մնացած 300 հոգին իմ հետս բերդը պիտի բռնենք: Մերունի Սահակը պիտի ունենայ 25 հոգի, ուռմբ տեղալու համար, երբ բերդը պաշարուի: Եթէ հարկ ըլլայ՝ բերդի պաշտպանութեան աղջիկներ եւ հարսեր ալ պիտի օգնեն:

Մի՛ խորհիք զիւրի մասին, եթէ այրեն՝ աւելի դեղեցիկը կը շինենք. մենք շինելէն չենք յուսահատած: Խիստ եղէք, մանաւանդ եթէ դաւաճաններ բռնէք:

— Մկոյ, թմբուկը զարկ, թող կարգաւ մեկնին իրենց տեղերը, հրամայեց Վարդան:

— Ուռու՛, պոռացին զինեալները:

Զինուորականները զիչեր ցերեկ իրենց տեղերէն պէտք չէին բաժնուիլ, աղջիկներ եւ մանուկներ, բերդէն կը տանէին անոնց կերակուրները. ամէն բան առատ էր, այժմ թոյլերն ալ խանդավառուած էին: Օր մը խումբ մը մանչուկներ ներկայացան Վարդանին եւ զինուորական բարեւ տալով ըսին.

— Առաջնորդ, մեզի է՞նչ պաշտօն պիտի տաս:

— Բերդին մէջ ձեր մայրերուն քով մնալ:

— Ո՛չ, մենք ալ կռուիլ կ'ուզենք, մեզի զէնք տուր, ըսին միասին:

— Ձեզի լաւ պաշտօն մը պիտի տամ. դուք սուրհանդակ պիտի ըլլաք:

Տղաք իրարու երես նայեցան.

— Ի՞նչ պաշտօն է սուրհանդակը:

— Զոկատէ ջոկատ, բանակէ բանակ լուրեր հաղորդել, պատասխանեց Վարդան, վաղել զիտէ՞ք:

— Այո՛, նապաստակի պէս:

— Լեռ ելլել, ծառերու վրայ բարձրանալ զիտէ՞ք:

— Այո՛, սկիւռի պէս, պատասխանեցին նպատանիները:

— Գացէք անմիջապէս վարի այգիները, հոն Մանասենց Յովիկը կայ, հարցուցէք թէ նորութիւններ ունի՞ք:

Պատանիներն ուրախութեամբ վաղեցին զիւրէն վար. այգիները բաւական հեռու էին, մինչև Արաքսի ափերը կը փոռէին: Կէս ճամբուն վրայ երկու պահակներ զիրենք կեցուցին:

— Ո՞ւր կ'երթաք, հարցուցին:

— Մանասենց Յովիկին կ'երթանք, առաջնորդը զրկեց. մենք սուրհանդակներ ենք, լուր պիտի տանինք զիւրը, պատասխանեցին տղաները:

Վարը կամուրջին մօտերը պիտի ըլլայ, ուշադիր ե-

դէք, այլազգիներու չհանդիպիք, յանձնարարեցին պահակները :

— Այլազգիներ ի՞նչ գործ ունին մեր սահմաններուն մէջ, պատասխանեցին պատանիները :

Յովիկ մասնաւոր լուր չունէր տալիք, ճամբաները խաղաղ էին, քաղաքէն եկող դացող դերթէ չկար: Երբ պատանիները դիւզ դարձան եւ լուր տուին թէ նորութիւն չկայ վարերը, Վարդան գիրենք կանչեց եւ ըսաւ .

— Հիմա ես Յովիկին լուր պիտի զրկեմ . ձեր մէջ ո՞վ է ամէնէն մեծը :

— Հոս, Արան է :

— Դուն այս հինգ տղաներուն զօրավարն ես . կ'երթաք հետերնիդ մէկ կացին կ'առնէք եւ դարձեալ այգիները կ'իջնէք, Յովիկին կ'ըսէք որ դէպի դիւզ եկող ճամբաներուն, 200 մղոն հեռաւորութեամբ՝ մեծ ծառեր կտրեն եւ գոցեն անցքերը: Ե՛րևա, վաղեցէք:

Վարդան անհամբեր Սերգոյի դարձին կը սպասէր, սիրտը հանդարտ չէր, վտանգները շատ էին . վա՛յ եթէ անդրադառնային հայ լրտես ըլլալը, մահ էր: Բայց Սերգոյ ճարպիկ էր, գոյն եւ լեզու փոխելուն մէջ . այնպէս լաւ թրքերէն կը խօսէր, որ չեխերն ալ իրեն չէին հասնիր: Խանին մարդիկը Սերգոյին ալ հրացան տուեր էին իրենց հետ Ծահկերտի վրայ քալելու համար . ըստիպուեր էր մնալ քաղաքին մէջ եւ հազիւ գիշեր մը, հրացանն ուսը կրցեր էր փախուստ տալ:

— Երեք հազարէն աւելի մարդիկ գինած է ձեռայիր, Ծահկերտի վրայ յարձակելու համար, հաղորդեց Վարդանին: Ուրբաթ իրենց աղօթքը պիտի ընեն, եւ չեխերը անէճք պիտի կարգան մեր դիւզին վրայ, եւ յաջորդ օրը ճամբայ պիտի ելլեն, ըսաւ Սերգոյ: Մենք կարծեմ պիտի ստիպուինք բոլորս բերզը քաշուիլ:

— Այո՛, պատասխանեց Վարդան, մեր դիմադրական կեդրոնը բերզն է, սակայն պէտք է աշխատինք, առանց ծանր կորուստի, դանդաղեցնել իրենց առաջ գալը:

— Կատղած վիճակ մ'ունին, շարունակեց Սերգոյ, սուրբերով, գերանդիներով, կացիներով գինուած մարդիկ տեսայ . բոլորին բերանն էր կեաւուրներ մորթել եւ կողոպտել:

— Ուրեմն վաղն Ուրբաթ է եւ Շաբաթ ճամբայ կ'ելլեն, շատ լաւ . պատրաստ ենք զիրենք կրակով հիւրասիրել, ըսաւ Վարդան: Դուն յողնած պիտի ըլլաս, բերդ ելիր եւ հսկէ որ ժողովուրդը տեղաւորուած ըլլայ . կըռիւ, խառնակութիւն չտիրէ: Գիտե՞ս ինչ խորհեր եմ, կռիւի ժամանակ զուռնայ թմբուկ զարնել տալ, երգել եւ ուրախ կանչերով կոռելի:

— Խանդավառութիւնը զեղեցիկ գործեր կը կատարէ, առանց խանդի մարդս մեռած է, լաւ խորհեր ես, պատասխանեց Սերգոյ:

Վարդան գիւզէն 50 գինեալ առնելով՝ իջաւ ինքն ալ դէպի այգիները: Տեսաւ որ Յովիկին խումբը մեծ մեծ ծառերով գոցած էր ճամբաները . այգիներէն անցաւ մինչեւ կամուրջի մօտերը: Հեռուէն տեսնուեցաւ հրակայ սիւն մը մարդերու, առջեւը ձիաւորներ, ապա կառքեր, սպիտակ փաթթոցներու անտառ մը որ կը շարժէր կապոյտ թիկնոցներու վրայ: Բռնեցին կամուրջը եւ իւրար հրելով անցան . սիւնը կը բարակնար եւ կ'երկարէր եւ ապա օձի պէս կը դառնար Ծահկերտ տանող ճանապարհին հետեւելով: Երբ մօտեցան հայ պահակներուն, Վարդան հրամայեց կրակել . առջեւիններէն ինկան, ձիաւոր մը գետին տապալեցաւ, զօրասիւնը կեցաւ, լսուեցաւ խուլ աղմուկ մը:

— Ալլա՛հ, Ալլա՛հ :

Առաջին խրամատը բաւական կեցուց զիրենք. հայ զնդակներն անդադար կը տեղային, զնդակի խնայողութեան պէտք չկար, վերը բերդին մէջ զնդակ եւ հրացան կը շինէին, Սահակ ծերունին ուսմբեր կը պատրաստէր :

— Կրակելով կամաց կամաց ետ քաշուինք, հրամայեց Վարդան. կրնան անտառներէն դալով մեզ շըրջապատել :

Յանկարծ իր մօտ տեսաւ պատանիները, որոնք քաղեր, ցախեր կը դիզէին ճամբաներուն վրայ :

— Տղաք, հոս ի՞նչ կ'ընէք, պոռաց Վարդան, է՛տ քաշուեցէք :

Թշնամի փամփուշտ մը սուրաց եւ ինկաւ Արային առջեւը. պատանին անցաւ թուփերուն ետեւը :

— Կրնա՞ս սա ծառին վրայ մազլցել, հարցուց Վարդան Արային :

— Այո՛, անմիջապէս :

— Նայէ, մարմինդ ծառին ետեւ պահէ որ զնդակ չհասնի. ի՞նչ կը տեսնես հեռուն :

— Ձիւտորներ՝ որ արագօրէն առաջ կու գան :

— Ուրի՞շ :

— Անոնց ետեւէն մէկը կու գայ, ճերմակ ձիւտ մը վրայ, խարազանը ձեռքը՝ ասդին անդին կը հարուածէ :

— Մեր Ծահը պիտի ըլլայ, ըսաւ Վարդան. վար իջիր, կրնան քեզ տեսնել եւ սպաննել :

— Առաջնորդ, մեզի շատ մօտեցան, կրակեցէք, պոռաց պատանին :

— Ձախ կողմդ նայէ, հրահանգեց Վարդան :

— Ճերմակ դլուխներ դէպի բլուրը կը բարձրանան, ծառերուն տակն են :

— Մերինները կը տեսնե՞ս :

— Ո՛չ, թուփերու ետեւէն զնդակի հարուածներ կը լսուին :

— Վար իջիր, կը բաւէ :

Արա սահեցաւ ծառէն վար եւ Վարդանի ետեւն անցաւ : Հայ զինեալները կրակելով ետ ետ քաշուեցան : Դիմացէն կարկուտի պէս փամփուշտները կը տեղային. հայ զինեալ մը մահացու վիրաւորուեցաւ. Արա վազեց երկու ընկերներով, վերցուց եւ դէպի գիւղ վազեց :

— Սամիկ, ըսաւ ընկերոջը, հրացանը վերցուր, հետդ առ :

Հազիւ գիւղին մօտեցեր էին, վիրաւորը հողին աւանդեց. բայց անոնք մարմինը չլքեցին, քաշելով տարին գիւղ եւ առաջին տան մէջ դրին :

Հեռուէն կը լսուէր թմրուկի խուլ ձայն մը եւ ապա ծովացած աղմուկ մը :

— Ալլա՛հ, Ալլա՛հ :

— Արդեօք նահանջի աղմո՞ւկ է, խորհեցաւ Վարդան :

Թշնամի զնդակները քիչ մը դադրեցան :

— Ձեզմէ մէկը, կանչեց պղտիկները որ քովէն չէին բաժնուիր, պէտք է այս արահետէն դէպի անտառ երթայ, Յովիկէն լուր բերելու, մեզմէ կտրուած են :

— Ե՛ս, ե՛ս, պոռացին քանի մը մանուկ ձայներ :

— Դուն վազէ, ըսաւ մանչուկի մը որ բաւական հասակ ունէր : Անունդ ի՞նչ է :

— Գէորդ է, հրամանատար :

— Նայէ, թուփերուն ետեւ ծածկուած երթաս. եթէ թշնամի տեսնես, դէպի վեր զարկ. չըռնուիս, քեզ կը մորթեն :

Պատանին ազուէսի պէս թաքնուած՝ թուփերուն ե-

տեւէն, փորին վրայ սողալով առջ զնայ: Կէս ժամ չանցած պարսկերէն խօսակցութիւն լսեց. շեղեցաւ դէպի վեր, բայց խումբ մը մարդիկ մազլցելով վեր կը բարձրանային, տեսան զինքն, ետեւէն ինկան. պատանին նապաստակի պէս խոյս տուաւ եւ իր սեւ բախտէն՝ ինկաւ պարսիկի մը գերկը:

— Հոս ի՞նչ կ'ընես, հարցուցին:

— Հայրս կը փնտռեմ, այգի եկած էր եւ տուն չգարձաւ:

— Կեաւոր օղլու կեաւոր, սուտ կը խօսիս, դուն լրտես եկած ես:

— Շահին տարէք, պոռացին քովինները:

Հուժկու պարսիկը քաշքշելով պատանին մայր ճամբան հանեց: Շահին կառքը բաւական առջ եկած էր: Պարսիկը խոնարհեցաւ անոր առջեւն ու տղան ցոյց տալով ըսաւ.

— Այս լրտես կեաւորը բռնեցինք, դատաստանը դուն տես:

— Ո՞ւրտեղացի ես, հարցուց ձեւայիր:

— Շահկերացի եմ. հայրս փնտռելու եկած եմ, այգի գի զնայ ա՛լ չվերադարձաւ:

— Սուտ մի՛ խօսիր, լեզուդ կը կտրեմ, պատասխանեց խանը: Ըսէ ինձ, զիւզին մէջ շատ զինեալներ կա՞ն:

— Չեմ գիտեր:

— Կը ճանչնա՞ս Վարդան անունով մէկը:

— Գիւզին մէջ Վարդան անունով շատեր կան:

— Չէ, այն սրիկան որ մեր հարկապահանջները վռնտած է, ձեր զլխաւորն է:

— Չեմ ճանչնար:

— Զարկէք ասոր քթին բերնին եւ շիտակ պիտի խօսի, հրամայեց խանը:

Տղուն քիթ բերանն արիւնեցին, բայց ան ճիւղ մը չհանեց եւ հպարտ կեցուածք մ'առաւ:

— Հիմա խօսէ՛. քանի՞ զինեալներ կան:

Տղան լուռ կեցաւ:

— Չխօսի՞ս, պոռաց խանը:

— Վիրաւոր բերնով ի՞նչպէս խօսիմ, պատասխանեց Գէորդ:

— Հոգիդ ալ հանեմ, պիտի խօսիս:

Ոչ մէկ հարցումի պատասխան տուաւ. լուռ էր քարի պէս. խանն աւելի կատղեցաւ:

— Քանի մը խարազան քաշեցէք եւ ասոր կաշին քերթեցէք, հրամայեց քովիններուն:

Գէորդի վարդի պէս կարմիր արիւնը թափեցաւ, իր տարատն ու շապիկը ներկեց, կտոր կտոր միսեր ինկան, բայց ան արցունք մը չհանեց:

— Ի՞նչ ցեղ է, ըսաւ խանը, դարձացած. բայց ես պիտի խօսեցնեմ: Նայէ, տղաս, եթէ ինձի ըսես թէ ո՞ւր է ձեր Վարդանը, քանի՞ զինեալ ունի, քեզ իմ զաւակս կ'ընեմ, կը հարստացնեմ եւ մեծ մարդ կ'ըլլաս իմ իշխանութեանս տակ:

— Ես տաճիկի զաւակ չեմ ըլլար, պատասխանեց Գէորդ, հազիւ լսելի ձայնով:

— Ուրեմն մեռնի՞ր կ'ընտրես:

— Պատրաստ եմ, պատասխանեց տղան, բայց իմ վրէժս վերինները պիտի առնեն:

— Կախեցէ՛ք այդ ծառէն այս շան որդին, հրամայեց խանը:

Շեխ մը քակեց իր մէջքի դօտին եւ ամուր պրկեց պատանիին վիզը: Գէորդ ցած ձայնով Մամէ՛, մամէ՛,

կանչեց. ապա հոնդիւն մը լսուեցաւ եւ հազիւ բերնէն ելաւ .

— Յիսուս, Աստուած իմ . . . :

— Թող կախուած մնայ, հրամայեց Շահը, մենք առաջ երթանք կեաւուրներ ջարդելու :

Կանաչ ծառերուն մէջ վարդազոյն մարմինը կրօնքի եւ հայրենիքի նուիրուած գեղեցիկ փունջ մ'էր, հովը կը տատանէր եւ վարդան մտահոգ էր Գէորգին համար, բայց ան չեկաւ եւ չեկաւ :

— Վարդան, ըսաւ Արա, Գէորգը չեկաւ, երթանք փնտռելու :

— Ո՛չ, վտանգաւոր է, վարերը թշնամիներով լեցուեր են. դուք ետ դացէք, մենք կրակելով գիւղ կը դառնանք :

Քանի մ'օր տեւեց մինչեւ որ թշնամի բանակը գիւղին մօտեցաւ : Յովիկ կողմնակի կրակելով արդէն բերդին մօտերն հասած էր : Խեղճ Գէորգ ինչ դիտնար, զրեւնք անտառին խորերը կը փնտռէր :

Երբ խանը Շահկերտ մտաւ, կարծեց թէ յաղթանակ տարած էր. զիւղն ամայի էր, դռները բաց, հազիւ քանի մը կատուներ կային պատերուն տակ :

— Ո՞ւր են ասոնց զինեալները, ստուե՞ր են, ոգի-նե՞ր են, հարցուց խանը :

— Բերդն ու սարերը քաշուեր են, վեհափառ, պատասխանեց բարձրատիճան զինուորական մը :

— Բերդէն ալ վար կը բերենք կիներով տղաքներով, պատասխանեց խանը : Սպասենք, մեր ամբողջ ոյժն հասնի : Խորտակեցէք ասոնց աղօթատեղիին դռները, այս գիշեր ես հոն պիտի պառկիմ :

Կացիներով ջարդեցին ժամին դռները, մէջը պարսպ դտան, միայն առաստաղին վրայ նկարուած Յի-

սուսի պատկերը կար, որ խիստ աչքերով՝ կարծես թէ խանին կը նայէր :

— Քաշեցէ՛ք քանի մը գնդակ եւ այդ աչքերը կուրցուցէք, ես կը վախնամ այդ նայուածքէն, հրամայեց խանը :

Մինչ Շահկերտ պարսիկ բանակով կը լեցուէր, վարդան իր պատերազմիկներով բերդին մէջ ամբայած էր : Անոր ձախ եւ աջ կողմերը բռնած էին 100ական զինեալներ, թոյլ չտալու որ բերդին վերեւը բարձրանան :

Երեք օր յետոյ ձեւայիբ գրոհ տուաւ բերդին վրայ. պատուհաններէն Սահակ ծերունին, քանի մը զինեալներու հետ, սկսաւ ուռմբ տեղալ եւ խոշոր բացեր ձեւացնել թշնամի խիտ շարքերուն մէջ : Հրացան վարէն, հրացան վերէն զիրար կը խաչաձեւէին :

— Զանգակն ուժով հնչեցուր, հրամայեց տէր Եղիշէն ժամկոչին : Աղմուկի մէջէն զանդին զիւ ձայնը կը լսուէր, պառաւներ կ'աղօթէին. աղջիկ, հարս գնդակ կը հասցնէին պատերազմիկներուն :

Այդ առաջին յարձակումին, խանը գրեթէ 500 հոգի կորսնցուց, մանաւանդ բերդի անդունդներուն մէջ, ուր ուռմբերը կ'իյնային ու մահ կը սփռէին :

— Երջպատեցէք ամբողջ բերդը, վերի կողմէն ներս խուժելու, հրամայեց ձեւայիբ :

Բայց բերդի կողերէն հայ գնդակներ թոյլ չէին տար վեր բարձրանալ. լեռնային կարկուտի պէս էին, սուր եւ շաշող :

— Ի՞նչպէս ամբայցեր են կեաւուրները եւ մենք լուր չունէինք, ըսաւ քովիններուն :

— Մեծապատիւ Շահ, պատասխանեց զօրապետը, վաղն ասոնց բոյնը կը քանդենք, շատ մարդ կորսնցուցինք, ետ քաշուինք :

Փողերու տխուր ձայներ հնչեցին բերդին ստորոտը, պարսիկ բանակն ետ քաշուեցաւ: Վերինները շունչ առին, բայց դիրքերը չլքեցին:

— Փախա՞ն, փախա՞ն, պոռացին Արայի ընկերներն ու աղջիկները:

Գիշերը խոր լուսթեամբ անցաւ. Ծահկերտ կը տեսնուէր. կրակներ վառած էին. ինչ ինչ տուներ կ'այրէին:

— Այրեցէ՛ք, այրեցէ՛ք, պոռաց վերէն տէր Եղիշէն, միայն այրել ու քանդել զիտէք:

— Լուսթիւնը մեզի համար շատ աւելի վտանգաւոր է, ըսաւ Երուանդ. մենք պէտք է խիստ հսկողութիւն ընենք. դադտնի մեր վերելը կրնան բարձրանալ:

— Իրաւունք ունիս, պատասխանեց Վարդան: Կանչէ Աւոն եւ Սերգոն:

— Ի՞նչ կայ, հրամանատար, հարցուցին երկուքը:

— Առէք 50ական զինեալներ եւ բարձրացէք բերդին շատ վերերը. դուք այդ տեղերը լաւ կը ճանչնաք. քրննեցէք ամէն ծառ ու թուփ, թշնամին կրնայ մեզ յանկարծակիի բերել: Հինգական հողի ցրուեցէք եւ ցանցի մէջ առէք բերդին շրջակայքը:

Կէս գիշերին վերի կողմերէն հրացանի հարուածներ խուեցան. ճիշտ էր Վարդանի գուշակածը:

— Օնի՛կ, Երուանդ, ուսմբեր առէք եւ վեր վազեցէք, մութին մէջ կրնաք թշնամին մօտէն փձացնել:

Անոնք կէս ժամ հազիւ դրած էին եւ զրեթէ քարայրներուն մօտեցեր էին. մութին մէջ խումբ խումբ մարդիկ տեսան, պարսկերէն կը խօսէին, հազիւ լսելի ձայնով: Օնիկ քաշեց ուսմբը եւ մէջներին պայթեցաւ. Երուանդ երկրորդ մը նետեց քիչ մ'աւելի հեռուն, թըշնամին խառնակ դէպի ձորերը խուժեց եւ հայ զինեալ-

ներն անոնց ետեւէն հրացան ու ուսմբ նետեցին: Աւոյ եւ Սերգոյ լսեցին այդ պայթումները:

— Մերիններն են, ըսաւ Սերգոյ Աւոյին, դէպի վար ծռինք:

Շատ դիւրութեամբ բարձունքները սրբեցին, եւ հայ զինեալները ցանցի ձեւով պատեցին բերդին շրջակայքը: Դեռ արեգակը նոր ծագած էր Զանգեզուրի կատարներէն եւ թռչունները վախով կը ճռուողէին, երբ ձեւայրի բանակն ու խուժանը ուժգին դրոհ տուաւ բերդին վրայ, մեղուներու պէս շրջապատեց եւ հրացանաձգութիւնը խլացուցիչ թափ առաւ:

Տէր Եղիշէ բերդին մէջ պատարագ սարքած էր, պառաւներ, կիներ եւ փոքրեր, ջերմեռանդ կ'աղօթէին. Տէր Հայրը միշտ քաջալերիչ խօսքերով ժողովուրդը հանդարտ կը պահէր:

— Քաջ եղէք, կ'ըսէր, մենք պիտի յաղթենք. մեռնիմ Քրիստոսի զօրութեանը, Սուրբ Վարդան մեզի հետ է:

Բերդին ստորոտը հաստ ծառեր դիզած էին թըշնամիներն եւ անոնց ետեւէն կը կրակէին. բայց ուսմբերը հրաշք կը գործէին: Ծերունի Սահակ կարծես երիտասարդ եղած էր. ան ուրախ էր որ իր զէնքը պատիւ կը բերէր: Յանկարծ բերդին աջ կողմէն խուժան մը սուրերով զինուած կը ջանար վեր բարձրանալ, հրացանները կը հնձէին, սակայն ինկողին ետեւէն ուրիշ մը կ'ելլէր: Վարդան տեսաւ այդ յամառ դիմադրութիւնը եւ պոռաց Յովիկին ու Օնիկին.

— Ռուսմբ առէք, եւ աջ կողմը վազեցէք:

Մարոյ եւ Ծաբէ իրենք ալ ուսմբերով հոն վազեցին. պայթում պայթումի ետեւէն՝ ոտքեր, թեւեր ու գլուխներ կը նետէին ասդին անդին:

— Ալլա՛հ, Ալլա՛հ, դուստայ խուժանը, ետ ետ քաշուելով, սակայն խարազաններ եւ հրացանի կոթեր զիրենք յուսահատ առաջ կը մղէին: Երկու կրակի մէջ մընացած խուժանը ցրուեցաւ ժայռերու եւ բարձունքներու ետեւ, ձգելով բազմաթիւ վիրաւոր ու մեռած:

Ճեւայիրին խաղն էր խուժանը մղել վեր, զբարեցնելու համար հայ մարտիկները. սակայն իր միտքն էր ձախ թեւէն կանոնաւոր բանակով կողէն զբաւել բերդը: Այդտեղ էին Յովիկ, Երուանդ ու Մկուչ:

— Վարդան, ըսաւ Արա պատանին, ես տեսայ ահադին բանակ մը որ մեր ձախ կողմէն շարքերով վեր կը բարձրանայ, ամբոխի չի նմանիր, կանոնաւոր զինուորներ են:

Վարդան վազեց այն կողմը. քիչ մարդ ձգեց թուրք խուժանին դէմ եւ բոլոր ոյժը կեղբոնացուց ձախ թեւին վրայ:

— Ժայռերու ետեւէն կրակեցէք, պոռաց Յովիկին. ջանացէք զիրենք բերդին տակ քշել՝ որպէսզի ոռւմբերը գործեն: Չեմ ուզեր որ մէկ հողի զոհուի, զգոյշ եւ խելքով դէմ գրէք:

Սակայն եկող բանակը մարդուած էր, անպայման դոհեր պիտի խլէր: Քանի մը հայ զինեալներ ինկան. Յովիկ ոտքէն ծանր վիրաւորուեցաւ եւ զինք բերդ տարին. ան անհամբեր էր, զինովցած էր:

— Կապեցէք վէրքս, կը բաւէ, ըսաւ կիներուն, կըռուի դաշտ պիտի նետուիմ:

— Յովիկ, դուն կեցիր, ես քու տեղը կ'երթամ, ըսաւ իր կիներ՝ Շողիկ:

— Այդ կռիւր քեզի համար չէ, Շողիկ, պատասխանեց Յովիկ:

Բայց թոյլ չտուին որ Յովիկ կռիւին մասնակցի,

աջ սրունքը փշրուած էր: Այս նոր խառնուրդին Օնիկ չկար, Վարդան մտահոգ էր, արդեօք անտառներու մէջ մեռա՞ւ կամ դերի՞րունեցին, կը հարցնէր ինքնիրեն:

— Արա՛, կանչեց պատանին, կընա՞ս կարեւոր առաքելութիւն մը կատարել:

— Պատրաստ եմ, հրամանատար:

— Նայէ, շատ վտանգաւոր է. բերդին լերան կողմէն սար պիտի բարձրանաս, անկից երկար շրջանով պիտի անցնիս թշնամիին գրեթէ կռնակը, փնտռելու համար Օնիկն եւ իր ջոկատը: Անտառներու մէջէն գնա, հետդ ընկեր մ'ալ առ:

— Կարոն կ'առնեմ, ան այժեամի պէս արագ կը վազէ:

Հակառակ որ թշնամիին գնդակները սուրալով կ'անցնէին իրենց քովերէն, Արա եւ Կարոյ ժայռերու ետեւէն սողալով վեր բարձրացան, գրեթէ քարայրներն հասան, եւ ապա լայն շրջանով անցան թշնամիին կողքին ետեւը: Ականջ գրին ասդին անդին, ոչ մէկ ձայն կար, կարծես թէ բնութիւնը վշտացած՝ մարդերու ատելութենէն ու կռիւներէն, քաշուած էր տխուր լուսթեան թեւերուն տակ:

— Թերեւս շատ վարերն իջանք, Կարոյ, ըսաւ Արա, մօտենանք թշնամիին թիկունքին:

Քիչ վերջ Կարոյ շարժում մը նկատեց. յուշիկ յուշիկ, ինչպէս որսորդ յովազը կ'ընէ, մօտեցաւ, ականջ գրաւ, հայերէն բառեր լսեց:

— Օնի՛կ, կանչեց ցած ձայնով. պատասխան չեկաւ, Օնի՛կ, կրկնեց իր ձայնը:

Ետեւէն պարսկերէն բառեր ալ լսեց.

— Ո՞վ պիտի ըլլան, խորհեցաւ պզտիկը. Արա՛, մօտենանք, ըսաւ ընկերոջը:

Մեծ ծառի մը տակ դտան երկու շահկերտցիներ եւ երեք հատ պարսիկներ. իրենց առջեւը կային տասնի չափ փայլուն հրացաններ. այդ երկու վատերը ղէնք կը վաճառէին. տղաք ճանչցան զիրենք, մէկը Երուանդին հայրն էր՝ Մովսէսը, միւսն այն զինագործը՝ որուն երեք հրացանները դողցած էին Վարդան եւ ընկերները: Առանց աղմուկի եւ երեւնալու, սահեցան վեր, Օնիկին հանդիպեցան զերթէ զէպքով. պատմեցին թշնամիին յարձակումը, թէ պէտք է անոր կողէն զարնել, երկու սուրի մէջ առնելու համար:

— Բայց Օնիկ, ըսաւ Կարոյ, հոն, քիչ մը վարը, ես տեսայ երկու շահկերտցիներ, Մովսէսն եւ ուրիշ մը՝ որոնք թշնամիին ղէնք կը վաճառէին:

— Ճի՞շտ է, տղայ:

— Այո՛, աս աչքերս կուրնան, ես տեսայ, իրենց առջեւը տասնի չափ փայլուն հրացաններ կային:

Օնիկին արիւնը գլուխը զարկաւ:

— Հրէ՛նե՛ր, դաւաճաննե՛ր, ոճրագործնե՛ր, պոռաց. երեք հոգի, ըսաւ ընկերներուն, ինձի հետ եկէ՛ք, դուք մնացածներդ սպասեցէ՛ք մեր դարձին:

Անցան թուփէ թուփ, Կարոն առջեւէն, եւ կապարի պէս ինկան զինագործներուն վրայ. փոքրիկ պայքարէ մը ետք՝ պարսիկ մը դաշոյնով սպաննեցին, միւսները փախան. Մովսէսն ու իր չարագործ ընկերը կապկպեցին ու խումբին տարին:

— Տղայ, ըսաւ Կարոյին, դնա՛ երկու հոգի կանչէ, թող հրացաններն առնեն եւ բանակ տանին:

Օնիկին ջոկատը աճապարանքով մօտեցաւ թշնամիի կողին, կրակ բացաւ. մինչ քանի մը զինեալ պատանիներու ընկերութեամբ դաւաճանները ղէպի բերդը մեկնեցան:

Կռիւն անլուր կատաղութեամբ առաջ կ'երթար. մէկ հայու տեղ՝ տասնեակներ կ'իյնային թշնամիէն, բայց անոնք յամառ զոհերով կը ջանային բարձրանալ բերդի մայր մուտքին կողմերը:

— Թոյլ տուէ՛ք որ բերդին մօտենան, կը պոռար Վարդան իր մարդերուն: Ճեւայրիի գունդը աքցանի պէս կը սեղմէր բերդին շրջապատը, ջանալով գրաւել գըլխաւոր մուտքը, որ լեռներուն կը նայէր: Սահակ ծերունին իր զինակիցներով այդ կողմն էր, սկսաւ վերէն ուսմբ տեղալ: Մարոյ, Շաքէ բերդին վրան էին, անոնք ալ ուսմբ կը նետէին. այժմ քաջ մարտիկներ եղած էին, բայց Շոդիկ կը վախնար բերդը բարձրանալ: Օնիկին ջոկատը մօտեցաւ պայքարին, կրակ կրակի ետեւէն տեղաց թշնամիին վրայ, որ երկու սուրի մէջ ինկած էր եւ բազմաթիւ զոհեր կու տար: Պիտի ջախջախուէր բոլորովին՝ եթէ պարսիկ զօրավարը նահանջի փողը չհընչեցնէր:

Այդ վայրկեանին բերդ մտան Մովսէս եւ իր չարագործ ընկերը՝ թեւ թեւի կապուած: Տիրեց քիչ մը խաղաղութիւն, բերդակալներն հալածեցին թշնամի մինչեւ վարերը. բայց Վարդան արգիլեց աւելի առաջ երթալ, պարապ տեղ զոհ չտալու համար:

Ճեւայր իջաւ գիւղը, շրթունքները խածաւ, ինքնիր մօրուքը քաշեց եւ Ալլահին վրայ երդում ըրաւ՝ բերդը քարուքանդ ընել:

— Մենք այս բերդն, ըսաւ իր զօրավարը, միայն պաշարումով կրնանք առնել, անօթի ձգել՝ որ դան մեր ոտքերը լիպեն:

— Խալիլ, դուն լաւ չես խորհիր, ամօթ է մեզի՛ բուռ մը կեաւուրներ չկարենալ ջախջախել: Պիտի կըռուիմ մինչեւ որ բերդը գրաւեմ, պատասխանեց Ճեւա-

յիր: Երեք օր դադար կ'ընենք մեր ուժերը հաւաքելու համար. վստահ եմ որ երրորդ յարձակումին մենք տէր պիտի ըլլանք կեանքներուն եւ իրենց բերդին: Խալիլ, ի՞նչ ուրախութիւն պիտի ըլլայ, իրենց հարստութիւնը, կիները, տղաքը մերը պիտի ըլլան, եւ իմ անունս մինչեւ Պարսկաստանի խորերը պիտի հնչէ:

Բերդին մէջ ուրիշ տեսաւարան կար:

Վարդանին առջեւը բերին երկու դաւաճանները, ժողովուրդը զարմացած կը դիտէր Մովսէսն ու ընկերը, սրոնք, չղթայուած էին:

— Վարդա՛ն, ըսաւ Օնիկ, այս երկու դաւաճանները բռնեցինք անտառին մէջ, ծառի մը տակ, երբ թշնամիներուն զէնք կը ծախէին. այս պատանին տեսաւ, ցոյց տալով Կարոն, ահաւասիկ քու առջեւդ են, դատը դուն տես:

Վարդանին դէմքը դեղնեցաւ, երբ Երուանդին հայրը տեսաւ իր առջեւ չղթայուած. ի՞նչ ընէր, զաւակը, հերոսս, հայրը դաւաճան:

— Մովսէ՛ս, Մովսէ՛ս, յանկարծ պոռաց դադանի պէս. քու մահը դուն վճռեցիր. ի՞նչպէս քանի մը արծաթի համար Յուզա եղար. այս ամբողջ անմեղներուն կեանքը մազի թելէ կախուած է եւ դուն այս չարագործին հետ ուզեցիր կտրել այդ թելը: Խիղճդ չզարկա՞ւ, հողիդ չըմբոստացա՞ւ, ձեռքերդ չդողացի՞նք երբ հրացանները կը յանձնէիր եւ ոսկին զրպանդ կը նետէիր: Ո՛չ Մովսէս պատասխան տուաւ, ո՛չ քովինը, իրենց ձեռքերը դաւին մէջ բռնուած էին:

— Գացէ՛ք ձեր տեղերը, հրամայեց Վարդան ժողովուրդին, մենք կը խորհինք մեր ընելիքը:

Գիշեր ժամանակ երկու դաւաճանները կախողան ելան:

Յաջորդ օրը բերդին մէջ տրտում լուռութիւն մը կար: Տէր Հայրը սրտադին խօսեցաւ, բացատրեց թէ ինչպէս հասարակաց շահը վերագոյն է քան անհատին շահը:

Երեք օր դրեթէ հրացանի աղմուկ չլսուեցաւ: Բերդի պատուհանէն կախուած զանգակը միայն կը հնչէր՝ իր զիւ ձայնը ձգելով մինչեւ դիւրը:

— Այս ժողովուրդի հողին քու ձեռքդ է, Տէր Հայր, ըսաւ Վարդան, քաջալերէ՛ք զիրենք, հսկէ՛ եւ աղօթէ՛, յաղթանակը մերն է: Երկու յարձակումներ ցոյց տուին թշնամիին տկարութիւնը. կրնան տասն անգամ ալ փորձել բերդի դրաւումը, բայց միշտ պիտի խորտակուին մեր ուժին դիմաց:

Առաջնորդը հրամայեց ամէն կողմ խիստ հսկողութիւն կատարել:

— Օձը չես դիտեր ո՛ր ծակէն դուրս կը հանէ, ըսաւ:

Երուանդ սրտի ցաւէն հիւանդացաւ. եկաւ Նազար աղան, բարձին դուրսը նստեցաւ. ի՞նչ խօսքեր դանդաղ քաջալերելու համար: Երիտասարդին սիրտը երկու սրլաքներ մտած էին, հօրը դաւաճանութիւնը եւ կախողան ելլելը. իր մայրը չէր ուզեր տղուն երեսը տեսնել. միայն Երուանդին կինը, կարող էր մխիթարել: Շողիկ, Շաքէ, Մարոյ այցի եկան եւ յիշեցուցին թէ ինչպէս տարիներով միասին ծրագիր դրած էին, զինովարժութիւն ըրած էին Շահկերտի փրկութեան համար:

— Հիմա է ժամանակն, ըսին արտաքին եւ ներքին թշնամիներու դէմ կռուիլ ու պաշտպանել դիւրը, դուն այդպէս ըրիր, ճակատդ մաքուր պահեցիր դաւաճանութեան մուրէն:

Երուանդին համար շատ ծանր եղաւ իր հօրը դէպքը, բայց յաջորդ բուռն կռիւներն եկան իր կեանքը փո-

խելու: Ճեւայիւր երրորդ յարձակումն ըրաւ եւ բախտաւոր չգտնուեցաւ. նոյն կորովի դիմադրութիւնը դտաւ լեռնականներէն: Կը զգացուէր թէ իր ուժերը տկարացեր էին, խուժանին մէջ խանդավառութիւն չկար, սուր շողացող չկար, եւ եթէ պատահական հանդիպում ըլլար, խոյս կու տային շահկերտցիին առջեւէն:

— Խալի՛ւ, ըսաւ ճեւայիւր իր զորապետին, մենք յարձակումներով պարապ արիւն պիտի կորսնցնենք, մեր ուժերը նուազած են, պէտք է օգնութիւն խնդրենք Երեւանի, Դավրէժի խաներէն: Եթէ պէտք կայ՝ քառասուն, յիսուն հազար հասնենք, բայց քանդենք այդ ապրտամբ բոյնը:

— Ես պիտի առաջարկէի, պատասխանեց զորապետը մինչեւ գետին խոնարհելով. պատերազմիկ զրեթէ չմընաց, մեր երկրորդ յարձակումը բերդի ձախ թեւին վըրայ մեր դերեզմանն եղաւ: Պէտք ունինք օգնութեան, եթէ կարելի է պարսկական բոլոր ոյժը թափել. այս անիծեալ գիւղն ապագային մեզի փորձանք պիտի ըլլայ, կրնանք նոյնիսկ ամբողջ Հայաստանը կորսնցնել:

Յարձակում եւ պատերազմ՝ գրեթէ ամիս մը դադրեցան: Երկու ճակատներուն մէջ անորոշ սահման մը գծուեցաւ, պահակներ՝ դէմ դիմաց, սպառնալից հըսկողութիւն կ'ընէին: Վարդան չուզեց այս լռելեայն գիւնադադարն յարգել. հրահանգ տուաւ անակնկալ յարձակումներ ընել եւ եթէ կարելի է՝ թշնամին գիւղէն ալ դուրս քշել:

Ոտրհուրդի նստեցաւ իր գինակիցներուն հետ եւ որոշեցին դիշերային յարձակումներ կատարել զանազան ուղղութեամբ:

Չնական ջոկատներով սկսաւ գիշերային արշաւանքը. ոմանք մինչեւ գիւղի մօտերն հասան, ստէպ ումբ

գործածեցին, այնպէս որ պարսիկ բանակն հանդիսա չունէր: Սարսափած եւ ոչ կրակ կը վառէին, մութէն ծածկուելու համար: Հայ զինեալներէն զրեթէ մարդ չդահեցին: Վարդանի ռազմավարութիւնն էր յանկարծակի յարձակիլ եւ իսկոյն աներեւութանալ: Ճեւայիւր ջըզագրդիւ վիճակ մ'առաւ, թուլցաւ իր հպարտ մտքէն, նոյնիսկ խորհեցաւ ժամանակ մը հեռանալ Շահկերտէն. բայց ատիկա պարտութիւն պիտի նշանակէր:

Բերդին մէջ զէնք գէնքի ետեւէն կը շինուէին, մանաւանդ փամփուշտ առատօրէն պատրաստեցին: Օրուան մէջ ժողովուրդը սկսաւ դուրս ելլել եւ բաւական հեռուներն երթալ. բայց անխոհեմութիւն էր: Վտանգաւոր ծրագիր մ'ալ խորհեցաւ Շաքէ եւ առանց մէկուն լուր տալու, Մարոյին հետ առին քանի մը ումբ եւ փոքրիկ կողովի մը մէջ դրած, օր ցերեկով զացին դէպի վարի ալյիները:

Քարերու վրայ իրարու մօտ նստեցան, իրբեւ թէ զուլպայ կը հիւսեն, բան մը կ'ընեն. պարսիկ պահակները տեսան զիրենք եւ

— Աղջիկ, աղջիկ, ըսելով ձգեցին հրացանները, ձեռքերնին առաջ երկարած, յափշտակելու գիրքով վազեցին, մէկը միւսէն առաջ դրաւելու համար այդ գեղեցիկուհիները:

Բաւական մօտեցան. Շաքէ եւ Մարոյ հանեցին կողովէն ումբերը, կրակը տուին եւ նստեցին եկողներուն վրայ:

— Եէյթա՛ն, չէյթա՛ն (սատանայ) լսուեցաւ ողբի եւ աղմուկի մէջ: Ուրիշներ ալ անոնց ետեւէն վազեցին պայթումի ձայնէն, բայց երկու հարսերն եղնիկի պէս արդէն թռած, հեռացած էին:

Երբ Վարդանին պատմեցին, ան շատ նեղացաւ իրենց, անխոհեմ քայլ առած էին:

— Ձեր սպաննած ութը տասն հոգին մենք վաղը միւսը օր անդիւի աշխարհ կը դրկէինք. թոյլ չեմ տար այդպիսի անխոհեմութիւն:

Վարդավառի տօնն եկաւ: Վարդան հրամայեց մեծ շուքով եւ ժողովրդական պարերով տօնել: Տէր Եղիշէ առաւօտէն երեկոյ զանգակ զարնել տուաւ.

— Թող անհաւատները լսեն թէ մենք պատերազմն ալ ուրախութեամբ կ'ընենք: Պատարագէն յետոյ, բերդին մէջ, վերի սարերուն վրայ, խոշոր կրակներ վառեցին, թմբուկն ու զուռնան տուտուկներու հետ մեծ ոգեւորութիւն տուին, պարեցին խումբ խումբ. այդ օրը ամէն տուն առատ ճաշ ունեցաւ. նոյնիսկ աղջիկներ վիճակ ձգեցին:

— Կրակները գիշեր ատենն ալ թող վառ մնան, ըստ Վարդան, որպէսզի վարիներուն քունը փախցնեն:

Բերդին մէջ միակ տաժանելին անձրեւոտ օրերն էին. ամէն ընտանիք պէտք էր ինքզինքը կերպով մը պատսպարել. ոմանք թաղիքէ կապերտներով վրաններ ձգած էին, ուրիշներ աւերակներու խոռոչներու մէջ ծակ մը գտեր էին, բայց թըջուղը կը թըջուէր:

Երեկոյեան յարձակումի մը ժամանակ, Երուանդ գերի բռնած էր երեք զինուորներ. զանոնք բերաւ եւ յանձնեց առաջնորդին:

— Բերդէն դուրս տարէք, հրամայեց Վարդան իր պահակներուն, թող չտեսնեն մեր բանակը:

Բերդին արեւելեան կողմը, ժայռի մը վրայ նստեցաւ ինքը, մէկ կողմը սուրը կար, միւս ձեռքին մէջ կոշտ փայտ մը: Սերգոյ եկաւ իբր թարգման:

— Ո՞ւրտեղացի էք, հարցուց Վարդան:

— Նախիջեւանցի ենք, տէր իմ, պատասխանեցին խոնարհաբար:

— Ո՞ւր է ձեւայիւր խանը:

— Նախիջեւան գնաց:

— Վարը գիւղին մէջ եւ բերդի շրջապատը ո՞րքան զինուոր ունիք:

— Ձենք գիտեր, Ալլահը վկայ, չենք գիտեր, պատասխանեցին միասին:

— Ձէ՞ք գիտեր, այս դաւազանը ձեզի հիմա լեզու կու տայ:

Վարդան նետուեցաւ վրանին եւ քանի մը դաւազան քաշեց.

— Հիմա խօսեցէք, ըսաւ:

— Հոգիդ սիրես, մի՛ վարներ, հիմա կ'ըսենք: Հաղարի չափ կանոնաւոր զինուոր հազիւ մնաց, շատ մարդ կորսնցուցինք, զինեալ գիւղացիները փախան: Ձեւայիւր գնաց Դավրէժի եւ Երեւանի խաներէն օգնութիւն ուղեւորու:

— Ուրեմն դարձեալ մեր վրայ յարձակո՞ւմ պիտի գործէ:

— Ալլահը գիտէ, պատասխանեցին:

— Ի՞նչ, Ալլահ գիտէ. իսկ դուք չէ՞ք գիտեր, հարցուց, ձեռքին փայտը ցոյց տալով:

— Ներէ մեզի, աղաչեցին, մենք շատ տանջուած մարդիկ ենք, շատ անգամ չոր հաց իսկ չենք կերած, հիմա խանը վճուր է, անպայման քանդել այդ բերդը եւ կը սպասէ միւս խաներու օգնութեանը:

— Ուրիշ հարցում մը եւ կը բաւէ. լուր ունի՞ք որ վարն այգիներուն մէջ, ասկից շուրջ ամիս մ'առաջ շահ-կերտցի մանչուկ մը բռնուած էր եւ լսեցինք թէ խանին առջեւ տարած են, ի՞նչ եղաւ, ո՞ւր է:

Գերիներն իրարու երես նայեցան, մտածեցին յի-
ջելու համար .

— Ան է, ան է, ըսին իրարու : Անոր կեանքը ձեզի ,
պատասխանեցին , մենք հետեւակ բանակին մաս կը կազ-
մէինք , երբ մօտեցանք ձեր այգիներուն , ճամբուն վրայ
ծառէն կախուած պղտիկ մը տեսանք . լացինք , անիծե-
ցինք անգութ մարդիկն ու անցանք :

— Ա՛հ , պոռաց Վարդան , խեղճ Գէորդ , խեղճ
Գէորդ , մայրը չիմանայ : Հիմա ես պէտք էի ձեզ կա-
խել , դուք օրէնք մը ունիք . աչք աչքի դէմ , ահռայ ա-
հռայի դէմ . բայց մենք յարգանք ունինք դերիներու
հանդէպ . գացէք ձեր բանակը , մենք պարսպ հաց չու-
նինք ձեզի տալու : Տարէք , ըսաւ պահակներուն , մին-
չեւ վարերը եւ թող տուէք երթան :

Կասկածելի զինազաղարէն ամիս մը դեռ չէր ան-
ցած , վարէն լսուեցան թմբուկներու խուլ հարուածներ ,
սուր փողեր կը հնչէին : Վարերը գտնուող հայ պահակ-
ներն ամապարանքով բերդ բարձրացան :

— Վարդա՛ն , ըսին , յարձակումի պիտի գան . գիւ-
ղին մէջ միայն սեւ ու ճերմակ գլուխներ կը տեսնուին .
ձովի պէս գոռում գոչում կայ :

Վեր թռաւ առաջնորդն ու դիրքէ դիրք վազեց , քըն-
նեց դիրքերն , ամէն ջոկատ իր տեղը դրաւ : Մերունի
Սահակն ելաւ պատուհան , ոռւմբերու դէզ մը կար իր
մօտը .

— Այս անգամ ա՛լ աւելի մարդ միւս աշխարհ կը
դրկեմ . որքան շատ գան , այնքան առատ կ'ըլլայ մեր
հունձքը , ըսաւ իր զինակիցներուն :

Ինչպէս փրփրած ալիքներ կը փաթթեն ծովային
ժայռերն , այսպէս երեք խաներու միացեալ ոյժը պա-
տեց բերդը : Դարձեալ նոյն շարժումն ըրին կողերէն

վեր բարձրանալ եւ դրաւել մայր դուռը . բայց դիմա-
դրութիւնն աւելի ուժեղ էր քան առաջ , այժմ Շահկերտ-
ցին վարժ զինուոր էր : Աղջիկներ , հարսեր զէնք առած
բերդին աշտարակներէն կը կրակէին , ոմանք ոռւմբ կը
տեղային , ուրիշներ քարեր կը նետէին : Երեք խաները
կը վարէին յարձակումը . վարն աւելի աղմուկ կար , քան
քաջարի պատերազմ : Վարդան այս անգամ ալ հրահանգ
տուաւ լուս պատերազմիլ : Թշնամի զնդակ մը վարէն
ուղղակի ծերունի Սահակի ճակտին հասաւ եւ խեղճը
կռնակին վրայ անշունչ ինկաւ :

— Մե՛ղք , խեղճ Սահակ , հերոս ծերունի , լացին
քովինները եւ դիակը վար տարին :

— Մէկին տեղ հազար պիտի զարնենք , պոռացին իր
ոմբաձիգները :

— Ճնշումը մեր թեւերուն վրան է , ըսաւ Վարդան ,
հոն խմբուեցէք . ճակատէն չեն կընար դրաւել , թող
միայն ոռւմբ նետողները մնան :

Աշտարակներու , քարերու , աւերակներու ետեւէն
զնդակները վար կը թափէին . բայց թշնամին յամառ
առաջ կու գար :

— Վարդա՛ն , դուրս ելլենք եւ դրկախառն կուլինք ,
ըսաւ Օնիկ :

— Ո՛չ , պարսպ տեղ զոհեր չեմ ուզեր տալ , անոնց
զնդակներն ալ մարդ կը սպաննեն :

Հարիւրի չափ պարսիկ զինուորներ բաւական մօ-
տեցեր էին մայր դրան , Տէր Եղիշէ քարի մը ետեւ ծած-
կուած ոռւմբ նետեց . ինկան քանի մը հատ :

Բերդին մէջ լաց եւ յուսահատութիւն տիրեց , բեր-
դը դուռ չունէր գոցելու համար , լայն բերանով բաց էր :

— Ռու՛մբ հասցուցէք , պոռաց քահանան :

Վաղեցին Շաքէ , Մարոյ եւ Շողիկ , զնդակ մը Մա-

բոյի ականջին քովէն սուլեց. ան կարեւորութիւն չտուաւ, նետեց ուժմբ ուժմբի ետեւէ, Շաքէ կողմնակի կը հարուածէր. բայց թշնամին առաջ կու գար, հասաւ դրան դիմաց, սուր հանեց, եւ դրեթէ ներս մտեր էր, երբ Մկուչ, Սերգոյ քանի մը զինեակներով անոնց դէմ ելան. սկսաւ կատաղի սրախաղ մը. ինկաւ Մկուչ, Սերգոյ գերմարդկային ուժով կը կռուէր: Լուր տուին Վարդանին որ անմիջապէս բերդի կողմէն վար ցատկեց եւ անցաւ թշնամիին ետեւը.

— Ռուժր բերէք, պոռաց դէպի վեր:

Սկսեր էին ուրիշ թշնամի զինուորներ հասնիլ, բայց բերդ մտնողներն արդէն գրեթէ ոչնչացեր էին եւ փախուստի ճամբան իսկ բռնուած էր. անոնք բարձրացուցին իրենց ձեռքերն ու յանձնուեցան: Այդ խառնուրդին ինկան հինգ ուխտեայներ, ծանր վէրքերով ծածկուած:

Թերեւս եօթէն ութ հազարի հասնէր յարձակող թշնամի բանակը. երեք խաներ անոնց ետեւն էին. բարձր բարախներ ունէին եւ ոսկիէ թիկնոցներ, դիւրին էր ճանչնալ, սակայն զգոյշ էին հայ կրակին մօտենալու:

— Առաջ եկէք, հերոս խաներ, պոռաց Վարդ պարիսպէն:

Քիչ մը մեղմացաւ կռիւը, կարծես թէ երկու կողմերն ալ յոգնած էին. ժամեր անցեր էին: Բերդը խորոխ կը նայէր դէպի դաշտերը, կողերը մխրճած անդունդներուն մէջ՝ իր ալեւոր գլուխը կը ցնցէր հովերուն հետ: Ամպոտեցաւ օդը, որոտում լսուեցաւ, կարծակներ փայլեցան եւ լեռնային յորդ անձրեւ մը հեղեղօրէն թափեցաւ բերդին ու դիւղին վրայ:

Վարէն նահանջի փողը դարկին, շատ զոհեր տուած

էին, յիմարութիւն պիտի ըլլար դիակներ աւելցնել դիակներու վրայ: Բայց Վարդանի բախտէն անոնք սըլալած էին, թերեւս դիւրին ըլլար բերդին մուտքը դրաւել, այդ անձրեւին, քանի ջուրերով լեցուած էին նկուղներն ու քարայրները եւ ժողովուրդը շուարումի մէջ էր:

— Այս յարձակումն ա՛լ չի կրկնուիր, ըսաւ Վարդան իր ընկերներուն:

— Ինչո՞ւ, հարցուցին:

— Դաշնակից խաներն երբեք պիտի չուզեն ձեւալիրին համար իրենց մարդիկը զոհել. աչքերով տեսան Շահկերտ բերդին ամրութիւնը: Եթէ կարելի ըլլար լըրտես մը զրկել, իմանալ անոնց ծրագիրները՝ մեզի համար փրկարար պիտի ըլլար, սակայն այս վտանգաւոր դիրքով, ոչ մէկէն կրնամ պահանջել:

Սերգոյ հոն էր, լսեց Վարդանին ըսածը, հասկցաւ թէ ակնարկն իրեն համար էր. լուռ մնաց, խորհեցաւ եւ դարձաւ առաջնորդին:

— Վարդա՛ն, ոչ մէկիս կեանքն ապահով է, վաղը, ես կամ դու կամ ուրիշ սիրելի ընկեր մը կրնանք իյնալ մեռնիլ, հաշուէ թէ Սերգոյ մեռած է կռուի դաշտին վրայ. ես նորէն կ'երթամ:

Վարդան գրկեց եւ համբուրեց զինքը: Սերգոյ իրեն համար անդէն հերոս մ'էր:

— Այս անգամ հազուէ պարսիկ զինուորի տարազ, հոս ունինք մեռածներուն զգեստներէն. հրացան մը առ եւ զինուոր ձեւացիր. այդ բազմութեան մէջ կը կորսուիս: Այս գիշեր անտառներու մէջէն վար իջիր եւ խառնուէ իրենց պահակներուն: Ձանա գիւղն հասնիլ եւ մօտէն տեղեկանալ անոնց ծրագիրներուն, յանձնարարեց Վարդան:

Թաց էին անտառները, հողը սահուն էր. բայց Սերգոյ գիտէր այդ ճամբաները, թերեւս հազար անգամ ըրած էր, որսի երթալու համար:

Երբ մութն ինկաւ՝ համբուրուեցան իրարու հետ, Օնիկ, Վարդան եւ Վարդ գրկեցին զինքն, յուզուեցան եւ մաղթանքներով ճամբայ դրին: Աւոյ եւ Վրէժ հոն չէին, պահակներուն հետն էին. Յովիկ դեռ չէր ապաքինած:

Շարաթ մը անցաւ թշնամին ոչ մէկ շարժում ըրաւ. գիւղը փեթակի պէս կը բզզար, սուր աչք ունեցողը կը տեսնէր փաթթոցաւորներ, զինուորականներ, ձիեր ու դրաստներ՝ որոնք բռնած էին փողոցներն ու շրջակայ բլուրները:

Բերդի բնակիչները փափաք ունէին դուրս ելլել, երկարել իրենց քայլերը մինչեւ վարերը. Վարդան թոյլ չտուաւ:

— Միայն պահակները կրնան վարերն իջնել. թըշնամին լուռ է, բայց չի քնանար, ըսաւ ժողովուրդին:

Օնիկին ջոկատն իջաւ բաւական վար, գրեթէ այդ զիններն հասաւ. առաջ կարելի էր ցրուած զինուորականներ տեսնել, քիչ մը հրացան քաշել, այժմ ոչ ոք կար:

— Այս մարդիկը փախա՞ն արդեօք, խորհեցաւ ինքնիրեն: Քիչ մ'ալ իջնենք, ըսաւ ջոկատին:

— Առհաստից չէ, Օնիկ, պատասխանեցին, անտառները խիտ են, թուփերը շատ են, կրնան մեզ յանկարծակիի բերել:

— Ես սա բարձր ծառին վրայ կ'ելլեմ, ըսաւ Օնիկ, ժամանակին շատ փորձեր ըրած եմ Վարդանի հետ, երբ զինուոր կը խաղայինք:

— Մարմինդ ծառին ետեւ բռնէ, ըսաւ զինեալ մը, կրնան կրակել եթէ տեսնեն:

— Այդչափ գիտեմ, պատասխանեց Օնիկ:

Գրեթէ ծառին գագաթն էլաւ, գիտեց իր շուրջը. հաղիւ 200 մեդր վար, ծառերը կտրուած էին, եւ երկար սրահ մը կը բոլորէր բլուրներն ու կը հասնէր մինչեւ գիւղ: Խիտ շարքերով զինուորականներ եւ թուրք գիւղացիներ կը հսկէին, դէմքերնին դէպի լեռները:

— Հասկցայ, ըսաւ Օնիկ ու վար իջաւ: Ասոնք, դարձաւ ընկերներուն, կատարեալ պաշարումի դրութիւն ստեղծեր են. իրենց խելքով մեզ անօթի պիտի պահեն եւ պիտի խոնարհեցնեն:

— Կրակե՞նք, հարցուց զինեալ մը:

— Ո՛չ, Վարդանին երթանք, եւ միասին ծրագրով աշխատինք:

Վարդան անձկութեամբ Սերգոյին կը սպասէր, նա շատ ուշացաւ, տասն օր եղաւ իր մեկնիլը:

— Եթէ բռնեցին եւ սպաննեցին, չեմ գիտեր թէ ինչպէս պիտի ողբանք այդ լուռ հերոսը, ըսաւ իր ընկերներուն:

— Գէշ զգացումներու մի՛ երթար, պատասխանեց Երուանդ, Սերգոյ հազար գոյն կ'առնէ եւ իր կաշին կ'ազատէ:

Մինչ այդ եկաւ Օնիկ, եւ հաղորդեց իր տեսածը. Վարդան արդէն կը գուշակէր, բայց ապահով չէր. իրեն համեմատ ձեւայիւր պիտի չուզէր ամիսներ անցընել, այդ բուռ մը Հայերու դիմաց. նա հպարտ էր եւ ինքզինքը ամենագոր կը կարծէր, սակայն քովի խաները պիտի նախընտրէին պաշարումի դրութիւնը:

— Մենք պէտք է դարձեալ փոքրիկ ընդհարումներով ջղադրդու դրութիւն ստեղծենք խաներու բանակին մէջ, ըսաւ Վրէժ, մասնակի յարձակումները լուի կը նմանին, որ կը խայթէ եւ չես կրնար բռնել, խոյս կուտայ:

— Ես կը նախընտրեմ գիշերը, ըսաւ Վարդ, կըրնանք գազտագողի մօտենալ, կրակել եւ խոյս տալ:

— Այդպէս ընենք պատասխանեց Վարդան, մերինները ճամբաներուն ծանօթ են, ամէն քար եւ թուփ կը ճանչնան, միայն փոքրիկ խումբերով, չորս-հինգ հոգի եւ զանազան կէտերու վրայ: Եթէ պաշարումը տարի մը տեւէ, մենք ա'լ չենք դիմանար, մեր պաշարն ալ կը հատնի:

— Անկարելի է որ տարի մը տեւէ պաշարումը, ըսաւ Օնիկ, հիմա Օգոստոսի մէկն է, թերեւս մինչեւ Դեկտեմբեր մնան, բայց հազիւ ձիւնն սկսի դիզուել, կա'մ կը սառին եւ կամ կը հեռանան:

— Մէյ մը սա Սերգոն գար, ըսաւ Վարդան, ամէն բան կը պարզուէր. ինչո՞ւ ուշացաւ, իր միտքն էր շարաթէ մը վերագառնալ, վախեմ թէ թանկագին գոհ մ'ալ տուինք:

Իր ընկերներն ալ մտահոգ էին, երկու շաբաթէն աւելի եղաւ. իր երթալիքն հեռու տեղ չէր, հազիւ երկու մղոն ճամբայ էր. այո՛, երբեմնի ազատ ճամբան չէր, բայց կրնար այսքան օրուան մէջ՝ հեռուներէն ալ չըրջիլ եւ դառնալ:

Թէպէտ քիչ մը կտրեցաւ իրենց խանդը, բայց ըսպասեցին յոյսով: Իրենց գիշերային յարձակումները թոյլ չտուին որ թշնամի գիծերը հանդիստ քուն ունենան: Ասդին անդին կրակներ կը վառէին եւ իրենք քիչ մը հեռու, մութին մէջէն կը կրակէին, մինչ թշնամի դնդակներ բոցերու շուրջ կ'ոստոստէին:

Յաջորդ կիրակին Խաղողօրհնէք էր, Աստուածածնի տօնն էր, բայց իրենց այգիները թշնամի գիծերուն ետեւը մնացած էին. ուսկի՞ց խաղող պիտի գտնէին: Տէր

եղիչէ կանչեց քանի մը պզտիկներ եւ Արային յանձնելով ըսաւ.

— Սարերը բարձրացէք, անտառներուն մէջ ժոխուր պիտի գտնէք, հաւաքեցէք որ կիրակի օրհնենք եւ բաժնենք:

Տղաները լաւ կը ճանչնային այդ լեռնային թուփը՝ որ խաղողի շատ կը նմանէր, կարմիր եւ թթուաչ հատիկներով ողկոյզներ ունէր: Բայց ի՞նչպէս պիտի գոհացնէին մանուկները, որոնք ամէն տարի կը սպասէին սաթի գոյնով խաղողին եւ ողկոյզ-ողկոյզ խածնելով կ'ուտէին ժամին դրան առջեւ: Շարակներով բերին, բայց Արա եւ իր ընկերները գոհ չեղան: Ինչո՞ւ Աստուածամօր խաղողը պիտի չուտէին, կարելի չէ՞ր որիչ տեղէ մը ճարել:

Պատանին նստեցաւ իր ընկերներուն հետ, երկար մտածեց, աչքերը մէյ մը դէպի գիւղ դարձուց, մէյ մը աջ ու ձախ եւ բարձր լեռները: Այդ լեռներու ետեւ խոր ձորեր կային, ինքը տեսած էր կատարներէն. հոն հայ գիւղակներ կային, անոնց ծխաններու մուխը տեսած էր. բայց շատ հեռու էին, պէտք էր մինչեւ երկինք բարձրանալ եւ ապա անդունդներ իջնել:

— Աս ալ չ'ըլլար, ըսաւ ինքնիրեն: Ձեզի բան մ'ըսեմ, դարձաւ ընկերներուն. սա վարի թուրք-պարսիկները միայն մեր գիւղը պաշարած են. ես կը մտածեմ բարձրանալ գէպի վեր եւ լեռան կողերէն անցնիլ Շահապոնք հայ գիւղը. հոն խաղող կայ, անոնք խանին հետ կուր չունին. գնել եւ դառնալ. դուք ի՞նչ կ'ըսէք:

— Այսքան բազմութեան ի՞նչպէս կրնանք խաղող հասցնել, եզներու կառքեր պէտք են, պատասխանեց Յարութիւն:

— Մէկ մէկ հատիկ, կէս հատիկ ալ ըլլայ՝ սրտեր-

նիս տեղը կ'երթայ եւ Աստուածամայրը դո՛ւ կ'ըլլայ, ըսաւ Արա :

— Ես կու գամ պատասխանեց Կարոյ :

— Ես ալ կու գամ, աւելցուց Սիմիկ :

— Ես ինչո՞ւ չգամ, ըսաւ Յարութիւն :

— Բայց դրամ չունինք, ի՞նչպէս գնենք, հարցուց Սիմիկ :

— Կա՛մ Տէր Եղիշէէն կը խնդրենք կամ Վարդանէն, ըսաւ Արա :

— Եթէ Վարդան լսէ մեր խորհուրդը, մեղ բանտ կը գնէ, դուք չէք ճանչնար զինքը, խիստ մէկն է, չ'ուզեր որ մարդ բերդէն դուրս ելլէ առանց իր գիտութեան, ըսաւ Յարութիւն :

Տղաք քիչ մ'իրենց ծնողներէն դրամ առին, քչիկ մը տէր Եղիշէն տուաւ եւ առաւօտ կանուխ իբր թէ սարուորներուն պիտի երթան, ճամբայ ինկան : Ճեւայիրի մարդիկը կը վախնային այդ տեղերը բարձրանալ, պատանիները ձորէ ձոր անցնելով զարկին դէպի հիւսիսարեւելք : Մէկ ու կէս օր պէտք էր այդ գիւղն երթալու եւ վերադառնալու համար . եթէ վտանդ կամ արգելք մը չըլլար, կրնային տօնին բերդ հասնիլ . մնացածն Աստուած գիտէ :

Կէս օրէն յետոյ հանդիպեցան հովիւներու, շահապոնքի էին, խեղճ ու բարի մարդիկ . անոնք կարճ ճամբայ ցոյց տուին, կաթ ու հաց տուին, անօթի էին չորան ալ, խելք չէին ըրած հաց առնել : Գիւղ իջան, տափաբակի վրայ էր, ցած եկեղեցի մ'ունէր եւ ծեր քահանայ մը :

— Տէր Հայր, ըսին միասին, մեզի խաղող ծախեցէք, Աստուածածնի տօնին պիտի օրհնենք :

— Ուսկի՞ց եկած էք, հարցուց քահանան :

— Ծահկերտի բերդէն ենք, մեր այգիներն անհաւատներու գիծերուն ետեւը մնացին :

— Ծահկե՞րտ, հարցուց քահանան զարմացած . բայց ըսին թէ խաները կործանեցին այդ բերդը եւ բռնակիչները գերի տարին :

— Աղեմ ըսողին գլուխը, պատասխանեց Արա, մեր բերդը հերոս է, մեր Վարդանը քաջ է, այնպէս ջարդ տուինք ձեւայիրի բանակներուն, որ երբեք պիտի չմտնայ :

— Աստուած պահէ, Աստուած պահէ, ըսաւ քահանան : Ուրեմն խաղող կ'ուզէք Տիրամօր տօնին համար :

Ծանր ծանր ելաւ իր տունէն, եւ գոնէն դուրս կանչեց .

— Ծօ Մխո՛յ, ծօ Սամո՛յ . էստեղ եկէք, բան ունիմ ըսելու :

Գիւղն այնքան փոքր էր որ քար նետէիւր մէկ ծայրէն միւսը կը հասնէր :

Երկու տարիքոտ գիւղացիներ եկան .

— Ի՞նչ կայ տէր Հայր, հարցուցին, էս երեխէքն ովքե՞ր են :

— Օրհնածներ, էսոնք Ծահկերտի բերդէն եկեր են . եկէք բան լսեցէք : Առիւծի պէս կռիւ կ'ընեն, ձեւայիրի մայրը լացուցեր են . էսոնք մարդ են, մենք ի՞նչ ենք . բազէի առաջ սարսափած աքլորնե՞ր, ըսաւ քահանան :

— Տէր Հայր, էնոնք շատուոր են, մենք քիչուոր . էնոնք բերդ ունին, մենք փլած տուներ . էնոնք Վարդան ունին, մենք խլլտա Ակոյ . ի՞նչ կրնանք ընել, ըսաւ անոնցմէ մին :

— Բան լսեցէք . էս երեխաներն եկեր են խաղող տանելու որ Աստուածամօր տօնին օրհնեն, փող ալ բերեր

են, ըսաւ քահանան, խաղող բերէք, տանք՝ տանին. լաւ ըլլան, ոսկի հատիկ ըլլան:

Երբ երկու գիւղացիներու հետ այգիները կ'իջնէին, տղաները հանդիպեցան սիրուն երիտասարդի մը, հաղիւ 20 տարեկան կար ու չկար: Նոր դէմքեր էին այդ պատանիները, չէր ճանչնար. հարցուց թէ ո՞վ են, ուսկի՞ց են. երբ լսեց թէ Շահկերտի բերդէն եկած են, նա մօտեցաւ եւ համբուրեց չորսն ալ:

— Դուք, ըսաւ, հերոսներու զաւակներ էք. Հայաստանի փառքն այդ լեռներու վրայ պիտի երգեն. ես լսեցի Պարսիկներէն ձեր պատերազմները, ձեր յաղթանակները. սարսափ ձգած էք մինչեւ Դավրէժ: Խաղող չէ, մեր հողին ալ կու տանք: Ես շատ խորհեցայ փախչիլ այս գիւղէն, լեռներու վրայէն դալ ձեզի միանալ, բայց մինակս քաջութիւն չունեցայ, դուք ի՞նչպէս կը տրեցիք այդ վտանգաւոր ճամբաները:

— Պարսիկներն այդ բարձր լեռներէն կը վախնան, պատասխանեց Արա, մենք դաշտագողի կրցանք դալ եւ հիմա շուտով պիտի վերադառնանք: Մեզի քիչ մը խաղող տուէք, ձեզի փող կու տանք:

— Եկէք իմ այգիս, ըսաւ երիտասարդը, միասին քաղենք եւ միասին Շահկերտի բերդը տանինք. ես ալ պիտի դամ եւ պիտի պատերազմիմ: Դրամ չեմ ուզեր, մեր հողին ալ արժանի էք:

Բաւական սպիտակ խաղող հաւաքեցին եւ մաղի մը մէջ դրած՝ երիտասարդին տունը տարին:

— Անուշաւան, որդի, ասոնք ո՞վ են, հարցուց իր մայրը:

— Մամէ, լաւ կերակուր պատրաստէ, լաւ անկողին, ասոնք Շահկերտի հերոսներուն զաւակներն են.

այս գիւղեր պիտի հանգչին եւ վաղն առաւօտ միասին պիտի մեկնինք: Մամէ, ես ալ պիտի երթամ կախի:

— Զէ՛, չէ՛, որդի, ձիւնը գլխուս մի՛ բերեր, ըսաւ մայրը:

Չորս պատիկները գիւղերն անցուցին Անուշաւանի տունը. դիւղն իրենց վրայ թափեցաւ, հարցումներն այնքան շատ էին՝ որ տղաները չէին հասնիր պատասխանելու:

— Բա, ըսին գիւղացիները, էդ վարդանն էսքան քաջ է եղեր. Աստուած գլուխը պահէ:

Առաւօտեան մեկնումի պահուն, գիւղացիներն այնքան խաղող բերին՝ որ կարելի չէր տանիլ: Մէկ մէկ կողովներ սուրին, Անուշաւան մեծ մ'առաւ եւ շալակն անցուց: Հակառակ մօրն աղաչանքներուն՝ երիտասարդը որոշեր էր բերդ մեկնիլ:

— Հրացանի պէտք չկայ, ըսին պատանիները, մենք շատ ունինք: Ճամբան ուրախ ընկերութեամբ կ'երթանք: Վաղը պէտք է հասնինք, միւս օրն Աստուածածին է:

— Որդիներ, ըսաւ քահանան, մի քիչ հաց պանիր, մեղրով կարագ առէք, ճամբան երկար է:

Քանի մը կիներ լաւաչներու մէջ փաթթած բերին ուտելիքները, տղաներն իրենց ծոցերը խոթեցին, ըսելով.

— Տէր Հայր, օրհնէ մեզ, որ անվտանգ հասնինք:

— Օրհնած ըլլաք, որդիներ, Տիրամայրը ձեզ ընկերէ, Աստուծոյ հրեշտակը սուրը ձեռքին՝ ձեր առջեւէն երթայ:

Անուշաւան լեռնային ճամբաները լաւ գիտէր, համառօտ եւ ապահով տեղերէ տարաւ: Կէսօրէն վերջ տե-

սան հետուէն Շահկերան ու բերդը: Իրենք բարձունքներու վրայ էին, թշնամին շատ վարերն էր:

— Եղբայր Անուշաւան, ըսաւ Սիմիկ, զարնենք դէպի հարաւ-արեւելք. լերան կողերէն ուղղակի բերդին վրայ կ'իջնենք:

— Եթէ յանկարծ բերդին վրայ յարձակում ըլլայ, ի՞նչ պիտի ընենք, հարցուց Յարութիւն:

— Քարայրները կ'ելլենք եւ կը սպասենք որ ջարդուած, դարձեալ ետ քաշուին, պատասխանեց Արա:

Բայց ո՛չ յարձակում կար, ո՛չ պատերազմի աղմուկ: Գիշերն հազիւ իջած էր, մտան բերդն եւ ուղղակի տէր Եղիշէին դացին. խաղողն առջեւը դրին, սրբեցին իրենց քրտինքը եւ քարերու վրայ նստեցան:

— Աս հրաշք է, ըսաւ քահանան, ուսկի՞ց դուք: Տիրամայրը շատ դո՛հ պիտի ըլլայ: Զարմանալի բան, ի՞նչ սիրտ եւ հաւատք ունին այս մատ մը տղաներն եւ այն վարի հրէջը կ'ուզէ ոչնչացնել այս կտրիճները: Ո՛չ, ո՛չ, դոչեց քահանան բռունցքները սեղմած, ո՛չ ձեւայիւր, դուն այս բոյնը չես կրնար քանդել, քու աչքերդ կը փորենք դանակի պէս մեր սուր եղունգներով: Դառնալով Արային՝ հարցուց. Այս երիտասարդն առաջին անգամ կը տեսնեմ, ո՞վ է:

— Եղբայր Անուշաւանն է, Շահապոնք դիւղէն մեզի հետ եկաւ, պատասխանեց Արա, կ'ուզէ ինքն ալ կրուուիլ:

— Դուք յոգնած էք, ըսաւ քահանան, դացէք պառկեցէք. վաղը Վարդանը կը տեսնէք, հիմա դուրսերն է, յարձակումի անցած պիտի ըլլայ: Անթի չէ՞ք, բան մ'ալ կերէք:

— Մենք ուտելիք շատ ունէինք, միայն քնանալ կ'ուզենք, շատ յոգնած ենք, պատասխանեց Սիմիկ:

— Դուք Վարդանին մի՛ ըսէք թէ խաղող բերած էք, պատուիրեց տէր Եղիշէ, թող յանկարծակիի գայ, միայն այս երիտասարդը ներկայացուցէք:

Շարաթ օր բերդը մեծ պատրաստութեան մէջն էր. ամէն ընտանիք իր կարելին ըրաւ ուրախ անցընելու համար: Պատանիները Վարդանին դացին Անուշաւանն ալ հետերնին:

— Առաջնորդ, ձեզի նոր կուուող մը բերինք, ըսին միասին:

Վարդան նայեցաւ երիտասարդին, անոր առնական գեղեցկութիւնն իր աչքին զարկաւ. թարմ մօրուքով, փոքրիկ պէխերով եւ զլխուն վրայ առատ մազերով լեռնցիի մը հպարտ տեսքը ունէր:

— Ուրտեղացի՞ ես հարցուց Անուշաւանին:

— Շահապոնքէն եմ, այս տղաները մինչեւ մեր կողմերն եկած էին, պատմեցին բերդին քաջութիւնները. սիրտս ըսաւ, դուն ալ թոյր կուուի դաշտ, հոն կրօնք եւ հայրենիք կը պաշտպանեն, եւ ես եկայ ձեր բախտն ու պատիւը բաժնելու: Զէնք տուէք ինձի եւ ջոկատի մը մէջ դրէք:

— Անունդ ի՞նչ է, հարցուց Վարդան, հրացան բռնել գիտե՞ս:

— Անունս Մելիքեան Անուշաւան է, տասնըհինգ տարեկանին որսի դացած եմ, հրացանն ինձ համար խաղալիկ է, պատասխանեց երիտասարդը:

— Լաւ. տունէն յետոյ իմ ջոկատիս մէջ կը մտնես, կարեւոր պատերազմները՝ կը խորհիմ թէ վերջացան, հիմա դիմանալու կռիւ է:

Բերդին մէջ բաւական լայն տեղ մը կար, տէր Եղիշէն հոն պատրաստած էր պատարազի սեղանը, քովը դրած էր ժոխուրներու դէզերը. խաղողը տաշտերու մէջ

ծածկած էր: Արեւածագին զանգակն սկսաւ հնչել, լու-
թեան մէջ իր ձայնը խառնուեցաւ թռչուններու երգե-
րուն. ին՝ղճ թռչուններ, ո՛րքան սարսափի օրեր ան-
ցուցին եւ հիմա զանգակն իրենց ոգի տուաւ, յիշեցին
զիւզին զուարթ օրերը եւ ձայն ձայնի տուին Աստուա-
ծամօր տօնը կատարելու: Բոլոր ժողովուրդը խոնուած
խորանին շուրջ, ոմանք քարերու վրայ, ոմանք աւելի
բարձր տեղեր թառած, յուզումով երգեցին պատարա-
զը: Վարի եկեղեցին ամայի էր, սուգի մէջ էր եւ ա-
ռաստաղի Յիսուսին աչքերը փորուած էին: Կէս աղօթք
եւ կէս լաց էր իրենցը. ո՛վ գիտէ թէ ի՞նչ օրեր կը սպա-
սէին իրենց: Բերդը Յիսուսի Վերնատունն էր, վարը
հրեաներ՝ որ իրենց մահը կը խորհէին:

Տէր Եղիշէ օրհնեց ժոխուրներուն դէզը, ապա բա-
ցաւ տաշտը խաղողն երեւցաւ, ոսկի եւ թափանցիկ հա-
տիկներով: Հաւատացեալները զարմացած մնացին:

— Սիրելի ժողովուրդ, այս քանի մը ողկոյզ խա-
ղողն երկինքէն իջած մանանայ է, քանի մը պատանի-
ներ, Արան եւ իր ընկերները, Շահապոնքէն բերեր են,
արիւնի եւ կեանքի գին է, ես կ'ուզեմ որ մինակ փո-
քերուն բաժնուի, քիչիկ քիչիկ, բերան թրջելու եւ
համն առնելու համար: Այն ազգը՝ որ այսպիսի անվախ
զաւակներ ունի, չի մեռնիր: Գալ տարի մեր սիրելի
զիւզին մէջ պիտի տօնենք Աստուածամօր տօնը. ես հա-
ւատք ունիմ, դուք ալ ունեցէք:

Մինչ փոքրերուն կը բաժնէին խաղողը եւ մեծերը
ժոխուրի ողկոյցներ կ'առնէին՝ գէթ հին օրերը յիշե-
լու, Վարդան իր մօտ կանչեց Արան ու իր ընկերները:

— Հիմա քեզի պատիժ պէտք է, ըսաւ Արային, ան-
խոհեմ պատանի, ես չեի՞ հրամայած՝ որ մարդ բեր-
դէն դուրս չելլէ:

— Լաւ, պատասխանեց Արա, մեզի մէկ մէկ հատ
հրացան տուր՝ երթանք վարերը պահակութիւն ընենք
իրը պատիժ:

— Վարդան, ասոնց մեղքն ինծի բաշխէ, ըսաւ քա-
հանան. իրենց գործն հրամաններուդ պէս գեղեցիկ է:
Պատերազմներուն յաճախ խոշոր ծրագիրներ կը դնեն,
բայց շատ անգամ դէպքերը կը տանին յաղթանակը եւ
հերոսներ կը ստեղծեն. ասոնք փոքրիկ հերոսներ են:

Աստուածամօր տօնն ալ երգով ու պարերով անցու-
ցին: Մկոյին թմբուկը միշտ հնչեց, զուռնան քովէն
չբաժնուեցաւ, տուտուկները մեղմ եւ քաղցր նուագե-
ցին եւ Զանգեղուր դարձեալ լսեց իր զաւակներուն երգը:

Դուրսը պահակներն աչալուրջ կը հսկէին, սահման-
ներն անխախտ մնացեր էին, բայց վարիները հանգիստ
քուն չունէին զիշերային յարձակումներէն:

— Աս կեաւուրները մժեղի կը նմանին, կ'ըսէին ի-
րարու թուրք պահակները. թոյլ չեն տար որ աչքդ դո-
ցես:

Վարդանի միակ վիշտը Սերգոյին այսքան ուշա-
նալն էր. ինքն ալ կարծես յոյսերը կտրեց. թէպէտ Եր-
ուանդ, Յովիկ եւ Վարդ վստահ սպասումի մէջ էին:
Տօնի երեկոն հրաշքի պէս բան մը պատահեցաւ, Վրէժ
իր ջոկատով գրեթէ զիւզին մօտեցած էր եւ համար-
ձակ՝ թշնամիները կը դիտէր մաղ մաղ մութին մէջ:
Քիչ մը վար ժայռի մը ետեւ հայերէն բառեր լսեց:

— Սրիկաներ, ըսաւ ինքնիրեն, հայեր են որ այլ-
ազգիներուն միացեր են մեզի դէմ:

Քիչ վերջ դարձեալ լսեց.

— Սերգոյ, առիթն է, մեզ չեն տեսներ, վեր փախ-
չինք:

— Ձէ, Սիսակ, վտանգաւոր է, վերինները կը կրակեն թուրք զինուոր կարծելով:

— Աս քանի օր, կը մօտենանք դժին եւ ետ կը դառնանք, պատասխանեց Սիսակ:

— Կեցիր, Սիսակ, լաւ միտքս ինկաւ, մեր զիւղին երգերէն հատ մը սուլեմ, եթէ վերերը զինեալներ կան՝ կը լսեն:

— Կը լսէ՞ք, հարցուց Վրէժ քովիններուն, մեր երգերէն կը սուլէ:

Վրէժ սկսաւ շատ ցած սուլել նոյն երգը: Իրարմէ հազիւ 40 մեղր հեռու էին, միայն մութն ու ժայռերը զիրենք կը բաժնէին:

— Վեր եկուր, վեր եկուր, մի՛ վախեր, չենք կրակեր, ձայնեց Վրէժ:

Ժայռին ետեւէն դուրս ելան երկու հոգի, աճապարանքով առաջ նետուեցան. քովի այլազգի պահակներ քունի մէջ էին:

— Սերգոն եմ, Սերգոն եմ, ըսաւ մէկն ու զինեալներուն հասաւ:

— Սերգոյ, հոգիս, ես Վրէժն եմ. աս ինչ հրաչք է, Աստուածածնի հրաչքն է իր տօնին համար: Շուտ բերզն ելլենք, Վարդան յուսահատ քեզի կը սպասէ:

Վրէժ Սերգոյին հետ բերզն հասաւ, դրեթէ կոխկըռտելով ասդին անդին բացօթեայ քնացողները՝ դնաց ուղղակի Վարդանին. անոր կողը խթեց.

— Վարդան, Վարդան, ելի՛ր:

— Ի՞նչ կայ, յարձակու՞մ կայ:

— Ո՛չ, հրաչք մը կայ, պատասխանեց Վրէժ. Սերգոն գտանք զիւղին մօտերը, ահաւասիկ հոս, քովդ է:

Առաջնորդը վեր ցատկեց ու զրկեց այդ զոհողութեան դիւցազնը:

— Սերգոյ, քեզ մեռած կը կարծէինք, յոյսերնիս կտրած էինք. Աստուած քեզ պաշտպանեց եւ ճիշտ այսօր խաղողորհնէքի տօնին Տիրամայրը ձեռքէդ բռնեց ու մեզի բերաւ: Ի՞նչ եղաւ, ո՞ւր մնացիր այսքան ժամանակ:

— Ինչպէս գիտէք, ամիս մ'եղաւ որ մեկնեցայ, շատ զիւրաւ խառնուեցայ ձեւայիւրի մարդերուն. հոն չունն իր տէրը չի ճանչնար: Ամէն ցեղէ, ամէն աշխարհէ մարդիկ կան, մեծ մասն աւարի համար եկած է: Ես մտայ Նախիջեւանի դունդին մէջ եւ հասայ մինչեւ դիւղ: Ա՛խ, տեսնէք մեր զիւղը, չէք ճանչնար: Պաները ժամին մէջ կը բնակին, լաւ սարքած են իրենց կեանքը, կիներով եւ տղաներով միասին են: Չգենք այդ բարբարոսներուն ըրածները:

— Ի՞նչ կը խորհին ապագայ կոխներուն մասին, այդ է կարեւորը, հարցուց Վարդան:

— Ճիշտ այդ կ'ուզէի ըսել: Այլեւս յարձակում պիտի չընեն, շատ մարդ կորսնցուցեր են, զինուորներուն կէսին չափ փախեր են: Իրենց ամենամեծ թշնամին անօթութիւնն է. զիւղերն դատարկեր են, ուրիշ ուտելիք չեն կրնար գտնել: Ես ալ դացի այլազգի զիւղեր ալիւր, պանիր եւ միս ճարելու. չէք կրնար երեւակայել թէ որքան խարազան քաշեր եմ իրենց զիւղացիներուն: Դաշտային հայ զիւղերուն վիճակն աւելի գէշ է, կատարեալ սով կը տիրէ:

— Որքա՞ն ժամանակ կրնան պաշարումն երկարել, հարցուց Վրէժ:

— Շատ շա՛տ երկու ամիս, պատասխանեց Սերգոյ. չոր հաց եւ մզլոտած պանիրով՝ զինուորը չի կուրիր:

Եթէ ձեւայիբի հասցէին հայհոյանքները լսէիք, ահանջ-
նիդ պէտք էիք գոցել: Տաք ջուր մը մէջը քանի մը լու-
բիայ եւ ոսկորներ, իրարմէ կը յափշտակէին:

— Մեր մասին ի՞նչ կ'ըսէին, հարցուց Վարդան:

— Սատանայ են, սատանայ են, կ'ըսէին. իսկ այդ
ձերունի Վարդանը, սատանաներուն սատանան է:

— Զիս ձերունի՞ կը կարծեն:

— Մտքերնէն կրնա՞յ անցնիլ որ երիտասարդ մը,
խենթերու գլուխ անցած՝ այսպէս իրենց դիմադրէ,
պատասխանեց Սերգոյ: Մեր ընելիքն է, Վարդան, քա-
ջալերել բերդին ժողովուրդը, վստահ եմ որ չարչա-
րանքի մէջ է. սեղմուած չորս պատերու մէջ, մէկը միւ-
սին վրայ, հերոսական համբերութիւն պէտք է դիմա-
նալու համար: Ծատը գնաց՝ քիչը մնաց:

— Մեր քահանան ժողովուրդին հետ է. թէ՛ պղղ-
տիկները կը հոգայ եւ թէ՛ ձերերը. ինքն է որ գժգոհ-
ները կը խրատէ, առօրեայ կռիւները կը դադրեցնէ,
պատասխանեց Վարդան: Բայց ըսէ ինձ, Սերգոյ, սա
հետք եկողն ո՞վ է, լրտես մը չըլլա՞յ:

— Զէ, Վարդան, խեղճը բռնի զինուոր ըրեր էին.
ես զինքը ճանչցայ երբ միասին այդ անիրաւեններուն հա-
մար պահակութիւն կ'ընէինք: Տեսայ որ երեկոյ մը ե-
րեսը խաչ հանեց, Հայր մերի պէս բաներ մը ըսաւ:
Հա՞յ ես, հարցուցի մեր լեզուով. հայ եմ, պատասխա-
նեց. Ծահապոնք գիւղէն եմ, ըսաւ. տուն կը դառնայի
Նախիջևանէն, ոչխարի պէս զիս քշեցին իրենց մէջ ու
զինուոր ըրին: Բայց հաւատա՛, եղբայր, մէկ զնդակ
չեմ պարպած բերդին դէմ, խաչին կրակած պիտի ըլ-
լայի, հաստատեց նա:

— Լաւ, վաղը կը տեսնուինք, պատասխանեց Վար-
դան, գնա՛ ընտանիքիդ մօտ, որ միամիտ ըլլան ողջու-

թեանդ համար, կինդ ու տղաներդ ամէն օր քովս էին
եւ լուրի կը սպասէին:

Յաջորդ օրը Վարդան կանչեց Անուշաւանը եւ հար-
ցուց.

— Ձեր դիւղէն Սիսակ անունով մէկը կը ճանչնա՞ս:

— Այո՛, մեր դիւղէն է, բայց երկու ամիս է կորսու-
ւեր է. ըսին թէ այլազգիները ճամբան զինքն սպան-
նած են:

— Ի՞նչ տեսակ մարդ էր, թրքասէ՞ր էր, հայութիւն
ունէ՞ր, դրամասէ՞ր էր, ի՞նչ գործով կը զբաղէր, հար-
ցուց Վարդան:

— Հողագործ մարդ էր, թրքասէր չեմ կարծեր,
բարեպաշտ էր, միշտ տէր Հօր հետն էր. մեղք եղաւ իր
ընտանիքին, տունն հացի կարօտ մնաց:

Քիչ վերջ Վարդան կանչել տուաւ Սերգոյին հետ
եկողը: Նա զարմացած մնաց երբ Անուշաւանը տեսաւ
բերդին մէջ:

— Սիսակ, քեզ մեռած կը կարծէինք, տունդ սուգի
մէջ է: Ո՞ւր գացիր, ո՞ւր մնացիր, հարցուց Անուշաւան:

— Զգէ եղբայր, մարդ որ բախտ չունի, ամէն չա-
րիք գլխուն կու գայ: Չեմ գիտեր երեսիս վրայ ի՞նչ տե-
սան, զիս բռնեցին եւ թուրքի զինուոր ըրին. մէյ մը
նայէ, ես թուրքի կամ պարսկի կը նմանի՞մ: Ըսէի թէ
հայ եմ, զիս շան սատակ կ'ընէին, բերանս չբացի: Աս-
տուած հրեշտակ մը զրկեց, անունը Սերգոյ էր, նա զիս
ազատեց եւ բերդ բերաւ: Մեր տունն ի՞նչպէս են, Մա-
նուշա, տղաներս ո՞ղջ են: Ե՞րբ պիտի կարենամ երթալ
եւ համբուրել զիրենք:

— Ողջ են, Սիսակ, աղքատ են, բայց կ'ապրին, պա-
տասխանեց Անուշաւան:

— Ինձի նայէ, Սիսակ, ըսաւ Վարդան, հրաման պիտի տամ՝ որ շուտով երթաս ընտանիքդ տեսնես:

— Ո՞ր ճամբայէն, դայերու պէս սարեր, ձորեր բռներ են ձեւայիրի մարդիկը:

— Ո՛չ, լեռներու ճամբաներն ազատ են, անոնք Ձանդեղուրէն կը վախնան. մինչեւ իսկ պատանիներ գացին եւ եկան. բայց մէկ պայմանով, պիտի ըսես զիւզացիներուն՝ որ ոչ մէկ ուտելիք ծախեն այլազգիներուն: Ունեցածնին անտառներ կամ լեռներ տանին եւ պահեն, այս բերդին բաղմութիւնը վաղը միւս օր ուտելիքի պէտք պիտի ունենայ եւ Շահապոնքը պէտք է օգնութեան դայ:

— Գլխուս վրայ, առաջնորդ, հաց միայն չէ՝ նըշխարով ընդառաջ կու դանք:

— Վաղը կընաս մեկնիլ, հարցուր Անուշաւանին թէ ինչ ճամբայ պիտի բռնես:

— Ըսէ մայրիկիս թէ որդիդ լաւ է, արդէն երկու այլազգիներ միւս աշխարհ զրկած է. շատ կը համբուրեմ իր երեսները: Տէր Հօր ձեռքը պապ, ըսէ որ մեզի համար սուրբ պատարագ ընէ, խնդրեց Անուշաւան:

Սերգոյին բերած լուրերը կէտ առ կէտ ճիշտ էին: Խաներն որոշած էին խիստ պաշարում: Անոնք բռնած էին դաշտային ճամբաները, մօտակայ անտառները եւ Շահկերտի շրջակայքը, սակայն լեռներու մասն ազատ էր եւ լեռները բերդակալներուն կերակուր չէին կրնար տալ: Փոքրիկ ընդհարումներով ամիս մ'ալ անցաւ: Այլապազի բանակին մէջ ջղայնութիւնն հիւանդութեան փոխուեցաւ:

Սակայն բերդին մէջն ալ վիշտերը պակաս չէին: Հսկայ քաղաք մ'էր բերդը, բայց քարուքանդ քաղաք. ի՞նչպէս կարելի էր գէթ քիչ մը հանդիստ գտնել: Եր-

բմն մանուկներ կը մեռնէին. անոնց հետ մայրերն ալ կարծես կը մեռնէին. ողբերով կը լեցուէր բերդը. մէկուն ցաւը միւսին էր, մէկ տուն, մէկ ընտանիք եղած էին: Ասոնց մէջ կար Նազար աղան, ԳՅԻ կը մօտենար, բերդին հայրն էր, բժիշկն էր, զինեալներուն հօգին էր եւ Վարդան ստէպ իր խորհուրդներուն կը հետեւէր: Հակառակ որ առաջնորդին հրամանով լաւ տեղ, լաւ ուտելիք ունէր, բայց իր գաւազանն սկսաւ շատ դողդոջալ: Յաճախ իր թոռներէն մին զինքը բռնած՝ բերդէն դուրս կը տանէր որ նա զիտէր Շահկերտը, դաշտերը, մինչեւ Արաքսը:

Օր մը աճապարանքով Վարդանը կանչեցին. Նազար աղան շատ ծանր էր, թոքերը բռնուած էին, հեւալով կը շնչէր: Երբ երիտասարդը տեսաւ, կանչեց իր մօտը, անոր գլուխը դողդոջ ձեռքերուն մէջն առաւ, շոյեց մազերն ու ըսաւ.

— Ես կը մեռնիմ, Վարդան:

— Ո՛չ, պապի, պատասխանեց առաջնորդը, դուն պիտի ապրիս մինչեւ տեսնես մեր վերջնական յաղթանակը:

— Որդի, ամէն բան տեսայ, տեսայ Շահկերտի գաւազաններն իրրեւ առիւծներ, որոնց բաշերը ցցուեցան այս բերդին վրայ եւ մոնչեցին դէպի կատաղի թշնամին: Յաղթանակն արդէն մերն է: Ես պիտի չլսեմ ձեր թրմբուկներն ու պարերը, բայց մէկ բան կը խնդրեմ. զիս գրէք իմ սիրելիներուս քով եւ երբ յաղթանակով զիւզն իջնէք, անցէք իմ շիրիմիս քովէն:

Ծերունի Նազարը շատ դանդաղ խօսեցաւ, ապա դարձաւ Վարդանին եւ հարցուց.

— Ո՞ւր են ընկերներդ:

— Հիմա կու դան, Նազար աղայ:

Շուտով հասան միւսներն ալ. Յովիկն ալ վազեց իր կազ ոտքերով, չըջապատեցին ծերունին, ինչպէս վիրաւոր հերոս մը կը չըջապատեն զէնքի ընկերները: Նազար աղան ուխտեալ զինուոր մ'էր եւ Շահկերտին 93 տարուան պատմութիւնն էր:

Տէր Եղիշէ սրտագին Պահպանիչ մ'ըսաւ, միւսները ծերունիին ձեռքերն համբուրեցին: Յանկարծ նա վերջին կորովն առաւ.

— Տարէք զիս, ըսաւ, բերդէն դուրս, մեր լեռներու կողքին, Շահկերտը տեսնեմ վերջին անգամ, հովերուն սոյլը լսեմ, թռչուններուն մեղեդիին: Ինչո՞ւ չէք երգեր իմ պապերուս երգը:

Չանդեղուրը բարձր սար է

Արարատին հաւասար է.....

Նազար աղային շունչը կտրեցաւ, հեւք մ'եկաւ վրան, աչքերը նորածագ արեւէն շող առին, բայց շող չտուին այլեւս.....

Տրտմութիւնն իջաւ թանձր թեւերով ամբողջ բերդին վրայ. մեծ ընտանիքի մը հայրը վախճանած էր: Վարդան եւ ընկերները լուս ծնրադրեցին իր քով, մինչեւ որ Տէր Եղիշէն վիզէն ուրար անցուց, զիրք առաւ եւ լալով Հոգևոցն ըսաւ:

Յաջորդ օրը զանդակն իր ձայնը փոխեց, եղաւ տրտում յուզարկաւոր. բազմութիւնը տարաւ այդ 93 տարիներու կեանքը բլրան մը վրայ թաղելու, ուսկից Նազար աղան կրնար Շահկերտը տեսնել:

Վարի թշնամիները ոչինչ զիտէին բերդի կեանքի մասին, անոնք կը կարծէին թէ օրական տասնեակներ սովահար կը մեռնին. կը զարմանային թէ ինչո՞ւ բերդակալները չէին սպաններ այդ յամառ Վարդանը եւ գլուխն իրենց նետել: Ամիս մ'ալ սպասեցին սեղմելով

իրենց շարքերն, ուսկից կարելիութիւն կար բերդակալներուն ուտեստ հասնիլ: Վերինները, սակայն, զիշեւրային բուռն յարձակումներով երբեք լքումի նշան չէին տար: Ճեւայիբ կատղած էր, միւս խաները յուսալքուած՝ վերադարձի ճամբան կը խորհէին: Հոկտեմբերն անցնելու վրայ էր, պիտի դար սարսուտ Նոյեմբերը, ապա ձիւնայից Դեկտեմբերը: Ո՛չ մէկ աւար գտան, ո՛չ մէկ պատիւ շահեցան. բերդն իրենց զիմացը կանգուն էր, զանդակն ամէն օր կը հնչէր՝ խոցելով իրենց սիրտն ու ականջները:

— Ճեւայիբ, ըսին միւս խաները, լաւ է պատուաւոր հաշտութիւն, քան անպատիւ պարտութիւն. չենք զիտեր արդեօք այդ բե՞րնդն աւելի զօրաւոր է՞ թէ մէջինները: Քիչ առենէն սարերէն կ'իջնէ իրենց դաշնակիցն՝ ահաւոր ձմեռը եւ մենք ամօթահար խոյս կու տանք:

— Ի՞նչ կ'ուզէք ուրեմն, հարցուց Նախիջեւանի խանը:

— Պատուաւոր հաշտութիւն. մարդ զրկենք, կանչենք այդ Վարդան կոչուածը, անշուշտ տարեց, փորձառու եւ զիտակից մէկն է, պիտի չուզէ իր ժողովուրդն երկար ամիսներ սովի եւ նեղութեան մէջ պահել, պատասխանեցին խաները:

Ճեւայիբ թթուեցուց երեսը, պոստեց յօնքերը, բըռունքը վերցուց դէպի բերդը գոչելով.

— Ալլահը վկայ, այսօր չէ, վաղը ճիրաններուս մէջ պիտի առնեմ այդ կեաւուրները եւ պիտի ճզմեմ, արիւննին պիտի քամեմ, հում հում միտերնին պիտի ուտեմ. ստրուկներն իրենց տիրոջ դէմ ելլեն, ո՞վ տեսած է, պոռաց Ճեւայիբ եւ ժամին կամարներն հնչեցին խռուպոտ արձագանգով:

— Իջիր, իջիր հպարտութենէդ, պատասխանեցին խաները. խօսքերով պատերազմ չ'ըլլար, դիմացդ կը տրիճներ կան, մէկն հազարի դէմ. մահուան նուիրեալներ՝ որոնք մեզ պարտութենէ պարտութիւն տարին:

Այդ խօսակցութեան ժամանակ եկաւ բարձրաստիճան սպայ մը, խոնարհեցաւ ձեռայիրին առջեւ եւ ըսաւ.

— Մեծապատիւ խան, Հայաստանի լոյսն ու շահը, վերի կեաւորներէն ջոկատ մը, թերեւ 100 հոգի, բուռն յարձակումով խորտակեցին մեր աջ թեւը, անցան դիժերը եւ գիւղն ու ձեզ աքցանի մէջ պիտի առնեն: Անոնցմէ ոմանք, աչքերովս տեսայ, զինեալ աղջիկներ էին եւ ի՛նչ կատաղութեամբ ումբ կը նետէին, ես երբեք չէի տեսած:

— Ծո՛ւտ, պահակազօրքս առ եւ հակադարձակումի անցիր, հրամայեց ձեռայիր:

Միւս խաները դառն ծիծաղ մ'ըրին ըսելով.

— Դեռ շատ բան կը լսես:

Որո՞ւ դէմ յարձակէին, վերիններն աներեւոյթ ուղիներ էին, կային ու չկային. լեռներն իրենց թիկունքն էին, բերզն անսասան պահակ:

Սպան կանգնած էր իր տեղը:

— Ինչո՞ւ չես մեկնիր, հարցուց խանը:

— Բանակն անօթի է եւ չ'ուզեր կռուիլ. երեք օր է չոր հաց մը չէ կերած, շատեր դասալիք եղած են. հազիւ ամբողջ շարքին վրայ 3000 մարդ ունինք:

— Զինուոր զրկեցէք կեաւոր եւ իսլամ գիւղերը՝ բռնի առէք ինչ որ ուտելիք ունին, ըսաւ խանը:

— Ո՛չ իսլամ գիւղը, ո՛չ կեաւորը պատառ մը հաց կու տայ, մեզմէ շատեր գացին եւ ա՛լ չզարձան, պատասխանեց սպան:

Գիշերն հասնելու վրայ էր, խանը դուրս ելաւ իր

քնակարանէն, աչքերը դարձուց դէպի բերդը, շատ հեռուէն թմբուկի ձայն լսեց եւ սպա բազմութեան մը հեռաւոր, անորոշ երգը. գլուխը կախեց, տրտում ստուեր մը իր սիրտը պատեց, գրեթէ կ'ուզէր լալ, անիծեց իր շար բախտը, բերզն ու մէջինները, անիծեց այն վանգակը՝ որուն ձայնը դանակի պէս իր սիրտը կը մըխուէր: Ետեւէ ետեւ ձախորդ լուրեր կը հասնէին, բայց նա յոյսով կը սպասէր թէ բերդէն պիտի իջնէին քանի մը ծերունիներ, ճերմակ դրօշակ մ'իրենց ձեռքին մէջ, պիտի գային, իր ոտքը պիտի իյնային գութ եւ ներողութիւն խնդրելու, եւ ինքն ոտքերուն տակ պիտի առնէր այդ ստրուկ կեաւորները՝ յաղթական բերդը մըտնելով:

Պարբերայ երազ էր ասիկա. օրերը կ'անցնէին, շարաթներ կ'ըլլային. սարերու կատարին օր մ'ալ ճերմակ քօղ մը տեսաւ:

— Զմեռը, ձմեռը, հայկական սոսկալի ձմեռը, ըսաւ ինքնիրեն եւ քիչ մը ցուրտ զգաց: Յիշեց խաներուն խօսքը. լաւ է պատուաւոր հաշտութիւն՝ քան անպատիւ պարտութիւն:

Երկու օր յետոյ, բերդի աշտարակին վրայ տեսաւ սպիտակ խոշոր լաթ մը, մէջն ոսկի թեւերով խաչ մը գծուած էր:

— Տեսէ՛ք, տեսէ՛ք, կանչեց խաներն ուրախութեամբ, յանձնումի դրօշակ պարզեցին:

— Կը սխալիս, ձեռայիր, պատասխանեցին, յաղթանակի դրօշակ է, սպիտակին մէջ ոսկեգոյն խոշոր խաչ մը կայ, լաւ նայէ. կեաւորներն երբ իրենց խաչը պարզեն, ըսել է թէ պատրաստ են մեռնելու՝ քան թէ յանձնուելու:

— Այո՛, ես ալ տեսայ, ամիսներ առաջ փոքրիկ

հայ պատանի մը բռնեցին. կարելի չեղաւ բերդի մասին բերնէն խօսք մ'առնել, մեր ճշմարիտ հաւատքին դարձնել. ես ալ ծառէն կախել տուի զինքը:

— Շատ զէչ ըրիր, պատասխանեց Դավրէթի խանը, ես ըլլայի պարզեւ կու տայի եւ կ'ըսէի. գնա՛, տղաս, քուկիներուդ քով դուն արժանի ես ապրելու:

— Կոյրն ալ տեսնելու համար պէտք է գլուխը պատին դարնէ, պատասխանեց Երեւանի խանը:

Ճեւայի տեսաւ որ ժամանակն իրեն թշնամի է, օրէ օր բանակը հացի կարօտ կը մնայ, խաներն յուսալըքուած են, բերդը դրօշակ ունի, յարձակումները չեն դադրիր եւ իր ձեռքէն խոյս կու տայ նոյնիսկ պատուաւոր հաշտութիւնը:

Կանչեց բարձրաստիճան սպայ մը եւ պատուիրեց.

— Հետդ երկու զինուոր առ, սուրիդ ծայրը ձերմակ դրօշակ մ'անցուր, բերդն ելիր եւ ըսէ. Բարեգութ խանը չ'ուզեր այլեւս անմեղ արիւն թափել, գիտէ ձեր տառապանքներն այդ քարքարուտ բերդին մէջ. լսած է ձեր մանուկներուն եւ կիներուն լացն ու ճիչը, սովամահ մեռնիր. կ'առաջարկէ պատուաւոր հաշտութիւն կնքել եւ եղբայրաբար ապրիլ՝ ինչպէս առաջ: Եթէ ընդունին, տեսակցութիւն մը յարմարցուր իմ եւ Վարդանին մէջ: Նայէ, հպարտ ըլլաս, այնպէս խօսէ՛ ինչպէս տէրն իր ստրուկին հետ:

Արեւոտ օր մ'էր, սպան դուրս ելաւ իրենց զիծերէն, ձերմակ դրօշակը բարձր բռնած. հանդիպեցաւ Սերգոյի ջոկատին. անոնք հրաման տուին առաջ դալու: Սպան տեսաւ Սերգոն, աչքերը լայն լայն բացած նայեցաւ անոր.

— Պիտի ճանչնամ այս մարդը, ըսաւ ինքնիրեն. կարծես իմ գունդիս մէջն էր: Զինուորական բարեւ տը-

ւաւ ըսելով. զիս ձեր առաջնորդին տարէք, ձեւայի խանին կողմէն կու գամ:

Երբ դէպի բերդ կ'ելլէին, սպան հարցուց Սերգոյին.

— Կարծեմ քեզ պէտք է ճանչնամ, բայց ո՞ւր տեսեր եմ, չեմ յիշեր:

— Ես ալ քեզ կը ճանչնամ. հանդիպումներ կան՝ որ լաւ է դադտնի մնան:

— Սերգոյ, ըսաւ իր զինեալներէն մին, ասոնց աչքերը պէտք է կապենք, մեր բերդն ու զիրքերը չտեսնեն:

— Պէտք չկայ:

Լուր տուին Վարդանին՝ որ բերդին ձախ կողմն էր, եւ Շաքէին ու Մարոյին հետ կը վիճէր զիշերուան յարձակումներու մասին. աղջիկները կողմն էին աւելի մը խըրճիլ թշնամի զիծերուն մէջ, ինքը խոհեմութիւն կը քարոզէր:

Եկաւ Վարդան իր պարզ զիւղացիի հագուստով, մէջքին ատրճանակ մ'ունէր, գլխուն՝ ուլիկի մորթէ բարախ մը եւ մէջքին՝ կաշիէ դօտի մը:

— Սուրդ եւ ատրճանակդ զինուորին յանձնէ, ըսաւ սպային:

Ինքն ալ իր ատրճանակը մէկզի դրաւ եւ ձեռքն երկարելով՝

— Բարի եկած ես, ըսաւ. ի՞նչ կը փափաքիս:

— Վեհափառ ձեւայի խանին կողմէն կու գամ՝ պատուաւոր հաշտութիւն առաջարկելու: Խանը դուրս եւ սէր ունի ձեր վրայ, չ'ուզեր որ ամիսներով այդ խեղճ մանուկները, կիները, ծերերը առանց տունի, օճախի, բաց օդին մէջ մնան. ապրինք եղբայրաբար՝ ինչպէս առաջ:

— Խանն ինքն սկսաւ պատերազմը, թող ինքը դադրեցնէ, պատասխանեց Վարդան:

— Հպատակ մը չի կրնար ներկայանալ մէջքէն զէնք կախած, պատասխանեց սպան:

— Վարդան խանին հպատակը չէ եւ պատերազմիկ է, հաւասար հաւասարի զէմ, ըսաւ առաջնորդը:

Սպան ընդունեցաւ այս էական պայմանը եւ որոշեցին տեսակցիլ երկու օր յետոյ:

— Անշուշտ այս օրերս զէնքերը կը լռեն, ըսաւ ըսպան մեկնելէ առաջ:

— Այո՛, զէնքերը կը լռեն, սովորական ընդունուած պայման է:

Բերդին մէջ խանին առաջարկած հաշտութիւնը մեծ ցնծութիւն պատճառեց: Միոյ իսկոյն իր թմբուկն առաւ, քովը գունդներ եւ տուտուկներ շարեց, ինքը դարկաւ, ինքը պարեց:

Վարդան եւ ընկերները խորհեցան պայմաններու մասին: Պօսք առաւ տէր Եղիշէն:

— Ըստ իս, երկու պայմաններ դնենք. անմիջապէս հեռանալ մեր սահմաններէն մինչեւ կամուրջէն անդին. երկրորդ՝ տասը տարի Շահկերտ խանին տուրք պիտի չտայ, իր վնասները դարմանելու համար:

— Ո՛չ, պոռայ Յովիկ, այլեւս ո՛չ խան կը ճանչնանք, ո՛չ պարսիկ. դո՛ւրս մեր հողերէն: Պէտք է վճարէ մեր վնասները, թողութիւն խնդրէ եւ երդում ընէ այլեւս մեզի զէմ զէնք չբարձրացնել:

— Պոհեմ ըլլանք Յովիկ, ըսաւ Օնիկ, մեր ուժերն ալ անսահման չեն: Եթէ մեր սարերու մելիքները մեզի հետ ըլլային՝ մէկ հատ այլազգի այս կողմերը չէր մըտներ, մենք փոքրիկ զիւղ մ'ենք, խանը իր կռնակը հսկայ կայսրութիւն մ'ունի. շուններն իրարու հետ կը զզուին, բայց գայլի զէմ իրարու կը միանան:

— Սիրելի Յովիկ, ըսաւ Վարդան, դուն կրակոտ

զինուորականի պէս կը խօսիս, հոս քաղաքականութիւն պէտք է, այնպէս չէ՞ Վարդ:

— Կանչենք նաեւ մէկ քանի հատ հասակաւոր մարդիկ, անոնց կարծիքն ալ առնենք, ըսաւ Շաքէ, հարցը շատ կենսական է:

Չորս հինգ տարեց զիւղացիներ ալ եկան. կար Վարդանին հայրը, Արային հայրն ալ եկած էր: Գրեթէ բոլորն ալ յիսունէն վեր մարդիկ էին:

— Դուք երեսասարդներ, ըսին, արջը չզարկած՝ մորթը ծախու հաներ էք: Պանը դեռ ողջ է. այս տարի չէ, դալ տարի կրնայ կրկին հազարներով մեր վրան դալ. պատուաւոր հաշտութիւն առաջարկելն արդէն մեծ բան է, մեզի համար կատարեալ յաղթանակ է. ընդունինք տէր Հօր երկու պայմանները եւ տեսնենք տասը տարի վերջ թերեւս անկախ Հայաստան մը կո՛ւնենանք:

— Սակայն, ըսին Մարոյ եւ Շաքէ, մեր ձեռքերով շինուած դրօշակը բերդին վրայ պիտի մնայ:

— Դրօշակը բերդին վրայ է եւ կը մնայ, պատասխանեց Երուանդ:

— Ուրեմն, ըսաւ Վարդան, կ'ընդունինք տէր Եղիշէի երկու պայմանները:

— Կը խորհի՞ս, ըսաւ Շողիկ, թէ մէկ տեսակցութեամբ կարելի պիտի ըլլայ վերջնական հաշտութիւնը:

— Եթէ հարկ ըլլայ տասն անգամ ալ կը տեսակցինք, պատասխանեց Վարդան, տեսնենք խանն ի՞նչ պիտի առաջարկէ:

Վարդան իր հետն առաւ Սերգոն իբր թարգման, Անուշաւանը, Արան, Վարդն ու Վրէժը իբր պահակներ:

— Դուք, ըսաւ Յովիկին եւ Երուանդին, 100 զինեակներով 100 մեզը վերեւ, շարքի կայնած, զէմքերնիդ զէպի զիւղ կանգ կ'առնէք: Աւոն, Երուանդն այ-

գիներու կողմը կանգ կ'առնեն թշնամիին դէմ, Օնիկ բերդին վրայ կը մնայ. ես այս մարդերուն խօսքին եւ հաւատքին վրայ վստահութիւն չունիմ. պատիւով չէ, զէնքով կը հասկնան:

Մինչ Վարդան մեկնելու վրայ էր, քառասունի մօտ կին մը ներկայացաւ, սեւ լաթ մը գլխուն վրայ, սեւ վիշտ մը սրտին մէջ, աղաչական նայուածքով ըսաւ.

— Վարդան, որդի, դուն խանին կ'երթաս, ըսէ իմ Գէորդ որդիս ինձ դարձնէ. երեք ամիս եղաւ, դնաց ու չեկաւ. մօր սիրտն ի՞նչպէս դիմանայ. իմ մենուճար որդիս, այսօր 14 տարեկան պիտի մտնէ: Մտաղ ըլլամ քեզի, Վարդան, մեռելներուդ հոգուն համար, իմ Գէորդս ա՛ռ ու բեր:

— Հա՛, մայրիկ, պատասխանեց առաջնորդը, քու Գէորդը կ'առնեմ կը բերեմ եթէ ողջ է, ապա թէ ոչ քեզ հերոսի մայրիկ պիտի կոչեմ:

Որոշուած պահուն, Վարդան իր չորս պահակներով եւ թարգմանով իջաւ չէզոք դօտին. տեսնուեցան խանն իր բարձր գլխանոցով, շքեղ զգեստներով, սուրը մէջքին եւ կեղծ հպարտութիւնը սրտին մէջ: Ճեւայիբ ուշադրութեամբ նայեցաւ Վարդանին, պարզ գիւղացի մը, թէպէտ առնական դեղեցկութեամբ, իր հետ դաշինք պիտի դնէր: Դժուարութեամբ ձեռքն երկարեց բարեւելու. նա միշտ արհամարհանք եւ պժղանք ունեցեր է հայու մը բարեւ տալու. հիմա գիւղացի մը, կեաւուր մը իր դիմացն, հաւասար հաւասարի հետ, դաշինքի պիտի նստէր:

— Ասո՞նք են, հարցուց նայելով Վարդանի պահակներուն, քու պատուական զինուորականներդ, ասոնք մանուկներ են:

— Այո՛, պատասխանեց Վարդան, նայեցէք դէպի

վեր, հոն ալ ասոնց զինուած հայրերը կան, մայրերը կան եւ անառիկ բերդը կայ:

— Բայց ի՞նչ սիրուն տղաներ ունիք, ըսաւ խանը նայելով Անուշաւանին, մեղրի կաթիլ կը նմանին:

— Մաքուր ցեղի զուակներ են, պատասխանեց Վարդան:

— Ես, ըսաւ խանը, հայրական դուրս ունիմ իմ հայ հպատակներու համար: Պատերազմը գէշ բան է. որոշեցի ներել ձեզ եւ դադրեցնել աւելորդ արիւն թափելը: Դաշինքի պէտք չկայ. ես բանակներս կը քաշեմ եւ Նախիջևան կը մեկնիմ, դուք կը շարունակէք մնալ բարի հպատակներ, տալով տարուէ տարի ինչ հարկ որ պահանջեմ:

— Ո՞վ պիտի հատուցանէ մեր վնասները, ո՞վ պիտի չինէ մեր քանդուած տուները, մեր այգիները, մեր եկեղեցին, Աստուծոյ տունը, որ դուն քեզի բնակարան ըրիր, հոն կերար, խմեցիր եւ հայհոյեցիր մեզի, պատասխանեց Վարդան: Պաղաղութիւնն առանց պայմանի չ'ըլլար, կարելի չէ մէկն սպաննել եւ ներողութիւն ըսել ու անցնիլ: Դուն ուզեցիր Շահկերտն սպաննել, քարուքանդ ընել, բայց իր զուակները ցոյց տուին թէ զիտեն կռուիլ, մեռնիլ կամ յաղթել: Կ'ուզե՞ս գիտնալ մեր պայմանները:

— Ես ձեզի ներելու եկեր եմ, ոչ թէ պայմաններ ընդունելու, ըսաւ խանը:

— Եթէ այդպէս է, պատերազմը կը շարունակենք եւ զիտցիր, ձեւայիբ խան, մէկ երկու շաբաթէն քեզ ալ գերի կը բռնենք. մեր ուտելիքն ու զէնքերը չեն հատնիր, վերն հարիւրներով ուժը եւ հրացան կան պատրաստ:

Պանը գլուխը կախեց, քիչ մը մտածեց, շփեց իր

մօրուքը, աչքերը վեր բարձրացուց, հոն շարուեր էին մարտիկները, կայտառ եւ պատրաստ կռուելու, մինչ իր բանակայիններն ամէն օր դասալիք կ'ըլլային, եւ թերեւս օր մը մինակը մնար լեռնցիներուն դէմ:

— Ինծի նայէ, Վարդան, ըսաւ մեզմ շեշտով, ներելը բարի հօր մը զգացումն է, ես առատաձեռն մարդ եմ, կ'ուզեմ որ իմ հպատակներս ամէն կիրակի հաւունենան իրենց սեղանին վրայ, երջանիկ ըլլան. ես պատրաստ եմ ձեզի օգնելու, դուն ըսէ ի՞նչպէս կրնամ դարմանել ձեր ցաւերը:

— Մենք երկու պայման ունինք. առաջին՝ անմիջապէս բանակներով հեռանալ մեր սահմաններէն, երկրորդ՝ տասը տարի Շահկերտ՝ խանին տուրք չի տար եւ հարկապահանջ չ'ուզեր տեսնել:

— Բայց կը մնաք հպատակ:

— Այո՛, անուանապէս:

— Այդ բերդին վրայի դրօշակը վար կ'առնէք եւ իմ դրօշակս կը դնէք:

— Ատիկա քրիստոնէութեան նշանն է. տես մէջ խոշոր խաչ կայ եւ այդ խաչը կը մնայ Շահկերտին վրայ:

— Եթէ այդպէս է, ըսելիք չունիմ, պատասխանեց ձեւայիր: Տասը տարի ձեր տուրքերը կը բաշխեմ, չըսէք թէ աղահ եւ բռնաւոր է ձեւայիր խանը: Գրելու եւ ստորագրելու պէտք չեմ տեսներ, խանին խօսքը՝ Աստուծոյ խօսք է:

— Ով որ դաւաճանէ, թող Աստուծոյ պատիժն առնէ, ըսաւ Վարդան:

— Մահմէտը վզին չոքի, պատասխանեց խանը:

— Մէկ բան մ'ալ կայ, ըսաւ Վարդան, դուն մեր գիւղէն հայ մանչուկ մը, հաղիւ 13 տարեկան, սպաններ եւ ծառէն կախելով. մայրն իր որդին կ'ուզէ, ի՞նչ

պատասխանեմ, ինչո՞վ պիտի քաւես այդ անմեղ աբիւնը:

Խանը յիշեց այդ քաջ պատանին, իր դաշնակից խաներն ալ երեսին զարկած էին:

— Պատերազմ էր, կրակը թացն ալ չորին հետ կ'այրէ. մեզի համար լրտես մ'էր, բայց քաջութեամբ մեռաւ, քաջի մը մահը դրամով կարելի չէ հատուցանել. եթէ կ'ուզէք, թող քսան տարի այդ ընտանիքը հարկ չ'ըճարէ սողուն փոխարէն:

— Գրամական հատուցումի պէտք չունինք, ըսաւ Վարդան, անոր վրէժն այս պատանիներն արդէն առած են, ցոյց տալով Արան: Ուրեմն երկու օրէն մեր զինեալները կամաց կամաց գիւղ կ'իջնեն, եթէ պարսիկ զինուոր մը տեսնեն՝ հրաման ունին կրակելու:

— Կ'ընդունի՞ս եթէ քեզ իմ բանակիս զօրավար դընեմ, ըսաւ խանը, կը տեսնեմ որ քաջ եւ խելացի երիտասարդ մ'ես:

— Ո՛չ, ես մեր հողերը պիտի մշակեմ, պատասխանեց Վարդան:

Խանը սեղմեց Վարդանին ձեռքը եւ բաժնուեցաւ իր պահակներով:

Երկու օր յետոյ Վարդան զինեալ շարքեր զրկեց դէպի գիւղ, ոչ ոք դտան, նոյնիսկ պատերուն տակ կատուններ չկային: Ուրիշ ջոկատ մը բերդին աջ կողմէն իջաւ այգիները, հասաւ Արաքսի ափերը եւ բռնեց կամուրջը:

— Նապաստակի պէս փախեր են, ըսաւ Աւոյ Յովիկին, որ միասին կամուրջին վրայ էին:

Օնիկին ջոկատը գիւղ մտած էր, նա լուր զրկեց Վարդանին՝ թէ թշնամին բոլորովին հեռացած է, եթէ կ'ուզէ՝ կրնայ ժողովուրդը վար իջեցնել:

Հաշտութեան լուրը կայծակի պէս տարածուեցաւ բերդին մէջ. Մկոյ առաւ թմբուկը, կանչեց զուռնայ եւ տուտուկ, ընտանիքէ ընտանիք անցաւ ուրախ լուրը տալու: Ժամկոչը վազեց զանգակին այնքան ուժով զարկաւ՝ որ ձայնը կտրեց լեռ ու ձոր: Գրեթէ մէկ շաբաթ տեւեց մինչեւ որ մարդ եւ անասուն, ապրանք եւ ուտելիք ելան բերդէն դուրս: Ամէն ոք իր տունը վազեց, ոմանց տուներն այրած էին, ոմանց օճախները մարած էին, չորս պատեր մնացած էին, ախոռի վերածուած: Ո՛րքան կիներ լացին իրենց տուներուն համար:

— Մենք, ըսաւ Վարդան, մէկ ճակատագրով բերդին մէջ ապրեցանք եղբայրաբար, պէտք է որ հիմա միասին շինենք քանդուած տուները. ամէն մարդ իր երդիքին արժանի է:

Բախտաւորն անբախտին հետ աշխատեցաւ: Երբեք չէր տեսնուած այսքան սրտագործով հայութիւն. Վարդանի խօսքն հրաշք էր իրենց համար: Երբ տէր Եղիշէն ժամ մտաւ, աչքերը մթնցան, անարգուած եւ աղբանոցի վերածուած էր: Տեսաւ առաստաղի վրայ Յիսուսի աչքերը կուրցած:

— Քոռնան անոնք՝ որ քեզ այսպէս ըրին, Յիսուս իմ, ըսաւ յուզուած:

Գիւղին պառաւներն ու հարսերը ժամին պատերն համբուրեցին, աղօթք ըրին,

— Փառք քեզ, Աստուած, ըսելով, դու մեզ փրկեցիր չար սատանայէն:

Եկաւ Արա իր ընկերներով, եկան Շողիկ, Մարոյ եւ Շաքէ եւ ըսին տէր Եղիշէին.

— Տէր Հայր, Աստուծոյ տունը մաքրելու եկանք, հինգ օրէն կիրակի է, պէտք է լաւ պատարագ մ'ընենք:

— Այո՛, բայց պէտք է եօթն աղբիւրէ ջուր բերել

եւ եօթն անգամ լուալ, որ թուրքի հոտն իսկ չմնայ, պէտք է կրկին մեռոնել, օրհնել:

— Մենք եօթն աղբիւրէ ջուր կը բերենք, դուն մեռոնէ եւ օրհնէ, ըսին սղաները:

Ձանգակը տակաւին բերդին վրան էր. Վարդան ուղեց որ մասնաւոր շուքով նա զիւղ իջնէ. զանգակը՝ որ յոյս եւ հաւատք ներշնչած էր պատերազմի ատեն:

Շաբաթ երեկոյ, ջոկատ մը կազմեց, թմբուկ եւ զուռնայ առջև ձգեց, բերդն ելան. տէր Եղիշէ վար առաւ եւ դրաւ չորս զինեալներու ուսերուն, Յովիկն էր, Օնիկը, Երուանդ եւ Աւոյ. հրացանակիր ջոկատն առջևէն, թմբուկի եւ զուռնայի ուրախ երգերուն մէջ՝ զանգակը յաղթական գիւղ մտաւ: Կախեցին իր տեղը. օրհնեց տէր Հայրը եւ առաջին հարուածը տուաւ:

— Փառք քեզ, Աստուած, ըսաւ, այս զանգակին հետքու ձայնդ անպակաս ըլլայ մեր գիւղէն:

— Այս կիրակի, պատարագէն յետոյ, ըսաւ Վարդան, մեզի համար ուրախութեան օր է. մատաղի կենդանիները պատրաստ են, ով որ գինի կամ օղի ունի՝ թող բերէ հասարակաց ուրախութեան սեղանին:

Պատարագին, տէր Եղիշէ՛ իբրեւ կատարեալ զինուոր Աստուծոյ, յուզիչ քարոզ մը տուաւ, յիշեց ինկած զինեալները, յիշեց խեղճ Գէորդը, ծերունի Սահակը, Նազար աղան.

— Անոնք որ հաւատքի եւ ազգի համար կը մեռնին՝ միշտ անմահ կը մնան, ըսաւ:

Հաւատացեալներու մէջ մայրեր, հարսեր կային՝ որ լացին իրենց մեռելները, լացաւ նաեւ Գէորդին մայրը:

— Լացով ետ չեն դար, այլ հաւատքով յարութիւն կ'առնեն, կրկնեց տէր Հայրը:

Կէսօրէն վերջ, ժամի բակին մէջ փռուած էին գորգեր, կապերտներ, տախտակներ, խոշոր պնակներ դըրուած էին, անոնց շուրջ բոլորած էին խումբ խումբ, իւրաքանչիւրն իր դզալն ունէր պնակէն առնելու եւ ուտելու համար: Վարդան ուղեց որ Անուշաւանն իր մօտը նստի, փնտռեց, բայց ո՞ւր էր Անուշաւանը. նա անյայտացեր էր: Ինչո՞ւ պիտի չմասնակցէր հասարակաց ուրախութեան, ինքն ալ գինեալ էր եւ քաջութեամբ կըրուած էր: Ծաշի կէսին Շահկերտ հասաւ Անուշաւան, գրաստ մը առջեւէն, երկու գինիի լեցուն տիկեր վրան, երկու շահապոնքի հետը:

— Շահապոնք կը դրկէ, ըսաւ, Շահկերտի հերոսներուն:

— Կեցցէ՛ Անուշաւանը, պոռաց բազմութիւնը:

Ծաշէն յետոյ Վարդան կ'ուզէր որ ժողովուրդը պարէ եւ ուրախանայ մինչեւ մութը, բայց Յովիկ եւ Օնիկ ըսին իրեն.

— Գուն հոս ժամին սանդուղներուն վրայ կեցիր եւ մեզի ձգէ յաջորդ ուրախութիւնը:

Ժամ մ'անցած էր, երբ կողմնակի փողոցէն դուրս եկաւ խոշոր տողանցք մը. առջեւէն կ'երթային Մարոյ, Շաքէ, Շողիկ, անոնց զլխուն կը ծածանէր խաչանիչ դրօշակը. ապա գինեակները հրացանն իրենց ուտելուն՝ անցան առաջնորդին առջեւէն հպարտ նայուածքով: Սլացուցիչ ծափերու մէջ յանկարծ հնչեց բազմութեան ձայնը.

Ձանդեղուրը բարձր սար է,

Արարատին հաւասար է.

Մատաղ ըլլամ իր անունին,

Երկինք հասնող իր սուրբ բերդին:

Երբ ամէն բան վերջացաւ եւ մթնեց երկինքը, Վարդան սովորական հողագործի մը պէս իր տունը քաշուեցաւ: Հայրն ու մայրը գինքը գրկեցին եւ համբուրեցին:

— Քու ճակատդ Ձանդեղուր լեռն է, ըսաւ հայրը.

— Քու բազուկդ եղեւինի փայտ է, ըսաւ մայրը.

Աստուած քեզի լոյս տուաւ՝ որ Շահկերտին արեգակն ըլլաս:

— Մայրիկ, ըսաւ Վարդան, քիչ մը լուռ մնալէ յետոյ, արդեօք երա՞զ էր այս ամէն բան. ես մէկ բան սորվեցայ. ազգ մը երբ հերոս զաւակներ ունի, միշտ բարձր կը հնչէ իր Լեռներուն երգը:



Տպագրութիւնը աւարտեցաւ

28 Փետրուար 1971ին

Ս. Ղազարու տպարանին մէջ

Վ Ե Ե Խ Ի Կ